41-3
Inf 360.66.168

ՍԻՄԷՕՆ ՅԵԿՈՒԵՑԻ

ԾԻՐԱՆԱԶԱՐԵ

ՊՈՒԼՍԱԾ-ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՈՒՈՒՑՄԱՆՈՒԹԻՒՆ

ՔՐԻՍՏՈՍԻ

Իջևեռաւուրդ տպարան Օր. Ե. Ադամեանցի, Պօլիս 7

1911

1911

13 APR 2011

ՍԻՄԷՕՆ ՅԱԿՈՒԲԵԱՆ

891.99.092 Զիլինգեան
Հ-17

ԶԻՐԿԱՆԳԱԴԷ

ԳՐԱԿԱՆ-ՐՆԴԱՊԱՏԱՆԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ

824
156

ԹԻՖԼԻՍ
Էլէֆտաւարդ տպարան Or. Ն. Ագաճանցի, Դօրից. 7
1911

ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՄԱՐԱՆ
Ս. ՊՐՈՄԱԿԻՉԵԱՆ
Անվճար

31.05.2013

Ժ0.442

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Биб
Ա. ՍՄԲԱՏԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

1113-90

I

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Քննադատութիւնը, գրական երկերի գնահատութիւնը շատ քիչ դեր է կատարել մեր կեանքում։ Մեր ամենալաւ հեղինակները ժողովրդականացել են առանց քննադատութեան օգնութեան։

Աբովեան ժողովրդականացաւ, և մինչև այսօր էլ երախտաւոր անուն ունի հայութեան բոլոր խաւերի մէջ։ Եւ սակայն, ոչ ոք, մեր գրականութեան ու վերածնութեան յիսուն տարուայ ընթացքում, նրա մասին որևէ գրական-քննական ուսումնասիրութիւն չկատարեց։ Այդ խոշոր անձնատրութիւնը և նշանաւոր հեղինակը, կանգնած մեր նոր կեանքի և նոր գրականութեան շէմքին մինչև օրս էլ անյայտ ու գաղտնի է մնացել ոչ միայն իր տխուր և եղերական ճակատագրով, իր մահով, որ չգիտենք ինչպէս տեղի ունեցաւ, այլև իր գործով, իր անկորնչելի երկով, որ բարեբախտաբար կայ, գոյութիւն ունի։

Բաֆֆին, որ մի ժամանակ դիւթեց իր դարը և փոթորկեց ժամանակի երիտասարդութիւնը, որ մրրկի պէս ցնցեց ողջ հայութիւնը—այդ եղական ժողովրդական զրոյը իր համբաւը պարտական չէ ոչ մի քննադատութեան։ Ժամանակի մեր պաշտօնական «քննադատութիւնը», Հայկունիի բերանով

և մի ահագին հատորով՝ մինչև անգամ շատ աշխատեց, որ Բաֆֆին անհետ կորչի։ Եւ սակայն նրա անունը մնաց ամենուրեք ժողովրդի սրտում, վերածնուող հայրենիքի ամեն մի անկիւնում։

Ահարոնեան Բաֆֆիի պէս մէկէն հռչակ ստացաւ և այսօր, ապրող գրողների մէջ, ոչ ոք նրա ժողովրդականութիւնը չունի։ Եւ սակայն այստեղ էլ քննադատութիւնը դեր չէ կատարել։

Այդ գրողներն իրենք են պատրաստել այդ ժողովրդականութիւնն էլ, այդ համբաւն էլ։ Ոչ ոքի նրանք պարտական չեն։

Ռուսների մէջ մի Բելինսկի ճրագը ձեռքին, ականջները սրած, աչքերը յառած սպասում էր՝ նոր շող տեսնի գրականութեան անկիւնում, որպէսզի անմիջապէս խօսի, քարոզի նրա մասին, տարածի նրա անունը։ Ֆրանսիացիների մէջ մի Օկտաւ Միրբօ բռնեց, բարձրացրեց և մէկէն Շէքսպիրի կողքին դրեց Մեաերլինկին՝ նրա առաջին իսկ երկից յետոյ։

Մեզանում այդպէս չեղաւ։

Շիրվանզադէն ևս, բոլոր նշանաւոր հայ տաղանդների նման՝ ինքն իրեն է պարտական։ Քննադատութիւնը նրա համար ևս ոչինչ չի արել։ Երեսուն տարի դիտում է մեր կեանքը, քննում մեր իրականութիւնը, վերլուծում մեր բարքերը։ Երեսուն տարի քրքրում է մեր հասարակութեան հիմքերը—ոչ թէ քանդելու—այլ հասկանալու, ըմբռնելու, վերաշինելու համար։ Երեսուն տարի ճգնում է մեր անհատական, ընտանեկան, հասարակական զարգացման օրէնքները գտնել և, կենդանի ու պատկերաւոր, ցուցադրել պատմուածքների, վէպերի, դրամաների մէջ...

Այդ երեսուն տարիների երկարատև ընթացքում նա մեր կեանքի և մեր գրականութեան համար շատ բան է արել։ Դուրս գալով գաւառական տարտարախտ քաղաքից, ապրելով նախկին դրժուարին պայմանների մէջ, առանց կանոնաւոր կրթութեան, առանց նպաստաւոր միջավայրի, առանց բարոյական կրթիչ շրջանի՝ Շիրվանզադէն իր տաղանդի և իր կամքի շնորհիւ միայն կարողացել է պատուաւոր տեղ գրաւել իրրև վիպասան, իրրև դրամատուրգ։

Եթէ մեր կեանքի առարկայական հանգամանքները և իր անհատական, ներքայական բնոյթն ու հակումները արդելք եղան, որ նա պատկերացնի մեր բովանդակ հասարակութիւնը, մեր բոլոր խաւերը—այնուամենայնիւ ինչ նա արել է, ինչ նա կատարել է՝ նշանակալից է և լիովին բաւարար։

Գրականութեան պատմագիրը շատ բան կը տեսնի նրա վէպերում, նրա դրամաներում։ Մեր հասարակութեան որոշ մասը—և բաւական խոշոր մասը—պատկերացած, ներկայացած է այնտեղ իր գործերով, իր խորհուրդներով, իր յոյզերով ու ապրումներով։ Վարագոյրը, քօղը, որ կեանքի մէջ ամեն դասակարգ և ամեն անհատ միշտ խնամքով պահում է իր վրայ՝ Շիրվանզադէի ձեռքով մի կողմ է դրուած։ Դուք տեսնում էք հասարակութեան այդ մասի ներքին կեանքը, զգում էք նրա հոգու հեռաւոր ճիչը, ունկնդիր էք նրա արամաբանութեան և մտածումների ձայնին, հասկանում էք նրա գոյութեան իմաստը, նրա իղձալները, նրա պաշտամունքը։ Տեսնում էք նրան իր տանը, իր կնոջ, զաւակների, ազգականների հետ. տեսնում էք հասարակութեան մէջ, ընկերների շրջանում, անձնաւորութիւնների մօտ. տեսնում էք նրան մենակ՝ տարուած իր մտքերով, անձնատուր իր խոհերին և ենթակայ իր ցաւերին...

Կեանքի մի էջը մերկացած է ընթերցողի առաջ։ Մի դուռ բացուած է արդէն և մի անկիւն լուսաւորուած, պայծառացած է։ Շատ անհատներ դուրս են եկած իրենց ամենօրեայ թագստից, այն մշտական խաւարից — ուր գործում են նրանք ծածուկ ու անյայտ — և դէմառ դէմ կանգնած են ձեր առաջ։ Անկասկած, այս բոլորը բովանդակ կեանքը չէ, հասարակութեան ամբողջական նկարագիրը չէ։ Բայց ինչ որ է, ընորոշ է և հետաքրքրական։

Երեսուն տարի գործելով մեր գրականութեան մէջ և հետեւելով կեանքի ընթացքին՝ Շիրվանզադէն կարողացել է նկատել՝ թէ ինչպէս մեռնում է այս երկրորդը, ծնւում այն միւսը, ինչպէս անհետանում է այս մարդը, երևում ուրիշը. ինչպէս հասարակական սանդուխքից իջնում է այս դասակարգը, ելնում այն մէկը։ Եւ այս դիտողութեան ու հետախուզութեան ժամին՝ չկարողանալով հասնել ամենքին, նա բռնել, պահել է մէկը մանաւանդ, որ նրա գրականական գործունէութեան միջուկն է։ Հասարակական խուլ ընդհարումներին և խմբական պայքարներին ականատես՝ Շիրվանզադէն կարողացել է նկատել այն դասակարգը և այն միջավայրը, որ պատմական հանգամանքների բերումով, տնտեսական-սոցիալական պատճառների ազդեցութեամբ, քաղաքական նպաստաւոր իրաւակարգի հետևանքով՝ կոչուած էր կենդրոնական տեղ գրաւելու մեր կեանքի մէջ և ուրոյն քաղաքակրթութեան հիմքեր դնելու։

Այդ դասակարգի և այդ միջավայրի հետ այսպէս թէ այնպէս կապուած անձերը, տարրերը, խնդիրները, մտահոգութիւնները՝ Շիրվանզադէի գրականութեան բնորոշ, տիպիֆիկան մասն են կազմում։

Թէ ինչպէս են ներկայացել այդ բոլորը Շիրվանզադէի երկերում, թէ ինչպէս է նրանց մօտեցել հեղինակը և թէ գրական-գեղարուեստական ինչպիսի կատարելութեամբ է պատկերել — այդ կաշխատենք ցոյց տալ մեր վերլուծման մէջ այնքան, որքան կըներեն մեր անհատական ոյժերը և մեր գրականութեան պայմանները։

Այսքանը պարզ է, որ նրանք — այդ երկերը — արդէն բաւական տարածուած և ժողովրդականացած են։

Հարկաւ ընթերցող հասարակութիւնն ամբողջապէս — մանաւանդ նրա անգիտակից և նուազ զարգացած մասը — չէր կարող ցանկալի խորութեամբ թափանցել Շիրվանզադէի երկերի ներսը։ Իւրաքանչիւրը, անկախ և կղզիացած իր ճաշակի, իր սովորութիւնների, իր ըմբռնումների, իր գիտակցութեան չափով էր հաղորդակցութեան մէջ մըտնում հեղինակի հոգեկան, բարոյական աշխարհի հետ։

Աբովեան, Րաֆֆի, Ահարոնեան՝ արտայայտելով հասարակական — ազգային ողբը, պայքարը, տրամադրութիւնները ու տառապանքը՝ աւելի հասկանալի, աւելի պարզ են սոսկական ընթերցողի համար։ Ընդհանուր մթնոլորտը հասարակական կեանքի և նրանց երկասիրութիւնների — մէկ է։ Անհատները, որքան և մեկուսացած, այնուամենայնիւ ապրում են նոյն խոհերը, երկնում են նոյն մտածումները, ինչ որ այդ հեղինակները։ Մի ներքին նմանութիւն, իդէալների մի խորունկ ներդաշնակութիւն, հոգիների մի խորհրդաւոր համակրութիւն կայ ամենքի միջև։ Եւ այդ հեղինակները ժողովրդին հասկանալի դարձան համարեա միևնոյն ձևով և միևնոյն ուղղութեամբ։ Գնահատութեան

մի ընդհանուր չափ առեղծուեց, որ ըստ ամենայնի բաւական մօտ էր իրականութեան և ճշմարտութեան։

Շիրվանզադէի համար նոյնը չէ կարելի ասել։ Նրա երկերի նիւթը, շօշափած խնդիրները, ներկայացրած անձերը, այն ընոյթի չեն, որ կարողանան ընդհանուր հետաքրքրութիւն և գնահատութիւն առաջ բերեն։ Այստեղ անհրաժեշտ է գրական քննադատութիւնը։ Այստեղ հարկաւոր է, որ ընթերցողներն իրար օգնեն, իրար աջակցեն, տպաւորութիւնները միմեանց հաղորդեն՝ ընդհանուր տեսակէտ հիմնաւորելու համար։

Այսօր, Շիրվանզադէի գրական գործունէութեան երեսնամեակին, աւելի քան յարմար ժամանակն է, անդրադառնալ այն բոլորի վրայ, ինչ արել է նա. քննութեան առնել այն խնդիրները, որ յարուցել է. բացատրել այն ամբողջական գործը, որ կանգուն է արդէն։

Անկասկած, դժուար է, թերևս անհնարին՝ նրա գրական գործունէութեան լիակատար և ընդարձակ վերլուծումը ներկայացնել։ Ձեռնհասով այն մասին, որ նա դեռ շարունակում է իր գործը և որ տարիների ընթացքում կարող է շատ բան աւելացնել ներկայի վրայ — մենք եղածի նկատմամբ ևս չենք կարող վերջնական բան ասել։ Գրական ստեղծագործութիւնները, ինչպէս և անհատների կեանքն ու պատմութեան դէպքերը լուսաւորւում են հետզհետէ, ժամանակի ընթացքում, ամբողջ իրականութեան հետ միասին։

Ապագայ քննադատների ու գրականութեան պատմագիրների գործը դէթ ամենաթոքը չափով դիւրացնելու և ընթերցող հասարակութեան մի մասի աշխատանքն ու գնահատութիւնը գիտակցական դարձնելու նպատակով՝ տպագրութեան ենք յանձնում այն, ինչ որ մենք մտածում ենք Շիրվանզադէի մասին։

Մեր աշխատութեան մէջ մենք կաշխատենք ամենից առաջ հասկանալ հեղինակին, բացատրել նրա գործը, վերլուծել այն, ինչ կայ, կապել նրա ստեղծագործութիւնը իր ժամանակի, իր միջավայրի, հասարակական-տնտեսական համապատասխան պայմանների հետ։ Այս բոլորից յետոյ մենք կաշխատենք գնահատել այդ գործը, ցոյց տալ իրական առաւելութիւնները ու թերութիւնները այն մեծ վաստակի, որ արդէն հրապարակի վրայ է և մեր գրականութեան սեփականութիւնն է...

II

ԿԵՍՆՔԸ

Գլխաւոր վայրկեանները. ընթերցանութիւն. շրջանները.— գաւառ, Բագու, Թիֆլիս, Եւրոպա։ Ընդհանուր կապը գրական ստեղծագործութեան հետ։

Շիրվանզադէի—ինչպէս և ամեն հեղինակի—գործերը լաւ հասկանալու համար անհրաժեշտ է ծանօթ լինել նրա կեանքին։ Որքան էլ մի գրող առարկայական լինի, որքան էլ աշխատէ կեանքը, իրականութիւնը պատկերացնել այնպէս, ինչպէս կայ, որքան էլ թագցնէ, չեզոքացնէ իր ցանկութիւնները ու ճաշակը—այնուամենայնիւ անկարելի է երկերը կտրել, զատել ստեղծագործողի եսից։ Այդ եսը աւելի կամ նուազ, շեշտուած թէ ծածուկ, մասնակցում է միշտ ստեղծագործական աշխատանքին։

Շիրվանզադէն մեր գրականութեան առարկայական, օբիեկտիւ հեղինակներից մէկն է. թերևս ամենաառարկայականը։ Եւ սակայն նրա էլ կեանքը շատ տեսակէտներով մեծ դեր է խաղացել նրա գրական գործունէութեան ամբողջ ընթացքում։

Մինչև օրս մենք չունենք նրա կեանքի թէկուզ համառօտ նկարագրութիւնը, թէկուզ ամփոփ ուրուագիծը։ Ինչ որ կան հրապարակի վրայ՝ տեղեկութիւններ են միայն, կցկտուր, պատահական, անհետևողական։ Այդ տեղեկութիւնները, անշուշտ, շատ քիչ արժէք ունեն։ Նրանք չեն պատկերացնում Շիրվանզադէի կեանքի գէթ գլխաւոր շրջանները. չեն բացատրում, չեն պարզաբանում, չեն յայտնագործում վիպասանին իբրև մարդ և իբրև մտածող։

Ինքը Շիրվանզադէն սկսել է գրել իր ինքնակենսագրութիւնը «Կեանքի Բովից» խորագրով, որ ներկայումս տպագրւում է «Հորիզոն» օրաթերթի մէջ։ Առանց մազաչափ անգամ նսեմացնելու այդ ինքնակենսագրութեան արժէքը, մենք կարծում ենք, սակայն, որ նա չի կարող փոխարինել իսկական կենսագրութիւնը։ Հեղինակը որքան էլ ճշմարտախօս և արդարամիտ լինի՝ չի կարող իր մասին ասել այն, ինչ անհրաժեշտ է գիտութեան և գրականութեան համար։

Այդ ինքնակենսագրութիւնը կարող է աղբիւր ծառայել—մինչև իսկ առաջնակարգ և լաւագոյն աղբիւր—այն կենսագրութեան, որ պիտի կազմուի օտարի ձեռքով։

Այս րոպէիս, երբ մենք գրում ենք մեր տեսութիւնը՝ Շիրվանզադէն դեռ շատ քիչ է առաջ տարել իր կեանքի պատմութիւնը. հազիւ մինչև քսան տարեկան հասակն է արձանագրել։ Ուստի չը-պիտի կարողանանք բաւականաչափ օգտուել այդ ինքնակենսագրութիւնից։

Այսպէս անկարող լինելով շատ բան գտնել մեր գրականութեան մէջ նրա կեանքի մասին՝ մենք հարկադրուած ենք ամփոփել և կանոնաւորել գէթ այն, ինչ կայ և ինչ յայտնի է մեզ։ Հնարաւոր և հարկաւոր պարագային՝ այդ ամփոփման կաւելացնենք նաև մեր ընդհանուր դիտողութիւններն ու խոր-

հրդածութիւնները այս կամ այն կէտին վերաբերեալ։

Շիրվանզադէն—Ալէքսանդր Մովսիսեան—ծընուել է Շամախի քաղաքում, անգրագէտ ծնողներից, 1858 թուականի ապրիլ ամսին։ Հայրը սկզբում եղել է դերձակ, ապա տորոնի առևտրական։ «Լումայ» հանդէսի մէջ տպուած (1910 թ. յուլիս-օգոստոս) կենսագրական ակնարկի հեղինակը—որից մենք այս տեղեկութիւնները առնում ենք—պատմում է՝ թէ նրա հայրը եղել է շատ խստասիրտ, կամակոր, յամառ անճնասուրութիւն. իսկ մայրը, ընդհակառակն, շատ մեղմ, քնքոյշ, զգայուն ու նուրբ։ Ինքը Շիրվանզադէն հաղորդել է նոյն տեղեկութիւնը։

Ծնողների այս ցայտուն տարբերութիւնը մանուկ հոգու մէջ որոշ տպաւորութիւն է թողնում և կազմում է նրա անդրանիկ դիտողութեան ու բնաւորութիւնների ըմբռնման սկզբնական շարժառիթը։ Հաստատապէս չգիտենք ու չենք կարող պնդել՝ թէ արդեօք իր երկերի մէջ այս կամ այն անձը ուրուագծելիս Շիրվանզադէն նկարչուհի է այդ սկզբնական դիտողութիւնից ու տպաւորութիւններից։ Գիտենք միայն, որ մի քանի երկերի մէջ հանդէս եկած հայրերը բաւական նման են հեղինակի հօրը, ընդունելով վերջինս այնպէս, ինչպէս ներկայացնում են կենսագիրները։

«Նամուսը», որի նիւթը վերցրած է Շամախու կեանքից՝ մեծ յաջողութեամբ է նկարում Բարխուդարին, Սուսանի հօրը, խստասիրտ, յամառ, կամակոր, ամուր ու անյողդողդ բնաւորութեամբ, բնաւ չզիջող, միշտ հաստատ համոզմունքների ու

կարծիքների մէջ։ Դրա հետ միասին՝ ազնիւ, բարոյական ու մաքուր։ Վէպի մէջ ասուած է նաև, որ Բարխուդարը արհեստով դերձակ է։

Նրա կինը—Գիւլնազ—վերին աստիճան առաքինի, համեստ, քնքուշ, բարի, մեղմ ու զգայուն բնաւորութեամբ։ Ինչպէս տեսնում էք, այս երկու ամուսիններն և Շիրվանզադէի ծնողների մէջ նմանութեան կէտերը բաւական են և նշանակալից։

Պէտք է ենթադրել, որ հեղինակը իր այդ հետաքրքրական ու յաջող անձերը նկարագրելիս ներշընչուել է մասամբ հայրական տան մէջ ստացած անդրանիկ, անմիջական տպաւորութիւններից։

Այսպիսով—եթէ ճիշտ է մեր ենթադրութիւնը—հնարաւոր է դառնում թեթև կապ գտնել հեղինակի կեանքի և երկերի միջև...

Սկզբնական ուսումը Շիրվանզադէն ստանում է մօր հոգատարութեամբ։ Մինչև տաս տարեկան հասակը սովորում է հայոց գպրոցներում, այնուհետև մտնում է ռուսաց գաւառական գպրոցը, ուր և աւարտում է ու դրանով փակում վերջնականապէս իր դպրոցական կեանքը։ Այնուհետև ընթերցանութեամբ, ինքնակրթութեամբ ու բնածին ընդունակութեամբ միայն կարողանում է ձեռք բերել այն, ինչ որ ունի և ինչ որ յայտնի է մեզ։

Շիրվանզադէի պատանեութեան տարին ըսկըսւում է Շամախու ահեղ ու սոսկալի երկրաշարժով։ Հարուստ և բազմամարդ քաղաքը գետարկւում է։ Վաճառականութիւնն ընկնում է։ Բնակիչները թողնում են աւերակ քաղաքը և ցրւում այս ու այն կողմ։ Շիրվանզադէի հայրը մնանկանում է և վերադառնում իր նախկին արհեստին—դերձակութեան։

Այս բոլոր դէպքերը անկասկած մեծ ազդեցութիւն պիտի գործէին պատանեկան հասակի տը-

պատրաստ մատածողութեան ու երևակայութեան վրայ: Ընտանիքի մէջ առաջացած փոփոխութիւնը մանաւանդ—հօր անանկութիւնը և դրա հետ կապուած նիւթական թշուառութեան դրաման—թուում է թէ բաւական խորունկ հետքեր են թողել Շիրվանզադէի յիշողութեան ծալքերում: Իր երկերի մէջ նա մէկից աւելի անգամ ներկայացրել է սընանկութեան յուզումնալից ուրուականը և նիւթական անկումի սարսափելի պատկերը:

Մինչև տասնեօթ տարեկան հասակը Շիրվանզադէն ծնում է Շամախի քաղաքում: Եւ մենք դրեթէ այլևս ոչինչ չգիտենք այն կեանքից, որ անց է կացրել նա: Մինչդեռ այն տարիների մանրամասն նկարագրութիւնը, առանձին տպաւորութիւնների և առանձին դաստիարակութեան ուրուագիծը կարող էր շատ բան պարզաբանել և ցոյց տալ անհատի զարգացման ուղղութիւնը:

Շիրվանզադէն ինքը պատմում է՝ Շամախի եղած ժամանակ դաստիարակուել է լեռնականների արկածախնդիր ու անրջական վէպերով, թէ կրթուել է հեքիաթային, հեռաւոր երկիրների, հազար և մի գիշերների սրտառուչ պատմութիւններով: Շատ հետաքրքրական կըլինէր, եթէ բոլոր այդ տպաւորութիւնները բաւականաչափ սիստեմատիկ կերպով հանդէս գային: Իր ասելով ծովը, հեռաւոր հորիզոնները, անյայտը, սարսափելին, խորհրդաւորը—նրա համար պատանի հասակում կիրճ են եղել: Բացում ևս նա այդ տրամադրութիւնները հանդէս է բերում: Ամբողջ հոգով ուզում է ծովի վրայ պաշտօն գտնել, միշտ հեռաւոր աստղերը դիտել, մրրկին, ալեկոծութեան դիմագրաւել:

Այս երազական ու վիպական խառնուածքը,

սակայն չի երևում նրա երկերի մէջ: Նրա հերոսները ընդհանուր առումով իրական, առողջ, գործնական անձեր են: Մի քանիսները, ինչպէս օրինակ, Սուսան «Նամուս»-ի մէջ, Մարիամ «Զուր Յոյսեր»-ի մէջ, Նուշաճիկ «Քաօս»-ի մէջ և մանաւանդ Լեւոն «Արտիստի» մէջ—աւելի կամ նուազ ձևով արտայայտում են երազական տրամադրութիւններ ու հակումներ: Սակայն դրանք էլ ճշդրտապէս այն տիպերը չեն, որոնք աշխարհից աւելի ծովերին ու վոլգոբոյնիկներին են ձգտում: «Արտիստ»-ի Լևոնը, խորունկ և բուռն, զգայուն և քնքուշ,—այդ հոգով բանաստեղծ պատանին ուրիշ կերպ է կազմուած և ըստ էութեան նման չէ պատանի Շիրվանզադէին, որ տարուած արկածախնդիր հեքիաթներով շարունակ վազում է դէպի ծով, դէպի սարսափելին:

Հեղինակի մի փոքրիկ աշխատութեան մէջ միայն—«Ֆաթմա և Ասադ»—մենք նկատում ենք վիպական այդ խառնուածքի զօրեղ արձագանքները: Այն ճակատամարտը, այն քաջարի, գեղեցիկ, յաղթանդամ տղամարդը, այն չքնաղ, կրակոտ, վառուած Ֆաթման, այն հրակէզ հայեացքը, այն անուրջոտ երեկոն, երկու սիրահարների այն փախուստը արևելեան նժոյգի վրայ, այն յուզիչ գիշերը հեռաւոր պարտիզում—այս բոլորը բաւական յիշեցնում են հեքիաթային, երազական, ոսմանեան տրամադրութիւններ:

Շիրվանզադէի բովանդակ գրականութեան ընդհանուր ոգին, էութիւնը շատ հեռու է «Ֆաթմա և Ասադ»-ից: Եւ համարձակ կարելի է ասել, որ այդ գրուածքի մէջ երևցած գծերը բնաւ չզարգացան յետագայում և միանգամայն լքման դատապարտուեցին: Նշանակում է ուրեմն, որ հեղի-

նակի շնչած այդքան ուժգին վիպական տրամադրութիւնները իր կեանքի շարունակութեան մէջ, ուրիշ գործօնների ազդեցութեան տակ, նսեմանում են և չէզոքանում։ Այս գործօնները բաւական բազմաթիւ են եղած։ Կենսագրութեան մէջ այս մասին ոչինչ չկայ գրեթէ։ Մենք իր տեղում կանգ կառնենք դրանց վրայ—երը քննելու լինենք Շիրվանզադէի տաղանդի զարգացման պայմանները—այնքան, որքան հնարաւորութիւն կունենանք։

1875 Թուականին Շիրվանզադէն թողնում է իր դժբախտ ծննդավայրը և ճանապարհւում դէպի Բագու։ Այս քաղաքում նա դրամ պէտք է վաստակէ, որպէսզի կարողանայ գոյութեան կռուի մէջ պահել իրան և իր ընտանիքը։

Տասնեօթ տարեկան պատանի և արդէն ծանր հոգսերի տակ ուսերը ծռած։ Բագուն այլ ևս Շամախի չէ։ Այնտեղ չկայ գաւառական սիրուն քաղաքի մեղմ բնութիւնը, երկինքը, դաշտերը, ծառերը, թռչունները, գարունը... բոլորը տարբեր են։ Այնտեղ չկայ Շամախու անհոգ, զուարթ, ծոյլ, յօրանջոտ կեանքը։ Այնտեղ մշտական ադմուկ կայ, ժխոր, անցուդարձ, հոգսեր. դրամ վաստակելու, հաց գտնելու սոսկալի հոգսը։ Եւ գոյութեան մարտի այս անհրապոյր ասպարիզում, ուր ամենքը շարժւում են արագ, ուր ամենքը խարւում են, ուր ամենքը մոռանում են մարդկային առաքինութիւնները՝ Շիրվանզադէն պիտի կարողանար իր համար ճանապարհ բանալ։

Կարելի է ասել, որ Բագուի միջավայրը առաջին գործօնն է իրական ուղղութեամբ. այնինքն այն, որի մէջ սկսում են կամաց-կամաց նսեմանալ պատանեկան վառ և արկածախնդիր երևակայութիւնն ու պատրանքները։ Այստեղ նա սեռնում է իրական, քօղամերկուած կեանքը իր բոլոր անախորժութիւններով, երազանքների իր սրտաճմլիկ բացակայութեամբ։ Շիրվանզադէի գրական գործունէութեան մէջ բաւական խոշոր տեղ ունին այն տպաւորութիւնները—ուսանելի, հրահանգիչ, հետաքրքրական—որ նա ստացել է Բագուում։

Տարի ու կէս նա ծառայեց, իբրև հասարակ գրագիր, նահանգական դատարանում։ Յետոյ եղաւ մի նաւթարդիւնաբերական ընկերութեան հաշուապահ և կառավարիչ. ապա Մարդասիրական Ընկերութեան նորահաստատ գրադարանի վարիչ, ապա կրկին հաշուապահ նաւթարդիւնաբերական գրասենեակներում։ Ութ տարի շարունակ ինաց նա այդ պաշտօնների մէջ, ապրեց նիւթական զրկանքներով և սակայն կարողացաւ ինքնակրթութեամբ բաւական առաջ գնալ։ Նրա նման բազմաթիւները ընկել են պատանի հասակում Բագուի արենակուլ միջավայրը, թերևս աւելի նպաստաւոր պայմաններով, աւելի ազատ նիւթական հոգսերից, ընկել են և անհետ կորել։ Կեանքի և գրականութեան համար այսօր այդ մարդիկը գաղափարական ոչնչութիւններ են։ Շիրվանզադէն կարողացել է դիմանալ այդ մթնոլորտում, իդէալներ փայփայել, աշխատել, գրել և ժամանակով պատուաւոր անուն վաստակել գրականութեան մէջ։ Այս փաստը—ըստ երևոյթին թերևս աննշան—բայց ինքնին մեծ խորհուրդ է պարունակում իր մէջ։ Եւ Շիրվանզադէի կենսագրութեան այդ կողը բացառապէս յուզիչ է։ Մեր գրականութեան և մեր քաղաքակրթութեան ճակատագիրն է այդ։ Մի կողմ թողնելով պատմական անցեալը՝ տասնիններորդ դարի մեր համաբեր բոլոր նշանաւոր գրողները—չնչին բացառու-

թեամբ—այդպիսի դժուարութիւններով և այդպիսի նահատակութեամբ են ստեղծել մեր դաղափարական շարժումը, մեր վերածնութիւնը։

Բագուի ու Բալախանիի խելակորոյս մթնոլորտի մէջ չէ կորչում, սակայն, մեր ինքնագիտակցութիւնը։

Ութ տարուայ ընթացքում—տասնեօթից մինչև քսանհինգ տարեկան հասակը—Շիրվանզադէն պարապել է նաև հայոց գրականութեամբ։

Կարդացել է «Հիւսիսափայլը», «Կռունկը», «Հանդէս նոր հայախօսութեան», Աբովեան, Պռօշեան, Րաֆֆի։ Հայոց գրականութիւնից բացի՝ նա զբաղուել է և ռուսաց գեղարուեստական գրականութեամբ. կարդացել է Դօստօեվսկի, Տուրգենև, Տօլստոյ։ Ապա անցել է եւրոպականին՝ Շէքսպիր, Գէօթէ, Շիլլեր, Բայրըն, Վալտէր Սկոտ, Մոլիէր, առանձնապէս Դիկկէնս և մանաւանդ Ֆլօբեր ու Բալզակ։

Մենք յետոյ—նրա ստեղծագործութեան հիմքերը քննելիս—կանգ կառնենք այն հարցի վրայ՝ թէ ո՛ր հեղինակի ազդեցութիւնն է աւելի որոշ երեւում նրա երկերի մէջ։

Առ այժմ միայն այսքանը կասենք, որ վերյիշեալ հեղինակները չափազանց անհաւասար ներգործութիւն են ունեցել։ Նրանցից շատերը քիչ, իսկ մի քանիսները գրեթէ բնաւ չեն երեւում Շիրվանզադէի ստեղծագործութեան մէջ։

1878—1879 թուականներին նա թղթակցում է Թիֆլիսի ռուս լրագիրներին և աշխատակցում Բագուի ռուս թերթին։ Յետոյ թողնելով ռուս մամուլը՝ կարճ ժամանակ թղթակցում է «Մեղուին», ապա կանոնաւոր կերպով աշխատակցում «Մշակին»։ Այստեղից էլ սկսւում է նրա գրական գործունէութիւնը։ «Մշակում» նախ հասարակական

բովանդակութեամբ յօդուածները զետեղում առանձնապէս Բագուի բանուորների մասին։ Վիպական առաջին գրուածքը երեւում է 1883 թուի գարնանը՝ «Հրդեհ նաւթագործարանում» խորագրով։ Այս փոքր պատմուածքից յետոյ՝ Շիրվանզադէն նոյն տարուայ վերջին հրատարակում է «Գործակատարի յիշատակարանից»-ը, որ արդէն բաւական տարածում է նրա անունը և վճռում նրա ճակատագիրը։ Նոյն թուականին Շիրվանզադէն թողնում է Բագուն, թողնում է իր հաշուապահական պաշտօնը, տեղափոխւում Թիֆլիզ և որոշում ընդ միշտ նուիրուել գրականութեան։ Եւ յիրաւի. այնուհետեւ նա այլեւս չէ ձգտում գրականութիւնը և ապրում է գրական-խմբագրական վաստակով։ Նոյն միջոցներին, Թիֆլիսի հասարակական-գրական մթնոլորտում, մեծ պայքար էր վարում Գրիգոր Արծրունին և նրա ազատամիտ հրապարակագրութիւնը։ Շիրվանզադէն արձագանք է տալիս այս նոր շարժման—և որքան էլ նրա անձնական կապերը բարեկամական չլինին Գրիգոր Արծրունու հետ—նրա հոգեկան-բարոյական կապերը շատ մօտ են ուժեղ ազատական թուականների համբաւաւոր ազատական մտաւոռանքին։ Այդ հրապարակագրութեան ազդեցութիւնը որոշ կերպով նկատելի է նրա երկերի մէջ։

«Արամբին», «Ջուր Յոյսեր», յետոյ «Արեւն Դիմաքսեան» իրենց մէջ շատ բան են պարունակում յիշեալ գաղափարա-հոսանքից։ Այս մասին աւելի մանրամասն կը խօսենք, երբ քննելու լինինք Շիրվազադէի կրած ազդեցութիւնների խնդիրը։

1886 թուականին «Արձագանք» շաբաթաթերթի խմբագիր Աբգար Յովհաննիսեան հրաւիրում է նրան մշտական աշխատակցի պաշտօնով։ «Արձագանք»-ում Շիրվանզադէն տպագրում է մի քանի

1113-98

Ս. Մ. ԱՄԱՆԿՈՒԱՆ Անվան Պետական Գրադարան

վէպեր և պատմուածքներ, որոնց թւում «Խնամատար», «Արամբին», «Զուր յոյսեր», «Տասնուհինգ տարի անցած» և ուրիշներ։ Վեց տարի վարում է նա «Արձագանքի»աշխատակցի, երբեմն նաև ժամանակաւոր խմբագրի պաշտօնը։ Ապա, 1891 թուին թողնում է «Արձագանքը» և սկսում աշխատակցել Ա. Արասխանեանի «Մուրճ»-ում։ Այստեղ հրատարակւում է նրա «Արսէն Դիմաքսեանը»։

1895 թուականին ձերբակալւում է իբրև քաղաքական յանցաւոր և երեք ամիս բանտ նըստում։ Ապա, 1898 թուականի սկզբին, նրան երկու տարով աքսորում են Կովկասից։ Շիրվանզադէն ընտրում է Օդեսսա քաղաքը, ուր և մնում է մինչև 1899 թուի վերջը։ Այդտեղ նա գրում է «Մելանիա» վէպիկը և ներշնչւում «Արտիստի» դասախօսով։ Կովկաս դառնալով՝ նա գրում է «Արտիստը» և ապա սկսում իր դրամաների շարքը «Եւգինէ», «Ունէր իրաւունք», «Պատուի համար»։

Եթէ չհաշուենք «Իշխանուհի» պատմական դրաման, որ խաղացուել է Թիֆլիսում 1891 թուականին և որ մինչև այժմ տպագրուած չէ՝ Շիրվանզադէի գրական գործունէութեան երրորդ տասնամեակը կարելի է համարել դրամաների շրջան։ Այդ տասնամեակում ճիշտ է, նա տալիս է նաև այլ տիպի գրուածքներ, բայց գլխաւորը ներշնչումը և հիմնական խնդիրները նա գնում է դրամաների մէջ։

1905 թուականի ամառը նա ճանապարհւում է դէպի Եւրոպա և հաստատւում Պարիզում։ Այսպիսով, քառասունեօթ տարեկան հասակում միայն կարողանում է մօտենալ արևմտեան քաղաքակիրթ վայրերին, յաճախել համալսարան, դասախօսութիւններ լսել, թանգարաններ այցելել։ Թէ ինչ ուղղութեամբ է կարդում Պարիզում՝ այդ մեզ

յայտնի չէ, ոչ էլ յիշատակուած է կենսագրական ակնարկի մէջ։

Այդ շրջանում նա գրում է՝ «Ջհուդի ականջը» Ռուսաստանի հրէանների կեանքից, «Եղբայրասպան» փոքրիկ պատմուածքը. երեք դրամա՝ «Աւերակների վրայ», «Կործանուածը», «Արմենուհի» և մի կատակերգութիւն «Շարլատան» խորագրով ու մի արարով։ Բոլոր այն գրուածքների նիւթը—բացառելով «Ջհուդի ականջը»—վերցրած է կովկասեան կեանքից։

Պարիզում նա մնաց աւելի քան հինգ տարի, ապա վերադարձաւ Թիֆլիզ, ուր և ապրում է այժմ։

Վերջին տարիների եւրոպական կեանքի և կրթութեան ազդեցութիւնը տակաւին չէ արտայայտուել նրա երկասիրութիւնների մէջ։ Միայն պարբերական մամուլի էջերում—«Վտակ», «Գործ», «Հորիզոն» օրաթերթերում—հրատարակեց մի շարք հետաքրքրական յօդուածներ՝ գլխաւորապէս ֆրանսիական գրականութեան, դրամայի, գեղարուեստի և առհասարակ քաղաքակրթութեան մասին։

Ահաւասիկ այն աղքատիկ նիւթը, որ հայ գրականութիւնը ունի Շիրվանզադէի կենսագրութեան համար։

Մենք անհրաժեշտ համարեցինք այդ անգոյն նիւթը ներկայացնել ընդհանուր դիտողութիւններով և խորհրդածութիւններով, որպէսզի ընթերցողը աւելի որոշ տեսնի Շիրվանզադէի կեանքի և երկերի կապը…

III

ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Տեսութիւններ գրական երևոյթների ծագման մասին: Մեր հասարակական, անտեսական, գրական միջավայրերի ազդեցութիւնները: Ռուսական և եւրոպական գրականութիւնների արձագանքները: Նաուրալիզմ և Հ. Իբսէն:

Գրականութեան պատմութեան և փիլիսոփայութեան համար անագին կարևորութիւն է ներկայացնում այն խնդիրը՝ թէ գրական երկերը ինչ պայմանների ծնունդ են և ինչ ազդեցութիւնների արգասիք:

Քննադատութեան մէջ երկար ժամանակ այն կարծիքն էր տիրում՝ թէ գրական երևոյթների միակ պատճառը և պայմանաւորողը հեղինակներն են: Գրողը ինքնարուխ է և անհատական: Նա ստեղծում է այն, ինչ մտածում է, ինչ յղանում է՝ ժամանակից, միջավայրից, շրջապատող պայմաններից անկախ: Գրողը ինքը պայմաններ է ստեղծում, իրականութիւն առաջացնում: Գրական երկերը ուրիշ բան չեն, բայց եթէ բանաստեղծների ծնունդներ... Պատմական և գրական դիտութիւնների զարգացման հետ այս հայեացքը փոփոխութեան ենթարկուեց: Գրական երևոյթները — վէպը, դրաման, բանաստեղծութիւնը — հասարակական երևոյթների նման՝ շրջապատող պայմանների արդիւնք հռչակուեցին: Ինչպէս պատմական անձերն

ու դէպքերը, ինչպէս մեծ հերոսներն ու խոշոր ելեւէջները արդիւնք են որոշ գործօնների, այնպէս էլ գրողները և գրական իրողութիւնները ենթակայ են նոյն այդ գործօններին:

Գլխաւորապէս պատմական և հասարակական փաստերի քննութեամբ զբաղուող ընկերաբանները յատուկ թէօրիա, որոշ տեսութիւն չստեղծեցին ու չզարգացրին գրական երևոյթների նկատմամբ: Նրանք՝ այդ կարգի երևոյթների համար էլ առաջարկեցին այն պատրաստի տեսութիւնը, որ մշակել էին հասարակական-պատմական իրողութիւնների վերաբերեալ: Օրինակի համար. այն գիտնականները, որոնց կարծիքով պատմական փաստերը արդիւնք են կլիմայի՝ մտածեցին, թէ ուրեմն գրական երևոյթներն էլ նոյն պատճառի ծնունդ են:

Նրանք, որոնք կրօնական հանգամանքներն էին համարում հասարակական երևոյթների հիմքը՝ նոյնը համարեցին նաև գրական երկերի պատճառ:

Նրանք, որոնց կարծիքով պատմութիւնը ձևակերպւում է մտքի և բանականութեան համաձայն՝ այդպէս էլ ձևակերպուած ենթադրեցին գրական ստեղծագործութիւնները: Այն ընկերաբանները, որոնց համար հասարակական երևոյթները ուրիշ ոչինչ չեն, բայց եթէ միայն տնտեսական պայմանների և յարաբերութիւնների արդիւնք՝ գրական իրողութիւնների վրայ ևս այդպէս նայեցին: Սրանցից ոչ մէկը յատկապէս չուսումնասիրեց գրականութիւնը, գրական բազմապիսի ու բարդ երևոյթները և այդ երևոյթների վերաբերեալ իր որոշ տեսութիւնը չհաստատեց:

Պատմութեան մատերիալիստական բացատրութեան կողմնակիցները չափից դուրս հանդէս գործադրելով հասարակական խնդիրների շուրջը,

նոյնպէս չեն վարուում գրական երևոյթների նկատմամբ։

Այսպէս Եւրոպայում։

Ռուսաստանում, սակայն, այդպէս չէ։

Մարքսիստական ծանօթ բացատրութիւնները, այստեղ, թափանցում են մինչև գրականութեան խորքերը, բարձրանում մինչև բանաստեղծութեան գագաթը և ամէն գրական երկ, ամէն վէպ, դրամա, պօէմա, էլեգիա՝ ներկայացնում միայն իբր տնտեսական-դասակարգային պայմանների ու յարաբերութիւնների ծնունդ։

Գրական-գեղարուեստական երևոյթների ուսումնասիրութեամբ և վերլուծումներով երկար տարիներ զբաղուել է Ֆրանսացի մեծանուն պատմագիրը, փիլիսոփայ, քննադատ Հիպոլիտ Տէն. իր ուսումնասիրութիւնների արդիւնքը նա դրել է մի դասական և ստուար աշխատութեան մէջ, որ հանդիսանում է գրական-գեղարուեստական երևոյթների ամբողջական տեսութիւն։

Այդ փիլիսոփայի համաձայն՝ գրական երկերը երեք գործօնների արդիւնք են՝ միջավայր, ժամանակ և ցեղ։ Առաջին երկուսով նա հասկացել է տաճին պայմանները, երրորդով՝ ներհին ազդեցութիւնը։ Տէն առաջին տեղ չէ տուել ազնիւի դերին՝ գրական երկ ստեղծագործելու մէջ։ Անհատի հոգեբանութիւնը, բարոյական առանձնայատկութիւնները նա նոյնացրել է ցեղի հոգեբանութեան հետ։ Անհատը գոյութիւն ունի իբրև ցեղ, իբրև ցեղի անբաժան մասնիկ։ Նա չունի իր տարբեր կերպարանքը։

Անհատի անձնականութիւնը նոյնն է, ինչ որ ցեղի անձնականութիւնը։

Այս գրական-գեղարուեստական տեսութիւնը

ժամանակի ընթացքում սրբագրութեան ենթարկուեց։

Այժմեան քննադատներն ու գրականութեան տեսաբանները նախ և առաջ զատեցին ցեղի և ազնիւի անձնականութիւնը և վերջինս իբրև ուրոյն գործօն հռչակեցին։ Երբէք չվերադարձան, անշուշտ դէպի հինաւուրց տեսակէտը, դէպի անհատի տարամերժ ստեղծագործական զօրութիւնը, բայց ընդունեցին, որ գրական երկ արտադրելու գործում— ուրիշ պայմանների քով— խոշոր տեղ ունի և անհատի հոգին։

Յետոյ, մի քանիսները ընդարձակեցին Տէնի տեսութիւնը միջավայրի վերաբերեալ և այդ սկզբունքի տակ հասկացան ոչ միայն բնական, հասարակական պայմանները, այլ և տնտեսական-դասակարգային յարաբերութիւնները, ինչ որ բնաւ հակասական չէ։

Այսպիսով՝ գրական երկը ներկայանում է իբր մի վերին աստիճանի բարդ երևոյթ, արդիւնք բազմապան պատճառների և հետևանք տարբեր գործօնների։ Ինչպէս պատմութիւնը մի միայնակ ու առանձնաշնորհեալ ոյժի բացառիկ ստեղծագործութիւնը չէ, այլ մի շարք ֆակտօրների հաւաքական արտադրութիւնը, այնպէս էլ գրականութիւնը, գրական երևոյթը ծնունդ է շատ ազդեցութիւնների։

Շիրվանզադէի երկերը քննելիս մի անգամ ևս զգում և տեսնում ենք գրական այս ճշմարտութեան. ապացոյցը։ Այս հեղինակի ամբողջ գործը լաւ հասկանալու համար՝ անհրաժեշտ է գէթ կարկան գծերով կանգ առնել այն պայմանների վրայ, որոնց մէջ ծնուեց, զարգացաւ, հասունացաւ նրա

տաղանդը. ներկայացնել այն հասարակական, արև-տեսական, պատմական, գրական մթնոլորտը, որի հետ կապուած է նա. ցուցադրել այն մաքերը, ձե-ւերը, յատկութիւնները, որոնք երևացել են ու-րիշների մէջ նրա ժամանակ և նրանից առաջ...

Տասնիններորդ դարի երկրորդ կիսում մեր կեանքը բաւական փոփոխութեան է ենթարկւում: Նոր անձեր են երևան գալիս պատմութեան դաշտի վրայ, նոր դասակարգ է սկսում դեր խաղալ, նոր իրողութիւններ են կատարւում, նոր խնդիրներ են ծնւում:

Հին, նահապետական գիւղը կամաց-կամաց կորցնում է իր եզակի նշանակութիւնը: Գիտու-թեան, առաջադիմութեան, արդիւնաբերութեան շնորհիւ սկսում են մեծանալ և կազմակերպուել քա-ղաքները: Երկաթուղիներ են շինւում, խճուղիներ են կառուցւում, ճանապարհներ են հարթւում և առհասարակ հաղորդակցութեան միջոցները աւելի կատարելագործւում են: Կովկասը սկսում է աւելի սերտ յարաբերութեան մէջ մտնել քաղաքակիրթ վայրերի-Ռուսաստանի, Եւրոպայի հետ:

Գիւղը դուրս է գալիս իր մեկուսացած ա-ռանձնացեալ դրութիւնից և սկսում է շփուել քաղաքի հետ: Գիւղացին յաճախ թողնում է իր ծննդավայ-րը և աւելի բարեկեցիկ կենցաղի ակնկալութեամբ տեղափոխւում է քաղաք:

Պետութեան քաղաքականութիւնը միւս կողմից —գիւղի համար շատ բան չանելով և քաղաքային ազգարնակութիւնը հովանաւորելով—նպաստում է այդ տեղափոխութեան: Հասարակական կեանքի մէջ երկու խոշոր կենտրոններ են ստեղծւում. գիւղը և քաղաքը, յաճախ ներհակ, հակամարտ շահերով և տարբեր քաղաքակրթութեամբ:

Քաղաքների զարգանալով ու կազմակերպուե-լով՝ փոխւում է ազգարնակութեան նախկին ձևը, նախկին կառուցուածքը: Գիւղական ազգարնակու-թեան—գիւղացիութեան—հետ կեանքի մէջ առաջ-նակարգ պաշտօն է ստանձնում և՛ քաղաքի ազ-գարնակութիւնը:

Փոփոխութեան են ենթարկւում դասակար-գային համախմբումներն ու յարաբերութիւնները: Գիւղացիութեան մի մասը՝ քաղաք տեղափոխուե-լով՝ դառնում է արհեստաւոր, գործակատար, ման-րավաճառ, առևտրական... Քաղաքների մէջ նախ-կին շեշտաւորումները չեն յարատևում:

Արհեստաւորներից շատերը՝ տնտեսական-նիւթական բաւարար ապահովութիւն չստանալով՝ դառնում են վաճառական, կապալառու, գործա-կատար: Դրամատիրութեան և արդիւնաբերութեան զարգացման շնորհիւ՝ այդ ս՛ անկացած արհեստա-ւորները շատ յաճախ մտնում են նաև բանուորնե-րի շարքերը. կեանքի մէջ այս նշանակալից ձևափո-խութիւնները արդէն ինքնին կատարւում էին, երբ Բագուն և իր հռչակաւոր նաւթը ասպարէզ եկան: Տնտեսական և հասարակական կազմը հիմնակա-նապէս յեղաշրջուեց: Գիւղացիութիւնը զգալի հա-րուած ստացաւ, անհող և անհաց, վաշխառուների ձեռքին տառապած՝ գիւղացի երիտասարդները, պատանիները, ծերերը անդամ լքեցին իրենց ծը-ննդավայրը և քաղաք թափուեցին: Կովկասեան բոլոր անկիւններում այս մեծ փոփոխութեան ար-ձագանքները լսուեցին:

Հետզհետէ, մեզանում ևս, դրամի, փողի դա-սակարգը ամրապնդուեց և սկսեց բովանդակ կեան-քի մէջ կարևոր դեր կատարել...

Այսպէս. գիւղացիութիւնը կորցրեց իր նախ-

կին խոշոր ազդեցութիւնը. վաճառական-առեւտրական-արդիւնաբերական-կապալառու դասը նետուեց ասպարէզ. բանուորութիւնը երևաց և կարճ միջոցում բաւական զարգացաւ...

Տնտեսական կեանքի այս արագ յեղաշրջումը իր կողմից չափազանց նպաստեց հասարակական այն էվոլիւցիային, որ սկսուել էր արդէն և զանգաղ կերպով առաջ էր ընթանում: Կրթութիւնը, մասնաւոր պատրաստութիւնը աւելի քան պահանջ դարձաւ: Եթէ մինչև այդ՝ մեր հեռաւոր գիւղերից ու քաղաքներից ահագին դժուարութիւններով էին կրթուած անձեր դուրս գալիս, այժմ շատերը կարողանում էին միջնակարգ և բարձրագոյն դպրոցներ աւարտել: Մտաւորական դասը հետզհետէ ստուարացաւ: Սկզբներում, մեր գիւղացիական հասարակակարգի մէջ, մտաւորականութիւնը կապուած էր որևէ գաղափարական գործի հետ: Նրա պարունակութիւնը ընդհանրապէս գաղափարական էր: Այժմ, նոր հասարակակարգի ներքոյ, մտաւորականութիւնը կորցրեց այդ յատկանիշը: Մտնելով առևտրական, արդիւնաբերական ձեռնարկների մէջ—նրանք, մտաւորականները, միացան այդ դասակարգին և կազմեցին այն համախմբումը, ինչ որ անուանւում է սովորաբար intelligentsia բուրժուազիա: Միւս մտաւորականները, ազատ կոչման մարդիկ, որոնք մինչև այդ ընդհանրապէս թեքուած էին դէպի գաղափարական մտաւորականութիւնը՝ ազդուելով կեանքի ուժեղ հոսանքից՝ սկսեցին թեքուել դէպի մտաւորական բուրժուազիան:

Այսպիսով՝ մտաւորականութեան մէջ երկու խոշոր ուղղութիւն, հատուած առաջացաւ: Այդ հատուածները միմեանց բոլորովին նման չեն: Նրանք տարբեր են իրենց իդէալներով, իրենց

ձգտումներով և առհասարակ իրենց հոգեբանութեամբ: Կեանքի մէջ առաջացած այս նշանակալից երևոյթը, մտաւորականութեան այս հիմնական երկուութիւնը երկար ժամանակ չէր հաղորդւում հասարակական գիտակցութեան: Մարդիկ՝ ինտելլիգենտ, մտաւորական կոչումի տակ, ըստ հնաւանդ սովորութեան, հասկանում էին միշտ որոշ դասակարական տարբ...

Այսպէս. առևտրական-արդիւնաբերական դասակարգը իր հետ կապեց մի քանի մանր համախմբումներ պաշտօնեաներ գործակատարներ, կառավարիչներ, բժիշկներ, փաստաբաններ և առհասարակ մտաւորականութեան խոշոր մասը:

Շերվանդաղէի ամբողջ գրական արտադրութիւնը լաւ պատկերացնելու համար—բացի տնտեսական և դասակարգային նոր յարաբերութիւններից—անհրաժեշտ է ցուցադրել, դէթ խոշոր ներկերով, նաև այն հասարակական փոփոխութիւնը, որ առաջացաւ մեր կեանքում տասնիններորդ դարի երկրորդ կիսում:

Այս տեսակէտից շատ հետաքրքրական է կնոջ դերը:

Գիւղացիական հասարակակարգի մէջ կինը անազատ էակ էր: Ընտանիքում, իբրև ազգիկ, նա ոչ մի իրաւունք չէր վայելում: Ծնողների և մեծ եղբայրների կամքը նրա համար օրէնք էր: Նա պարտաւոր էր մասնակցել ընտանիքի աշխատանքներին, տանը, բանջարանոցում թէ դաշտում: Մայր դառնալով՝ նրա իրաւունքների սահմանը հետզհետէ լայնանում էր: Տարիների ընթացքում—ամուսնու մահուան կամ բացակայութեան պատճառով—նա կարողանում էր մինչև անգամ փոխարինել նրան: Սակայն հասարակական կեանքում, դուրսը,

ոչ իբրև աղջիկ և ոչ իբրև մայր նա որևէ կարևորութիւն չէր ներկայացնում: Կնոջ տեղը տունն էր, օջախը, բակը:

Քաղաքում այդ դրութիւնը չէր կարող յարատևել: Աղջիկը տան աշխատանքներ շատ քիչ ունէր, իսկ բարեկեցիկ ընտանիքներում դրեթէ չունէր: Զորս պատերի մէջ փակուած չէր կարող մնալ: Կամաց-կամաց դուրս եկաւ, դպրոց գնաց, մտաւ այս կամ այն շրջանը, ծանօթութիւններ ըստեղծ, իր վրայ կրեց միջավայրի ազդեցութեան դրոշմը: Հարկաւոր և անհրաժեշտ պարագաներում ծառայութեան մտաւ, կարուձևի արհեստանոց բացեց, վարժուհի դարձաւ:

Այս բոլոր հանգամանքները նրա հասարակական դիրքը փոփոխութեան ենթարկեցին և նա այլևս սկսեց իրան զգալ տղամարդու պէս անհատ, նրա պէս քաղաքացի: Իբրև մայր, ընտանիքի մէջ, նա չունէր գիւղացու կնոջ կենտրոնական, անհրաժեշտ աշխատանքը: Տնտեսութիւնը գոնէում էր դուրսը, փողոցում, շուկայում, ամբողջովին ամուսնու տրամադրութեան տակ: Բարեկեցիկ տներում կամ ամուսնութեան օրով նա տնտեսական կեանքին չէ մասնակցում: Մնում է տանը, զբաղւում է երեխաներով, կամ դուրս է գալիս հասարակութեան մէջ և միջամտում հանրային գործերին:

Ամուսնու մահից յետոյ—եթէ նիւթական ապահովութիւն չունեն—թողնում է տունը և հետամտում ապրուստ ճարելու:

Հասարակական նախկին սովորութիւնները, հնաւանդ կարգերը համակիր չեն կնոջ այս «ազատութեան», անկախ դիրքին:

Նրանք ուզում են, որ կինը միայ շարունակ կրաւորական վիճակի մէջ. իսկ նոր պայմանները

պահանջում են, որ նա ներգործական դրութեան բարձրանայ: Այս երկու ներհակ և հակամարտ զօրութիւնների ընդհարումից դրամա է առաջանում ու լցնում տանտիկներորդ դարի երկրորդ կէսի կնոջ հոգին...

Կեանքի նոր հոսանքների մէջ չեն կարողանում դիմանալ և յարատևել ամուսնական հին կարգերն ու նահապետական ընտանիքը: Դրամատիրութիւնը տնտեսական և նիւթական հանգամանքները սկսում են խոշոր չափ կատարել ամուսնութիւնների գործում: Բնաջնջութիւնը, առողջութիւնը, գեղեցկութիւնը, աշխատասիրութիւնը, բարոյական և հոգեկան յատկութիւնները, բնախօսական պայմանները երկրորդական կարևորութիւն են ստանում դրամի, հարստութեան, հասարակական դիրքի առջև: Անյարմար բնաւորութիւնների, անհատասար տարիքների միութիւնները աւելի են շատանում: Ամուսնական կապերը, առանց փոխադարձ սիրոյ, առանց փոխադարձ յարգանքի ու համակրանքի—զգալի կերպով բազմապատկւում են: Տգեղ, չար ու տարիքաւոր աղջիկը դրամի շնորհիւ կապւում է երիտասարդ, գեղեցիկ տղամարդու հետ:

Անկիրթ, անառողջ, ծերացած ու անբարոյական հարուստը կարողանում է ընկերակցել մատաղահաս, քնքուշ, մաքուր օրիորդի հետ... Եւ որովհետև նոր հասարակութեան մէջ կնոջ դիրքը և հոգերանութիւնը հինը չեն, և որովհետև, միւս կողմից, նոյն այդ հասարակութեան մէջ տղամարդու անհատատարմութիւնը լրջօրէն չի դատապարտւում—ուստի վերոյիշեալ անհամապատասխան ամուսնութիւնները խաղաղ չեն անցնում. ալեկոծւում, փոթորկւում է ընտանիքը և քայքայման մատնւում: Ծագում է կնոջ ազատագրութեան խնդիր,

ծագում է բաժանման հարց, պահանջ է դառնում համբաւաւոր ապահարզանը... Հասարակական-տնտեսական այսպիսի միջավայրի մէջ ծնունդ էին Շիրվանզադէի վէպերն ու դրամաները:

Կեանքի այս արմատական յեղաշրջումից առաջ, անհատական յարաբերութիւնների այս շեշտուած վոխոխութիւնը տակաւին չէրագործուած՝ մեր հասարակական միտքը նոր գաղափարների ու նոր բարոյականութեան կոչ էր արձակել: Ազդուելով դիմաւորապէս եւրոպական քաղաքակրթութիւնից՝ մեր վերածնութեան դեկավարները ազդարարել էին արդէն նոր սկզբունքների պահանջը:

Աբովեան ապրելով և գործելով տասնիններորդ դարի առաջին կիսում, մեր գիւղացիական քաղաքակրթութեան համոզուած ներկայացուցիչը հանդիսանալով հանդերձ՝ զգացել, գիտակցել և արտայայտել է նոր ժամանակների գաղափարներից շատերը: Իր գիրքը նուիրելով հայ ժողովրդական տառապանքի նկարագրութեան և ժողովրդական տարերային շարժումների, հերոսական պայքարների արտայայտութեան՝նա յաճախ և շատ բնորոշ կերպով քննադատում է նաև մեր նահապետական կարգերը, մեր բարոյականութիւնը, մեր հին աշխարհահայեացքը: Կռւում է հասարակական նախապաշարմունքների դէմ, կռւում է հին տարրերի տարկական ու ասիական ըմբռնումների դէմ, ըմբռնտանում է անհատի ազատութիւնը կաշկանդող և նրա ինքնաբուխ գիտակցութեան ճշնամի դաստիարակութեան դէմ...

Պռօշեան՝ ներկայացնելով հայ գիւղը և ընդհանրապէս համակերպուելով այդ միջավայրի բարոյական-

նութեան՝ այնուամենայնիւ դուրս է եկել նրա մի քանի բնորոշ հնութիւնների դէմ: Իր սկզբնական աշխատութեան մէջ — «Սօս և Վարդիթեր» — պաշտպան է կանգնել կնոջ սիրոյ ազատութեան և պախարակել է հասարակական խստասրտութիւնը այդ հարցում...

Նոր գաղափարների տարածման և հասարակական մտքի զարգացման մէջ «Հիւսիսափայլը» անգին առաջադիմութիւն է մտցնում: Մեր առաջին ազատամիտ հրապարակագրութիւնը, կազմակերպուած ամբողջացած, շրջապատուած երիտասարդ գործիչների բոյլով՝ սկսում է աւելի ուժգին քննադատել հին կեանքը և նրա բարոյականութիւնը:

Սակայն թէ քաոսնական և թէ մինչև անգամ վաթսունական թուականների նոր ձայնը, նոր սկզբունքները չխորացան մեր կեանքի մէջ, չմտան նրա հեռաւոր անկիւնները, չձուլուեցին նրա հետ: Հասարակական — անհատական բնաշրջումը տակաւին այնպէս շեշտուած չէր, միջավայրի նիւթական առարկայական զարգացումը այնպիսի չափերի չէր հասել, որ կարողանար ամբողջովին ընդգրկել այդ գաղափարական հոսանքը: Էվօլիւցիայի (բնաշրջման) այդ աստիճանը վերապահուած էր եօթանասնական-ութսունական թուականներին:

Այդ միջոցներին ծաղկեց մեր համբաւաւոր լիբերալիզմը, Գրիգոր Արծրունու յայտնի հրապարակագրութիւնը: Նոր հասարակութիւնը և նոր բարոյականութիւնը արտայայտուեցին լայնօրէն այս մտահոսանքի մէջ:

Քննադատութիւնը և բացասական, ժխտական վերաբերմունքը ուղղուեց դէպի հին աշխարհահայեացքը, դէպի կրօնական, բարոյական, նահապետական կարգերը: Քաղաքական իրաւակարգի

դէմ պայքարելու հարկադրութեան մէջ չէր նոր հասարակութիւնը, դէթ նրա ահագին, վճռական մեծամասնութիւնը։ Կառավարութիւնն ինքը, պետութեան քաղաքականութիւնը ընդհանրապէս նպաստում էին քաղաքային ազգաբնակութեան զարգացման և կեանքի վերանորոգման։ Այդ շրջանի բուրժուազիան և նրա մտաւոր, գաղափարական արտայայտութիւնը աւելի նեղում էին կրօնական-եկեղեցական-հասարակական նախապաշարմունքներից ու աւանդական սովորութիւններից՝ քան քաղաքական կարգերից։ Ուստի հասկանալի է, որ նրանք իրենց կռիւը պիտի ուղղէին դէպի հին կեանքի վերոյիշեալ սովորութիւնները և նախապաշարմունքները։

Քաղաքական, սոցիալական լայն խնդիրներ չբննելով և այդ կարգի իդէալները չարծարծելով՝ եօթանասնական ութսունական թուականների կովկասեան հրապարակագրութիւնը անհատականութեան գերազանց արտայայտիչն եղաւ։

Անհատի ազատութիւնը հասարակական կաշկանդումներից, նահապետական կապերից, կրօնական-եկեղեցական խստութիւններից, կինոջ ազատագրումը արևելեան, ասիական այն ծանր շղթաներից, որոնց տակ նա հեծեծում էր դարերից ի վեր։

Այդ հրապարակագրութիւնը ուղղուած էր բոլոր այն կենսահայեցողութիւնների ու կենսաձևերի դէմ, որոնք բաժին էին ընկել հային արևելքից և որով զարդացել էին, աճել, հասունացել մահմեդական քաղաքակրթութեան միջավայրում ու մթնոլորտում։

Կարճ ժամանակում Արծրունու լիբերալիզմը հակայական առաջադիմութիւն արաւ։ Հասարակութեան գիտակից, զարգացած տարրերը դիւրութեամբ ընդգրկեցին այդ շարժումն ու նրա ոգին։ Մթնոլորտը տոգորուած էր այդ ուղղութեամբ։

Շիրվանզադէի գրական գործունէութիւնը փթթում, ծաղկում էր մտային-բարոյական այդ միջավայրում և այդ գործօնների կողքին։ Ժամանակի հրապարակագրութիւնը, հասարակական միտքը և զարթնած արամադրութիւնը նշանակելի չափերով նպաստում էին նրա վիպագրութեան...

---

* Տնտեսական, հասարակական, հրապարակագրական գործօններից յետոյ՝ այժմ տեսնենք մեր գեղարուեստական գրականութեան մէջ կեանքի արդեօք այնպիսի տարրեր, որոնք, որևէ կերպ, թեկուզ անզգալի չափով պայմանաւորէին Շիրվանզադէի երկերն ու արտադրութիւնները։

Որքան գիտենք նրա կենսագրական ակնարկից՝ ինքը Շիրվանզադէն ժխտում է այս ուղղութեամբ որևէ ազդեցութիւն իր վրայ։ Մօսք կարող է լինել համակրութեան մասին — ասում է նա — բայց ազդեցութեան մասին՝ երբէք։ Ընդունում ենք, որ Շիրվանզադէն գիտակցաբար կարող էր չենթարկուել ուրիշ հայ հեղինակի ազդեցութեան։ Բայց խնդիրը այն չէ, թէ ինքը Շիրվանզադէն գիտակցում է արդեօք այդ ազդեցութիւնը։ Երբ մի Աբովեան, մեր նորագոյն գրականութեան և մեր նոր կեանքի շէմքին կանգնած, աչքերը դէպի ժամանակի անհունութիւնը յառած՝ դիտում է գրական-վիպական այն ամայի ճանապարհը, որ ձգուած է մինչև ինքը — այդտեղ դեռ կարելի է չխօսել հնների ազդեցութեան մասին։ Բայց երբ մի Շիրվանզադէ ութսունական-իննսունական թուականներին, Աբովեանից, Պռօշեանից, Րաֆֆիից, Սունի-

դուկեանից և միւսներից յետոյ՝ երևում է մեր գրականութեան մէջ և սկսում է վէպեր արտադրել— անմիջապէս հարց է ծագում՝ ոչինչ չտասցած արդեօք նա իր նախորդներից։ Կամ, այդ նախորդները ոչինչ չսկսեցին արդեօք, որ Շիրվանզադէն շարունակէր, զարգացնէր, կատարելագործէր։

Ինչքո՞վ է նման Շիրվանզադէն այն գրողներին, որոնք ապրում, գործում, արտադրում էին նրանից առաջ։ Եթէ նմանութիւնը պատահական է և տարօրինակ՝ կարելի է թերևս նկատողութեան չառնել։ Իսկ եթէ նմանութիւնը հիմնական է և բնորոշ—այն ժամանակ գրականութեան պատմագիրը, քննադատը հարկադրուած է ցոյց տալ և ասել, որ Շիրվանզադէի տաղանդը, երկերը զարգացել են այս ինչ կամ այն ինչ գրական-պատմական պայմանների մէջ։

Անուանեցէք այդ պայմանները ինչ կամենում էք—ազդեցութիւն, ներգործութիւն, համակրութիւն—հարցը դրանից բնաւ չէ փոխուում։ Էութիւնը կըմնայ նոյնը և երբէք չի աղաւաղուի բառերի կամ անուանումների խաղի մէջ։

Արդ. Շիրվանզադէն իր գրելու ձևով, իր ընկատողութեան ուղղութեամբ նման է արդեօք նախորդ այս կամ այն գրողին։ Վէպի մէջ նա իրական, ռէալիստական նկարագրութիւնը բաւական զարգացրեց։ Հակառակ ռօմանտիք գրողներին, որոնք ընդհանրապէս արտաքին աշխարհի հանգամանալից, մանրամասն նկարագրութեան տեղ չեն յատկացնում, Շիրվանզադէն սկսեց նկարագրել տունը, բակը, փողոցը, շուկան, մարդը, հագուստը և այլն։ Այդ մասին մենք առայժմ չենք ուզում երկար խօսել, քանի որ իր տեղում պիտի կանգ առնենք սրա վրայ։ Այստեղ կամենում ենք

միայն ցոյց տալ այն նմանութիւնը, որ կայ—այս ուղղութեամբ Շիրվանզադէի և իրա նախորդի միջև։ Որքան էլ Պռօշեանը հեռու համարուի Շիրվանզադէից և որքան էլ նրանց մէջ տարբերութիւնը ընդհանրապէս շատ աչքի ընկնող լինի—այնուամենայնիւ իրական (ռէալիստական) նկարագրութեան մասում նրանք բաւական իրար նման են։

Եթէ չխօսենք Աբովեանի վէպի մի քանի յատկ և բնորոշ հատուածների մասին՝ Պռօշեան մեր նորագոյն գրականութեան մէջ այն հեղինակն եղաւ, որ առաջին տեղ տուեց—իր համարեա բոլոր վէպերում իրական նկարագրութեան, արտաքին աշխարհի մանրամասն, կանոնաւոր և ըստ ամենայնի շնորհալի պատկերացումին։

Թիֆլիսեան գրականութեան յայտնի պատմագիր, Գուտտաւ Լանսօն, այն կարծիքի է, իբր Զոլայի և առհասարակ նատուրալիստական դպրոցի իրական նկարագրութեան հիմքը, սկզբնաւորութիւնը դանում է Վիկտօր Հիւգօի վէպերի մէջ։

Մեր ռէալիստական վէպի իրական նկարագրութեան հիմքերը եթէ չեն գալիս աւելի հեռուից, Աբովեանից, ապա անշուշտ գտնում են Պռօշեանի երկասիրութիւնների մէջ...

Իր վէպերի նիւթով Շիրվանզադէն բաւական մօտ նմանութիւն ունի Րաֆֆիի և Գաբրիէլ Սունդուկեանի հետ։

Քաղաքային կեանքը, նոր կազմուող հասարակութեան բարքերն ու հոգեբանութիւնը, առևտրական խաւերի յուցադրութիւնը, բաւական զգալի չափով, տեղ էին գտել մեր վիպագրութեան և մեր թատերագրութեան մէջ Շիրվանզադէից առաջ։

«Փունջի» երկրորդ հատորը 1874 թուականից, «Ոսկի աքաղաղը» 1879-ից, (Րաֆֆի), «Ա-

թարալա»-ն 1866-ից, «Էլի մէկ զոհ»-ը 1870-ից, «Պէպօ»-ն 1871-ից, «Բանդած օջախ»-ը 1873-ից (Սունդուկեան)՝ գոյութիւն ունէին արդէն մեր գրական ասպարիզում: Չենք հաշւում «Զահրումար» և «Ո՞վ է մեղաւոր», որոնք՝ գրուած են եօթանասնական թուերին՝ լոյս տեսան միայն Րաֆֆիի մահից յետոյ. չենք հաշւում «Մինն այսպէս, միւսն այնպէս». չենք խօսում նաև ուրիշ գրողների մասին — Պատկանեան, Նալբանդեան — որոնք վէպի մէջ շնորհալի չեղան: Այդ գրուածքների մէջ պէտք է փնտրել մեր նոր, քաղաքային վիպագրութեան և իրական թատերագրութեան սկզբնաւորութիւնը:

Շիրվանզադէն այսպիսի գրական պայմանների և ազդեցութիւնների մէջ առաջացաւ: Նա շարունակեց, զարգացրեց այն, ինչ որ Րաֆֆին և Սունդուկեանցը սկսել էին, առաջինը՝ իբրև վիպագիր, երկրորդը՝ իբրև թատերագիր:

Րաֆֆին ոգևորուեց ութսունական թուականների ժողովրդական շարժումով, հայկական խընդրով, տաճկահայերի քաղաքական կացութեամբ, լքեց քաղաքային վէպը և նուիրուեց քաղաքական-յեղափոխական-սոցիալական, ապա նաև պատմական վէպին:

Իսկ Գաբրիէլ Սունդուկեանցը «Բանդած օջախ»-ից յետոյ — Շիրվանզադէի երևումից տակաւին շատ առաջ — այլևս կարևոր գործ չարտադրեց:

Մեր կեանքի ազդեցութիւնների և գործօնների մասին այսքանը բաւ համարելով՝ այժմ կըկատմենայինք մի փոքր կանգ առնել արտաքին ազդեցութիւնների վրայ:

Նախ և առաջ, ինչ ստացաւ Շիրվանզադէն

ռուսաց գրականութիւնից: Մեր կեանքի և գրականութեան վրայ առհասարակ մեծ հետք են թողել ռուսական կեանքը, մտային-հասարակական շարժումները ու գրականութիւնը: Մեր նորագոյն քաղաքակրթութիւնը, մեր իդէալները, մեր վերածնութիւնը շատ բան են պարտական ռուսաց գրականութեան: Եւրոպական գաղափարները, առաջադիմական սկզբունքները մենք շատ յաճախ այդ գրականութեան միջոցով ենք ստացել:

Այստեղ չենք կարող աւելի մանրամասն խօսել այդ ազդեցութեան մասին ընդհանրապէս: Խնդիրը վերաբերում է նեղկայ դէպքում Շիրվանզադէին:

Որքան էլ նրա վրայ ռուսաց գրականութեան ազդեցութիւնը մեծ համարեն՝ այնուամենայնիւ մենք կարծում ենք, որ Շիրվանզադէն այդ գրականութիւնից անմիջապէս և ուղղակի կերպով շատ քիչ բան է վերցրել: Դրա փոխարէն՝ ռուսական մտային կեանքի ազդեցութիւնը առհասարակ, հասարակական իդէալների, գաղափարների և նոր սկզբունքների արձագանքը ընդհանրապէս նկատելի է և ուշադրութեան արժանի:

Հեղինակներից կարելի է յիշատակել մասամբ Տուրգենեվ, մասամբ Դոստոեվսկիյ, մասամբ Օստրովսկի: Առաջինից Շիրվանզադէն ձգտել է վերցնել նրա երկերի հոգեբանութիւնն և նոր անձերի նկարագրութիւնը, երկրորդից նոյնպէս հոգեբանութիւնը և առհասարակ հոգեբանական մտահոգութիւնը. երրորդին՝ Օստրովսկուն բաւական մօտ է իր գրուածքների նիւթով և նկարագրած դասով:

Այս ազդեցութիւնները, սակայն, բնաւ նշանակալից և կարևոր չեն, և կարճ միջոցում չեզոքանալով՝ տեղի են տալիս եւրոպական, գլխաւո-

բապէս Ֆրանսիական ազգեցութեան...

Այս գրականութեան մէջ, տասնիններորդ դարի երկրորդ կիսում, երկու ուժեղ հոսանքների մրցութիւն էր կատարւում:

Ռոմանտիկ վէպը, դրաման, բանաստեղծութիւնը չէին կամենում դիմել: Ֆրանսական յեղափոխութիւնը մի տարօրինակ տրամադրութիւն էր հաղորդել գրականութեան: Բուռն ոգևորութիւն, վառ հետաքրքրութիւն փայլուն և ազդակող իրերի նկատմամբ, անսահման սէր դէպի անսովորն ու զգայունը — այս էր թագաւորում գրականութեան մէջ:

Ժամանակի պայմանները թոյլ չէին տալիս, որ մարդիկ անդրադառնան, ծանրանան, մտածեն իրենց գրուածքների մասին: Վիկտոր Հիւգոն արձակել էր նշանաբանը — «պէտք է կործանել գրականութեան բաստիլները» (il faut détruire les bastilles de la littérature: Այս ուժգին տրամադրութիւնները միանգամայն արդարանում էին դարի իդէալիստական փիլիսոփայութեան մէջ: Անչափը, անծանօթը, երևակայականը — դարի միակ իդէալներն էին: Ամենքն էլ ձգտում էին դէպի վեր, դէպի անսահմանութիւն:

Շատօբրիան, Լամարտին, Վիկտոր Հիւգո, Ալֆրեդ դը Միւսսէ — գերել էին մտքերը:

«Ռոմանտիզմը մարդկային հոգուն տուել մի անսահման երկինք, որպէսզի մարդս տարածէ այնտեղ իր թևերը և խորասուզէ իր թռիչքը»:

Զայնում էր Բեռանժէ՝ մոլեգին ոգևորութեան մէջ:

Բայց մարդկային հոգու այս թռիչքը կեանքի, իրական, ՝Շուտա, ցաւոտ կեանքի դէմ կանգ առաւ ի վերջոյ: Յեղափոխութեամբ անհաստ, մարդը

ձեռք էր բերել որոշ ազատութիւն. գրականութիւնը ներբողում էր այդ ազատութիւնը՝ խելակորոյս ուտաղի... Այժմեան հասարակութիւնը, դրամատիրական նոր կարգերը, կապիտալիզմ ստեղծել էին ուրիշ պայմաններ, այլ կերպ վատթար և դժոխային...

Մարդկութեան ՝Շուտաութիւնը նորից երևաց: Ազատութիւնը իր հրապոյրը կորցրեց: Երևակայականը, անբջականը զարնուեցին կեանքի, իրականութեան պարիսպներին...

Եւ այն բոլորը, զգայմունքի անծայր ջերմութիւնը, ճարտասանութեան թափը, յուզումների քաղցրութիւնը, երազական ու բուռն ոգևորութիւնները այլևս չէին համապատասխանում դարի ընդյօթին, որ հետզհետէ իրական, գործնական էր դառնում:

Մի ուժգին պահանջ առաջացաւ ճանաչելու մարդկանց բնաւորութիւնները ու բնազդները, ինչպէս իսկութեան մէջ կան, ճշակները, գործունէութեան շարժառիթները: Փոխանակ երազելու և երևակայելու՝ մարդիկ պէտք զգացին դիտելու, խորհելու: Փիլիսոփայութիւնը, գրական, նիւթապաշտական փիլիսոփայութիւնը այդ ուղղութեամբ առաջ ընթացաւ Ֆրանսիայում և այլուր: Գիտութիւնը փաստերի, իրողութիւնների, դիտողութիւնների տարամերժ պաշտամունքը հաղորդեց հոգիներին: Գրականութիւնը իրական կեանքի, հանապազօրեայ երևոյթների, ապրող ու տանջուող գոյութիւնների արձագանքը հանդիսացաւ:

Մարդիկ և նրանց զբաղմունքները ու գործերը. հասարակութիւնը և նրա հաստատութիւնները ու բարքերը, իրականն ու ճշմարիտը, գործան գրականութեան նիւթն ու առարկան:

Ռեալիզմը Ֆրանսիայից դուրս՝ զարգացաւ նաև ամբողջ Եւրոպայում: Անգլիական, ամերիկեան,

սկանդինաւեան, ռուսական մեծ գրողները բարձր ու վսեմ ներշնչումներ հաղորդեցին նրան։ Մինչդեռ Ֆրանսիայում Բալզակից յետոյ կամաց-կամաց իր գեղեցիկ թռիչքը կորցրեց և դարձաւ աւելի կամ նուազ բռնի, հիւանդոտ... Ստեղծուեց Էմիլ Զոլայի ճնշող, խոլական նատուրալիզմը, որ կենսաբանական գիտութիւնից ներշնչուելով՝ զգայմունքը, հոգին, ներքինը վանեց վէպից և ներբողեց բանականութիւնն ու փորձը։

Շիրվանզադէի գրականութեան հիմքերը բաւական մօտ են այն սկզբունքներին, որ հռչակեց և իրագործեց Ֆրանսիական իրապաշտական դպրոցը։ Թօմանեիք գրականութեան հակահարուածն էր այն մեր կեանքում։ Ամենօրեայ փաստերի, իրողութիւնների հանդարտ և առարկայական նկարագրութիւնն էր։ Դա իրական վէպն էր, հիմնուած «հասարակական փորձերի», դիտողութիւնների և բանականութեան վրայ։

Ֆրանսական իրապաշտները, և առհասարակ բոլոր իրապաշտները, հակառակ հինաւուրց ըմբռնումներին՝ կեանքը դարձրին մանրամասն վերլուծութեան և ուսումնասիրութեան առարկայ։ Շիրվանզադէն մեր մէջ նոյն բանին ձգտեց և գեղարուեստական նոյն գաղափարով ոգևորուեց։

Թէ որչափ կարողացաւ ազատուել նա թօմանեիք հայեացքներից, ու ձևերից, որչափ յաջողութիւն ունեցաւ իր գրական, գեղարուեստական իրագործումների մէջ, որչափ խուսափեց ռէալիստական դպրոցի թերութիւններից և որչափ արտայայտեց նրա առաւելութիւնները—այդ կըտեսնենք մեր քննութեան ընթացքում։

Այսքանը պարզ է, որ նա ընդգրկեց նոյն գեղարուեստական աշխարհահայեացքը, գրական նոյն

տեսութիւնը և իրագործելու նոյն մեթոդը։

Ֆրանսական իրապաշտական դպրոցի ազդեցութիւնից բացի՝ Շիրվանզադէն ներշնչումներ գտաւ նաև նորվեգիական գրականութեան մէջ։

Մեզ թւում է՝ թէ անհատի և հասարակութեան այն շեշտուած, կտրուկ ընդհարումը, որ Շիրվանզադէի գրուածքների ընդհանուր հնչիւնն է կազմում, ծայրայեղ անհատականութեան քարոզը, կնոջ ազատագրութեան ուժգին պահանջը—այս բոլորը շատ մօտ յարաբերութեան մէջ են Իբսենի գրականութեան հետ։

Սակայն մենք կարծում ենք նոյնպէս, որ այս նմանութիւնը կոյր, անհաշիւ ազդեցութիւն չէ, այլ գիտակցական, համոզուած, կշռադատուած համակրութիւն։

Շիրվանզադէի վիպական և դրամատիքական երկերի մէջ անհատի ազատութեան ճիգը—ինչպէս մենք աշխատեցինք ցոյց տալ ներկայ գլխի ընկղմում—տեղական ծագում ունի և անհատական սկզբնաւորութիւն։ Իր նախնական երկերի մէջ անգամ—երբ, թերևս, տակաւին ծանօթ չէր Իբսենի գրականութեան (այս մասին ոչ մի տեղեկութիւն չկայ նրա կենսագրական ակնարկում)—Շիրվանզադէն պարզ, որոշ, գիտակցական կերպով արծարծել է նոյն սկզբունքները։ Կարելի է ենթադրել ուրեմն, որ Իբսենի գրականութիւնը նրա մէջ գտնաւորել, շեշտել է այն գիծը, ինչ կապուած է մեր իրականութեան և Շիրվանզադէի անհատականութեան հետ...

Այս բազմազան ու բարդ գործօնների մէջ Շիրվանզադէի տաղանդը արտայայտուեց այնպէս,

արտաքին աշխարհը անդրադարձաւ նրա հոգում: Անհատի կեանքը և գործերը համագումարն են այն ներդաշնակութեան որ կայ արտաքին աշխարհի և ներքին հակումների, տրամադրութիւնների միջև: Մարդուս հոգին ինքնին ոչ դատարկութիւն է և ոչ միանգամից պատրաստ գոյութիւն: Տարիների ընթացքում անընդհատ և անվախճան, յարաբերութիւններ են տեղի ունենում անհատի և շրջապատի միջև:

Նա չփւում է յաւիտենօրէն ոչ-եսի հետ. ենթական խառնւում է առարկայի հետ: Մարդուս ներքին կեանքը ոչ ամբողջապէս ենթակայական է և ոչ ամբողջապէս առարկայական: Միակողմանի են և մոլորուած բոլոր այն մտածողները, որոնք կարծում են՝ թէ մարդուս հոգին միմիայն ինքն իրեն գոյութիւն ունի, անկախ դրսի աշխարհից:

Միակողմանի են և վրիպած նոյնպէս նրանք, որոնց կարծիքով արտաքին աշխարհը ամեն ինչ է. և՛ ամբողջ հոգեբանութիւն և՛ ամբողջ բնաւորութիւն և՛ բովանդակ մտածողութիւն:

Եթէ չմտնենք բնազանցական փիլիսոփայութեան մէջ, եթէ չփաստենք ամենաանհնական մարդու և սկզբնական անհատի ներքին կեանքի ծագման մասին, եթէ խնդրին նայենք միմիայն էվոլիւցիոնիստական, գիտական տեսակէտից՝ պէտք է ընդունենք անպայման, որ այժմեան մարդը, երկարատև դարերի ընթացքում, իր նախահայրերի և նախածնողների անսահման ու անծայր մթնոլորտում՝ ամփոփել է, խտացրել, հաւաքել, ժառանգել, կազմակերպել որոշ բնաւորութիւն, հոգեկան որոշ սկզբնաւորութիւն, մտային որոշ տրամադրութիւն և իբրև այդպիսին հանդէս եկել պատմական բեմի վրայ...

Այսպիսով, արտաքին աշխարհը անդրադառնում, հաղորդւում է անհատի հոգուն՝ համաձայն այդ բնաւորութեան, այդ սկզբնաւորութեան և այդ տրամադրութեան: Հասարակական - անտեսական-գրական միջավայրը թափանցում է մարդու ներքին կեանքը և պատուաստւում, կազապարւում այնտեղ այնպէս, ինչպէս այդ կեանքի պայմաններն են թելադրում... Անհատի գործերը և գրողի երկերը այդ երկու ոյժերի — միջավայրի եւ ներքին կեանքի, առարկայի եւ ենթակայի, ոչ-եսի և եսի — համերաշխութեան, ներդաշնակութեան, հաշտութեան հետևանքն են:

Այս է պատճառը, որ միևնոյն շրջապատի մէջ և միևնոյն պայմաններում, հարիւրաւոր գործեր և հարիւրաւոր երկեր — իրենց բազմաթիւ նրբութիւններով հանդերձ — իրաքանչիւրը հանդէս է գալիս իր ուրոյն կնիքով իր անհատականութեամբ, իր անձնականութեամբ...

Շերվանզադէի ամբողջ գրականութիւնը իբրև մարդկային գործ և մարդկային արտադրութիւն՝ ծնունդ է մեր միջավայրի և հեղինակի պիտակեալ հոգու...

IV

ԵՐԿԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒԹԵԱՆ ՄԵԹՈԴԸ

Իր գրական երեսնամեայ գործունէութեան ընթացքում Շիրվանզադէն հայ հասարակութեան տուել է աւելի քան երեսուն պատմուածքներ, վէպեր, դրամաներ։ Սրանք այն փաստերն են, որոնց մանրամասն խորհրդածութիւնից ու քննութիւնից յետոյ միայն՝ հնարաւոր կլինի հեղինակի ընդհանուր կերպարանքը որոշել, գնահատել, տեղաւորել մեր գրականութեան մէջ՝ իբր հասարակութեան և բարքերի վերլուծող, իբր դեղարուեստագէտ, իբր հոգեբան։

Պատմական անձնաւորութիւնները ու շրջանները անկարելի է ճշտութեամբ ներկայացնել, իրենց ընդհանուր յատկանիշներով, իրենց հիմքով, իրենց փիլիսոփայութեամբ՝ առանց այդ անձնաւորութիւնների գործերը և այդ շրջանների ղէպքերը ու երեւոյթները լրջօրէն և ուշադիր վերլուծման ենթարկելու։

Հեղինակի գործերը, ղէպքերը, երեւոյթները նրա երկերն են։

Գրական այդ վաստակների նկարագրութիւնը, բովանդակութիւնների ճիշտ և հիմնաւոր ցուցադրութիւնը, պատկերացրած անձերի ամբողջական կեանքը, մտածումները, զգացումները, դէպքերի իմաստն ու հոգեբանութիւնը—այս բոլորը անհրա-

ժեշտ են գրողի դէմքը սահմանելու համար։

Արդ, ինչ հիմքերով և ինչ մեթոդով դասաւորել, համախմբել այդ երեսուն գրական երեւոյթները։

Կարելի էր թերևս, իբրև դասակարգութեան սկզբունք ընդունել նրանց նիւթը, այսինքն՝ նայելով թէ՝ ինչ պարունակութիւն ունին այդ երկերը, ինչ խնդիրներ են շօշափում։ Կարելի էր վերցնել տեղը, միջավայրը,—այսինքն՝ գաւառ թէ մեծ քաղաքներ։ Հնարաւոր էր նաև, իբրև առաջնորդող հիմք ընդունել այն խաւը, հասարակութեան այն մասը—վաճառական, արհեստաւոր, մտաւորական—որ ներկայացուած է հեղինակի երկերի մէջ։

Այդ դասակարգութիւնները մէկ կամ երկու տեսակէտով լաւ են, բայց ուրիշ կողմերով շատ են անյարմարաւորեալ։ Եթէ ընդունէինք գրուածքների նիւթը իբրև հիմունք՝ հարկադրուած պիտի լինէինք անհատապատ և թերևս չափից աւելի բաժանումներ անել։ Երկերից մէկը ներկայացնում է գործարանատիրոջ ու այրուող բանուորների տարբեր հոգեբանութիւնը հրդեհի ժամանակ։ Միւսը՝ գաւառական գործակատարի հարստութեան տենչերը և «զարգացման» միջոցները։ Երրորդը՝ արհեստաւորի, վաճառականի, երիտասարդ սիրահարի տարբեր նամուսը։ Չորրորդը՝ սերոյ բարդ հանգոյցներն ու նրա երևոյթական հակասութիւնը։ Մի ուրիշը պատկերացնում է հոգեկան հաւասարակշռութիւնը կորցրած երիտասարդին։ Ապա ամուսնացող կնոջ տանջանքները, ապա արևելեան տաք և վարվուն սէրը, ապա մօր տառապանքները աշխարհական գաւակի համար... եւ այսպէս շարունակ։ Նիւթի մէջ սերտ համախմբուածք մտցնել թերևս հնարաւոր լինէր, բայց այդ հնարաւորութիւնը տե-

ղի պիտի ունենար բաւականաչափ պատակուած և հատուածական ձեւով, որ մենք չկամենանք անել։

Եթէ դեկավարուէինք տեղի, միջավայրի սկզբունքով՝ ընդամենը երկու համախմբում պիտի ներկայացնէինք՝ գաւառ և մեծ քաղաք, որոնցից առաջինը պիտի լինէր չափազանց փոքր, երկրորդը չափազանց մեծ։ Առաջինը չպիտի պարունակէր բնորոշ և տիպիքական հանգամանքներ. երկրորդը պիտի ծանրաբար, բարդուէր, բեռնաւորուէր մի շարք պատկերներով, պատմուածքներով, մեծ վէպերով, բոլոր դրամաներով և պէտք է ընդգրկէր Շիրվանզադէի գրեթէ ամբողջ գործունէութիւնը։ Այսպիսի պարագայում դասակարգութիւնը իր իմաստը և նշանակութիւնը պիտի կորցնէր։ Եթէ վերցնէինք այն խաւը, հասարակութեան այն դասը, որ պատկերանում է երկերի մէջ և ըստ այնմ համախմբէինք այդ երկերը — պէտք է նոյնպէս անհաւասար բաժանումներ անէինք։ Հասարակութեան մէկ դասին — բուրժուա-վաճառականա-արդիւնաբերական խաւին ընկնում էր խոշոր բաժին. միւսներին՝ արհեստաւորներին, մտաւորականներին փոքր բաժին։ Սրանից անկախ՝ մի քանի պատմուածքներ, գուցէ և փոքրիկ վէպեր, պէտք է առանձին-առանձին ներկայացնէինք — ուրիշն և պիտի չկարողանայինք իրագործել համախմբման պահանջը։ — Այդ պատմուածքները կամ հասարակական մանրը խմբակցութիւնների կեանքից են և կամ անորոշ, անյայտ դասից։

Բացի այս ինքնին աննպատակայարմար կացութիւնից՝ մի քանի վէպեր ու դրամաներ միաժամանակ ներկայացնելով հասարակութեան երկու դասակարգ — իրաւունք ունէին տեղաւորուելու և՛ մէկի և՛ միւսի մէջ։ Այսպիսով, երբեմն դժուար կլինէր ճշգրիտ սահմանագիծ պահպանել տարբեր համախմբումների սրանքում։

Կարելի էր նաև գրական տեսակների համաձայն դասակարգութիւններ կազմել. այսինքն առանձնապէս կանգ առնել պատմուածքների, կամ վէպերի՝ ապա դրամաների վրայ։

Սակայն այս համախմբումը ևս հանդէս կբերէր նախկին համախմբումների անհատապարութիւնը — պատմուածքների բաժինը չափազանց անչնչան, վէպերը շատ ընդարձակ, դրամաները ոչ առաջինների չափ փոքր և ոչ վերջինների չափ մեծածաւալ։

Վերոյիշեալ բոլոր դասակարգութիւնները — բացի մատնանշուած յատուկ թերութիւններից — ունէին նաև մի ընդհանուր պակասութիւն։ — Այդ սխեմաների մէջ՝ հեղինակի բոլոր երկերը պիտի ցրուէին աջ ու ձախ, կամ ու առաջ, առանց կապուելու Շիրվանզադէի տաղանդի զարգացման և հասունութեան շրջանների հետ։ Հեղինակի բարոյական աճման և կատարելութեան գործողութիւնը մեր կեանքի զանազան ժամանակներում՝ չէր արտայայտուի, չէր երևայ այդպիսի համախմբումների մէջ։

Որքան էլ այդ զարգացումը, հետզհետէ կատարուող այդ բնաշրջումը աննկատելի ու թաքուն լինի — այնուամենայնիւ նա գոյութիւն ունի և այսպէս թէ այնպէս բնորոշում է նրա երկերի ընդհանուր կերպարանքը։

Այսպէս. ի նկատ առնելով վերոյիշեալ սկզբունքների աննպատակայարմարութիւնը և աչքի ընկնող թերութիւնները, նաև հեղինակի կատարելագործութեան ընթացքը — մենք նախընտրելի հա-

մարեցինք իբրև դասակարգութեան հիմունք ժամանակը ընդունել։ Իր երեսնամեայ գրական գործունէութեան երկար ճանապարհին՝ Շիրվանզադէն, եթէ չի կարողանում կամ չի կամենում լուծին արձագանգ տալ տարիների ստեղծած բոլոր նոր խնդիրներին, նոր անձերին, նոր խաւերին—նա յամենայն դէպս կարողանում է որոշ միջավայրի, որոշ խնդիրների, որոշ անձերի զարգացումը փոփոխութիւնը տեսնել և արտայայտել։ Նրա ներկայացրած առևտրական-արդիւնաբերական միջավայրը բնաւ նոյնը չէ ութսունական թուերին և քսան-երեսուն տարի յետոյ։ Նրա ներկայացրած բուրժուան ժամանակի ընթացքում, կեանքի զարգացման հետ, փոփոխութեան ենթարկուեց։ Պատուի զգացումը, սէրը, հասարակական նախապաշարումները ներկայացուած են սկզբնական և յետագայ երկերի մէջ տարբեր կերպով։ Կինը, կնոջ ընտանեկան և հանրային դիրքը, հոգեկան կարողութիւնները ու բնաւորութիւնը, հակումները ու կամքը—անգամ միևնոյն դասակարգի մէջ—որոշ բնաշրջման ենթարկուեցին։ Շիրվանզադէի վէպերում և դրամաներում նկատելի է կնոջ այդ նշանակալից փոփոխութեան արձագանգն ու բացատրութիւնը։

Տարիների ընթացքում՝ նա աշխատեց նաև կեանքի նոր խնդիրներին և նոր անձերին տեղ տալ իր վիպագրութեան և թատերագրութեան մէջ։ Թէ որքան այդ մտադրութիւնը յաջող իրագործուեց—այդ մենք կըտեսնենք յետոյ, երբ քննելու լինենք նրա այդ կարգի երկերը—այժմ կամենում ենք արձանագրել միայն, որ այդ մտադրութիւնը ինքնին ժամանակի և կեանքի փոփոխութեան արգասիք է։

Անշուշտ, Շիրվանզադէի յետագայ բոլոր երկերը առաջինների նկատմամբ աւելի կատարեալ, աւելի հոգեբանական, աւելի խորունկ չեն միշտ և ոչ էլ աւելի անմիջական ու արժէքաւոր։ Այդ երկերի մէջ կան մի քանիները, որոնք երիտասարդ հասակի և մտածողութեան արտադրութիւն լինելով հանդերձ՝ այնուամենայնիւ աւելի են յաջողուած և հաւասարակշիռ՝ քան մի քանի ուրիշները, որոնք չափահասութեան և այրական շրջանի յղացումներ են։

Այս մասնակի երևոյթը չի խանգարում, սակայն, որ Շիրվանզադէի տաղանդը, իբրև դեղարուեստական հասունութիւն և իբրև ստեղծագործական կարողութիւն՝ վերջերը աւելի կատարեալ լինի, քան սկիզբները. կեանքի և հասարակութեան ըմբռնումը ընդհանրապէս աւելի ճիշտ, յղացումը աւելի գիտակցական, չափը աւելի գիտակցական, երկերի կառուցուածքը աւելի սերտ ու աւելի ամփոփ։

Այս տեսակէտները հիմք ունենալով—որոնց մանրամասն պարզաբանութիւնն ու արդարացումը իր տեղում ընթերցողը աւելի որոշ կըտեսնէ—մենք կըխօսենք նրա երկերի մասին ըստ ժամանակագրական կարգի և ըստ պատմական շրջանների։ Յարմարութեան համար, ներքին մի քանի առանձնայատկութիւնների պատճառով, նաև նիւթի մէջ հաւասարութիւն պահպանելու նպատակով մենք տասնամեակների կըբաժանենք նրա երեսնամեայ գրական վաստակների ամբողջութիւնը և այդպէս կըքննենք։

Այդ տասնամեակները իրարից խստապէս ու խորապէս չեն տարբերուում, ինչպէս մարդկային կեանքի և պատմութեան շատ շրջաններ, որոնց բաժանման գիծը և սահմանը առնասարակ դժուար է լինում վերջին ծայր ճշմարտութեամբ նշանակել։

Զանազան շրջաններէ տարբերութիւնը ընդհանրապէս այնտեղից չէ սկսւում, ուր մարդիկ կարողանում են տեսնել և հասատատել։

Մեր առաջացրած տասնամեակները վակուած, կղզիացած, մեկուսի շրջաններ չեն, իրենց ամուր և անթափանցիկ պատնէշներով։ Նրանք շատ յաճախ իրար մէջ են մտնում, խաչաձևւում, խառնւում, ընդգրկում միմեանց։ Այնուամենայնիւ նրանցից իւրաքանչիւրը ունի իր աւելի կամ պակաս շեշտուած առանձնայատկութիւնը։ Մենք կաշխատենք այդ տասնամեակների էական գծերի և յատկանիշների մասին ասել այն, ինչ որ կարելի է և ինչոր մենք կըկարողանանք...

V

ԱՌԱՋԻՆ ՏԱՍՆԱՄԵԱԿ (*մինչև 1890 թ.*)

«Հրդեհ նաւթագործարանում».—«Գործակատարի յիշատակարանից».—«Նամուսս».—«Օրիորդ Լիզա».—«Ինամատար».—«Նորերից մէկը».—«Արամբեկ».—«Ծաթմա և Ասադ».—Տասնեհինգ տարի անցած».—«Թանգադին կապանք».—«Նեվադար».—«Զուր յոյսեր»։

«Հրդեհ նաւթագործարանում»

Շերվանզադէի առաջին պատմուածքն է այս վերցրած Բադուի իրական, դժբախտ կեանքից։ Իվան Մարուքեան, հայ արդիւնաբերող, գործարանատէր՝ մէկ կողմից—անգոյն, տարտամ, ողորմելի բանուորներ, միւս կողմից՝ կազմում են պատմուածքի անկիւնը։ Գործարանատէրը, որի միակ նպատակն է հարստանալ անվերջ, ամեն գնով, բանուորների բարոյական և ֆիզիքական մահով։ «Եթէ դուք խիղճ և հոգի ունենայիք, ձեր կեանքը կըզոհէիք և չէիք թողնի, որ ձեր աղին, ձեզ կերակրողին ջուս հանեն։» Այսպէս է խօսում Մարուքեան։ Դրամատիրութեան ստեղծած անձն է այս կոպիտ եսասէրը անտեսական նոր կարգերի առաջ բերած հոգեբանութիւնը։

Բանուորներ, որոնց դիմակցութիւնը դեռ ևս խաւար է և քաօսական և որոնք կարծում են՝ թէ իրենց *վերազոյն պարտականութիւնն է* դրամատէրի տունը ճոխացնել։

Պատմուածքի մէջ այս սովորական, խաղաղ

ամենօրեայ յարաբերութիւնը երկուստեք քիչ փոխոխութեան է ենթարկուում: Հրդեհ է պատահել Մարութեանի գործարանում: Հարստութիւնն այրուում է, նաւթի շտեմարանները ոչնչանում են: Այս բացառիկ վայրկեանին գրամատէրի հոգեկան կեանքը և արամաբանութիւնը ամբողջովին դրսեւորուում է:

Անշուշտ նրա մէջ նոր բնաւորութիւն չէ առեղծուում այդ ժամին, այլ հինը—որ թերևս կապրողական դրութեան մէջ էր մասամբ—արտայայտուում է մէկին: Եւ այդ արամաբանութեան համաձայն՝ բանուորները պէտք է նետուեն կրակի բոցերի մէջ, դիակները պէտք է շպրտուեն մէկ կողմ, վիրաւորները պետք է մոռացուեն մահուան շունչի մէջ—որպէսզի նախկին գործարանը ազատուի:—Արդիւնաբերողի այս ուժգին կամեցողութեան հանդէպ բանուորութեան խաւարամած գիտակցութեան մէջ նոր արամադրութիւն է սաղմնաւորուում: «Մենք չենք կարող այդ թշուառներին անտէր, անօգնական թողնել ու հրդեհի մասին աշխատել: Այսքան մարդ է կորչում. թող կորչի գործարանդ, դու էլ...» աղաղակում են բանուորները: Եւ մինչդեռ աշխատաւոր հասարակութեան համամասարար գիտակից դասը այսպէս է մտածում և օգնութեան վազում մեռնողներին—միւս մասը տարերային, խօլական ու թշուառ՝ նետուում է գլխապատառ կատաղի բոցերի մէջ հրդեհը հանգցնելու և տիրոջ գործարանը փրկելու միամիտ ցանկութեամբ:

Կրակը, սակայն, չէ հանգչում: «Հաւատարիմ» բանուորները—ծերունի և երիտասարդ, ամուրի թէ ամուսնացած, պարսիկ թէ հայ—խանձւում են ահեղ տարերքի մէջ: Եւ գործարանը այրուում է մինչև վերջ...

Ճիչ, վայնասուն, աղիողորմ բացականչու-

թիւններ, հարազատների սրտաճմլիկ ողբեր... Ու այս բոլորի մէջ նորագոյն արդիւնաբերողի չոր ձայնը, որ յուսահատ ու բիրտ կանչում է.

«Գործարանս, գործարանս... Աստուած սիրէք, տունս քանդուեց»:

Շիրվանզադէի այս երկը իր ապրած, դիտած, ղգացած միջավայրի արտադրութիւնն է: Էապէս՝ պատկեր է ամեն ինչ, կեանքի արտաքինը միայն, դրսի անթափանցիկ նկարագրութիւնը: Բանուորների ներքին աշխարհը չէ երևում. այդ մութ զանգուածի շարժումներն ենք տեսնում և աղմուկը լսում: Անորոշ, տարտամ ու առեղծուածային... Արդիւնաբերող Մարութեանցը քիչ աւելի պարզ է: Նրա մէջ զգում էք նոր հասարակակարգի նախանշանը և Շիրվանզադէի ներկայացրած մի շարք անձերի նախատիպը...

Պատմուածքի արժէքը գլխաւորապէս երեւոյթի նկարագրութեան մէջ է: Այդտեղ նկատւում է անմիջականութիւն և անբռնազբօսութիւն: Կեանքի այդ հարազատ, մերկ պատկերը իրապէս տպաւորութիւն է թողնում:

Շիրվանզադէն իր այս առանձին երկի մէջ արդէն պատմելու, նկարագրելու որոշ դիւրութիւն է հանդէս բերել: Սկսւում է շատ պարզ և բնական կերպով, առանց աւելորդ նկարագրութիւնների և առանց անտեղի մանրամասնութեան: Կառուցման այս յատկութիւնը հեղինակի համար էական և բնորոշ երևոյթ է, որ յետագայ գրուածքների մէջ աւելի ցայտուն և աւելի շեշտուած պիտի արտայայտուի:

Գործարանի զանազան մասերի—նաւթային պահեստների, շտեմարանի, երկաթէ կաթսաների, իւղ մաքրելու բաժնի, պատերի, բակի և ամբոխի

յաջող ու ճշգրիտ նկարագրութիւնը նման նկարագրութիւնների նախերգանքն է, և իրական ուղղութեան որոշ ապացոյցը։

«Դործակատարի յիշատակարանից»

Այս երկրորդ պատմուածքը արդէն բաւական յաջող է, մանաւանդ իր սկզբնաւորութեան մէջ։ Սահուն, պարզ, դիւրին կերպով Շիրվանզադէն նկարագրում է գաւառի մի աղքատ ընտանիք—որի գաւակը, տասնեօթ տարեկան Յակինը, նոր է վերջացրել ուսումը—և ուր այդ առիթով համեստ հացկերոյթ է պատրաստուած։ Գաւառական կեանքի անցողակի շրջանը իսկոյն ներկայանում է ընթերցողին։ Հետաքրքրական բարքեր, բնորոշ խօսակցութիւններ, տիպիքական երևոյթներ հասարակական հին և նոր կարգերի արտայայտիչ անձեր՝ մէկէն կանգնում են մեր առջև։ Կօշկակար Սարգիսը, Յակինի հայրը, կամենում է հիւրերի օգնութեամբ վրճռել իր գաւակի ապագան։ «Հոչակաւոր» Տէր-Վահակի ուսումնարանից յետոյ ինչ պիտի անի աղքատ կօշկակարի որդին, կեանքում մի կտոր հաց ձեռք բերելու և հանգիստ ապրելու համար։

Այստեղ ահա երևան են գալիս մեր միջավայրի տարբեր կողմերն ու տարբեր ըմբռնումները։

Դարբին Մարութի խորհրդով լաւ կլինի, որ Յակինն անպայման արհեստ սովորի։ Ինքը արհեստաւոր է, իր գաւակին նոյն արհեստն է սովորեցնում։ Թող Սարգիսն էլ իր որդուն արհեստաւոր դարձնի։ Աստուած ողորմած է՝ արհեստաւորը մարդը սոված չի մնալ...

Մանրավաճառ Թորոսը, ապահոն, տարբեր

կարծիք է յայտնում։ Արհեստը դատարկ բան է, նա փոր չի կշտացնում. նա մարդու կեանք է մաշում։ «Դու ինքդ, պարոն Մարութ, մեր քաղաքի մէջ ամենաառաջին արհեստաւորն ես համարւում, բայց ինչ ես առաջացրել մինչև այսօր, երբ կեանքիդ մեծ մասն արդէն անցել է։ Ընդհակառակ, որ անդադար ծանր մուրճը ձեռքումդ, կրակի առաջ, արիւն քրտինքի մէջ, տաք երկաթ ծեծելով գիշեր ցերեկ չարչարւում ես—ընտանիքը շարաթական մի անգամ տաք կերակրի երես չի տեսնում։ Արհեստը բացի նրանից, իր նիւթապէս չի ապահովում մարդուս, մինչև անգամ բթացնում էլ է նրան։ Ինչի՞ է նմանում արհեստաւորը մի հասարակութեան կամ մի հանդիսի մէջ... Արհեստը մարդուս չի կրթում, այլ մի տեսակ կենդանի է դարձնում»։

Որքան էլ մանրավաճառի խօսքերը խիստ ու բիրտ լինին՝ այնուամենայնիւ նրանք որոշակի արտայայտում են մեր հասարակութեան նոր դասի տեսակէտը և նրա տնտեսական աշխարհահայեացքը։ Բայց արհեստաւորի որդին, աղքատ Սարգսի զաւակը ուրիշ ինչ կարող է անել։ Կարո՞ղ է վաճառական դառնալ, հարստանալ, հասարակական նոր խմբակցութեան մէջ մտնել, հանդէսների մէջ պատուաւոր տեղ բռնել...

«Աշխարհում անկարելի բան չկայ—լսւում է նորից մանրավաճառի իմաստուն խօսքը—ես ինքըս տաս տարի գործակատար եմ եղել դատարկ ձեռքով. ինչպէս տեսնում էք, ինքս այսօր մանրավաճառ եմ և մօտ տաս հազարի կարողութիւն ունիմ։ Բայց ես դեռ ոչինչ՝ համեմատելով ուրիշների հետ։ Մտիկ տուէք մեր քաղաքի ամենաերեւելի վաճառականներին, նրանցից որ մէկն է լիք գրպանով եղել առաջ։ Ամենքն էլ իր ժամանակին

գործակատարներ կամ խանութի ծառաներ են եղել իսկ այժմ ամեն մեկը հարիւր հազարների առու-տուր է անում: Վաճառականութիւնը մի այնպիսի գործ է, որ ինքը սովորեցնում սիրողին փող աշխատելու հնարը: Հարկաւոր է միայն գտնել նրա գաղտնիքը, այնուհետև ամեն ինչ ինքն իրան քեզ հեշտանում է:» Ո՞րն է այդ գաղտնիքը: Ի՞նչպէս և ինչ ճանապարհով աղքատի զաւակը կարող է տարիներ շարունակ գործակատարի ու ծառայի պաշտօն վարել և միաժամանակ բարձրանալ հասարակական պիրամիդի գլուխը:—կեանքի փոփոխութեան, միջավայրի նորութեան հետ միասին ծնւում է նաև համապատասխան փիլիսոփայութիւն, որի օգնութեամբ՝ շատ թէ քիչ «տրամադրուած» մարդիկ կարողանում են իրենց համար ուղի հարթել և հոսանքի ուղղութեամբ առաջ ընթանալ: Հին «սերունդի» և հին անտեսութեան մարդիկ—կօշկակար Սարգիսն ու Դարբին Մարութը այդ աշխարհահայեացքից բան չեն հասկանում: Մանրավաճառ Թորոսը երկար տարիների ընթացքում «դաստիարակուել է» այդ մթնոլորտում և իւրացրել գործնական մարդկանց փիլիսոփայութիւնը: Սակայն Աչէին, գրաճանաչ, աչքաբաց, կարուկ, խելացի, ուշիմ, սրամիտ պատանին աւելի լաւ կարող է իւրացնել այդ փիլիսոփայութիւնը, եթէ կամենայ և եթէ միջավայրը նպաստէ:

«Ուր որ լինես, ինչ գործի որ կպչես—այսպէս խրատեց Թորոսը Աչէին—աշխատիր քեզանից մեծերի հաւատարմութիւնը գրաւել դէպի քեզ խոնարհութեամբ, լռութեամբ: Առաջին քո հոգսը լինի մեծերիդ աչքում սիրելի դառնալ, փաղաքշելով, կեղծաւորելով, շողոքորթելով: Ըրիոյլ տաս, որ քեզ խաբեն, բայց աշխատիր, որ ամեն ժամանակ ինքդ ուրիշներին խաբես քո խելքով:—Այնտեղ, ուր տեսնես թէ մի կոպէկի անգամ շահ ունես, ամեն միջոց գործ դիր այդ շահը չկորցնելու: Վնաս չունի, հարկաւոր եղած ժամանակ սուտ էլ ասա, միայն թէ մէջտեղ շահ ունենաս... Խոնարհ և հլու հպատակ եղիր աղաներիդ. կատարիր բոլորը, ինչ որ կըհրամայեն, թեկուզ և ծանր, ինչպէս օձ, բայց պահիր քեզ խեղճ, ինչպէս մի ոչխար և դու շուտով կըմտնես աղաներիդ դրպանը»...

Մենք դիտմամբ քիչ աւելի երկար կանգ առանք այս մանրամասնութիւնների վրայ, որովհետև սրանք բաւական բնորոշ են մեր հասարակական-տնտեսական կեանքի որոշ բոպէի համար: Նրանք պատկերացնում են այն միջավայրը, այն պայմանները, այն փիլիսոփայութիւնը ու այն կենսաձևերը, որոնց մէջ ծնունդ առին Շիրվանզադէի երկերը և որոնց ուսումնասիրութիւնն անհրաժեշտ է այդ երկերից բաւական շատերը հասկանալու համար:

Հեղինակի ներկայացրած գործնական բոլոր անձերը այդպիսի միջավայրի ծնունդ են և այդ աշխարհահայեացքի դեկավարութեամբ են քայլում կեանքի մէջ, ապրում, վաստակում, ընտանիք կազմում: Աչէին եղակի, մեկուսացած անհատ չէ մեր կեանքում: Նա մտացածին անձնաւորութիւն չէ: Նա մեր փոխուող շրջապատն է. մեր գաւառը, որ դուրս է գալիս հին անտեսութիւնից, հին կարգերից, հին աշխարհայեցողութիւնից: Իր անձնաւորութեամբ և իր բարոյականութեամբ նա մի ամբողջ շրջան է ընդգրկում:

Այս պատմուածքի կենդրոնական անձը՝ Աչէին դուրս է բերուած բաւական յստակ և պարզ: Տասնեօթ տարեկան հասակում՝ մանելով Ագա Գա-

լումեանների խանութը իբրև ծառայ, իբրև գործակատար՝ նա ասես մէկէն կախարդւում է միջավայրում: Դիտում է հարուստ և լեցուն խանութի վայելուն իրերը, տեսնում է Գալումեաններին դարդարուած դահլիճը, առատ անտեսութիւնը, փարթամ ապրուստը, համեմատում մինչև այդ իր տաժանների հետ—և մի տիրական զգացում, մի նոր իղէալ պաշարում է նրան: Նա ձգտում է հարստանալ: Մանրավաճառ Թորոսի խրատը հնչում է նրա ականջին և նա ամեն կերպ աշխատում է խոնարհուել իր տէրերի առաջ: Շիրվանզադէն բաւական ճիշտ և բնական կերպով ներկայացնում է Յաչիի առաջին տպաւորութիւնները: Դուք տեսնում էք կեանքի ախուր և ողբերգական էջը: Գաւառացի պատանին, զուարթ, անհոգ, որի ճակատը, անգամ աղքատ ընտանիքում, երբէք չէ կնճռոտուել ծանրը խոհերով, որի գլուխը բնաւ չէ յղացել դժուարին խնդիրներ—այստեղ, Գալումեանների խանութում, մեծ փորձութեան հանդէպ, նեարդերը լարած է, ականջները ունկած, աչքերը սրած:—Այդ խանութի սպանիչ միջավայրը լաւ է պատկերացած:—Այլ ևս բնութիւնը, արևը, գարունը, կապոյտ երկինքը չեն Յաչիի երազների առարկան: Դրամ, ապրանք, հարստութիւն—ահա թէ ինչպիսի տենչեր են բուն դնում նրա մատաղ հոգում: Յաջող է դուրս բերուած դրամասիրութեան կիրքը, որ հետզհետէ ախտաւոր կերպարանք է ստանում և կլանում Յաչիի բովանդակ գոյութիւնը: Հասարակական շէնքի գագաթը բարձրանալու համար, Յաչին գործ է դնում այն ամբողջ իմաստութիւնը, որ մանրավաճառ Թորոսը նրան յայտնա-

գործել է: Հեղինակը լաւ է, բնական և անբռնազբօս այդ իմաստութեան առաջին արտայայտութիւնների ընթացքում: Հետզհետէ, սակայն բաւական թուլանում է և չի կարողանում նախկին հետաքրքրութիւնը և անմիջականութիւնը պահպանել:

Յաչիի դժուարին ճանապարհի վրայ նա, բացի հարստութիւնից, դնում է նաև Գալումեաններին մեծ եղբօր աղջկանը, գեղեցիկ Թամարին, որին հաւանում է Յաչին և որի հետ կամենում է անպայման ամուսնանալ:—Այս երկու կրքի միջև—հարստութիւն և սէր—իսկական դրաման և իրական պատմութիւնը շատ բան են կորցնում:

Հարստութեան կիրքը, իբրև կենդրոնական գաղափար՝ բաւական է Յաչիի հոգեբանութիւնը զարգացնելու համար:

Երկու հաւասարապէս դժուարին ցանկութիւնների մէջ մտնելով Յաչին այլ ևս չէ երևում բնական, իրական, խարակտերիստիք կերպարանքով: Նա մասամբ դառնում է հեքիաթային, վիպական անձնաւորութիւն: Եւ վերջը երբ գործակատար Յաչին՝ իր իմաստութեան խելացի գործադրութեան հետևանքով դառնում է հարուստ Յորիատափոր Աղուշանօվ—Շիրվանզադէն կամենում է, որ նա անպատճառ ամուսնանայ Թամարի հետ: Հեղինակը մանրամասն պատմում է՝ թէ ինչպէս Յաչին, դեռ գաւառական քաղաքում, դեռ աղքատ ու աննշան գործակատար, լուր է տարածում իր և Թամարի կարծեցեալ սիրահարութեան, համբոյրների մասին, որպէսզի ոչ ոք չմօտենայ Գալումեաննների աղջկան և որպէսզի նրանք, անճարացած ու յուսահատ, Յաչիին վեսայ դարձնեն: Եւ դուրս է գալիս, որ առանց այս մեքենայութիւնների Յաչին բագու չէր գնայ, Ռուսաստան չէր ճանապէ և թերևս չէր հարստանայ: Դուրս է գալիս, որ հարուստ և դուրեկան Թամարը իրօք տանն է մնում, որ ոչ ոք չէ

կամենում մօտենալ նրան նոյն իսկ Բագրեւում, առևտրականների և գործնական մարդկանց այդ տիպիք կենդրոնում: Եւ այս բոլորը նրա համար, որպէսզի Աչէին—հարստութեան հետ—տիրանայ նաև Թամարին:

Այդպէս. բնական, ճիշտ, հանդարտ պատմուածքի մէջ այս պարագաները բաւական շփոթութիւն են մտցնում՝ տարուբերելով երկը երկու ուղղութիւնների արանքում, տատանելով երկու կրքերի մէջև, շարժելով երկու տարբեր անիւների վրայ:

Մէկ հիմնական գաղափարի զարգացումը և մէկ կենդրոնական կրքի աճումն ու հոգեբանութիւնը պատմուածքը կպահէր իրականի սահմաններում և նրան չէր տալ այն հեքիաթային, միամիտ վերջաւորութիւնը:

Շիրվանզադէի այս սկզբնական գործը—Աչէի անձնաւորութեան հետ—պատկերացնում է նաև գաւառական կեանքի մի քանի առանձնայատուկ կողմերը: Նրա արժանիքը ոչ հոգեբանական վերլուծման և ոչ էլ գեղարուեստական կատարելութեան մէջ է: Այդ երկը հետաքրքրական է նրանով, որ պարզ, պատկերաւոր և սահուն՝ մեր անցողիկ անտեսութեան և հասարակական շերտաւորման սկիզբն է նկարում...

«Նամուս»

Շիրվանզադէի երկերի մէջ պատուաւոր տեղ է բռնում «Նամուսը»: Այնտեղ ցոլանում է գաւառական քաղաքի, Շամախիի կեանքը իր հետաքրքրական մանրամասներով: Հասարակութեան բարքերը, սովորութիւնները, դասակարգերը, կին թէ

տղամարդ—մանուկներ թէ ծերեր, չար ու բարի—այս բոլորը, ընդարձակօրէն և լայնօրէն, անդրադառնում են «Նամուսի» մէջ: Շիրվանզադէն, բացի արտաքին, հոսնանուտ իրականութիւնից՝ աշխատել է թափանցել նաև անձերի և հասարակութեան հոգեբանութեան մէջ: Աշխատել է որոնել, գտնել այն հիմնական սկզբունքը, որի համաձայն մարդիկ շարժուում են, ապրում, ստեղծագործում և որի վրայ հիմնուած է կեանքը ամբողջովին: Այս դժուարին հետախուզութեան մէջ նա կարողացել է բաւական ազատ շարժուիններ գործել:

Նա ձգտել է վերլուծել մարդկանց արարքները, մարդկանց սովորական, ամենօրեայ յարաբերութիւնները: Եւ տարրալուծելով այս բոլորը՝ նա փորձել է վեր հանել մի միայնակ գաղափար, սկզբունք, հիմունք—գաւառական կեանքի և բարքերի վերջնական խարխխն ու յենարանը:

Պէտք է խոստովանել, որ այս ծանր աշխատանքը նա կարողացել է բաւարարաչափ իրագործել: Կարելի էր իհարկէ աւելի անողոք, աւելի ամփոփ, աւելի համոզիչ ու աւելի որոշ ներկայացնել այդ բարոյական խարխխը: Մի բան, որ պակասել է հեղինակին: Բայց մի երիտասարդ վիպասանի համար այդքանն էլ գոհացուցիչ է:

Շիրվանզադէն իր «Նամուս»-ով ցոյց է տուել, որ շատ լաւ կարողացել է ղիտել գաւառի կեանքը, միաժամանակ տեսնել շատ բան, ըմբռնել այն շարժուիների հիմքը և թափանցել այն գործերի իմաստը, որոնք ծաւալուում են թշուառ ու եղերական միջավայրում: Եւ նրա դիտողութեան ու հասկացողութեան համաձայն՝ գաւառի կեանքը հանգչում է նամուսի, պատուի վրայ:

Մի մարդ չկայ այդ հետաքրքրական վէպի

մէջ, որ մի սխալ անհրաժեշտութեամբ – ուղղակի թէ անուղղակի, գիտակցաբար թէ բնազդաբար — շարժուելիս չլինի նամուսի երկաթէ օրէնքների ներքոյ: Եւ Բարխուդարի պէս հաստատակամ, խելացի, ճշմարտախօս, ազնիւ մարդը, և պարզամիտ ու բարի Հայրապետը, և դեռատի, զգայուն, մաքուր ու երազական Սուսանը, և լրջմիտ, հաւատարակշռուած Ռուստամը և սիրող, թուլամիտ ու տըգէտ Սէյրանը. և՛ արբեցողները և՛ խաղացողները և՛ աշխատասէրները և՛ բարոյականները — բոլորի գործերի վրայ էլ, անդառնալի ու սպառնական, կախուած է նամուսի դաժան ու խստասիրտ ուրուականը:

Հին յոյների աշխարհահայեացքով՝ անգամ ամենաուժեղ ու կորովի քաղաքացին գտնւում էր ճակատագրի աներևոյթ իշխանութեան տակ: Կամքերը և վճռականութիւնները, հերոսութիւնները ու քաջագործութիւնները — ամենը ենթակայ էին արտաքին կոյր և անգիտակցական ոյժերի ազդեցութեան: Եւ յանկական կեանքը մեծագոյն ու սըրտաճմլիկ դրամաներն էր ցուցադրում աշխարհին՝ առաջացած մարդկային կամքի և ճակատագրական ոյժերի սոսկալի ընդհարումից: Շիրվանզադէի «Նամուսի» մէջ ճակատագրի փոխարէն գործում է պատուի ամենակարող զգացումը: Մարդիկ ամենքն էլ գերի են նրա ձեռքին: Սէրը խորտակւում է նրա ծանրութեան ներքոյ, բարեկամութիւնը մեռնում է նրա դիւական շունչի մէջ, առաքինին տառապում է նրա հարուածներից, անմեղութիւնը, շուշանէ ամբծութիւնը խեղդւում է նրա արեան մէջ: Ամբողջ կեանքը հևում է այդպէս...

Նրա պառաջ ոչինչ են Բարխուդարի կամքը, Սուսանի հոգին, Ռուստամի հաւասարակշռութիւնը,

Սէյրանի անբախտութիւնը, Հայրապետի բարութիւնը: Նա թագաւորում է ամենքի վրայ: Դուք տեսնում էք թէ ինչպէս մի ամբողջ աշխարհ գալարւում է, տարուբերւում, ընկնում, բարձրանում, ծիծաղում, լալիս, ճչում նամուսի կախարդական ոլորտի մէջ: Դուք տեսնում էք թէ ինչպէս մի ամբողջ կեանք թաւալւում է այդ ախտաւոր շրջանակում, որից դուրս գալու ոչ մէկ հնարաւորութիւն չունի: Հասարակական և անհատական այս սրտառուչ դրաման վէպի մէջ յայտ է արտայայտուած...

Դերձակ Բարխուդարը և բրուտ Հայրապետը լաւ հարևաններ են և սրտակից բարեկամներ: Իրար փոխադարձաբար օգնում, իրար պաշտպանում են նեղութեան մէջ: Ամբողջ քաղաքը զարմանում է այս երկու մարդկանց անխախտ և անդաւաճան բարեկամութեան վրայ: Դերձակը հաստատակամ, ամուր, անյողդողդ բնաւորութեամբ, խիստ ու կըտրուկ, խելացի, ուժեղ և յամառ: Բրուտը թուլակամ և պարզամիտ, մեղմ և ենթարկուող: Եւ սակայն նրանց բարեկամութիւնը անկեղծ է և հաւասար: Նրանց ընտանիքները ապրում են համաբնակ միասին: Շիրվանզադէն շատ լաւ է դուրս բերել այս երկու հարևանների կեանքը: Բնական, չափազանց կենդանի, որոշ ու յստակ: Նա կարողացել է հոգեպէս, բարոյապէս ապրել, զգալ այդ կեանքը, որի գեղարուեստական արտայայտութիւնը յաճախ գրաւիչ է և յուզիչ: Բարխուդարի և Հայրապետի յարաբերութիւնը դուք, ասես, չէք կարդում վէպի մէջ, այլ տեսնում էք կեանքում, այնքան նրանք անսայթաք և ճշմարիտ են ներկայացած:

Այս փոխադարձ բարեկամութեան մէջ դեռ

վաղ մանկութիւնից իրար սիրում են Սուսանը— Բարխուդարի աղջիկը և Սէյրանը – Հայրապետի տղան: Երկու ընտանիքներն էլ երջանիկ են: Երկու կողմից էլ համակրական վերաբերմունք կայ դէպի այդ անկեղծ, մաքուր սէրը: Թւում է թէ ոչինչ այլևս չի կարող խանգարել այդ ինքնաբուխ, հրաշալի կապը և այդ հինաւուրց բարեկամութիւնը:

Եւ սակայն անհատների երջանկութեան գլխին գաւառական սպատուի ուրուականն է պտտում: Սուսանն ու Սէյրանը — երկու ջերմագին սիրահարները — գաղտնի տեսակցութիւն են ունենում միմեանց հետ, գրկախառնւում են, համբուրւում են: Իսկ տեղական բարքերի, հասարակութեան անխախտ պահանջով սիրային այդ մերձեցումները մինչև ամուսնութիւն տեղի չպիտի ունենան: Ծնողները և քաղաքը իմանում են այդ:

Հասարակութիւնը, խստասիրտ և դաժան, չափազանցական ձևով տարաձայնում է Սուսանի և Սէյրանի կապը: Բարխուդարը արհամարհւում, անարգւում է քաղաքում: Նրա ծնողական խիղճը վրդովւում է, պատիւը խրոխտ ոտքի կանգնում: Պէտք է Սէյրանին ընդ միշտ հեռացնել. պէտք է վաղեմի բսրեկամական կապերը կարել Հայրապետի հետ. պէտք է Սուսանին ուրիշ մարդու հետ ամուսնացնել, որպէսզի հասարակական գիտակցութիւնը համոզուի՝ թէ նրա աղջիկը ամբիծ է, և եթէ իրօք այդպէս չլինի, Բարխուդարը այլևս չպիտի ապրի աշխարհում:

Շատ սրտառուչ է այդ աղնիւ, խստաբարոյ, ուժեղ մարդու ներքին կեանքը: Ցաւով ու խորունկ վշտով նա հեռանում է Հայրապետից, որպէսզի *պատիւը* կարողանայ փրկել:

«Ես, որ ճշմարտութեան համար, իմ անունս

խոտակ պահելու համար, ամենից հեռու եմ քաշուում: Ես, ես, որ իմ նամուսիս համար դառած մարդ եմ, իմ յօժար կամքով Սիբիր կըգնամ, բայց էդ բանները դարսուլ չեմ անել: Ինչ փող, ինչ դովլաթ, ինչ մեծ-մեծ աներ, ես թքել եմ դրանց վրայ, հալալ քրտինքովս փող եմ աշխատում, կէս քաղցած, կէս կուշտ ապրում եմ, թէ ինչ է, նամուս մաքուր պահեմ. նա էլ Սէյրանի ու Սուսանի պէս լակոտները կեղտոտում են: Բաս թէու էս բեղերիս, ես իսկի աղամարդ չեմ... Հայրապետ, լաւ լսիր, էսօրուանից դէն քեզ հետ բան չունեմ, պրծաւ գընաց:

... Ասել եմ, պիտի կատարեմ, թէ չէ նամուսս ինձ կըխեղդի...»

Իր որոշումը իրագործելու համար Բարխուդարը կանգ չէ առնում ընտանիքի, կնոջ դիմադրութեան առջև: Նրա համար ամեն ինչ այլևս երկրորդական է, քանի որ իր զաւակի մաքրութեան հարցն է դրուած հրապարակի վրայ և իր պատուի չարաշուք խնդիրը:

«Կնիկ, տասն անգամ ասել եմ, հիմա վերջին անգամն եմ ասում, որ ես արածս քեզանից լաւ եմ հասկանում. իմ խելքը քամին չի տարել, որ աչքերս բաց-բաց ինքս ինձ աւելի խայտառակեմ: Ինչ կասեն լսողներն ու տեսնողները, եթէ աղջկաս Հայրապետի տղի հետ պսակեմ: Ախար չէ՞ն ասիլ որ հէնց դորթ էս մարդու աղջիկը մին կտոր կեղտոտ շոր էր, տուին կեղտոտողին որ ինքը լուանա: Կասեն ու մին քիչ էլ կաւելացնեն: Դու հո ճանաչում ես շամախեցիներին, գիտես, որ նրանք ինչքան են սիրում ոտքի տակ կոխոտել էն մարդուն, որ մի անգամ սըլկուել է ու ցեխի մէջ ընկել: Խելքի եկ, Թող, մեր երեսի աբռուը (ամօթը)

մի կերպ պահենք... Թող տասը Սէյրան-Սուսաններ փչանան, միայն թէ անունս ու պատիւս կեղտից սրբուի»:

Եւ այսպէս, նամուսի նամար, Բարխուդարը միմեանցից բաժանում է սիրահարներին.— Սուսանը ընտանիքի նամուսի համար—համաձայնւում է Ռուստամի կինը լինել. Սէյրանը, իր նամուսը փրկելու համար, Ռուստամին պատմում է Սուսանի և իր փոխադարձ սէրը՝ նշանակելի յաւելումներով. Ռուստամը, նոյնպէս նամուսի համար, զոհում է Սուսանին: Եւ իւրաքանչիւրի մէջ նամուսը արտայայտւում է՝ նայելով տարիքին, բնաւորութեան, սեռին, դաստիարակութեան ու հակումներին:

Այս ընդհանուր խնդրի շուրջը՝ վէպում շատ մարդիկ են երևան գալիս: Նրանք ամենքը հաւասարապէս պայծառ չեն, ամենքը հաւասարապէս յաջող, համոզիչ ու կենդանի չեն: Շիրվանզադէն մի քանիսների վրայ լաւ է աշխատել ու մտածել, միւսները դուրս են եկել տարտամ և անգոյն:

Բարխուդարը ամենից լաւ է իրագործուած: Սկզբից մինչև վերջը նա քայլում է հետևողական ինքն իրան, հաւատարիմ իր հակումներին ու բնոյթին: Հաստատակամութեան, խստաբարոյութեան, աննկուն ազնուութիւն և առաքինութիւն, որոնց երբէք նա չէ դաւաճանում: Եւ այս կրկնակի ուժեղ մարդու մէջ դրաման խորն է թաղւում ու հետու ծաւալւում: Շիրվանզադէն՝ առանց ուռուցիկ, փայլուն ֆրազների, առանց շինծու գոյների, առանց ճարտասանական և պաթետիկ ձևերի՝ կարողացել

է ցուցահանել այդ մարդու վիշտը և նրա ամբողջ կերպարանքը: Բարխուդարի գործերի, շարժուձևերի, արարքների վրայից հեղինակը դիւրութեամբ ու վարպետութեամբ է վերցնում քօղը և հանդարտութեամբ ու մեղմիւ է բաց անում նրա ներսը: Դուք տեսնում էք այդ մարդուն առանց մշուշի և առանց ստուերի: Դուք նրան չէք դատապարտում, դուք նրան չէք նզովում. դուք նրան հասկանում էք: Գիտէք, որ նա իր դարի զաւակն է, իր միջավայրի ծնունդը, մեր պատմութեան և մեր իրականութեան արդիւնքը—և այդ բոլորի հետ միասին, գիտէք, որ նա առաքինի, մաքուր, բարոյական մարդ է: Դուք ապրում էք այդ մարդու տանջանքների հետ: Եւ երբ իմանում էք, որ նա Սուսանի ամուսնութեան առիթով՝ փոխանակ ուրախանալու՝ չուան է պատրաստել անձնասպանութեան համար, եթէ աղջկայ ամբծութիւնը չհաստատուի—դուք խորապէս և անկեղծօրէն յուզւում էք:

Սուսանը ևս—հակառակ մի քանի վրիպումների—ընդհանրապէս լաւ է գծուած: Տարօրինակ է թւում, երբ այդ փոքրիկ, անգիտակից գոյութիւնը սկսում է վերլուծել մարդկանց գործերի ներքին շարժառիթը, երբ նա մտածում է, որ մարդկանց արարքների միակ մղիչը զգացմունքն է և ոչ բանականութիւնը, երբ նա քննում է, փիլիսոփայական մեթոդներով, աշխարհիս գոյութեան իմաստը:—Այս բոլորը որքան էլ բնական լինին սիրահարուած էակի հոգուն ու տրամադրութեան առհասարակ—այնուամենայնիւ Սուսանի դաստիարակութեան, զարգացման և տարիքին համապատասխան չեն և լաւ չեն զուգադիպւում: Այս և այսպիսի փոքրիկ աննշանութիւններից ան-

կախ՝ Սուսանի անուրջոտ դէմքը, վերին աստիճանի քնքուշ, զգայուն ու սիրող սիրտը յաջողութեամբ է ցուցահանուած։ Շիրվանզադէն այսպիսի մի քանի անձեր ունի, որոնցով — ասես — նա յաճախ չէ զբաղւում և որոնց մէջ, սակայն, արտացոլւում է նրա գեղարուեստական-բանաստեղծական կարողութիւնը։ Շիրվանզադէի գրականութիւնը շատ բան կըշահէր և նրա երկերի ընդհանուր միջավայրը, ֆօնը, բանաստեղծական շունչ կունենար — եթէ նա այս անձերի վրայ աւելի յաճախ և աւելի ուշադրութեամբ կանգ առնէր։

Սուսանը իր զգացմունքներով մաքուր է, հըմայիչ, պարզ և խորունկ միաժամանակ։ Հեղինակը կարողացել է այդ գաւառացի աղջկայ մէջ թագնուած գեղեցկօրէն մարդկային գծերը լուսաւորել և ընթերցողի առջև դնել։ Նրա երազները, նրա ցաւագին խոկումները, նրա մտատագ և դողդոջուն յոյսերը, նրա վիրաւոր հիասթափութիւնները, նրա մըխացող վշտերը հաղորդւում փոխանցւում են ձեզ։ Եւ դուք տեսնում էք թէ ինչպէս մի հայ Ջիւլիէտտա, հեռաւոր կիսաւեր մի քաղաքում, սուսերի պէս անխօս և անուրջի պէս լուռ՝ ուշ երեկոյեան դուրս է գալիս իրենց պատշգամբը և ծառերի անշարժ սաղարթների միջից, գիշերուայ անհունութեան միջից, իր անգիտակից հոգու մեղմ թախիծի միջից՝ կաթնագոյն լուսինը դիտում և տրամօրէն արտասւում։

Այս տխրութիւնն ու տառապանքը երբէք չեն հեռանում նրանից։ Բարխուդարի նամուսի համար՝ նա առանց ընդդիմադրութեան ամուսնանում է Ռուստամի հետ։ Եւ չսիրելով նրան, իր ամուսնական պարտականութիւնները լռելեայն կատարելով, երևոյթապէս դաւաճանելով իր ներքին ձայնին՝ նա իրօք երբէք չէ լքում իր թաքուն վշտերը և երբէք չէ մոռանում իր ծածուկ, հեռաւոր սէրը։

Եւ իր այդ մաքուր, անրջական, պատանեկան սէրը խոստովանելով Ռուստամի փայլուն դաշոյնի առջև՝ մեռնում է նրա ոտքերի տակ։

Սուսանի կեանքը մի իրական, խոր, սրտառուչ դրամա է։ Նրա պարզ հոգու տեսանելի ցաւերի տակ ապրում է մի բարդ դոյութիւն և շարժւում է մի աներևոյթ ցաւ։

Շիրվանզադէն փորձել է այդ բարդ դոյութեան և այդ աներևոյթ ցաւի գէթ մի անկիւնը բանալ և այդ մասամբ յաջողուել է նրան։ Այս երկու էական և մի քանի երկրորդական անձերի — Շուշանիկի, Հայրապետի, Մարիամ-Բաջիի, Գիւլնազի դէմքերը յաջողութեամբ նկարելով՝ Շիրվանզադէն սայթաքել է Սէյրանի և Ռուստամի վրայ, որոնք նոյնպէս գլխաւոր դերակատարներ են։

Սէյրանը սկզբում վատ չէ։ Վէպի ընդհանուր տրամադրութեան հետ զուգընթաց նա — նայելով իր տարիքին և դիրքին — կարողանում է շարժուել առանձին գծի վրայ։ Բարխուդարի մերժումից յետոյ՝ Սէյրան կորցնում է իր հաւասարակշռութիւնը։ Սուսանից նա պահանջում է ներգործական ընդդիմադրութիւն և վախուստ. ու երբ Սուսանը, նրան խորապէս սիրելով հանդերձ, յայտնում է թէ ինքը բարոյական իրաւունք չունի իր հարազատ հօրը այդքան ուժեղ հարուած տալ և նրա մահուան պատճառը դառնալ, թէ ինքը աւելի լաւ է համարում իր վիրաւոր սէրը, Սէյրանի սէրը խորունկ պահել և հետը գերեզման տանել — Սէյրանը այլ ևս կորցնում է ինքն իրան։

Նա չէ կարողանում հասկանալ այդ բարդ դրամայի բովանդակ ծանրութիւնը, չէ կարող-

նում ներքինապէս տանջուել և իր սիրոյ կորուստը ազնուօրէն ողբալ, Սուսանի ցաւը վեհանձնօրէն զգալ, ճակատագրի դառնութիւնը մարդկայնօրէն ճաշակել։

Սրանից յետոյ այլևս դրամա չկայ Սէյրանի մէջ, նուրբ, յուզիչ, առաքինի դրամա։ Նա ընկնում է արբեցողների շրջանը, անձնատուր է լինում անբարոյական ու բիրտ կենցաղի, փողոցային սրիկաների հետ քարեերով յարձակում է գործում Սուսանի և Ռուստամի ամուսնական թափօրին, լկտի և անազնիւ խօսքեր է արտասանում Սուսանի անմեղութեան հասցէին, վերջապէս, ամիսներ յետոյ, ճանապարհւում է Թէմիր-խան-Շուրա, մտնում Ռուստամի խանութը, դիտմամբ հարբում, որպէս զի կարողանայ բազմութեան մէջ յայտարարել՝ թէ Սուսանի հետ ինքը սիրային և սեռային յարաբերութիւն է ունեցել։

Այս բոլորի մէջ ոչ մի դրամա չկայ և հոգեկան ոչ մի խորունկ զգացմունք։ Մենք թերևս կարողանանք ներել Սէյրանի բարոյական ձախորդութիւններն ու վրիպումները և միջավայրի, ընկերների, նամուսի, ինքնասիրութեան, հասարակական արհամարհանքի ու անարգանքի արդիւնք համարենք նրանց մեծ մասը—այնուամենայնիւ իրաւաբանական այդ տեսակէտը չենք կարող նոյնացնել հոգեբանական-գեղարուեստական տեսակէտի հետ և չենք կարող նրա այդ ձևով—դրամայի, ողբերգութեան հերոս համարել։ Մենք կարող ենք բացատրել ամեն ինչ, մենք կարող ենք մինչև անգամ հասկանալ նրան—բայց մենք չենք կարող համակրել, յարգել նրան։ Մինչդեռ Սէյրանը կարող էր գէթ թեթև յարգանքի առիմանները ճնալ, եթէ Շիրվանզադէն նրա համար այնքան թիւրիմացութիւններ չստեղծէր։ Վէպի ընթացքը — հիմնական գաղափարի յուցադրութիւնը, մինչև իսկ այն վերջնական լուծումը, որ Շիրվանզադէն գերադասել է՝ անհրաժեշտ չեն դարձնում Սէյրանի այդ աստիճան ճակատագրական վրիպումները։

Վերջին պահուն խղճի խայթը, բարոյական զգացմունքի զարթնումը, գիտակցութեան փայլը, ինքնասպանութիւնն անգամ—թերևս մասամբ հապճեպ արտայայտուած լինելու պատճառով—չեն կարողանում մոռացնել նրա սխալը։ Նրա կեանքի ներդաշնակութիւնը ճնում է ընդմիշտ խախտուած...

Շիրվանզադէն կարող էր—մինչև իսկ յարգելով իր բոլոր տեսակէտները Սէյրանի շրջանի և դաստիարակութեան մասին—աւելի ներդաշնակ, աւելի անսայթաք, աւելի բնական և աւելի գեղեցիկ դուրս բերել այդ մարդուն ու ազատել նրան այդքան բիրտ թիւրիմացութիւններից...

Չորրորդ կենդրոնական անձը—վաճառական Ռուստամը ևս յաջող չէ արտայայտուած։ Սկզբում նա բաւական հաւասարակշռուած է, լրջախոհ և հանդարտ։ Հարսանիքի գնացքի ժամանակ տարօրինակ դէպքեր են տեղի ունենում, թափօրի վրայ յարձակում են գործում, ջահը հանգցնում են, Ռուստամի հասցէին հայհոյական, վիրաւորական խօսքեր են ուղղում, Սուսանը ուշաթափւում է և անգիտակցութեան վայրկեանին մի քանի անգամ «Սէյրան» անունն արտասանում—այս բոլորը ոչինչ, մի կերպ անցնում են։ Եւ Ռուստամը, որ լսում և տեսնում է ամենը՝ չէ կորցնում իր առնասրտութիւնը։

Հարսանիքի ճաշկերոյթին, իր տանը, աւելի որոշ և աւելի պարզ նախադասութիւններ է լսում։ Հիւրերից մի քանիսը առանձին, գաղտնի, խօսում

են Սէյրանի և Սուսանի սիրային յարաբերութիւնների մասին։ «Զահիլ ազայ, Զահիլ աղջիկ... հ'ըմ... բաս դու Զահիլութիւն չե՞ս արել... Աստուած մի արասցէ, որ Ռուստամը իմանայ... Եւ Ռուստամը նրանց յետևում կանգնած լսում էր այս բոլորը։ Եւ սակայն դարձեալ չէ կորցնում հաւասարակշռութիւնը։ Վաճառականի հանդարտ, անայլայլ կշռադատող միտքն է, որ թէև կասկածում է, թէև տանջւում, թէև յուզւում--բայց միշտ տիրում է ինքն իրան։

Հարսանիքից յետոյ, համոզուելով որ չարախօսութիւնները անհիմն, անտեղի և միանգամայն ղրպարտութիւն են եղել, առանց որևէ կերպ իր նախկին կասկածները Սուսանին յայտնելու՝ մեղրամիսը անցնում է նրա հետ և ապա ճանապարհւում կրկին Թեմիր-խան-Շուրա։ Այստեղից սկսած նա բաւական ձևափոխուած կերպարանքով է հանդէս գալիս։ Գինու ազդեցութեան տակ՝ Սէյրանը անպատիւ յայտնութիւններ է անում Սուսանի մասին, իբրև ապացոյց յիշում է նրա կրծքի խալը— և այնուհետև Ռուստամը զառնում է բոլորովին անճանաչելի։ Մեր առաջ այլ ևս նախկին հանդարտ, ծանրաբարոյ, խոհեմ մարդը չէ, այլ մի անզուսպ, անհաշիւ, վերին աստիճանի խանդոտ անձնաւորութիւն։ Որ Ռուստամը կարող էր առհասարակ— վաճառական լինելով հանդերձ —այդպիսի նկարագիր ունենալ, այդ հասկանալի է և ընդունելի։ Նրա կարագրուած շրջանը, հերոսի ծագումը, նրա անհատական տրամադրութիւնը, լեռնական միջավայրն ու բնաւորները կարող էին ծնունդ տալ մի խանդոտ վաճառականի։ Մանաւանդ որ այն ժամանակուայ մեր առևտրական դասը, դաշտերում, քաղաքակիրթ կենդրոններից հեռու, նորածագ, միշտ

չրջապատուած հին բնազդներով, հին բարքերով ու աշխարհահայեացքով՝ տակաւին որոշ ինքնատիպ հոգեբանութիւն չէր ստեղծել։

Ռուստամը, մի քանի վերապահութիւններով ու յապաւումներով—կարող էր ընդհանրապէս այնպէս լինել, ինչպէս կամեցել է հեղինակը՝ խանդոտ, կատաղի, ծայրայեղօրէն պատուախնդիր։

Այդպիսով նա—եթէ մանաւանդ Շիրվանզադէն աւելի համոզիչ և աւելի պայծառ ներկայացնէր նրա անհատական հակումներն ու միջավայրի ապրեստական շունչը—չէր ներկայացնի հոգեբանական դասակարգային հակասութիւն և առհասարակ չէր դիտուի իբր մերժելի երևոյթ։

Բայց խնդիրն այն է, որ Ռուստամը հաւատարիմ չէ ինքն իրեն։ Նա, իր դասակարգից աւելի՝ (եթէ կամենանք անպատճառ խօսել դասակարգային ազդեցութեան մասին) հեռուղական չէ իր սկզբնական կերպարանքին և իր նախնական պատկերին։

Ընդհանրապէս համբերողամիտ և կշռադատող Ռուստամը մոռանում է ինքն իրան, զարմանալի արագութեամբ, առանց մի տեղ հանգստանալու անգամ, եօթն օր շարունակ, անընդհատ, անվերջ ճանապարհ է կտրում և «անհամբերութեամբ դիմում է դէպի Սուսանը, դիմում է դէպի այն արարածը, որ «Ռուստամի նամուսը ծախել է ուրիշներին»։ Թեմիր-խան-Շուրայից հասնում է Շամախի, մտնում է տուն, մօրը միւս սենեակն ուղարկում, առանց իր կասկածների մասին նրա հետ բառ անգամ փոխանակելու, առանց ամենաչնչին հարցուփորձի և հետախուզութեան, ապա կնոջն առանձնացնում, կուրծքը բաց անում, տխրահրեշակ սև խալը տեսնում, վայրենաբար ու կատաղի,

ատաճիներով արիւն քամում ժբախտ Սուսանի մարմարէ կրծքից, չեռոյ՝ առանց ուշադրութիւն դարձնելու կնոջ հաւատիացումներին, աղերսանքներին, երդումներին՝ դաշոյնը հանում և անմիջապէս անշնչացնում նրան։

Ռուստամի այս բոլոր գործողութիւնները նկարագրուած են շատ հապճեպ, առանց հիմնաւոր բացատրութեան, առանց համոզիչ պատճառաբանութեան։ Դուք տեսնում էք վոխակերպուած Ռուստամին, դուք նրան չէք ճանաչում, դուք նրան չէք հասկանում անգամ։ Բնաւորութեան մէջ հակասութիւններ են նկատւում, բացի այդ՝ անորոշ, անգոյն, տարտամ երևոյթներ են տեղի ունենում, կարևոր բացեր են ծնում և դուք չէք կարողանում պարզ ու յստակ պատկերացնել Ռուստամին։ Նրա հոգին ձեզ համար փակ է, մտածումներն ու խոհերը ձեզ չեն հաղորդւում, կասկածներն ու ցաւը ձեզ անմատչելի են մնում։

Անհրաժեշտ էր, որ տխուր ու սարսափելի ողբերգութեան այդ անակընկալ դերակատարը և վէպի վախճանն ստեղծող այդ կենդրոնական անձը աւելի պարզ, աւելի լրիւ հանդէս գար և աւելի համոզիչ գործէր...

Վէպի գեղարուեստական համաչափութիւնը լաւ է պահպանուած առաջին մասում. երկրորդում նա կաղում է և գրական իրագործումը այլևս չէ կատարւում առաջուայ յաջողութեամբ։ Առաջին մասը ամփոփ է, խիտ, բաւարարաչափ թանձր, ևնման է խորունկ, հաւաքուած գետի, որ հոսում է հանդարտ, առանց աղմուկի, առանց ջրերը ափերին ցրելու։ Կամ նման է մի գեղեցկուհու, որ վիշերը

խնամքով ժողոված, քայլում է մեղմիւ և մտածկոտ։

Երկրորդ մասը սկսում է ցրուել, կապերը բաւական հեռանում են միմեանցից, կենդրոնական գաղափարը տատանւում է, անձնաւորութիւնների յարաբերութիւնները կորցնում են նախկին անմիջականութիւնն ու ինքնաբխութիւնը...

Շիրվանզադէն լայն հիմքերի վրայ է դրել իր վէպը, ընդարձակ ու բազմակողմանի յատակ է ընդգրկել, բարդ կրքեր ու զգացումներ է հրապարակ հանել—և սակայն չի կարողացել այդ բոլորը հաւասար և յարատև յաջողութեամբ զարգացնել։ Այդ մեծ հիմքերն ու լայն խնդիրները ձեռքում պահելու, նրանց շարունակ դիտելու և հսկանալու, նրանց ամբողջական ընթացքը պարզ տեսնելու համար, հարկաւոր էր աւելի մեծ գեղարուեստական կարողութիւն և աւելի նուրբ հոգեբանական ըմբռնում։

Սէյրանի վրիպումներն ու սայթաքումները, Ռուստամի տարտամութիւնն ու անհետևողականութիւնը, վէպի արիւնահեղ ու յախուռն վախճանը՝ մէկ կողմից արդիւնք են նուրբ հոգեբանութեան բացակայութեան և միւս կողմից պայմանաւորում են դրուածքի երկրորդ մասի ցրուածութիւնն ու անսերտ կապը։ Գեղարուեստագէտին վէպ գրելու ցուցումներ և բանաձևեր չենք կարող տալ, ի հարկէ, բայց մեզ թւում է, որ այս երկի ամբողջութիւնը լաւ իրագործուած կլինէր և երկրորդ մասի անկատարութիւնը տեղի չէր ունենար, եթէ Շիրվանզադէն Սէյրանի վրայ ուշադրութեամբ աշխատէր և եթէ նա չուղղուէր դէպի նման վախճանը։ Եթէ Սէյրանի հոգին քեզ աւելի աղնիւ ներկայացնէր և բնաւորութիւնը քիչ աւելի ասպետական—մի բան, որ

չափազանց հնարաւոր էր—ոչ երկրորդ մասը այդքան անյայտ կլինէր և ոչ դրուածքը այնպիսի բռնի ու անակընկալ լուծում կստանար։

Այդ ձևով դրաման կըկենդրոնանար Սէյրանի մէջ, իսկական, ազնիւ, խորը դրաման։ Եւ Սէյրան՝ նայելով հեղինակի գերադասութեան և դէպքերի պատճառական կապին՝ կամ կը խեղդուէր իր վշտի և տառապանքի մէջ և կամ, ասպետօրէն ու վեհանձնօրէն, հանգիստ կըթողնէր մի անմեղ, մաքուր կնոջ և իր վրէժը կառնէր նրա ամուսնուց։

Այսպիսի վախճանից բացի՝ դրաման կարող էր ուրիշ ընթացք ևս ստանալ։ Հեղինակը վէպի առաջին մասում մի քանի նշանակելի հնչիւններ է արձակել, որոնք այլ կերպ են տրամադրում դրուածքի ուղղութիւնը։

Սուսանը շատ է սիրում Սէյրանին։ Նա առանց այդ սիրոյ չի կարող ապրել։ Նրա հոգին, սիրտը, ամբողջ էութիւնը լեցուն են այդ զգացմունքով։ Միաժամանակ սիրելով նաև իր ծնողներին, յարգելով նրանց նամուսը, նրանց պատիւը՝ Սուսանը որոշում է ամուսնանալ ուրիշի հետ՝ միայն մի նպատակի համար—որ հասարակութիւնը, քաղաքը իմանայ նրա անբծութիւնը։ Այդ մեծ զոհաբերութիւնից յետոյ նա—իր որոշման համաձայն—պիտի կատարի ուրիշ աւելի մեծ զոհաբերութիւն։ Չկամենալով և չկարողանալով ապրել—Սէյրանից բացի—ուրիշ ոչ ոքի հետ՝ նա պիտի ինքնասպան լինի։ Այս մասին Շիրվանզադէն քանիցս խօսել է. այս տոնի վրայ նա որոշ երգ է ստեղծել։ Եւ թւում է թէ՝ յետագայում դրաման այդ ուղղութեամբ պիտի ղարգանայ։

Շիրվանզադէն լքում է, սակայն, ազդարարած սկիզբը և փոխում վէպի ընթացքը։ Երկի

շարունակութեան մէջ նա երկարօրէն նկարագրելով Սուսանի տանջանքները՝ հարևանցի է կանգ առնում, սակայն, ինքնասպանութեան վրայ։ Ընթերցողը պատահաբար իմանում է միայն, որ Սուսանը—յանցանք և մեղք համարելով—խորշում է ինքնասպանութեան մտքից։

Թէ ինչպէս կատարուեց այդ, թէ ինչպիսի դրամա առաջացաւ այդ հողի վրայ, թէ ինչո՞ւ Սուսանը յետոյ է միայն յանցանք համարում իր փայփայած միտքը և իր ընդդրկած որոշումը—այդ մասին Շիրվանզադէն ոչինչ չի ասում։

Մեզ թւում է, սակայն, որ Սուսանի պէս խորունկ սիրող և անյոյս տանջուող կինը—ինչպէս ներկայացուած է վէպի մէջ—իր անբծութեան հաստատութիւնից յետոյ, խզճի հանգստութիւնից յետոյ՝ հանդարտութեամբ կիրագործէր իր որոշումը։

Այս լուծումը, արդարև, օսմանեան լինելու վտանգի առջև է կանգնած—քանի որ կեանքի մէջ յաճախ չէ պատահում—բայց անբնական չէր լինի, եթէ մանաւանդ Շիրվանզադէն բաւականաչափ զարգացնէր և հիմնաւորէր։ Սուսանի պէս բարդ և խորացած էակներ ևս շատ չկան մեր գաւառական աղջիկների մէջ։ Նրանց տխուր կեանքին և գերազանցապէս յուզիչ ճակատագրին անհամապատասխան չէր լինի նման վախճանը և իրականութեան չէր հակասի։ Այս ճանապարհով վէպը—ինչպէս մենք ենք երևակայում—աւելի ամբողջական կըլինէր, աւելի ամփոփ, աւելի հաւաք։

Այսպէս թէ այնպէս՝ Շիրվանզադէն իր վէպի այժմեան վախճանի նկարագրութիւնից առաջ՝ պէտք է ներկայացնէր Սուսանի հրաժարման հիմնաւոր դրաման և համոզիչ պատճառաբանութիւնը

կամ բնաւ պէտք է չզարնէր ինքնասպանութեան լարը այնքան որոշակի և այնքան շեշտուած...

«Նամուսի» վրայ մենք բաւական երկար կանգ առանք նախ այն պատճառով, որ նա Շիրվանզադէի լաւագոյն և ընդարձակ գործերից մէկն է և յետոյ այն պատճառով, որ նա նիւթ ունի գաւառի կեանքը։ Գաւառի այն դասակարգը և հասարակութեան այն մասը, որ այնուհետև—«Ցաւագարը» մի կողմ թողած—չպիտի երևայ Շիրվանզադէի վէպերում և դրամաներում։ Միւս երկերը՝ ներկայացնելով մեծ քաղաքի կեանքը և ընդգրկելով գլխաւորապէս որոշ խաւեր՝ բաւական իրար նման են՝ թէ տիպերի, թէ արծարծած խնդիրների և թէ ընդհանուր միջավայրի տեսակէտից։ Ընթերցողը նրանց հասկանալու համար բաւական դիւրութիւններ ունի։ Մինչդեռ «Նամուս»-ը, իբրև մեկուսացած երկասիրութիւն, նոյն չափով հասկանալի դառնալու համար աւելի մանրամասն ցուցադրուելու պահանջ ունէր։

Գաւառական կեանքի, հին միջավայրի հասարակական, տնտեսական մտաւոր, բարոյական պայմանների արտադրած այս համբաւաւոր զգացումը—նամուսը—որ յաջողութեամբ արտայայտուել է Շիրվանզադէի վէպի մէջ՝ նոր հասարակութեան, նոր տնտեսութեան և նոր բարոյականութեան հիմունքը չէ կազմում այլևս։

Այստեղ «պատիւը» տարբեր ձևով է երևան գալիս, տարբեր ոգով ու շարժառիթներով գործում և տարբեր հետևանքներ առաջացնում։ Նա խորապէս ազդում է ժամանակի տիրող մթնոլորտից, դրամատիրութեան զարգացումից, կրթական և մտաւոր յառաջադիմութիւնից, նոր բարոյական հա-

մակարգից և յամենայն դէպս այն հիմնական, կենսորոնական նշանակութիւնն ու դերը չէ հանդէս բերում, ինչ որ հին հասարակութեան մէջ...

Այստեղ ևս յաճախ հանրային բարքերի և հանրային խստասրտութեան զոհ է գնում մարդը։ Բայց այստեղ նախ՝ այդ աւանդութիւնները շատ աւելի ամոքուած, կերպարանափոխուած ձևով են երևան գալիս և յետոյ՝ դրանց դէմ կանգնում է անհատը, նոր ժամանակների բարոյականութեամբ խրախուսուած և հասարակական-տնտեսական յեղաշրջումներից ազդուած։

«Նամուս»-ի մէջ, պատուի այդ չարաշուք, տարամերժ ըմբռնման դէմ բողոք չկայ։ Մի պատահական ձայն միայն, գրուածքի վերջում, բաւական անակընկալ կերպով, արիւնահեղ ողբերգութեան տպաւորութեան տակ՝ մեղաւոր է համարում իրենց «քաղաքի վատ սովորութիւնը»։ Եւ այսքանը միայն։ Այդ անհնչան ու ողորմելի ձայնը կորչում է անսահմանութեան մէջ իբրև դատարկ հնչիւն...

Նոր հասարակութեան մէջ և Շիրվանզադէի հետևեալ գրուածքներում ծաւալւում է անհատի կռիւը՝ ընդդէմ այդ «վատ սովորութեան»...

«Օրիորդ Լիզա»

Այս փոքրիկ պատմուածքի սկզբում յայտնւում են երկու ընկեր, որոնցից մէկը—Գէորգ-քանանուհինգ տարեկան, սիրահարուած, տխուր ու մելամաղձիկ տրամադրութեան մէջ է։

Միւսը—Արզաս Պետրովիչ Մախսուդեան—երեսունհինգ տարեկան, սիրուց զրկուած և դէպի

սէրը վատ արամադրուած։ Կեանքում այլևս ոչինչ չի որոնում։

Իր երիտասարդ բարեկամին մխիթարելու համար՝ ներկայացնում է սէրը և կլինն առհասարակ, այնպէս, ինչպէս նրանք հանդէս են եկել իր կեանքում։ Ութ-տաս տարի առաջ Մախսուդեանը, փայլուն և եռանդուտ երիտասարդ է, յաջող բժիշկ, գեղեցիկ, շնորհալի։ Ամենքը ուզում են հետը բարեկամանալ։ Օրիորդները նամակներ են ուղարկում, սէր են առաջարկում։ Բայց Մախսուդեան անուշադիր է դէպի կեանքի յաջողութիւնները։ Վերջը ծանօթանում է վաթսունամեայ մի պաշտօնաթող հայ չինովնիկի հետ—Բուդդան Մարտինիչ Բադամով, որ ունի երկու աղջիկ՝ Ժենիա, քսաներկու տարեկան և Լիզա քսանհինգ տարեկան։ Ծերունին բաւականաչափ հարուստ է, աղջիկները օժիտաւոր են և բաւական բարեկեցիկ կեանք են վարում։ Ոչնչից զրկուած չեն, դաշնամուր, ազատ կեանք, ընտանեկան կապերի բացակայութիւն։ Կարող են ապրել ինչպէս ուզում են, սիրեն՝ ում կամենում են։ Լիզան սիրում է Մախսուդեանին։ Եւ ընդունուած սովորութեան համաձայն՝ կամենում է ամուսնութիւնից առաջ իմանալ իր սիրահարի ամբողջ կեանքը։ Մախսուդեան ոգևորուած պատմում է։ Այնուհետև Լիզայի մէջ կամաց-կամաց սառնութիւն է առաջանում դէպի Մախսուդեան, ոչ թէ որովհետև նրա կեանքը որևէ անհաճոյ բան էր պարունակում, այլ որովհետև այդ կեանքը ամբողջովին յայտնի դարձաւ Լիզային և կորցրեց իր զաղտնի հրապոյրը։ Օրիորդի սառնութիւնը տեսնելով՝ երիտասարդ բժիշկը աւելի է տաքանում։ Նրա սէրը երեխայական կերպարանք է ստանում։ Թոյլ, անկամք՝ խընդրում է Լիզային, վերջինս յամառում է իր սառնութեան մէջ։

Այդ միջոցին նոր մարդ է հրապարակ գալիս, քիմիագէտ Սէթեան։ Սրա յատկութիւններից, ինչպէս մենք, նոյնպէս և Լիզան՝ այնքանը գիտենք, որ նա վիթխարի, հակայամարմին, քիչ խօսող, գաղտնաշունչ անձնաւորութիւն է։ Մեզ համար՝ աւելի հակակրելի՝ քան համակրելի։ Լիզայի համար, ընդհակառակը, շատ համակրելի։ Երբ Բադամովի դահլիճում, աղջիկների և Մախսուդեանի ներկայութեամբ՝ խօսքն է բացւում բժշկականութեան մասին՝ ամենքի—և առանձնապէս Լիզայի վրայ—բուժիշկ Մախսուդեանի գիտական բացատրութիւններից աւելի, իրը թէ աղդում է Սէթեանի հետևեալ նախադասութիւնը, որ նա արտասանում է հպարտ և խորհրդաւոր եղանակով.

«Բժշկականութիւնը դրական գիտութիւն չէ...»

Լիզան նրան սիրում է և երբ Մախսուդեանը նրանից բացատրութիւն է պահանջում՝ Լիզան պատասխանում է. «Մարդը բնութիւնից ծնուած է կամ ստրուկ լինելու կամ ստրկացնելու ձգտումներով։»—«...ես խօսում եմ այն բարոյական և հոգեկան առանձնայատկութիւնների մասին, որոնք մի էակի անդիտակցաբար հպատակեցնում են միւսին։»—«...ես զգում եմ, որ կնոջ համար աւելի դիւրին է և քաղցր հպատակուել՝ քան թէ հպատակեցնել։ Հէնց այդ հպատակութիւնն է, որին մարդիկ սխալմամբ անուանում են կնոջ սէր։ Ես այսպէս եմ հասկանում...»

Լիզան Մախսուդեանի մէջ չէ տեսնում այդ հպատակեցնող զօրութիւնը, թողնում է նրան և ամուսնանում Սէթեանի հետ։

Շիրվանզադէի այս փոքրիկ երկը ձգտում է ներկայացնել կնոջ հոգեբանութիւնն ընդհանրապէս և վերլուծել սիրոյ էութիւնն առհասարակ։ Լիզայի արտասանած բառերի մէջ կայ ճշմարտութեան մի խոշոր բաժին. և այսքանը միայն։ Բայց թէ ինչպէս է այդ ճշմարտութիւնը երևան գալիս օրիորդի կեանքում՝ այդ մասին Շիրվանզադէի պատմուածքը շատ քիչ բան է ասում, և այն ինչ որ ասում է՝ այդ ճշմարտութեան իրրև ապացոյց չէ ծառայում։ Այստեղ է «օրիորդ Լիզայի» վրիպումը և անկատարութիւնը։ «Հոգեկան և բարոյական առանձնայատկութիւնները», որոնց մասին խօսում է օրիորդ Լիզան, կարող են, այո՛ «մի էակի անդիտակցաբար հպատակեցնել միւսին»։

Կեանքի մէջ այդ շատ է պատահում. և թերևս ամեն սէր իր էութեան խորքում այդպիսի մի անգիտակցական հպատակութիւն է թագցնում։

Օրիորդ Լիզայի մէջ, սակայն, բնաւ այդպիսի սէր չկայ։ Նա ոգևորուեց Մախսուդեանցով, առանց իմանալու նրա կեանքը, առանց ճանաչելու նրա հոգեկան և բարոյական առանձնայատկութիւնները։ Եւ ընդհակառակը, թողեց նրան, երբ իմացաւ նրա անցեալը, որի մէջ ըստ ամենայնի ոչ մի վատ, ոչ մի անհաճոյ բան չկար, Մախսուդեանից յետոյ՝ նա հիացաւ Սէթեանի վրայ, որի մասին ևս աւելի քիչ բան գիտէ, որի հոգեկան, բարոյական առանձնայատկութիւնները միանգամայն անյայտ են նրան և որի մէջ տեսնում է միայն մի հակայամարմին, վիթխարի ուժեղ տղամարդ։

Հակառակ Լիզայի փիլիսոփայութեան և հղինակի լուռ համաձայնութեան՝ օրիորդը հպատակւում է Սէթեանի հակայ թիկունքին աւելի՝ քան

նրա «հոգեկան և բարոյական առանձնայատկութիւններին»։

Շիրվանզադէն բաց չէ արել օրիորդ Լիզայի հոգին, նա չէ ներկայացրել նրա ներքին խոկումներն ու երազները. նա ամենևին չէ յայտնագործել Սէթեանի բարոյական առանձնայատկութիւնները։ Մենք այդ բոլորից ոչինչ չենք իմանում։ Մենք իմանում ենք միայն այն, որ Լիզան որոնումների աղջիկ չէ—ինչպէս ինքը կամենում է ներկայանալ—,որ նա սէրն ընդունում է իբրև քըմահաճոյք, իբրև վայրկենական տիրապետութիւն և որից ձանձրանում է այնպէս շուտ, ինչպէս իր դաշնամուրից և իր կարդացած վէպերից։

Մախսուդեանին նա չէ սիրել. չէ սիրում նաև Սէթեանցին։ Նա ձանձրացաւ առաջինից. թերևս նոյն դիւրութեամբ պիտի ձանձրանայ նաև երկրորդից։ Որ կինը—որքան և զարդացած ու խորը լինի—կարող է անգիտակցաբար հպատակուել տղամարդու հոգեկան և բարոյական առանձնայատկութիւններին—այս միտքը որոշ վերապահութիւններով դեռ ընդունելի է։ Սակայն, այդ հոգեբանական տեսութեան մասին մենք չենք ուզում խօսել, որովհետև օրիորդ Լիզայի մէջ և Շիրվանզադէի պատմուածքում առհասարակ թիւրիմացութիւն է նա և միանգամայն անտեղի։

Օրիորդ Լիզան շատ տարտամ,անգոյն, անկերպարան հոգեբանութիւն է հանդէս բերում, որպէսզի հնար լինի նրա անձնաւորութեան վրայ հոգեբանական այդ տեսութիւնը պատուաստել և նրանով արտայայտել։Շիրվանզադէն—մեր կարծիքով—պարզապէս մոլորութեան մէջ է ընկել։ Եւ կամ նա կամեցել է հեգնել օրիորդ Լիզային և ծաղրել նոր ժամանակների այն թեթևամիտ օրիորդներին, որոնք իրապէս ենթար-

կուելով տղամարդու վիթխարի կազմուածքին՝ փիլիսոփայում են ինչ որ հոգեկան և բարոյական առանձնայատկութիւնների մասին: Այս բառերը օրիորդ Լիզայի ընտանում և նրա համար կեղծիք են միայն, իրականութեան աղաւաղում և ճշմարտութեան քմահաճ մերժում:

Օրիորդ Լիզան նրբօրէն և խորապէս զգացող կին չէ: Բացի այդ՝ նա առհասարակ լրջօրէն սիրող չէ: Սէրը նրա համար խաղալիք է և տպաւորութիւնների հաճոյական փոփոխութիւն: Բարեկեցիկ և իդէալազուրկ ընտանիքի, ապահովուած չինովնիկի, մակերևոյթապէս քաղաքակրթուած միջավայրի զաւակն է նա, որ կարող է հրապուրուել շատերով, ամուսնանալ դրանցից մէկի հետ, առանց խորունկ յարգանքի և առանց իսկական սիրոյ...

Շերվանզադէի պատմուածքը հետաքրքրական է միայն իբրև այդպիսի կնոջ նկարագրութիւն:

«Նորերից մէկը»

Բամալեան ազգանունով մի երիտասարդ, քսանևհինգ տարեկան, որ պարապել է ուսուցչութեամբ և արտադրել է գրական ինչ որ գործեր— այժմ կանգնած է յաւիտենականի մտածողութեան և կեանքի անխորհուրդ ընթացքի հանդէպ: Նախկին երազները մարում, անհետանում են: Կեանքը թւում է աննպատակ և սոսկ: Գրքերը, փիլիսոփաները խարում են մարդկութիւնը: Խոստանում են երջանկութիւն և հանգիստ—ու դրանց փոխարէն կսկիծ և դառնութիւն են տալիս: Պատանեկան հասակում երազել է հասարակական գործունէութիւնն ու բարիքը և սակայն ոչինչ, ոչինչ չի կարողացել արդիւնաւորել:

Նա որոնել է այն, ինչ որ հնարաւոր չէ գտնել, ինչ որ առհասարակ գոյութիւն չունի: Նա միշտ զգացել է, յուզուել և կեանքը նրան թուացել է մի տխուր, արիւնոտ դրամա: Կարդացել է յոռետես փիլիսոփաների և նշանաւոր բանաստեղծ-դեղարուեստագէտների յղացումները և այդ բոլորը աւելի ևս դառնացրել են նրա կեանքը:

Եւ այսօր, աւելի քան երբէք, աշխարհը նրան թւում է սոսկ և զզուելի: Զգում է իր ոչնչութիւնը, չէ կարողանում դիմադրել կեանքի բիրտ հոսանքին, գիշերային յախուռն մտքերի ազդեցութեան տակ՝ վառարանն է նետում իր յիշատակարանը— ուր ամփոփուած է նրա կեանքի անխորհուրդ անցեալը—և աղաղակում. «Այժմ ես նոր մարդ եմ»... Առաւօտեան զարթնում է յոգնած, ուժասպառ և բժիշկ խնդրում...

Շերվանզադէի այս փոքրիկ պատկերը անհաւասարակշիռ մտաւորականի ուրուագիծն է ներկայացնում: Մեր ուրոյն դաստիարակութեան, մեր դպրոցների, մեր հասարակական կեանքի, մեր մանուկ քաղաքակրթութեան հիւանդոտ և վրիպած մասերի արձագանքն է նա, որ պատկերացել է անորոշ և անկապ անհատականութեան մէջ խառնուած:

Գրուածքը ամենևին մշակուած չէ և տպաւորութիւն չէ թողնում:

Բագուի նոր կայգերի և դրամատիրութեան յանցանքների համառօտ սրատաճմլիկ նկարագրութիւն է այս վէպիկը։ Շիրվանզադէն այդտեղ առաջին անգամ աշխատել է դուրս բերել կապիտալիստ-արդիւնաբերողին իր ներքին կեանքով, իր կրքերով, իր սուր հաճոյքներով և այլասերուած հոգեբանութեամբ։

«Հրդեհ»-ի մէջ նկարագրուած գործարանատէրը մի քանի ժամ է միայն երևան գալիս և այն էլ միայն մէկ գծով. իր անսահման վոդասիրութեամբ և կեղեքումով։ «Գործակատարի յիշատակարանից» պատմուածքը ներկայացնում է գլխաւորապէս գաւառական վաճառականին։ Աչքին իբրև Արիստաֆօր Արուշանով՝ իր քաղաքային կեանքով մեզ յայտնի չէ։ Մի քանի տեղ, կցկտուր ու պատահաբար, պատմուած է նրա շուայտ կեանքի մասին Ռուսաստանում։ Եւ այսքանը միայն։ Մենք չենք ծանօթանում նրա ներքին կեանքի մանրամասների հետ. ոչ էլ տեսնում ենք այն հետևանքները, արդիւնքները, որոնք կարող էին առաջանալ այդպիսի շուայտ կենցաղից։

«Հենամատար»-ի մէջ հայ դրամատէրի այդ կողմը իր բոլոր տգեղութիւններով, իր զարհուրելի հետևանքներով կանգնած է մեր առաջ։ Մենք տեսնում ենք այն սոսկալի աւերածը, որ գործում է մեր դժբախտ կեանքի մէջ դրամի զօրութեամբ անձեռնմխելի և անպատժելի դարձած մարդը։ Մենք տեսնում ենք ընտանիքների երջանկութիւնը, անհատների կեանքը անմեղ աղջիկների պատիւը՝ զոհաբերուած բիրտ և անառակ դրամատէրի կըրքերին...

Պետր Ստեփանիչ Դօլմազով, հարուստ արդիւնաբերող, երիտասարդ, բայց ծերուած ու վերին աստիճան այլանդակուած դէմքով, հիւանդոտ, տգեղ— կարողանում է իր գործակատար կարլ Պօպօվի և նրա կնոջ մօտ ազնիւ ձևանալ, որպէսզի տիրանայ նրանց գեղեցիկ աղջկան՝ Կատերինա Կարլօվնային։ Վերջինս՝ նկատած լինելով Դօլմազովի գռեհիկ մտատրութիւնները ու ցանկութիւնները՝ չէ յարգում նրան, հետը վարւում է շատ սառն և արտայայտում է խոլ արհամարհանք։ Մայրն ու հայրը, սակայն, հակառակ են աղջկայ տրամադրութիւններին և պնդում են, որ նա յարգանքով և քաղաքավարութեամբ վերաբերում է դէպի իրենց խնամատարը։

«Հազար անգամ ասել եմ, որ դիժ ես, խելք չունես. դու ոչ քեզ և ոչ մեզ համար չես մտածում։ Աղքատ ու հպարտ, աչքերդ բաց արա և լաւ տես, թէ դու ինքդ ո՞վ ես, ի՞նչ ես, իսկ Դօլմազովը ո՞վ է։ Գիտես, որ մեր ապրուստը նրանից է կախուած, ինչպէս ուզենայ, այնպէս էլ կարող է անել. կարող է մեզ հարստացնել, կարող է և քաղցած թողնել, բայց դու էլի գոռող ու գոռոզ։ Ի՞նչ ես մտածում, որ քիթդ այդպէս բարձր ես պահում։ Խելքի եկ, կատեա, տես մէկ էլ եմ ասում, մեր օրը քեզանից է կախուած...»

Եւ Կատերինան մօր թախանձանքներին ի-ջանելով՝ ընդունում է Դօլմազովի հրաւէրը—մի երեկոյ նրա հետ թատրոն գնալ։ Հարուստ արդիւնաբերողը թատրոնից յետոյ, ուշ գիշերին, բռնի տանում է օրիորդին իր տուն և խախտում նրա անմեղութիւնը։ Ապա իր յանցանքը ծածկելու և գլխաւորապէս օրինական պատասխանատուութիւնից ազատուելու համար՝ կանչում է իր երիտասարդ գործակատար Սմբատին և յորդորում, որ նա ա-

մուանանայ Կատերինայի հետ։ Միամիտ Սմբատը, անտեղեակ գաղտնիքին, կարծում է թէ իրօք Դօլմազօվը կամենում է նրա հովանաւորը լինել, աւելացնել նրա ռոճիկը, հարստացնել, բախտաւորացնել նրան՝ միանգամայն մարդասիրաբար և առանց յետին հաշիւների։ Պօպօվի ընտանիքը միւս կողմից համաձայնւում է եղած առաջարկին։ Ինքը օրիորդը ևս չէ մերժում՝ կամենալով ազատուել անպատութիւնից և խնայելով իր ծնողներին, որոնք մինչև այդ ոչինչ չգիտեն դժբախտ պատահարի մասին։ Ամուսնութիւնից չորս-հինգ օր յետոյ՝ Սմբատը թողնում է տունը, վախչում է Պարսկաստան և այլևս չէ կամենում վերադառնալ Կատերինայի մօտ։

Կարլ Պօպօվը և նրա զաւակը Արտեմ թողնում են Դօլմազօվի գործարանը և մտնում քաղցածութեան։ Երկու տարուց յետոյ ծերունին մեռնում է վշտի և նիւթական թշուառութեան մէջ։ Կինն ու աղջիկը վերադառնում են իրենց ծննդավայրը՝ Հաշտարխան և ապրում ամօթահար, դժբախտ ու յետին չքաւորութեան մէջ։ Իսկ այս ամենի իսկական պատճառը—Կատերինայի, Սմբատի և ծերունի Պօպօվի խնամատարը—դրամական հըսկայ ոյժի վրայ հիմնուած՝ շարունակում է իր շահատակութիւնները նաւթային տէրերի...

Շերվանզադէի այս գործը հետաքրքրական է միայն իբրև հասարակական չարաշուք երևոյթի, իբրև հանրային դժբախտութեան նկարագիր։ Եւ իբրև այդպիսին նա արժանի է ուշադրութեան։ արդիւնաբերող, հարուստ դասակարգի ախտաւոր բարոյականութեան առաջին ցուցադրութիւնն է այդ վէպիկը։ Դրամի ոճիրները նկարագրուած են թագնուած զայրոյթով և իրական ճշտութեամբ...

Հոգեբանական և գեղարուեստական տեսա-

կէտներից, սակայն, «Ինամատարը» քիչ արժանիք ունի։ Անձնաւորութիւնները կենդանի չեն, պարզ, ամփոփ։ Գլխաւոր դերակատարը՝ Դօլմազօվ բաւական ցայտուն է իր կատարած ոճիրներով, բայց իր ներքին կեանքով, իր տրամաբանութեամբ հարթ չէ և որոշ։ Ընթերցողը տեսնում է, որ մի հարուստ արդիւնաբերող ընդառաջ է գնում իր գործակատարի ընտանիքին դիմաւորելու նաւահանգստում. իմանում է նաև, որ այդ վարմունքը ոչ թէ յարգանքի և քաղաքավարութեան արդիւնք է, այլ կրքի և տուփանքի՝ դէպի մի աղջիկ, որի հետ դեռ ծանօթ չէ։ Տեսնում է՝ թէ ինչպէս դրամատէրը ամէն կերպ աշխատում է օրիորդին գրաւել. նրա համար նուէրներ է առնում, նրա բոլոր արհամարհանքը տանում է, նրա առաջ ստորանում է։ Եւ այս բոլորը միայն այն նպատակով, որ խախտէ օրիորդի անմեղութիւնը և անմիջապէս մի կողմ նետէ։ Կապիտալիստի, գործնական մարդու, արդիւնաբերողի կողմից արտայայտուած այս ցաւագար հետամտութիւնը բաւականաչափ պարզաբանուած չէ։

Կատերինա Կարլովնան ևս շատ անհատասար է արտայայտուած։

Հաշտարխանի պէս մի մեծ քաղաքում ապրած և մեծացած, ժամանակով հարուստ և բարեկեցիկ ընտանիքի զաւակ, ազատ բարքերի տէր, ինքնուրոյն ու անկախ՝ քանևհինգ տարեկան օրիորդը սկզբում շատ հաստատակամ, ուժեղ և հպարտ է ներկայանում։ Թւում է թէ այսպիսի մի աղջիկ պիտի մինչև վերջ ընդդիմանար և չենթարկուէր Դօլմազօվի որոգայթներին։ Երբ ուշ գիշերին, թատրոնից գարձին, հարուստ արդիւնաբերողը կառքը ուղղում է դէպի օտար վայրերը, դէպի իր բնակարանը, երբ նրան հարկադրում է մտնել

իր տուն և միասին ընթրել—Կատերինան, որ արդէն առիթներ էր ունեցել ճանաչելու Դոլմազովին—պէտք է գուշակէր նրա միտքը և ոչ մի գնով նրա բնակարանը չպիտի մտնէր։

Տխուր դէպքից յետոյ նա այլևս անճանաչելի է դառնում։ Ազատ և հաստատակամ, ինքնուրոյն և անկախ աղջիկը այնուհետև դառնում է մի բացառիկ խեղճութիւն։ Նա կորցնում է իր կամքը, իր հայեացքները, իր զգացմունքները։ Յանցանքը ծածկելու համար նա պատրաստ է պատահած մարդու հետ ամուսնանալ։ Նա կրկամենար անգամ իր կեանքը մշտնջենապէս կապել Դոլմազովի հետ, ուրից ղղում էր և գարշում։ Նա այդ մարդու հետ ժամերով խօսակցութիւն է ունենում իր ճակատագրի, իր ապագայի մասին։ Նա ընդունում է Դոլմազովի առաջարկը՝ ամուսնանալ նրա աննշան գործակատար Սմբատի հետ, աշխատելով ամեն կերպ ծածկել տխուր եղելութիւնը և չմտածելով, որ Սմբատը ամեն ինչ կարող է իմանալ կարճ ժամանակում։

Կատերինա Կարլօվնայի այս բոլոր թուլամորթութիւնները—թէկուզ անմեղութեան խախտումից յետոյ—համապատասխան չեն նրա բնաւորութեան, նրա կրթութեան, նրա անցրած կեանքին և նրա հայեացքներին։ Նահապետական ամօթխածութեան մէջ ապրած աղջիկներն անգամ դէպի իրենց առևանգողներն ու բռնաբարողները անզուսպ զայրոյթ և անհաշտ վրէժխնդրութիւն տածելով՝ չաճախ չեն նայում եղելութեան հրապարակուելուն։ Իսկ Կատերինա Կարլօվնան—այդ ազատ և ինքնուրոյն աղջիկը—միայն այդ վախից՝ ամեն սորութիւն յանձն է առնում... նրա գործողութիւնները և նրա անձը բաւարարաչափ պարզ չեն ընթերցողի համար։

Վէպիկի գեղարուեստական կառուցուածքը—մի քանի աւելորդ տեսարանների յապաւումով—բաւարար է մինչև անմեղութեան խախտումը։ Այնուհետև դէպքերը գահավիժում են միմեանց յետևից, առանց ամրողջանալու, առանց բացատրուելու, առանց գեղարուեստական շէնք կազմելու։ Դոլմազով խարում է իր գործակատարին՝ Սմբատին, խարում է Կատերինային և նրա ամբողջ ընտանիքին, հանդիսանում է Սմբատի հովանաւորը և կնքահայրը. Սմբատը հաւատում է այդ տիրօրինակութիւններին, ամուսնանում է իր շրջանից միանգամայն դուրս Կատերինայի հետ, ապա անմիջապէս թողնում է նրան և փախչում Պարսկաստան—այս բոլոր իրողութիւնները, բաւականաչափ միամիտ ծեւերի մէջ ամփոփուած՝ վէպիկին գեղարուեստական-գրական աչքի ընկնող արժանիքներ չեն տալիս...

«Խնամատար»-ի կարևոր նշանակութիւնը նրա հասարակական կողմի մէջ է։ Շիրվանզադէի այդ գործը հետաքրքրական է իբրև դրամատիրութեան ոճիրների իրական նկարագիր...

«Ատամբին»

Անհատականութեան պայքարը ժամանակակից հասարակութեան դէմ, կնոջ ազատութեան ճիչը կրօնական-եկեղեցական, հասարակական, ծնողական նախապաշարմունքների դէմ...

Շիրվանզադէի գրական գործունէութեան առաջին տասնամեակում այդ պայքարը դեռ նոր է սկսւում և այդ ճիչը տակաւին անորոշ է լսւում։

Հին հասարակական, տնտեսական կարգը կամաց-կամաց պատմութեան սեփականութիւն դառ-

նալով՝ մի առժամանակ կարողանում է, սակայն, հրապարակի վրայ պահել իր բարոյական տիրապետութիւնը։ Դարերով արմատացած աշխարհահայեացքը կարճ միջոցում չի հրաժարւում մարդկութեան այս կամ այն շրջանից։ Եւ ազգերը դուրս եկած նիւթական որոշ միջավայրից ու կարգերից՝ շարունակում են հնազանդուել հին բարոյական իմաստութեան դեռ բաւական երկար տարիներ...

«Արամբին»այդ ժամանակի հասկացողութեան և բարքերի գեղարուեստական նկարագիրն է։

Վարվառա Մինաեվնա, քանևվեց տարեկան երիտասարդ կինն, համեստ, առաքինի, չի կարողանում հաշտուել իր անբարոյական ամուսնու հետ, չի կարողանում տանել նրա անհաւատարիմ կեանցաղը—թողնում է և հօր տունը հեռանում։

Հայրը, *Մինաս Կիրիլիչ*, նախկին կապալառու, առևտրական, այժմ ոչ ոք չունի՝ բացի այդ միակ աղջկանից։ Կինը և հինգ զաւակները վաղուց վախճանուել են. ճնացել է Վարվառան, իր անբախտ կեանքի միակ մխիթարութիւնն ու սփոփանքը։ Ամուսնաթող կնոջ և ծերունի հօր հասարակական «պատիւը» խախտում է։ Մարդիկ մանրամասների հետ ծանօթ չեն. Վարվառէի ընտանեկան կեանքի դրամային անտեղեակ՝ տեսնում են միայն, որ նա հեռացել է իր ամուսնուց և ապրում է առանձին։ Այս դրութիւնն արդէն բաւական է չարամիտ դուշակութիւնների և չափազանցեալ տարաձայնութիւնների համար։ Մինաս Կիրիլիչը հարկադրուած թողնում է այն քաղաքը, ուր նա բնակւում էր իր զաւակի հետ, և տեղափոխւում է Թիֆլիս։

Այստեղ պատահում են *Ստեփան Ռուստամեանին*։ Սա մի երեսնամեայ երիտասարդ է. մասնագիտութեամբ ագրօնոմ։ Աղքատ ընտանիքի զաւակ, ապրել է համեստ և չարքաշ։ Սեփական ոյժերով կարողացել է համալսարան մտնել և աւարտել։ Ապա կարճ ժամանակ ուսուցչութեամբ է պարապել, իսկ այժմ կառավարութեան յանձնարարութեամբ մեր երկրի մասին անտեսական տեղեկագիրներ է կազմում։

Ռուստամեան սիրում է Վարվառէին, վերջինս փոխադարձաբար Ռուստամեանին։ Բայց «կին Արամբի ի կենդանի այր իւր կապեալ է օրինօք»։ Հնչում է հին բարոյագրքի խստասիրտ հրամանը։ Մարդ ունեցող կինը իւր կենդանի մարդու հետ օրէնքով կապուած է՝ կրկնում է ժամանակակից հասարակական նախապաշարմունքը։ Երիտասարդ կինը ենթարկւում է այդ դաժան աշխարհահայեացքին. սէրը մեղցնում է իր մէջ՝ խնայելով ծերունի հօր պատիւն ու կեանքը և սակայն ինքը չի կարողանում դիմանալ այդքան մեծ զոհաբերութեան։ Վշտից, սիրուց և հոգեկան տառապանքից հիւանդանում է և մեռնում։ Իսկ Ռուստամեան սիրած կնոջ եղերական մահը տեսնելով՝ կորցնում է հոգեկան և մտային հաւասարակշռութիւնը։

Վէպի մէջ ամենաբարդ և ամենակնճռոտ դերութիւնը ծերունի հօրն է վիճակուել։ Շիրվանզադէն ներկայացնում է նրան շատ սիրող և շատ տանջուած մարդ։ Վարվառէն նրա ներկայ կեանքն է։ Իր ծերութեան հասակում՝ Վարվառէից բացի ուրիշ ուրախութիւն չունի Մինաս Կիրիլիչը։ Եւ սակայն նա պահանջում է աղջկանից, որ հաշտուի իր ամուսնու հետ։ Այս վիճակը թեում է հակասական և հօր բնաւորութեան մէջ-տես-ճակատագրական երկուութիւն է մտցնում։ Շիրվանզադէն նկատել է, ի հարկէ, այդ գիծը և ձգտել է պատճառաբանել հօր վարմունքը։—

Վարվառէի ամուսինը չի կամենում հրաժարուել ծերունու աղջկանից: Նա ներում է խնդրում. նա խոստանում է սիրել, ենթարկուել իր միակ կնոջը — Վարվառէին: Աղջիկը չի հաւատում, բայց ծերունին անկեղծօրէն հաւատում է: Իւրաքանչիւրը նայում է խնդրին իր հայեացքով, իր հոգով, իր փորձառութեամբ և իր ազատութիւններով: Մինաս կիրիլևիչը անձնասէր չէ զգացել անհատ-առաքեմ մարդու պատճառած ցաւը և հնարաւոր է համարում հաշտութիւնը:

Միւս կողմից՝ մեր հասարակական կեանքի պայմանները այնպէս չեն, որ դիւրութեամբ կարելի լինի ամուսնալուծութեան իրաւունք ստանալ: Եկեղեցական իշխանութիւնը, որոշ ճնշումների և պահանջների ազդեցութեան տակ՝ ակզբունքով մի փոքրիկ ազատութիւն է շնորհել անիրաւուած, այսինքն անհաւատարիմ ամուսնու գիրկն ընկած կողմին: Բայց այդ սկզբունքը կեանքի մէջ գործադրութեան բարձրացնելու համար մեծամեծ դժուարութիւններ կան, որոնց դէմ պէտք է մարտնչել և որոնց պէտք է յաղթել: Հասարակական և տնտեսական պայմանները այնպէս չեն համակրուած, որ արդար կողմը կարողանայ իր իրաւունքը, առանց նեղութեան, առանց զրկանքի, առանց անպատուութեան ձեռք բերել: Եւ մեր դժբախտ կեանքում շատ են այդպիսիների թիւը, որոնք աւելի փոքր չարիք են համարում ապրել անհաւատարիմ ամուսինների հետ, քան ենթարկուել հազար ու մէկ անյայտ ու վտանգաւոր պատահականութիւնների...

Վարվառէի ամուսինը չի կամենայ ոչ մի կերպ իր վրայ առնել յանցանքը. նա երբէք չի կամենայ ինքնաբերաբար ու իր ձեռքով քօղամերկել իր մութ կեանքը, լուսաւորել իր անյայտ գործերը և անպատիւ լինել հասարակութեան մէջ: Վարվառէն ինքը այդ անելու հնարաւորութիւն և միջոց չունի: Իսկ ծերունի հայրը, Մինաս կիրիլևիչը, այդ ուղղութեամբ աւելին չի կարող իրագործել: Միւս կողմից՝ Վարվառէի ամուսնու նամակները կան, որոնք ասում են թէ այդ ամուսինը միշտ սիրել է Վարվառէին, միշտ յարգել է նրան, պատրաստ է յաւիտեան սիրել և մինչև կեանքի վերջը կատարել նրա ցանկութիւնները...

Այսպէս: Ապահարզանի խնդիր չի կարող լինել ուրեմն: Մնում է կամ հաշտուել և կամ առանձին ապրել:

Այս բարդ պարագաների ցուցադրութեամբ մասամբ հասկացուում է ծերունու բնաւորութիւնը և լուսաւորուում է երկի ներքինը: Շիրվանզադէն այս բոլորը պէտք է ասէր աւելի ամփոփ, աւելի պարզ, աւելի, համոզիչ, որպէսզի ընթերցողը չմոլորուէր վէպի հանգոյցի մէջ և Մինաս կիրիլևիչի բնաւորութիւնը չերեւար այնպէս հակասական ու մութ: Եթէ այս բոլոր ընդհարումներն ու դժուարութիւնները աւելի նուրբ հոգեբանութեամբ և աւելի պայծառ արուեստով ներկայանային՝ այն ժամանակ ծերունի հօր ներքին կեանքը աւելի կը յուզէր մեզ, նրա դրաման աւելի խորունկ կարեկցայուէր և նրա պատկերը, վշտահար ու անմխիթար գոյութիւնը աւելի ամբողջական կլինէր...

Ապահարզանի անկարելիութիւնից յետոյ Վարվառէի համար ուրիշ խնդիր կայ: Մեռցնե՞լ արդեօք Ռոստամեանի և իր փոխադարձ սէրը, թէ՞ ապրել նրա հետ, հակառակ հասարակական բոլոր նախապաշարումների, հակառակ մարդկանց հալածանքների, հակառակ կրօնական — եկեղեցական-պետական տրամադրութիւնների և հրահանգների:

Ռոստամեանի սէրը մաքուր է, չափազանց զրաւիչ և վաղուց երազած: Վարվառէն անհուն զոհունակութեամբ կը կամենար իր անուրջներն, իր կուսական սրտի և անմեղ հոգու գեղեցիկ ձգտումը չկոտրել, չբռնաբարել... Բայց, արտաքին սարսափելի արգելքներ կան: Ամենից առաջ հայրը, որ չէր կարող դիմանալ այդ ցաւին և կը մեռնէր անպատճառ...

Վարվառէն կարող է միշտ ապրել իր հօր մօտ: Վերջինս չի պահանջի, որ նա անպատճառ հաշտուի իր ամուսնու հետ: Մինաս կիրիլլիչը սիրում է իր զաւակին. նա կաշխատէ ամեն կերպ նրա կեանքը լցնել: Բայց նա ոչ մի դէպքում չի կարող համաձայնուել, որ Վարվառէն ապրի Ռոստամեանի հետ առանց ամուսնութեան և առանց օրինական կապի: Ծերունին որքան էլ աշխարհներ տեսած լինի, ծերունին որքան էլ ազատուած լինի որոշ նախապաշարումներից—այնուամենայնիւ չի կարող այդ աստիճան առաջ գնալ, կտրուել իր ժամանակից, իր միջավայրից, իր կեանքից:

Մեր հասարակական-անտեսական պայմանները, մեր մտաւոր-բարոյական ըմբռնումները այդքան բան չէին հրահանգում: Վարվառէն մտածում է այս ամենը, տանջւում է այս ընդհարումների մէջ և Ռոստամեանին սիրելով հանդերձ՝ մերժում է նրա առաջարկը... Նա չի կարող «ապօրինի» կին լինել...

Ռոստամեանը, ճիշտ է, գրուածքում շատ է երևում, բայց իրօք նրա դերը սահմանափակ է: Նա միայն տանջւում է, սպասում է, տխրում է: Նրա համար զրամա չկայ: Նա իբրև իրապէս սիրող մարդ և կրթուած անձնաւորութիւն միանգամից որոշել է, որ կարող է առանց ամուսնութեան ապրել մի ամուսնացող կնոջ հետ: Այս որոշումը

կատարուել է շատ կարճ միջոցում, առանց հոգեկան պայքարի և առանց դժուարութեան: Վարվառէի ուժգին սիրոյ առջև այսպիսի պայքար հարկաւոր չէ եղել: Դրաման դառնում է, մի կողմից, Մինաս Կիրիլլիչի, միւս կողմից՝ գլխաւորապէս Վարվառէի մէջ, որի դրութիւնից է կախուած Ռոստամեանի դրութիւնը: Այսպիսի կրաւորական պարագաների մէջ լինելով՝ բնականաբար նա չէր կարող շատ ամբողջական և շատ կենդանի դուրս գալ: Բայց, այդպիսով հանդերձ, Շիրվանզադէն նրա վրայ պիտի աւելի ուշադիր և աւելի լուրջ աշխատէր և ազատէր նրան դէթ այն տարօրինակութիւններից ու տկարութիւններից, որոնք յաճախ երևան են գալիս Ռոստամեանի մէջ և որոնք բաւական թուլացնում են տպաւորութիւնը...

Վէպի մէջ, այս երեք կենդրոնական անձնաւորութիւններից զատ, բաւական տեղ են գրաւում նաև երկու ուրիշ դէմքեր, որոնք թէև կապուած չեն դրամայի հետ, բայց միջավայր են ստեղծում և այսպէս թէ այնպէս պարզաբանում են կենտրոնական անձերի—եթէ ոչ այնքան բնաւորութիւնները—գոնէ նրանց դրութիւնները:

Առաջինը՝ այրի Նատալիա, տարիքաւոր ու բարի կին, որ ապրում է իր ամուսնու թողած տների եկամուտով և որի մօտ բնակւում են Ռոստամեանը, Վարվառէն և նրա ծերունի հայրը:

Երկրորդը՝ Կատո, այրի Նատալիայի աղջիկը, բաւական հարուստ, բայց անկիրթ ու տգեղ վաճառականի կին: Իր մօր բնաւորութեան հակապատկերն է այս երիտասարդ տիկինը, չար, նախանձոտ, թեթևամիտ: Լինելով իշխանի թոռ և պետական պաշտօնեայի դուստր, ունենալով չաջողակ արտաքին՝ նա նիւթական սուղ պայմաններից

սախպուած միայն համաձայնուել է իր այժմեան ամուսնու առաջարկին: Վաճառականի համար այս կինը սպառող է միայն. և իր ընտանեկան կեանքում հաւատարիմ չլինելով՝ յոխորտանքով «քննադատում է» առաքինի կանանց:

Շիրվանզադէի վէպի մէջ այս երկու դէմքերն էլ դուրս են եկել յաջող ու կենդանի: Երկրորդի պատկերացման մէջ մանաւանդ՝ հեղինակը հանդէս է բերել դիտողութեան ընդունակութիւն և արտայայտութեան ճշտութիւն ու հակիրճութիւն:

«Արամբին»-ի գեղարուեստական իրագործումը մի քանի յատկանշական—գէթ առաջին տասնամեակի համար—թերութիւններ է պարունակում: Պատմութիւնը հաւաքուած չէ առաջ ընթանում: Երկրորդական և անկարևոր դէպքեր միջամտում են և արգելում երկի ողորկ ու կանոնաւոր ընթացքը: Հիմնական գաղափարի յուցադրութիւնը և զարգացումը յաճախ խաչաձևւում է պատահական եղելութիւններով: Ռոստամեանի միայնակութեան ու տխրութեան կրկնութիւնները և Վարվառէի հիւանդութեան երկարաձիգ ու մանրամասն նկարագրութիւնները խանգարում են ամբողջութեան:

Վէպի վախճանը բաւական հէքիաթային ու ոսմանեան տարրեր է պարունակում:

Շիրվանզադէի այս գործը յուզիչ է և անպայման տրամադրութիւն է ստեղծում՝ նկարագրելով ամուսնացող առաքինի կնոջ տանջանքները, «ապօրինի» սէրը և ողբերգական վախճանը:

Իրրև անհատականութեան ճիչ և իրրև կնոջ ազատագրութեան գեղարուեստական կոչ՝ նա նշանակալից է և կարևոր...

«Ճարմա եւ Ասադ»

Առաջին տասնամեակում Շիրվանզադէն տարուբերում է մեծ երկերի և փոքրիկ պատմուածքների մէջ: Ճիշտ է, միւս երկու տասնամեակների ընթացքում ևս նա գրում է մի քանի պատմուածքներ, բայց դրանք այլևս յատկանշական չեն և սակաւաթիւ են: Դրանց քովնա ստեղծագործում է խոշոր և երկայնաշունչ երկեր:

Այս մանր պատմուածքներից մի քանիսը յաջողուած են, միւսները թոյլ են և անկատար: Մենք նրանց վրայ մանրամասն կանգ չենք առնի, ի հարկէ: Համառօտակի կցուցադրենք և կըքննենք միայն իրրև գրական փաստեր և իրողութիւններ, որոնք թերևս կարող են հարկաւոր լինել մեր ընդհանրացումների ժամանակ...

«Ճաթման և Ասադը» Շամախիի պարսիկների կեանքից է վերցրած:

Արծաթագործ Ասադը, առնական, գեղեցիկ ու քաջասիրտ, սիրում է հարուստ և ազդեցիկ թուրքի աղջկան—չքնաղ Ճաթմային: Վերջինիս կամենում է կնութեան առնել մէկ ուրիշ ազդեցիկ թուրք—Հաջի Ալեաքպար—երէք ահագին քարվանսարանների և մեծ անուան տէր:

Ճաթմայի պատճառով երկու մրցակիցների մէջ կռիւ է տեղի ունենում, որ կըսում է երկու թաղերի պատերազմի բնոյթ:

Կռուին մասնակցում է նաև Ճաթմայի եղբայրը—Ասադի դէմ: Կորիճ և անվախ Ասադը ջարդում է ամենին, խնայում է միայն սիրած աղջկայ եղբօրը: Ճաթման իր քրոջ տան կտուրից նկատում է Ասադի քաջութիւնը և վեհանձնութիւնը: Կռուից յետոյ Ասադ գրկում է գեղեցիկ աղջ-

կան և փախցնում։ Ֆաթմայի եղբայրը մի խումբ մարդկանցով հետամտում է նրանց, հետևակ առաուօտը—գտնում մի պարտիզի մէջ և սպանում վիրաւոր, ուժասպառ Ասադին։ Ֆաթման վշտահար ու սրտաբեկ ընկնում է սիրած տղամարդու դիակի վրայ և դառնագին արտասուում...

Շիրվանզադէի այս պատկերը տաք և զգայուած արուեստով արտացոլում է երկու երիտասարդների բուռն ու անկաշառ սէրը, Աբևելեան ոճով և ոսմանտիք շունչով գրուած երազների ու մահուան այս փոքրիկ պօէմը տպաւորութիւն է թողնում։ Պատմուածքի մէջ յայտող նկարագրուած է նաև թուրք միջավայրը։ Երկու թաղերի ներհակութիւնն ու հակամարտութիւնը և թուրք հասարակական կեանքի մի քանի բնորոշ գծերը լաւ են պատկերացած։ Այնտեղ էլ կամաց-կամաց մտնում է փողի, դրամի իշխանութիւնը։ Հասարակութիւնը սկսել է յարգել կապիտալի, հարստութեան նշանակութիւնը աւելի, քան հերոսութիւնը, գեղեցկութիւնն ու անձնուիրութիւնը... Եթէ չհաշուենք բարքերի և սովորութիւնների մէկ երկու աւելորդ նկարագիր՝ պատմուածքը ամբողջական է և ամփոփ...

«Տանճենիից տարի անցած»

Գրիգոր անունով մի գեղեցիկ, աշխոյժ երիտասարդ դատապարտած է տաներկու տարուայ տաժանակիր աշխատանքի, այնուհետև մշտական աքսորի։

Մայրը, անմխիթար, արցունքոտ աչքերով և խորունկ վշտով ճանապարհ է դնում սիրելի զաւակին, շղթայակապ ու կալանաւորը, դէպի պատժի վայրերը։ Այնուհետև ապրում է աղօթելով, արտասուելով և միշտ սպասելով որդու վերադարձին։ Տանճենիից տարի յետոյ՝ աքսորի ճամբեալ տարիները նեղուում են և որդին՝ ծերացած, մաշուած, ուժասպառ վեռադառնում է հայրենի տուն։ Մայրը ծերունական ուղեղի մէջ պահել է որդու նախկին պատկերը, երիտասարդ, ուժեղ, գեղեցիկ, և միշտ ապրել է այդ պատկերով։ Նրա երևակայութեան մէջ ճամբել է միայն գարնանային Գրիգորը։ «Օտարականին» Անթառամը չէ ճանաչում։ Որդին, բակի մէջ, գաւազանի վրայ յենուած հեկեկում է, որ մայրն անգամ չճանաչեց նրան։—«Մեռնէի և քեզ այդպէս չտեսնէի», յուսահատօրէն ու դառնագին ճչում է թշուառ ծնողը... Շիրվանզադէի այս փոքրիկ պատմուածքը յուզիչ է և թախծալի տպաւորութիւն է թողնում։ Լաւ են արտայայտուած մօր երազներն ու խոկումները և առհասարակ պարզ է ու ճիշտ նրա հոգեբանութիւնը։

Պատկերի մէջ յայտող նկարագրուած են նաև տաժանակիր աշխատանքի վայրերը, Սիբիրը, Ռուսաստանի անծայր դաշտերը, Գրիգորի կեանքի դժոխային պայմանները։ Սրատուչ են աքսորական զաւակի նամակները՝ մօրն ուղարկած հեռաւոր ու անյայտ երկիրներից։

Պատմուածքը հոգեբանական, գեղարուեստական տեսակէտներից շատ հետաքրքրական և նաև իր հասարակական կողմով։ Աստասիրտ արդարադատութեան և ծանր պատիժների վնասակար, աւերիչ ու յոռի հետևանքները արտայայտուած են կենդանի ու պատկերաւոր ձևով։

«Թանգագին կապանք»

Շիրվանզադէի այս փոքրիկ պատմուածքի մէջ նկարագրուած է մի ցաւոտ, ողբալուն հիւանդագին մայր։ Որդին կամենում է գնալ Ռուսաստան ուսումը շարունակելու՝ մայրը, սակայն, չի կարողանում հաշտուել այդ մտքի հետ։ Նա չի կարող բաժանուել իր զաւակից, որին սիրում է խելագարի պէս։ Չի կարող նաև թողնել իր հարազատների գերեզմանները, իր հողը, իր միջավայրը և հետևել որդուն։ Սրա ծանր գանգատների դէմ վերջապէս անզօր՝ մայրը համաձայնւում է ազատութիւն տալ նրան։ Գնում է կայարան՝ որդուն ճանապարհ դնելու, բայց կառքի շարժուելու միջոցին՝ ուշաթափւում է և ընկնում գետին։ Որդին իջնում է կառքից և մնում մօր մօտ։ «Այս թանգագին շղթան անկարելի է փշրել։» Ասում է զաւակը և գրուածքը վերջանում է։

Հեղինակը մայրերի հոգեբանութեան մէկ հետաքրքրական, բնորոշ կողմն է շօշափել, որ սակայն տպաւորութիւն չէ թողնում։

Այս պատկերը Շիրվանզադէի ամենաթոյլ գործերից է։ Իրագործումը ձգձգուած, պատմութիւնը չափազանց դանդաղ և առանց զգացմունքի։

«Հ ե լ ա գ ա ր ը»

Նկարագրուած է Մարթա անունով, մտային հաւասարակշռութիւնը կորցրած, մի երիտասարդ, գեղեցիկ աղջիկ։ Աղքատ և ոգէտ ընտանիքից է նա։ Ապրում է այդպիսի միջավայրում։ Եղբայրը ծեծում է նրան, մայրը շարունակ յանդիմանում է։ Հեղինակի ասելով Մարթայի խելագարութեան պատճառները երկու են՝ անյաջող ու ջարդուած սէրը և կնոջ բնախօսական պահանջները։ Մարթան առողջ է, վառվռուն, կենդանի. նրա աչքերից կարծես արիւն է կաթում, շրթունքները միշտ բաց են, այտերը միշտ վառուած։ Նա հազիւ կարողանում է իր կիրքը զսպել։

Տնտեսական և հասարակական աննպաստ պայմանների մէջ Մարթայի խելագարութիւնը զարգանում է։ Վերջապէս ծնողները ուխտատեղի են տանում, ուր երիտասարդ աղջիկը բացարձակ դաշտում, հրաշալի բնութեան գրկում, խաղաղութեան մէջ ապրում է օրերով, հանգստանում կատարելապէս, առողջանում, գեղեցկանում և ապա ամուսնանում մի վաճառականի հետ։

Ամուսինը՝ Պետրոսը նրան շատ է սիրում։ Նրանք երջանիկ են և ապահով։ Ընտանեկան այս քաղցրութիւնը, սակայն, երկար չէ տևում։ Մարթայի անցեալը իմացւում է. ամուսինը մտատանջութեան մէջ է ընկնում։ Սկեսուրն ու տալը ամեն կերպ աշխատում են հարսին վիրաւորել, յիշեցնել նրա խելագարութիւնը։ Պետրոսը ենթարկւում է մօր և քրոջ ազդեցութեան և չէ կարողանում կնոջը պաշտպանել։ Մարթայի յուզութիւնը զուգադիպւում է է այսպիսի դժոխային պայմանների հետ։ Նա զոհ է գնում շրջապատի խստասրտութեան և հալածանքներին...

Շիրվանզադէն կամեցել է այս պատմուածքին հոգեբանական գունաւորում տալ. բայց իրօք հոգիների ցուցադրութիւն չկայ այդտեղ։ Մարթայի ներքինը և հոգին չեն լուսաւորւում մեր առաջ։ Այդ կողմից նա անգոյն է, մութ և տարտամ։ Մենք տեսնում ենք միայն նրա կեանքը, նրա տան-

ջանքները անհիւրընկալ և անմարդասէր միջավայրում։

Հեղինակը խօսում է Մարթայի խելագարութեան սիրային և ընտանեական պատճառների մասին։ Այսքանը միայն։ Այդ պատճառների ներգործութիւնը մենք չենք տեսնում պատմուածքի մէջ։ Պարզ չէ նկարագրուած խելագարութեան ծագումը, էութիւնը, ուժգնութիւնը և վերջապէս բուժումը։ Մեզ համար Մարթան մնում է չպարզաբանուած, չբացատրուած՝ թէ իր սկզբնական կատարելապէս խելագար շարժուձեւերով ու գործերով և թէ իր յետագայ մեղմութեամբ ու դրաւիչ հրապոյրով։

Գրուածքի մէջ երևան եկած միւս անձերը ևս որոշ չեն ու կենդանի։ Նրանք շարժուում են, խօսում, քայլում, բայց ընթերցողի հետաքրքրութիւնը ոչ մի բանով չեն գրաւում։

Երկը ամբողջական, ամփոփ չէ. նա հատուածական է և տեղատուած։ Այս բոլորի փոխարէն, յաջող ու ճշդրիտ ներկայանում են մեզ միջավայրի ու սոցիալական պայմանների նկարագրութիւնը և նրանց ազդեցութիւնը մարդկանց վրայ առհասարակ և զգայուն էակների վրայ մասնաւորապէս...

Շիրվանզադէի «Խելագարը» այս տեսակէտից է հետաքրքրական։

«Զուր յոյսեր»

«Արամբին»-ի պէս որոշ գաղափարի կամ հիմնական թէզի գրական պաշտպանութիւն չէ այս գործը։ Ոչ էլ բացառապէս մէկ անհատի կամ մէկ ընտանիքի դրամա։ Կեանքի, ընդարձակ, տարածուած, ծաւալուն կեանքի դեղարարուհեստական նը-

կարագրութիւնն է այս վէպը։ Դժուար է ցոյց տալ մէկ խնդիր կամ մատնանիշ անել մէկ անհատ, որի վրայ կենտրոնացած լինի հեղինակը առանձնապէս։ Վէպի մէջ մի քանի անհատ, մի քանի ընտանիք, մի քանի երևոյթ միասին են ընթանում։

Նոր ժամանակների առաջ բերած խայտաբղէտ ու բարդ զանգուածի գրական արտայայտութիւնն է։ Դուք տեսնում էք մի մեծ, լեցուն օրգանիզմի շարժումը, նրա զանազան կողմերը, փոփոխակի ձևերը, տարբեր երևոյթները։

«Զուր յոյսերի» մէջ արտացոլում է ութսունական թուականների իրականութիւնը իր արտաքինով, իր ներքինով, դասակարգային իր գլխաւոր համախմբումներով, տղամարդկանցով ու կանանցով, ազնիւ ու առաքինի տիպերով, ինչպէս նաև չար ու նախանձոտ արարածներով։ Հասարակական բարքերի դեղարուեստական վերլուծումն է դա և անհատական գործերի կենդանի ցուցադրութիւնը...

Վէպի մէջ երևացող բազմաթիւ անձնաւորութիւններից թերևս կարելի լինի հանել, զատել Հալաբեանին, որ ասես կանգնած է երկի մէջտեղը և փայլում է սկզբից մինչև վերջ։ Դժուարանում ենք անկասկած պնդել այս ընտրութեան վրայ և նրան մէնակ համարել—քանի որ անմիջապէս և նրա հետ միասին բարձրանում է ընդհանուրի միջից նաև *Մարիամը*։ Յիրաւի, այս երկու դէմքերը որքան էլ ճակատագրապէս հեռու միմեանցից և որքան էլ հոգեպէս ու բարոյապէս օտար—այնուամենայնիւ վիճակների մի սրատուչ նմանութիւն ունին և ներկայանում են վէպի սիւները, որոնց աջ ու ձախ կողմերում փայլում է յախուռն բազմութիւնը...

Հալաբեանը հարուստ և ազդեցիկ վաճառա-

կան է, քառասուներեք տարեկան, ամուրի, հասա-
րակական նախանձելի դիրքի տէր։ Ապրել է ու-
րախ, զուարթ, մշտապէս զուարճութիւնների մէջ։
Եւ սակայն այդ բոլոր առատութիւնները նրան
այլևս չեն գոհացնում։ Նա անսահման ձանձրոյթ
է զգում և կամենում է կեանքը լցնել աւելի մա-
քուր, աւելի ազնիւ բովանդակութեամբ։ Նա տեսել
է Մարիամին, չափազանց հաւանել է նրան, նրա
ամբողջ գոյութիւնը փոթորկուել է և նա այսօր ի-
րան զգում է կատարելապէս դժբախտ։ «Յիմար,
անմիտ, աննպատակ կեանք»—ցաւագինօրէն մըր-
միջում է իր ընդարձակ, գեղեցիկ և ամայի սենեա-
կում։ Շիրվանզադէի վէպի առաջին էջերից իսկ
Հալաբեանը ներկայանում է այս թախծալի հոգե-
բանութեամբ և նոյն հոգեբանութիւնը համահաւա-
սար ու հարթ հոսում է մինչև գրքի վախճանը։
Հեղինակը զգուշութեամբ բաց է արել առևտրա-
կան մարդու, գրամատէրի ներքինը և նրա մի մա-
քուր, գեղեցիկ անկիւնը յաջողութեամբ ցուցադա-
նել է ընթերցողին։

Մարիամը քառներկու տարեկան աղջիկ է,
համեստ, գեղեցիկ, առաքինի։ Ծնողների մահից
յետոյ՝ ապրել և մեծացել է իր հօրեղբօր տանը,
որի կինը՝ Սօֆիոն և աղջիկը՝ Նատալիան իրենց
չար ու նախանձոտ հոգով թունաւորել են Մարիա-
մի կեանքը։ Հօրեղբայրը՝ Նիկողայոս Սադաֆեան
ողորմութիւն չէ արել ոչ Մարիամին և ոչ նրա
եղբայր Ռուբէնին։ Սրանց հայրը ունևոր առևտրա-
կան է եղել։ Մեռնելիս ամեն ինչ թողել է եղբօրը
և խնդրել, որ սա լաւ խնամէ իր զաւակներին։
Նիկողայոս Սադաֆեանը, սակայն, ժառանգութիւ-
նից զրկում է Մարիամին և Ռուբէնին, որոնք

թողնում են նրա բնակարանը և ապրում առան-
ձին։

Այստեղից սկսւում են Մարիամի տանջանք-
ները։ Մի երիտասարդ բժիշկ, Մելիք-Բարսեղեան,
Ռուբէնի համալսարանական ընկերը, որին նա հա-
ւատացել է իր անշէջ սէրը՝ տեսնելով Մարիամին
աղքատ՝ հեռանում է տմարդօրէն և հարուստ հարս-
նացու փնտրում։ Այս հարուածը խիստ է մատա-
ղահաս, անփորձ, անկազմակերպ հայուհու համար։
Շիրվանզադէ երկարօրէն և անհաւասար յաջողու-
թեամբ նկարագրում է այն խորունկ յուսահատու-
թիւնը, որի մէջ ընկել է Մարիամը։ Վէպը այստեղ
կորցնում է յաճախ իր սահունութիւնը և ինքն էլ
մոլորւում, թափառում, յամառում նոյն յուսահա-
տութեան մէջ։

Մարիամ իր ցաւերը ամոքելու համար դի-
մում է աշխատանքի։ Դպրոցում սովորածը մոռա-
ցել է արդէն։ Վարժուհի դառնալու ոչ մտաւոր բա-
ւարար պաշար ունի և ոչ հակում։ Սկսում է կա-
րուձև սովորել իր նախկին վարժուհուց—օրիորդ
Սաթենիկից—որ ազնիւ և բարի մարդ է, որ ամեն
կերպ աշխատում է բուժել Մարիամի ցաւերը և որ
յետագայում ամուսնանում է Ռուբէնի հետ։

Հասարակութիւնը, սակայն, վատ աչքով է
նայում Մարիամին։ Մելիք-Բարսեղեանն, որ ան-
ազնուօրէն և ստորնաբար հասել է բարձր դիրքի
մեր անխտրական կեանքում—անարգուելով Մա-
րիամից և ապտակուելով Ռուբէնից—վատթար շը-
շուկ է տարածայնում օրիորդի բարոյականութեան
մասին։ Տիկին Սօֆիոն, նրա դուստրը՝ Նատալիան,
նրա եղբայրը՝ իշխան Սահառունին, ծանօթ-անծա-
նօթ, չարամտօրէն չափազանցնում են այդ շշուկը և
սիրում ամենուրեք։

Այս բարոյական անկումի մէջ, մտաւորականների, իշխանների, բժիշկների, ազգականների այս անազնիւ արշաւանքի մէջ—որ նկարագրուած է կենդանի, բնական, ճիշտ ու կանոնաւոր—Հալաբեանի սէրը դէպի Մարիամ մնում է անխախտ և անկաշառ։

Կեանքից ձանձրացած այս վաճառականը պատրաստ է շատ բան զոհել—հարստութիւն, դիրք, նիւթական շահեր—Մարիամի սէրը գրաւելու համար։ Շատ յուզիչ է այս մարդու հաւատարիմ և անխախտ բարեկամութիւնը։ Շիրվանզադէն բաւարարաչափ չբացատրելով հանդերձ այդ համակրութեան ծագումը և հիմքերը մի դրամատէրի հոգում՝ կարողացել է սակայն լաւ նկարել տանջուող Հալաբեանին և յաջող արտայայտել նրա ղգացումը...

Մարիամից և Հալաբեանից յետոյ վէպի մէջ կարևոր տեղ են բռնում տիկին Սօֆիօն և նրա դուստր Նատալիան՝ և դառնում են երկի երրորդ սիւները։

Սրանք թէ արտաքինով, թէ ներքինով, թէ հայեացքներով, թէ սովորութիւններով համարեա միևնոյն անձնաւորութիւնն են։ Տարիների տարբերութիւնն է միայն նրանց բաժանում և այսպէս թէ այնպէս առանձնացնում։ Շիրվանզադէն շատ լաւ է նկարել այս երկուսին էլ։ Ժամանակակից տնտեսական, հասարակական կարգի և ճշգրիտ արդիւնքն են այս անձերը։ Իշխանական ցեղից, նիւթական անապահովութեան, մասամբ և անբաւարար դեղեցկութեան պատճառով, տիկին Սօֆիօն յանձն է առել ամուսնանալ վաճառական Սադաֆեանի հետ։ Առանց համակրութեան և առանց փոխադարձ սիրոյ, զուտ հաշիւների վրայ հիմնուած

այս ընտանիքի ներքին կեանքը վէպի մէջ լաւ է նկարագրուած։

Տիկին Սօֆիօն իր ամուսնուն օտար է. ասես նրա թշնամին։ Ատերում է, սպառում է առևտրականի տունը և ամենևին մտածող չէ՝ թէ Սադաֆեանը որտեղից պիտի դրամ ճարէ նրա անվերջ և անվախճան հաճոյքների, իշխանական լիառատ կենցաղի համար։ Օրիորդ Նատալիան հետևելով իր մօրը այս ապերախտ աշխատանքի մէջ՝ կամենում է հետևել նրան և իր ճակատագրով։ Արդէն տարիքը բաւական առաջացել են. մարմնական առաւելութիւններ չունի. հօր առևտրական գործերը լաւ չեն ընթանում—և մի կողմ թողած իշխանական ծագումը, «ազնուական» տրամադրութիւնները՝ նա ևս հարկադրուած է մտածել առևտրականի մասին։

Այս բոլորը, հասարակական, տնտեսական, բարոյական, ընտանեկան այս նոր կարգերը, սընանկացած ազնուականութեան և դրամատէր վաճառականութեան յարաբերութեան և «Ձուր յոյսեր»-ի հետաքրքրական էջերն են կազմում և յաջող են պատկերացած։

Եւ այսպէս՝ տիկին Սօֆիօն իր աղջկայ համաձայնութեամբ վաղուց ձգտում է փեսայ դարձնել Հալաբեանին։ Վերջինս ցաւագինօրէն ձգտում է Մարիամին։ Իսկ Մարիամը Մէլիք-Բարսեղեանի սիրուց բուժուած՝ ոգևորուել է մի գաղափարական երիտասարդով՝ Բագրատեանով—որ թիւրքահայերի երկրում հասարակական-քաղաքական բուռն և վտանգաւոր շարժում է ղեկավարում—և երազանքով ու սիրով ձգտում է նրան։

Եւ այս երեք ձգտումները էլ անկատար են մնում։ Ձուր են անցնում տիկին Սօֆիօի և օրի-

որդ Նատալիայի յոյսերը... Ջուր են անցնում դժբախտ Հալաբեանի յոյսերը։ Ջուր են անցնում նաև վերածնուած Մարիամի ոգեղօլուն յոյսերը։ Իւրաքանչիւրը իր հոգով, իր հայեացքներով, իր ոգևորութեամբ երազեց երջանկութիւնը և սակայն իրական կեանքը չկամեցաւ ներդաշնակութիւն մըտցնել նրանց ցանկութիւնների և յոյզերի մէջ...

Տիկին Սօֆիօն իր կիսաթաւամ աղջկայ հետ մի անկիւն է քաշւում և շարունակում է պարապել բոլոր վեհացուներին։

Հալաբեանը ձանձրացած առևտրական գործերից, վշտահար սրտով հեռանում է արտասահման և իր հարստութիւնը կտակում ազգին։ Իսկ Մարիամը՝ Բագրատեանի հերոսական նահատակութեան լուրն առնելով Թիւրքաց-Հայաստանից, յուզուած ու լալագին բացականչում է. «Տուէք ինձ միջոց և ես պէտք է գոհուիմ նրա գաղափարներին»։

Կեանքը թաւալւում է իր հսկայական, անվախճան թափով, իսկ անհատները յաւիտենապէս անգիտակ նրա գաղտնիքներին, հևում են չիրականացած երազների, չիրագործուած ցանկութիւնների և ջուր յոյսերի մէջ...

Վէպի կենտրոնական անձերից՝ Մարիամի դէմքը մեզ է անգոյն, ներքինը՝ տարտամ, տրամադրութիւններն ու հոգեկան ձգտումները՝ մութ։ Նա անկասկած իրական անձնաւորութիւն է։ Շիրվանզադէն նրան տեսել է կեանքում, բայց մեզ թւում է, որ նա լաւ չէ յղացուած և որ գլխաւորն է՝ լաւ չէ իրագործուած։ Սադաֆեաններից տանը, երեխաների հետ զբաղուելիս, Մարիամ որոշ է և պարզ։ Անկախութեան մէջ, իր սիրով, իր տանջանքով, իր խոհերով նա մեզ չէ հաղորդւում։ Ռուբէնի հետ

ապրելիս՝ դեռ կարելի է նրան բաւական յստակ պատկերացնել։ Բագրատեանցի մօտ գտնուելիս, հայրենասէրների խմբին ոգևորելիս՝ Մարիամ մեզ բնաւ հասկանալի չէ։ Այս անգունութեան հիմքերը երկու են՝ հնթակայական և առարկայական։ Մասամբ հեղինակի անհատական կարողութիւններն են պատճառ Մարիամի տարտամութեան, մասամբ—և թերևս աւելի—մեր կեանքի անկազմակերպութիւնը և հայ օրիորդի հասարակական, գաղափարական մտաւոր անզարգացումն ու անորոշութիւնը։ Նշանակելի է, որ Մարիամ բաւականաչափ որոշ է ու կենդանի ընտանիքի մէջ և Ռուբէնի հետ։ Իսկ իբրև անկախ մարդ և գաղափարական անձնաւորութիւն—խաւար է ու քօղարկուած։

Միւս անձնաւորութիւնների շարքում բաւական յաջող արտայայտուել է բժիշկ Մելիք-Բարսեղեան։ Սկզբում աղքատ ուսանող և ըստ երևոյթին շիտակ մարդ՝ ընկնելով դրամատիրական հասարակակարգի մէջ դառնում է տիպիք բուրժուա մտաւորական։ Նա մեր մանուկ կապիտալիզմի և մեր անտեսական փոփոխութեան հարազատ, անկաշկանդ արտայայտութիւնն է։ Գիտութեան մարդ է և սակայն չէ վարանում այդ գիտութեան պահանջած բարոյական օրէնքները վաճառել դրամին։ Հարուստ կանանց «յանցանքները» անհետևանք դարձնելու և նրանց անունը «խայտառակութիւնից» փրկելու համար՝ Մելիք-Բարսեղեան չէ դեկավարում բժշկական բարեխղճութեան, այլ միայն վաստակաւոր շահախրութեան զգացմունքով։

Շիրվանզադէն լաւ է պատկերացրել այս մարդու դէմքը և յանձին նրա՝ մեր մտաւորականութեան բաւական խոշոր մասի սարկութիւնը դրամին և դրամատէրին։ Մելիք-Բարսեղեան կենդանի

մարդ է և մեր իրականութեան մէջ մեծ տեղ է բռնում։ Նա մտաւորականութեան ծախուած խելքն է...

Տիկին Սոֆիօի եղբայրը՝ իշխան Սահառունին, նրա ամուսինը՝ Նիկողայոս Սապաֆեան — թէ և քիչ տեղ են դրաւում վէպի մէջ — այնուամենայնիւ պարզ և կենդանի են դուրս եկել։ Մէկը «ազնուականութեան» մնանկացած, ձրիակեր ծնացորդն է. միւսը նոր կազմակերպուող դասակարգի — բուրժուազիայի բնորոշ զաւակը։ Մեռնող և զարգացող դասերի հոգեբանութեան մի քանի ցայտուն գծերը լաւ են պատկերացած այդ անձերի մէջ։ Առաջինը զուարճասէր է, անհոգ, վատնող, ծոյլ և զրկուած աշխատելու, արտադրելու եռանդից։ Նա հպարտ է միայն իր նախորդների անունով և իր իշխան «ծագումով»։ Նա ներկայ չունի։ Ոչնչացած ոյժի վերջին աննշան հետքն է նա։

Երկրորդը խնայող է, մտահոգ, աշխատասէր և արդիւնաւորելու եռանդով լեցուն։ Նա զօրաւոր է իր զրամով և իր նիւթական, իրական ազդեցութեամբ։ Նա ներկայի տէրն է և ապագայի վրայ մեծ հաւատ ունի...

Վէպի մէջ առանձին ուշադրութեանն են արժանացած նաև Ռուբէնը, Մարիամի եղբայրը, որ երևում է սկզբից և մնում մինչև վերջ. օրիորդ Սաթենիկը, որ ասպարէզ է գալիս գրուածքի կիսից և Բագրատեանը, որ յայտնւում է վերջին քառորդից։

Ռուբէնը նոր է աւարտել համալսարանի պատմա-լեզուաբանական բաժինը ու այժմ պարապում է ուսուցչութեամբ։

Այս երիտասարդը հասարակականապէս և անհատապէս մաքուր մարդ է։ Երբէք չէ դաւաճանում վաղեմի, ուսանողական իդէալներին։ Դրամի և դիքի համար ոչ մի զիջում և ոչ մի տեղատուութիւն յանձն չէ առնում։ Մարիամի հետ վարւում է իբրև հայր և ամեն կերպ հովանաւորում է նրան։ Սրանց բարոյական և ընկերական կապը դրքի յուզիչ մասերից է։ Չէ դրաւում ոչ արտաքին գեղեցկութեամբ և ոչ մանաւանդ նիւթական կարողութեամբ և ամուսնանում է մի բարի, համեստ, առաքինի հայուհու — օրիորդ Սաթենիկի — հետ։ Այս սէրը, սակայն, նրա զարգացումն ու զանազան պարագաները վէպի նիւթը չեն և չեն երևում գրուածքի մէջ։ Ռուբէնը և Սաթենիկը բացատրուած, լուսաւորուած և պատճառաբանուած անձնաւորութիւններ չեն։ Ընթերցողը չէ կարողանում նրանց հոգիները թափանցել և նրանց տեսնել յստակ ու ջինջ։ Նրանց կեանքի ամենաբուռն և ամենաարտայայտիչ վայրկեանը — սէրը — ուր թերևս կարող էին երևալ իրանց ամբողջ հասակով — ինչպէս նկատեցինք — հրապարակ չէ հանւում։ Կարելի է նկատել, ուրեմն, որ այս մարդիկ բեմ են բարձրացել Մարիամի բնաւորութիւնն ու դրութիւնը պարզաբանելու և առհասարակ միջավայրը ամբողջացնելու համար։

Գլխաւորապէս նոյն նպատակով է յայտնւում նաև Բագրատեանը։ Նա Մարիամի անգիտակից որոնումների և ցաւագին երազների կենդանի, պայծառացած վախճանն է, հանգրուանը։ Երիտասարդ հայ օրիորդը ինչ որ ձգտումներ ունի, ինչ որ մղումներ, ինչ որ վոլթորիկներ իր հոգու հեռաւոր խորքում։ Մէլիք-Բարսեղեանին պատահելով նրան թւում է՝ թէ իդէալը, անկեղծութիւնը, նպատակը իրագործուեց արդէն։ Սպա ճանաչելով նրա իսկական պատկերը՝ հիասթափւում է, ուժգին հարուածում և մնում մի երկարատև, տաժանելի ու ճանճրալի յուսահատութեան մէջ։ Որոնումները, սրտի

պարկը, հոգու թափը կանգ չեն առնում, սակայն:

Բագրատեանն ձև է տալիս այդ անձև և անորոշ տենչանքին և իմաստ՝ նրա մոլորուած գոյութեան:

«Զգեցէք ձեր հայեացքը աւելի հեռու, ձեր արիւնակից ժողովրդի այժմեան վիճակի վրայ, մտածեցէք և կըտեսնէք, որ կնոջ դերը չպիտի սահմանափակուի միայն հասարակ անտեսուհու և քնքուշ մօր պաշտօնով: Ինչպէս մեր երիտասարդութեան, նոյնպէս և օրիորդների բոլոր ոյժերը ներկայ ժամանակ պէտք է ուղղուած լինին դէպի մի կէտ... պէտք է ծառայեն ժողովրդի հասարակական վիճակի վերակենդանութեան գործին: Ահա այս դերը կատարողից պահանջւում է անսահման սէր դէպի իր հայրենիքը և այդ սիրոյ անուղղակի անձնազոհ լինելու պատրաստակամութիւն:»

Ահա Բագրատեանի դաւանանքը:

Մենք, Մարիամի հետ միասին լսում ենք այդ ոգևորուած, անկեղծ խօսքը: Գիտենք, որ Բագրատեան կռուեց իր հասարակական-քաղաքական համոզմունքների համար և զոհուեց գաղափարական մարտի ճանապարհին: Եւ այսքանը միայն: Բագրատեանի տիպը և հոգեբանութիւնը «Զուր յոյսեր»ի նիւթը չեն և ուրեմն լուսաբանուած ու վերլուծուած չեն այնտեղ:

Ութսունական թուականներին այդ անձնազոհ մտաւորականի դէմքը և նրա բուռն գործը մեր կեանքի համար նորութիւն էին և այդ պատճառով, տակաւին, բաւականաչափ պարզուած ու զբաղուած չէին: Հետեւել տասնամեակում այդ հոգեբանութիւնը զարգացաւ, կատարելագործուեց, հասունացաւ և բռնեց մեր մտաւորականութեան բաւական խոշոր մասը: Շիրվանզադէն իր գրական

գործունէութեան շարունակութեան մէջ—բացի մի քանի թռուցիկ և շատ աննշան ակնարկներից—այլևս երբէք չվերադարձաւ Բագրատեաններին...

«Զուր յոյսեր»-ը ընդգրկելով լայն շրջաններ և այլազան վայրեր, հաւաքելով շատ անձնաւորութիւններ և շօշափելով շատ երևոյթներ—բնականաբար չպիտի կարողանար հասարակչիռ յաջողութեամբ զարգացնել այդ ամենը և անթերի առուեստով իրագործել բոլորը: Այս դժուարին աշխատանքի համար անհրաժեշտ էր գեղարուեստական շատ աւելի բարձր զօրութիւն, քան ցուցահանել է Շիրվանզադէն, մանաւանդ իր գրական գործունէութեան առաջին տասնամեակում:

Վէպի զանազան մասերը, տարբեր երևոյթները, անձերը, դէպքերը, որոգայթները կատարեալ ամբողջացած չեն: Այդ բարդ զանգուածի մէջ հեղինակը, արդարև, բաւական յաջող մերձեցումներ է արել, բաւական կապեր է ստեղծել—բայց ընդհանրութիւնը ամուր և անխախտ միաւորուած չէ: Ամեն թել լաւ չէ անցրած և ամեն մեխ վարպետութեամբ չէ զարկած: Ամեն որոգայթ բնական չէ ներկայացած և ամեն խնդիր հարթ չէ լուծուած:

Շիրվանզադէի այս երկը, լինելով ընդհանրապէս իրական կեանքի, լայն ու բարդ միջավայրի արտաղրութիւն՝ ամենից որոշ, ամենից պարզ, և ամենից բնական ներկայացրել է այլասերուած «աղնուականութեան» բարքերն ու հոգեբանութիւնը, նորակազմ բուրժուազիայի յոյզերը, խոհերն ու տրամաբանութիւնը և նիւթապաշտ, բուրժուա մտաւորականութեան գործերն ու ներքինը...

Հասարակական-տնտեսական այդ համախմբումներին պատկանող անձերը արտայայտուած են

դեղարուեստական յաջողութեամբ ու պարզութեամբ և հոգեբանական ճշտութեամբ։ Այստեղ է «Ջուր յոյսերի» լաւագոյն արժանիքը...

Այսուհետև Շիրվանզադէն թեւակոխում է իր գրական գործունէութեան երկրորդ տասնամեակը։ Նրա տաղանդը աւելի է հասունանում, դիտողութեան շրջանները աւելի են լայնանում և տեսնելու, ըմբռնելու ընդունակութիւնը աւելի է որոշւում։ Նա կարողանում է համարձակ շարժուձեւեր անել, փորձում է մտնել աւելի խորը և արտադրել աւելի երկայնաշունչ գործեր։ Այդտեղ, կեանքի հետ միասին, փոխւում են նաև նրա երկերի ընդհանուր մակարդակը և դէմքերը։

Գաւառական միջավայրը եւ արհեստաւոր դասը—մի սրտառուչ, գեղեցիկ երկից յետոյ—այլ ևս երբէք չեն երևում Շիրվանզադէի ստեղծագործութիւնների մէջ։

Հայ արդիւնաբերողը, հայ առևտրականը դառնում է աւելի զօրաւոր և աւելի նախաձեռնող։ Նա ստեղծում է իր երկրորդ սերունդը՝ զինուած եւրոպական դիտութեամբ, ճարտարութեամբ և համառութեամբ։

Բուրժուա մտաւորականութիւնը աւելի որոշ և աւելի ամփոփ ձև է ստանում։ Նա վերջնականապէս բաժանւում է գաղափարական մտաւորականութիւնից և շեշտում է իր կապիտալիստական կնիքը, իր դրամատիրական հոգեբանութիւնը։ Միևս կողմից հայ *զաղափարական մտաւորականը*, չկամենալով հաշտուել տիրող հասարակութեան հետ, չուզելով ստորանալ բուրժուազական դասակարգին՝ փորձում է անկախ իդէալներ մշակել և ձգտում է

սղղել այդ դասակարգի վրայ։

Հայ կինը կամաց-կամաց դուրս է գալիս նախկին կրաւորական, անդոյն, անկերպարան դերից և հասարակութեան մէջ երևում է իբրև ինքնուրոյն ու ազատ մարդ։

Ընտանիքը նշանակալից փոփոխութեան է ենթարկւում և կորցնում է իր նախկին հիմքերը, աւանդական բարոյականութիւնն ու յենարանները։

Վերջապէս, ինքը, հասարակութիւնը թաւալում է ուրիշ պայմանների մէջ և բաւականաչափ տատանում իր հինաւուրց կերպարանքը։ *Կազմակերպւում է հասարակական նոր հոգեբանութիւն։*

Շիրվանզադէն այսպէս պիտի լինի իր գրական գործունէութեան երկրորդ տասնամեակում և այս ընդհանուր ուղղի մէջ պիտի յղանայ ու ստեղծագործէ...

VI

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՍՆԱՄԵԿ

«Շրջանից արտասուածը».—«Արսէն Դիմաքսեան».—«Ցաւագար».—«Կրակ».—«Քաօս».—«Մելանիա»։

«Շրջանից Արտասուածը»

Շիրվանզադէի գրական հռչակին այս պատմուածքը ոչինչ չի աւելացնի։ Գեղարուեստական, հոգեբանական տեսակէտով նա կարող է միայն տուներ ձգել հեղինակի տաղանդի վրայ։ Այն տասնամեակում, երբ ընթերցող հասարակութիւնը ունի արդէն «Քաօս», «Ցաւագար», «Արսէն Դիմաքսեան», —Շրջանից արտասուածը» նրա համար կատարելապէս աննշան բան է։ Առանց հոգիների և բնաւորութիւնների վերլուծման, առանց մինչև անգամ գեղեցիկ ու հետաքրքրաշարժ նկարագրութեան՝ այդտեղ պատմւում է հետևեալ իրողութիւնը։—

Պետրոս Մարդանեան լուռ, անտարբեր մի կուսացած անձնաւորութիւն էր թէ միջնակարգ դպրոցում և թէ համալսարանում։ Ապրում էր առանձին և ամենքից հեռու։

Ընկերները բարկացան, վիրաւորուեցին և ապա սկսեցին հալածել նրան։ Զարախօսութիւններն ու զրպարտութիւնները վերջ չունին այլևս։ Տրաքաձայնեցին, որ Մադանեան եսամոլ է, անաղնիւ, գաղափարազուրկ, նոյն իսկ լրտես։ Կեանքի մէջ

նախկին «իդէալիստները» պաշտօնների յետևից ընկան, հարստութեան և դիրքի հետամտեցին, իսկ Մարդանեան հեռացաւ Ռուս-պարսկական սահմանի վրայ գտնուող մի գիւղ և այնտեղ, Նորէն անուան տակ, նուիրուեց հասարակական բուռն գործունէութեան։ Պարապում է ուսուցչութեամբ, դպրոց է հիմնում, գրադարան-ընթերցարան է բայ անում և հալածուածներին պաշտպանելու նպատակով, կեանքը վտանգի ենթարկում։ Ժողովուրդը պաշտում է «հազուագիւտ մարդուն»։

Լրագիրները շարունակ տեղեկութիւններ են հաղորդում գաղափարական և անձնանուէր Նորէնի մասին։ Նախկին ընկերները—այժմ հարստացած և դիրք ձեռք բերած—կարդում են այդ մարդու մասին և հիանում։ Նորէնը դառնում է նրանց իդէալը։ Եւ երբ իմացւում է, որ այդ Նորէնը նոյն ինքն Մարդանեանն է՝ ընկերները մնում են շուարած ու ամօթահար։ Նրանցից մէկը, սակայն, կարողանում է արտասանել հետևեալ բնորոշ նախադասութիւնը.

—«Այո, ես նրան հալածել եմ, բայց ազնիւ նպատակով։ Հաստատ իմացէք, որ հէնց մեր հալածանքն է ստիպել նրան այդպէս փոխուելու»։

Շիրվանզադէի այս պատմուածքը ոչ մի տպաւորութիւն չէ անում։ Թէ ազնիւ մարդը և թէ գաղափարավաճառները, թէ ժողովրդական գործիչը և թէ բուրժուա մտաւորականները դուրս են եկել անդոյն, անորոշ, բանալբօսիկ։

Ընկերների յարաբերութիւնները բնական չեն և բաւական շինովի են։ Հալածանքը և առհասարակ չարախօսների անձերն ու ժողովները ղրուած են ծիծաղելիի, ծաղրանկարային սահմաններում։

Դէպքը, ընդհանրապէս, հնքիաթի կերպարանք ունի։

«Շրջանից արտաքսուածը» դուրկ է Շիրվանզադէի գրական առաւելութիւններից, նրա տաղանդի աչքի ընկնող կողմերից: Այդ պատմուածքը հետաքրքրական է միայն իր գաղափարային տրամադրութեամբ:

«Արսէն Դիմաքսեան»

Այս վէպը, որ այնքան աղմուկ հանեց իր ժամանակին և այնքան խօսակցութիւնների տեղիք տուեց՝ պատկերացնում է եօթանասնական-ութսունական թուականների մեր մտաւորականութեան կեանքը իր բացասական և դրական կողմերով: Ոմանք մինչև անգամ պարսաւագրութեան տարրեր տեսան այնտեղ և տարաձայնեցին, թէ հեղինակը նպատակ է ունեցել գեղարուեստի միջոցով վարկաբեկել այս կամ այն մտաւորականին: Այդ չարաշուք ենթադրութիւնը բոլորովին անհիմն է, անշուշտ: Շիրվանզադէն «Արսէն Դիմաքսեանի» մէջ, ինչպէս առհասարակ իր բոլոր գրուածքներում, առարկայական, անկողմնապահ գրող է: Նա նկարագրում է դէպքերն ու երևոյթները ընդհանրապէս հաւասարակշռուած ոգով: Նրա համար մարդիկ պարսաւանքի և անարգանքի կամ գովանաբանութեան ու փաղաքշանքի առարկաներ չեն: Նա նրանց դիտում է իբրև գեղարուեստագէտ և աշխատում է վերլուծել, բացատրել, հասկանալ:

Այս ընդարձակ երկի մէջ ևս՝ Շիրվանզադէն հանդարտ և անաչառ վերաբերմունք ունի: Դրական և բացասական տիպերը նա ներկայացնում է առանց յուզմունքի, առանց զայրոյթի, առանց բարկութեան: Այդտեղ ոչ առաջիններն են ծայրայեղ

գոլէն առաքինի և ոչ երկրորդներն են չափազանց արատաւոր: Իւրաքանչիւրը արտայայտուած է իր սահմաններում, իր տրամաբանութեամբ և իր հաւատքով: Մեղմ և հանդիստ տոնը բնաւ հիմք չէ տալիս կասկածելու՝ թէ Շիրվանզադէն որևէ նպատակ է ունեցել վարկաբեկելու կամ անարգելու: «Արսէն Դիմաքսեանը» բացարձակապէս և էականապէս հեռու է պարսաւագրութեան նմանութիւնից անգամ: Նա մեր հասարակական կեանքի, մեր մտաւորականութեան, մեր բարքերի անաչառ և անկողմնապահ վերլուծումն է: Թէ ինչպէս է հեղինակը հասկացել մեր միջավայրը և մասնաւորապէս այս կամ այն անձերին, ինչպէս է իրագործել և գեղարուեստական ինչպիսի արուեստով է արտայայտել—այդ տարբեր խնդիր է և մենք կաշխատենք մեր կարողութեան չափով լուսաբանել այդ կողմը: Բայց որ նա միանգամայն առարկայական գործ է՝ այդ վեր է ամեն տարակուսանքից:

Ի՞նչ է «Արսէն Դիմաքսեան»-ի նիւթը, կենտրոնական մտահոգութիւնը: Արդեօք նա գաղափարական շարժման պատմութիւն է, հասարակական տարբեր հոսանքների ընդհարո՞ւմ, թէ՞ մի անհատի—կամ մի քանի անհատների—հոգեբանութեան ցուցադրութիւն, հոգեկան զանազան կրքերի գործունէութիւն, զարգացում և լուծում: Վէպի մէջ արտայայտուած մարտը, պայքարը հասարակական խաւերո՞ւմ է արդեօք ծաւալւում, աճում, թէ՞ անհատների հոգու խորքերում:

Շիրվանզադէն իր երկի ամբողջ տարածութեան վրայ խօսում է հասարակական, գաղափարական պատերազմից ու շարժուձևերից: Կարելի է ասել՝ նա բնաւ դուրս չէ գալիս այդ կախարդական շրջանակից և երբէք չէ լքում հասարակական մա-

կարդակը, ֆօնը։ Բայց, չնայելով դրան, վէպի հիմնական խնդիրը, առաջնակարգ պրօբլէմը մեզ թըւում է հերոսի հոգեբանութիւնը։ Ի՞նչպիսի կրքերով ու զգացմունքներով, հոգեկան-բարոյական ի՞նչպիսի կազմով բեմ դուրս եկաւ հերոսը, Արսէն Դիմաքսեանը, և ինչպէս հեռացաւ։ Այսանդ է կայանում Շիրվանզադէի այս ընդարձակ երկասիրութեան կենսաբանական հետաքրքրութիւնը։

Թէ ինչու այս հիմնական գաղափարի քով և նրա հետ միասին հեղինակը ցուցահանդէս է հասարակական շարժման այնքան նշանակելի պատմութիւնը—այս մասին մենք մեր տեսակէտը կը յայտնենք, երբ անցնենք վէպի հասարակական կողմի քննութեան։ Առայժմ կանգ առնենք հոգեբանական տարրի վրայ, որ մեր հայեացքով էականն է և առաջնակարգը։

Արսէն Դիմաքսեանը սկզբում ներկայանում է մեզ հոգեկան, բարոյական անկատարելութեամբ։ Նրա վրայ ծանրացած են մի քանի արատներ, որոնք նրան հանգիստ չեն տալիս։ Կամքի և բնաւորութեան աչքի ընկնող թերութիւններ ունի նա, որոնց աշխատում է «խելքի ուժով» չէզոքացնել, հեռու վանել և իր նպատակին, ներքինը մաքրել, զտել անբարոյական և բացասական տարրերից։ Գրքի ամբողջ տեղութեան մէջոցին նա զբաղուած է այդ հարցով։ *Ջոմ'ան և մ'արրազոր ծում'ի* ընթացքն է, պրօցէսը, որ կատարւում է դանդաղ, հետևողական, յաջորդաբար։ Շիրվանզադէն իր հերոսին դրել է հազարաւոր փորձութիւնների մէջ, նրան կանգնեցրել է բազմաթիւ վտանգների հանդէպ, նրա գոյութիւնը ենթարկել է հարիւրաւոր փոթորիկների ու մրրիկների—ուր նա կարող էր խորտակուել, անհետանալ, ոչնչանալ—և սակայն վերջիվերջոյ ազա-

տել է այդ բոլորից և մաքրել ու աղնուացրել է նրա բարոյական պատկերը։ «*Կեցցէ վիշտը, որ զտում է մարդուն ինչպէս կրակը՝ ոսկուն*»—այս արմատական սկզբունքը հիմք ընդունած՝ հեղինակը Դիմաքսեանին իջեցրել է մինչև վշտի յատակը, նետել է կրակի գիրկը, խորասուզել է ծովի անդունդը և ապա դուրս բերել մաքուր և վերանորոգուած։

«...Իմ մէջ տեղի է ունեցել մի մեծ փոփոխութիւն, մի տեսակ բարոյական յեղաշրջում։ Երկար կլինէր բացատրել թէ ինչպէս կատարուեց այս յեղաշրջումը և հարիւ թէ կարողանայի բացատրել։ Բայց այսքանը կարող եմ ասել, որ այս րոպէիս քո առջև նստած է ուրիշ մարդ, որ ես այն չեմ, ինչ որ մի քանի ժամանակ սրանից առաջ... Ես զգում եմ, որ ինձ համար անհրաժեշտ էր տանջուել—տանջուեցի, ես պէտք է փորձուէի – փորձուեցի կեանքի քուրայում։ Ես շատ անգամ վհատուեցի, շատ անգամ տատանուեցի, եղան վայրկեաններ, երբ վճռում էի թողնել իմ ընտրած ճանապարհը, բայց այժմ այդ չկայ այլ ևս...»

Այսպէս է խօսում Դիմաքսեան, գրքի վերջում, իր հաւատարիմ և գաղափարական ընկեր Մաերեանին։

«Այո, կատարեալ յաղթութիւն—դու սպանել ես քո մէջ այն օձը, որ քեզ այնքան խանգարում էր...» հրճուանքով և անկեղծօրէն հաստատում է ընկերը։

Ի՞նչ բարոյական թերութիւններ ունէր Դիմաքսեան և ինչ էր այն օձը, որ հանգիստ չէր տալիս նրան և որին նա վերջիվերջոյ սպանեց։

Շիրվանզադէն իր հերոսին ներկայացրել է փիլիքապէս բոլորովին ազգ և անհամաչափ անձ-

նաւորութիւն: Նա զուրկ է արտաքին, մարմնական ամեն առաւելութիւնից և այս հանգամանքը խոր-բաղէս վիրաւորում է նրան: Նա չէ կարողանում անտարբերութեամբ և հանգիստ հոգով դիտել իր այդ պակասութիւնը: Դիմաքսեանի խիղճը վըրդովուած է, միտքը ալեկոծուած, ամբողջ գոյութիւնը զարնուած այդ բնական իրողութեան պատճառով: Նա գտնում է այդ փաստի զօրաւոր ու բացարձակ տիրապետութեան ներքոյ:

Դուրս է բերուած, ուրեմն, ինքնին մի հետաքրքրական, ուսանելի դրութիւն—*ազնուութեան հոգեբանութիւնը*:

Շիրվանզադէն ներկայացնում է մեզ մի զարգացած անհատ, որ գտնուում է ազնուութեան աստիճանի, որի հոգեկան հաւասարակշռութիւնը խախտուած է ցաւագինօրէն և որ սակայն կարողանում է ի վերջոյ մոռանալ իր դժբախտ արտաքինը և զգալ իր հոգու զեղեցկութիւնը, գիտակցել *մէմ իայն իր բարոյական համաչափութիւնը, ապրել, ներշնչուիլ իր ներքին կատարելութիւններով*:

Մի այսպիսի մարդու ցուցադրութիւնը, նրա բազմակողմանի կեանքն ու ապրեցութիւնները, նրա զարգացումն ու աճնուացումը, ինքնահինքեան,— կարող էր դրաւել ամեն դեղարուեստագէտի:

Շիրվանզադէն ձգտել է իր երկի մէջ մասամբ այդպիսի հոգեբանութիւն դուրս բերել և այդպիսի խնդիրը շօշափել: Ֆիզիքական ազնուութեան մահմեդութիւնը գրքի սկզբից մինչև վախճանը անդադար հրապարակ է գալիս և միայն վերջին էջերի վրայ է հեղինակը յայտնում, թէ Դիմաքսեան այլ ևս մոռացաւ իր փոքրիկ մարմինը և մինչև անգամ սկսեց կատակուել դրա շուրջը:

Բացի այս հիմնական խնդրից—ազնուութեան հոգեբանութիւնից—վէպի մէջ կողք-կողքի գնում է նաև մի երկրորդ հիմնական պրօբլեմ—*նախանձի հոգեբանութիւնը*—որ Շիրվանզադէն միացրել է առաջինին:

Անհատական մի մարդ—զարձեալ Դիմաքսեանն է նա—որ չէ կարողանում հանդիստ խղճով տանել ուրիշի յաջողութիւնները: Երբ իմանում է, որ կանանց բարեգործական ընկերութեան հիմնադիրը *Բարսեղեանն է*, նախանձից զրգռւում է և զայրանում: սկսում է հակառակ իր համոզման պաշտպանել այն խնդիրը՝ թէ կանայք պէտք է զործեն առանց տղամարդու աջակցութեան: Իր կեանքի բոլոր ասպարէզներում, տանը թէ զպրոցում, դասախօսութիւն կարդալիս թէ փողոցում զբօսնելիս, քնած թէ արթուն, մենակ թէ հասարակութեան մէջ՝ նախանձը Դիմաքսեանին հանդիստ չէ տալիս: Նրա բովանդակ էութիւնը թունաւորուած է այդ բարոյական ախտով: Նախանձը միշտ ապրում է նրա հոգում, միշտ գործում է նրա գիտակցութեան մէջ և միշտ իր կնիքն է դնում նրա շարժուձեների, խօսքերի, վարմունքների և արարքների վրայ:

Երկարատև, ծանր ու հետևողական դաստիարակութեան միջոցով, սակայն, Դիմաքսեանը ազատւում է այդ տղտակալի անհերդաշնակութիւնից և հոգեպէս պայծառանում, յստականում, հաւասարակշռւում:

Զարգացած գիտակցութեան մէջ—ըստ Շիրվանզադէին—վերջ ի վերջոյ յաղթող են հանդիսանում բարոյական առաքինութիւնները և սպանւում, ոչնչանում են հոգեկան այլանդակութիւններն ու աղաւաղումները:

Ազնուութեան և նախանձի հոգեբանութեան

հետ հաւասար—իբրև երրորդ հիմնական խնդիր—քայլում է անհատական երջանկութեան հոգեբանութիւնը։

Դիմաքսեան սկզբում չափազանց անհատական է, ձգտում է հասնել անձնական բախտաւորութեան, ոգևորւում Գայիանէով, ամենաբուռն և ամենակատաղի ցանկութեամբ երազում է նրան։

Գայիանէն չէ սիրում Դիմաքսեանին։ Ամուսնանում է Բարաթեանի հետ և սակայն կարճ ժամանակի մէջ, տեսնելով նրա անհատատարմութիւնը, բաժանւում նրանից։ Դիմաքսեան նորէն յոյսեր է տածում։ Յաւագին ու ջերմ սիրով կրկին ձգտում է Գայիանէին։ Իր ամբողջ երջանկութիւնը նրա մէջ է տեսնում։ Մոռանում է ամեն ինչ, կորցնում ամեն հաւասարակշռութիւն և դողդոջուն ու վշտահար՝ իր վիրաւոր սէրը խոստովանում նրան։ Գայիանէն անկեղծօրէն յարգում է Դիմաքսեանին և սակայն չէ միանում նրա հետ։ Դիմաքսեան անծայր յուսահատութեան ու լքման մէջ՝ անձնասուր է լինում ինքնասպանութեան ևս մաքերին։ Ապա, հոգեկան այս տագնապից ևս կարողանում է ամբողջ ու մաքուր դուրս գալ և նուիրուել հասարակական բարեկեցութեան, մարդկութեան երջանկութեան։

Անձնական բախտի ճիգերը անկարելիութեան դարնուեցին։ Նա չկարողացաւ կեանքից խլել իր երազած քաղցրութիւնը։ Թող, ուրեմն, անհատական երջանկութեան հետամտութիւնը կանգ առնի այլևս և թող գործէ միայն ընդհանուրի երջանկութեան մտահոգութիւնը։ Դիմաքսեան մոռացաւ իրենը՝ հասարակական կեանքով ապրելու, յուզուելու, ներշնչուելու համար։

Այս երեք դրութիւնները—տգեղութեան, նախանձի և անհատական երջանկութեան հոգեբանութիւնները—Շիրվանզադէն միացրել է և տեղաւորել է մի անձնաւորութեան մէջ։ Որքան էլ հեղինակը աշխատած լինի ապացուցանել, թէ Դիմաքսեանի մէջ վերջին երկու հոգեբանութիւնները անկախ հիմք չունէին և կապուած էին տգեղութեան հոգեբանութեան հետ—այնուամենայնիւ գեղարուեստական իրագործման պարզութեան ու ամփոփման համար աւելի նպատակայարմար էր նրանց առաձին-առանձին ուսումնասիրել և վերլուծել։ Մանաւանդ որ կեանքում, սովորական, հասանուտ իրականութեան մէջ այդ երեք հոգեբանութիւնները անխուսափելիօրէն և անհրաժեշտաբար միացած չեն և յաճախ նրանք անկախ են գործում։ Տգեղ մարդը կարող է նախանձոտ չլինել և անհատական երջանկութեան ճանապարհին խոչընդոտների չհանդիպել և այնուամենայնիւ ունենալ տգեղի որոշ հոգեբանութիւն։ Այս հոգեբանութիւնը նիւթական և շօշափելի արտայայտութիւն թերևս չստանայ, բայց անհատի սրտի խորքում նա կարող է ժամանակաւորապէս (կամ մինչև անգամ միշտ) գոյութիւն ունենալ։

Միւս կողմից՝ նախանձը շատ յաճախ կարող է տգեղութեան հետ բնաւ կապուած չլինել և բոլորովին այլ հիմքեր ունենալ։ Նախանձոտ մարդը կարող է նախանձոտ լինել և ինալ—միանգամայն ուրիշ պատճառներով—անկախ տգեղութիւնից և սիրային անյաջողութիւնից։

Երրորդ կողմից՝ անհատական երջանկութիւնը շատ յաճախ կարող է իրագործուել կամ խափանուել՝ առանց տգեղութեան և առանց որևէ նախանձի։ Դիմաքսեանը—ըստ Շիրվանզադէի—այդ ճանապարհի վրայ յաջողութիւն չունեցաւ, որովհետև արտաքին յարմարութիւններից զուրկ էր։ Բայց

նա կարող էր նոյն ճակատագրին ենթարկուել՝ գեղեցիկ լինելով հանդերձ։ Կամ՝ նա կարող էր Գայիանէի սէրը գրաւել, բոլորովին նոյն ֆիզիքական կազմն ունենալով։ Յետագայում, ինչպէս ինքը Շիրվանզադէն ցոյց է տուել, Գայիանէն բաւական ոգեւորուել էր Դիմաքսեանով։ Յարդանքից զատ նա ուրիշ զգացմունք էլ ունէր։ Վերջինիս տգեղութիւնը նրա աչքում այլևս չէր երևում։ Էլ եթէ նա չմիացաւ Դիմաքսեանի հետ — այդտեղ սիրոյ բացակայութիւնից աւելի ուրիշ բարդ պատճառներ դեր խաղացին։ Ինչ լեռոյ, երբ Գայիանէի մասին խօսելու լինենք՝ կանգ կառնենք այդ պատճառների պարզաբանութեան վրայ։ Առայժմ ուզում ենք հաստատել միայն այն հանրածանօթ իրողութիւնը, որ սէրը շատ յաճախ ոչ մի կապ չունէ ֆիզիքական յարմարութիւնների հետ։

Շիրվանզադէն ինքը իր երկերի մէջ այդպիսի սիրոյ նկարագրութիւններ է տուել։ Եւ մենք բնաւ դիտողութիւններ չունենք նրա դէմ այդ խնդրի առիթով։

Մենք կարծում ենք միայն, որ հոգեբանական վերլուծական երեք դրուագների միացումը Դիմաքսեանի մէջ գեղարուեստական անհրաժեշտութիւն չէ։ Կեանքի մէջ նրանք անխուսափելիօրէն շղթայուած չեն։ Տգեղութեան հոգեբանութիւնը, նախանձի հոգեբանութիւնը, անհատական երջանկութեան հոգեբանութիւնը կարող են անկախ և ինքնուրոյն կերպով գոյութիւն ունենալ։ Նրանց ճակատագրական միաւորումը Շիրվանզադէի վէպի մէջ — չլինելով անհրաժեշտութեան արդիւնք — պատճառ է դարձել խոշոր բարդութեան և գեղարուեստական իրագործումի հանդէպ անանցանելի դժուարութիւններ է յարուցել։ Հեղինակը մի հոգեբանութեան

հետամտութիւնը բաւ չհամարելով և ձեռնարկելով երեք հոգեբանութիւնների զարգացման՝ հարկադրուած է բազմակողմանի ու տարբեր պայմաններ ստեղծել, որոնց մէջ տգեղը հետզհետէ մոռանայ իր արտաքին կազմը և գիտակից իր ներքին դեղեցկութիւնները նախանձոտը թողնէ իր բարոյական ախտերը, արատները հեռու վանէ և մաքրուէ հոգեպէս. անհատական երջանկութեան ձգտողը արհամարհէ իր եսական հաճոյքը և ընդհանուր մարդկութեան բարեկեցութեան նուիրուի։

Այս երեք պրօբլէմները, որքան մենք հասկանում, գեղարուեստական տարբեր խնդիրներ են, և աւելի նպատակայարմար կլինէր՝ եթէ Շիրվանզադէն — իր գրուածքի յաջող իրագործման համար — ընտրէր նրանցից այն, որ աւելի համապատասխան էր վէպի ընդհանուր միջավայրին և յարուցած խնդիրներին։ Այս վերջին տեսակէտից՝ գրուածքը հոգեբանօրէն և գեղարուեստականօրէն ոչինչ չէր կորցնի, եթէ հեղինակը բաւականանար անհատական երջանկութեան պրօբլէմով միայն և տար այն ճանապարհը, այն դժուարին ու ցաւոտ ուղին, որ պիտի անցնէր Դիմաքսեան՝ զտուած և անկեղծ հասարակական գործիչ դառնալու համար։

Շիրվանզադէն այդ բոլոր խնդիրներն ու հոգեբանութիւնները բարդել է, բեռնաւորել է իր հերոսի վրայ, որ անվերջ ջղաձգութիւններ է առնում, որ հիւանդագին ու ախտաւոր շարժուձեւեր է գործում, որ սայթաքում է միշտ հոգեպէս և բարոյապէս։ Եւ հերոսի այս բիրտ, ցաւագար շարժուձեւերը միջավայր են ստեղծում երկի մէջ, նման մթնոլորտ առաջացնում վէպի հիւսուածքի մէջ և գեղարուեստական հարթ ու հաւասար ընթացքը ճակատագրականօրէն աղաւաղում։

Դիմաքսեան — անփորձ ու զգայուն երիտասարդ — որ հազիւ ժամանակ և կարողութիւն ունեցաւ մարտնչելու մի թերութեան դէմ՝ հարկադրուած է իր խեղաթիւրուած բնաւորութիւնը դասաւորելու, իր մոլորուած կամքը կրթելու և իր արատաւոր հոգին ազնուացնելու: Եւ տակաւին դրանցից ոչ մէկը չկատարած, տակաւին գրքի սկզբում՝ Դիմաքսեան պէտք է նաև հասարակական մի մեծ շարժման դեկավարը հանդիսանայ և հանրային բուռն պայքար մղէ:

Շիրվանզադէի այս ընդարձակ վէպը իր գեղարուեստական և հոգեբանական վրիպումներով մեծ մասամբ պարտական է այս բարդ, կնճռոտ, խճճուած սկզբնաւորութեան և յղացման: Դիմաքսեան շատ աշխատանք ունի: Հեղինակը նրան մի գծի վրա չէ պահել, մի հիմնական մտքի, մի կենդրոնական գաղափարի, մի առաջադրդ պրօբլէմի հունի մէջ չէ դրել: Նա հարկադրուած է թափառել մի քանի էական ձայների և միքանի գլխաւոր իդէաների միջավայրում: Եւ այս թափառումից, այս ճակատագրական տեղափոխութիւններից է առաջանում թերևս նրա հոգու անորոշութիւնը, նրա ցանկութիւնների տարտամութիւնը, նրա գործերի անգոյնութիւնը և առհասարակ գրուածքի անհարթութիւնը:

Դիմաքսեանի անցած ճանապարհը, նրա հոգու ընթացքը, նրա ընդհարումների ելևէջը և վախճանը — մի կողմ թողնելով դեռ ևս նրա հասարակական գաղափարները, որոնց վրայ յետոյ կանգ կառնենք — մեզ համար բաւարարաչափ լուսաբանուած չեն: Մենք նրան տեսնում ենք ազգութեան տարտամութեան տակ, մենք նրան տեսնում ենք խիստ նախանձոտ, մենք նրան տեսնում ենք ան-

հատական երջանկութեան ծայրայեղօրէն հետամուտ — այս բոլորը մենք տեսնում ենք շեշտուած-ուժեղ և կենդանի: Հեղինակը լաւ է ներկայացրել հերոսի այս բոլոր ձախորդութիւնները, նրա բնաւորութեան այս ատուերապատ կողմերը: Բայց մենք չենք կարողանում տեսնել այն ճանապարհը, յըստակ և ջինջ, որով Դիմաքսեան քայլում է և այն ազդեցութիւնները, որոնք մաքրում, զտում են նրա բարոյական թերութիւնները: Մսերեան մեծ դեր է կատարում այդ ուղղութեամբ: Կարելի է մտածել, որ Շիրվանզադէն նրան ստեղծել է պարզապէս Դիմաքսեանին դաստիարակելու համար: Իր ծայրայեղ յուսահատութիւնների ժամին, իր դժբախտ փորձութիւններին նա միշտ դիմում է Մսերեանին և սրա բարոյական հովանաւորութեամբ սրտապընդում: Մինչև իսկ այն ժամանակ, երբ հասարակութեան մէջ լուրեր են պատում Դիմաքսեանի խելագարութեան մասին, երբ ինքը Դիմաքսեան անգամ — Շիրվանզադէի խոստովանութեան համաձայն — չափազանց կասկածանքով է վերաբերում իր հոգեկան և մտային հաւասարակշռութեան՝ Մսերեանն է դարձեալ, որ խրախուսում է նրան և հեռացնում այդ վտանգաւոր և տարօրինակ կասկածը:

Ազդեցութիւնների շարքում կարելի է յիշատակել նաև Դիմաքսեանի ծանր հիւանդութիւնը, գաւառի կեանքը, Հարիպեանի անձնաւորութիւնը, որոնք միանալով հերոսի ներքին յարատև և գործօն ինքնագիտակցութեան հետ՝ վերջ ի վերջոյ մաքրագործում են նրան: Այս բոլորը, սակայն, չեն պատկերացել հետևողական կարգով, պայծառ և որոշ, համոզիչ և անվիճելի, և մենք դժուարութեամբ ենք երևակայում Դիմաքսեանին՝ ազատա-

գրուած իր ազիտութեան հուժկու տիրապետութենից, նախանձի ազդեցութիւնից և անհատական երջանկութեան անվերջ հետամտութիւնից։

Հերոսի բնաւորութեան մէջ չարաբաստիկ օձը երևում է յայտնի, բայց նրա կորուստը և տեղատուութիւնը ակներև չէ այնքան։

Գրքի վերջում—երբ Դիմաքսեանը արտասահման է ճանապարհւում—Շիրվանզադէն ապատմում է արդէն վերջնական մաքրագործման մասին։ Մենք այդ իմանում ենք հեղինակից։ Հերոսը այնպիսի վիճակի մէջ չէ, որ անձամբ կարողանար տեսնել այդ փոփոխութիւնը և զրկանապէս հաստատենք։

«...Մենք երկուսս էլ շատ փոքրիկ մարդիկ ենք, կըտեղաւորուենք ամեն մի տնկիւնում»։ Ասում է Դիմաքսեան, կառքի մէջ, իր ծառայ Սիրականին, որ նոյնպէս փոքր էր ու տգեղ։ Եւ այս կատակ է, — Շիրվանզադէի վկայութեամբ — առանց կեղծիքի, առանց ցաւի և առանց ափսոսանքի։

Այնուհետև Դիմաքսեան մեզ չէ երևում. այս անունը միջադէպից յետոյ այլ ևս մենք նրան չենք տեսնում այդպիսի զառած, հանդարտ, վերածնուած դրութեան մէջ։ Մեզ այնպէս է թւում, որ Շիրվանզադէն պէտք է իր հերոսին մի քանի բնորոշ և նշանակելի վիճակում պատկերացնէր, որպէսզի ընթերցողը որոշակի և անխախտ տեսնէր Դիմաքսեանի փոփոխութիւնը։

Այլապէս՝ մենք բաժանւում ենք նրանից ոչ այն խորունկ գիտակցութեամբ և ոչ այն մեծ հաւատով՝ թէ աւելի բուռն վայրկեաններին և աւելի ծանր փորձութիւնների հանդէպ՝ կըպահի նոյն սառնասրտութիւնը և հանդարտութիւնը։ Գրքի վերջին էջը փակելիս՝ ընթերցողի մէջ այդպիսի

համոզմունք և այդպիսի հաւատք չէ ստեղծւում։ Եւ այս՝ կամ այն պատճառով, որ մաքրագործման ամբողջ ուղին լաւ չէ ներկայացած և կամ այն պատճառով, որ Դիմաքսեանը մեզանից վաղաժամ է հեռանում՝ առանց հիմնաւոր և համոզիչ ապացոյցների։

Գեղարուեստական-հոգեբանական այս բոլոր պակասութիւններով հանդերձ՝ «Աբսէն Դիմաքսեան» հեղինակը կարողացել է հայ անհատասարակըշիռ մտաւորականի նկարագրութեան հետաքրքրութիւն հաղորդել։ Դուք տեսնում էք մի երիտասարդ, որ տանջւում է իր ազգութեան տիրապետութեան ներքոյ, որ վրխլում է իր անհատական երջանկութեան որոնումների ժամանակ, որ աշխատում է ամեն կերպ հասնել խուսափող երազներին, որ կամենում է ապրել բուռն սիրով, տաք զգացմունքով, որ կարօտում է թախիծով և ձգտում արտասուալից։ Դուք տեսնում էք մի կրթուած, զարգացած երիտասարդ, որ հասարակական պայքարների մէջտեղին անտանելի պէտք ունի կնոջ սիրող հայեացքին, մեղմ ձայնին, ընկերական քաղցր խօսքին, մի երիտասարդ, որ կեանքի հաճոյքներից արտաքսուած, նախկին ընկերներից չարախօսուած և զրպարտուած բիրտ ու ասիական հասարակութիւնից ծաղրուած ու հալածուած՝ վիրաւոր ու վշտահար սրտով դիմում է դէպի մենութիւն, դէպի բնութիւն՝ անհուն տրտմութիւնը անտառի խորքում, գետերի ափին, լեռների վրայ թաղելու համար։

Կենդանի, յաջող, բնական են դուրս եկել Դիմաքսեանի կեանքի այն մասերը, այն վայրկեանները, երբ նա յախուռն ոգևորութեամբ ձըգտում է երջանկութեան, հանդստութեան, հոգեկան

անդորրութեան և երբ այդ բոլորը փախչում են նրանից և լքում նրան։

Այս հոգեբանութիւնն ինքնըստինքեան հետաքրքրական է ու նշանակալից։ Եւ որքան էլ նրա իրագործումն ու զարգացումը ուրիշ խնդիրներով բարդուած ու ծանրացած լինի՝ այնուամենայնիւ նրա յղացումն ու ցուցադրութիւնը արժանի է ամենայն ուշադրութեան և գնահատութեան...

Հոգեբանական տարրից զատ՝ հեղինակը «Աբսէն Դիմաքսեան»-ի մէջ կարևոր տեղ է յատկացրել նաև հասարակական, գաղափարական կողմին։

Արդարև, վէպի կենդրոնական գաղափարը երկու տարբեր հոսանքների ընդհարումը չէ—ինչպէս իր տեղում ասացինք—նրա առաջնակարգ մտահոգութիւնը երկու կուսակցութիւնների կռիւը չէ։ Սակայն, չնայելով դրան՝ այդ կռիւն և այդ ընդհարման մասին շարունակ խօսք է լինում վէպի մէջ։

Շիրվանզադէն ակնյայտնի կերպով հասարակական շարժման և գաղափարական մրցման ուժգին կնիք է դրել իր երկի վրայ։ Եւ եթէ վէպը ամբողջովին երկու հոսանքների ընդհարում չէ նկարագրում՝ ապա նրա գլխաւոր հերոսը, Աբսէն Դիմաքսեան, հասարակական որոշ գաղափարներից կրող է և որոշ շարժման՝ ղեկավար։ Պակասում է միւս մասը, հակառակորդ ճանակը իր ամբողջական հոգեբանութեամբ ու տրամաբանութեամբ։ Երկուսի հանդիպումը շեշտուած չէ, բայց մէկի գործունէութիւնը աւելի քան հոչակուած է։

Արդ. Աբսէն Դիմաքսեան մեզ համար բացի հոգեբանական նշանակութիւնից՝ ունի նաև հասարակական նշանակութիւն։ Նա վէպի մէջ հանդէս է գալիս ոչ միայն իր հոգեբանական կողմե-

րով, այլև իր հասարակական կերպարանքով։ Որոշ սկզբունքների մոլեռանդ քարոզիչ է և կամենում է մեր կեանքի մէջ որոշ հոսանք մացնել։

Թէ ինչու Շիրվանզադէն անհրաժեշտ է համարել Դիմաքսեանին հասարակական շարժման ղեկավար ներկայացնել և միաժամանակ այնպիսի հոգեկան, բարոյական անհատասարակշռութեան մէջ դնել—այդ մենք բաւականաչափ չենք կարողանում հասկանալ։ Մեզ թւում է թէ այդտեղ մի տխուր աննեղաշնակութիւն կայ։ Աբսէն Դիմաքսեանի պէս մի անձնաւորութիւն, որ զբաղուած է իր ներքին թերութիւնների սրբագրութեամբ ու դաստիարակութեամբ. նրա պէս մի անփորձ, թուլակամ և թուլասիրտ անհատ, որ հազիւ է կարողանում իր դոյութիւնը պահել ամենափոքր անյաջողութեան հանդէպ—թւում է թէ հասարակական մեծ շարժման ղեկավար ու բուռն պայքարի առաջնորդ չպիտի դառնար։ Սոսկական մտաւորականը, մինչև իսկ ազնիւ, մաքուր մտաւորականը կարող է անշուշտ Դիմաքսեանի ճակատագրական թերութիւններով հանդէս գալ. երկրորդական գործիչը կարող է նրա անկատար ու պակասաւոր բնաւորութեան մէջ տեղաւորուել, բայց հասարակական առաջնակարգ մարդը, մաքերի վարիչը, սկզբունքների ներկայացուցիչը, շարժումների պարագլուխը պէտք է աւելի առողջ հոգեբանութեամբ, աւելի հաւասարակշռուած բնաւորութեամբ և աւելի ամուր կամքով երեւան գար։ Դիմաքսեանի պատմական, հասարակական դերը—որ նրան յատկացնում է Շիրվանզադէն—համապատասխան և համեմատական չէ այն հոգեկան, բարոյական կազմին, որով նա ներկայանում է ընթերցողին և որով ապրում է ու շարժւում գրեթէ վէպի ամբողջ ասպողութեան ընթացքում։

Աւելի գեղարուեստական, աւելի հոգեբանական և աւելի ճշմարիտ կլինեը—եթէ հասարակական շարժման և գաղափարական մարտի դեկավարն ու պարագլուխը Դիմաքսեանի կամքից, ընտրութիւնից և հոգեկան կարողութիւններից ուժեղ կամք և ուժեղ բնաւորութիւն ունենար:

Այս հիմնական վրիպումի ցուցադրութիւնից յետոյ՝ դառնանք Արտէն Դիմաքսեանի հասարակական կողմին:

Գաւառական յայտնի կալուածատէրի որդի է: Միջնակարգ ուսումը աւարտել է գիմնազիայում, բարձրագոյնը՝ Եւրոպական մի համալսարանում: Սովորել է ընկերաբանական-պատմական գիտութիւններ: Բանևևից տարեկան հասակում վերադառնում է Կովկաս, Թիֆլիս, և Ներսիսեան դըպրոցի մէջ ընդհանուր պատմութեան ու աշխարհագրութեան դասեր է սառանձնում: Այս պաշտօնի հետ միասին՝ կամենում է մեր կեանքի վերանորոգութեամբ զբաղուել: Պատրաստւում է անմիջապէս պայքար սկսել հին աշխարհահայեացքի և հին ըմբռնումների դէմ:

Դիմաքսեան մի քանի ընկերներ ունի, որոնք նրա հետ ուսանողական կեանք են անցրել և պատրաստուել հասարակական գործունէութեան համար: *Իրատաբան Վէբիլեան, Թիֆլիսեցի, հարուստ և ազդեցիկ ընտանիքի զաւակ: Բարաթեան, նոյնպէս Թիֆլիզեցի, նահանգական վարչութեան խորհրդականի որդի: Նիւթապէս բաւական ապահովուած: Ճարպիկ, շնորհալի ձևերով, զուարճասէր ու ազդեցիկ:*

Այս երկուսը Թիֆլիսում բաւական կապեր ունէին և ընդունուած էին շատ ընտանիքների մէջ:

Բժիշկ Սալամբէկեան, Դիմաքսեանի վաղե-

մի ընկերը, որի հետ նա անցրել է իր պատանութեան տարիները: Ուսանողական շրջանում նրանք տարբեր քաղաքներում են եղել, բայց միշտ թըղթակցել են:

Մսերեան, երեսունն անց երիտասարդ: Տասը տարեկան հասակում զրկուել է ծնողներից և այնուհետև թշուառ ու անօգնական կեանք վարել: Ուսանող ժամանակ՝ շաբաթներով տաք կերակրի երես չէ տեսել և ապրել է խոնաւ նկուղներում: Համալսարանների բոլոր բաժինները անցել է, բայց ոչ մի տեղ չէ աւարտել «իւր անհանգիստ և ճըշմարտախոս լեզուի պատճառով»: Դիմաքսեանի ամենամօտ ընկերն է: Սալամբէկեան և Մսերեան գաւառացիներ են:

Այս հինգ երիտասարդների մէջ, հասարակական տեսակէտով և գիտական պատրաստութեամբ, ամենից բարձրը թւում է թէ Դիմաքսեանն է: Նա կենտրոնական անձնաւորութիւն է:

Տեսնենք թէ այդ մարդիկ—գլխաւորապէս Դիմաքսեան—ինչպէս են ըմբռնում մեր կեանքը և ինչ ուղղութեամբ են ուզում պայքարել:

«Ես կազմել եմ մի ծրագիր մեր գործունէութեան մասին: Ես այն կարծիքի եմ, որ մեր կուիւը պէտք է սաստիկ լինի: Հարկաւոր է մեծ վստահութիւն և քաջութիւն ջնջելու և հիմնայատակ անելու հինը, անօգուտը, վնասակարը: Երիտասարդութեան բարոյական պարտքերը շատ են, իսկ նա բոլորովին այդ չէ զգում: Կռուելով հների դէմ, պէտք է հետամուտ լինել և՛ նորերին, հարուածել և՛ նոր սերնդին, եթէ սա չի կատարել իւր դերը... Մենք երդուել ենք նուիրել մեզ հասարակական գործունէութիւնը, պէտք է կատարենք այդ երդումը:»

Այս ընդհանուր խօսքերից յետոյ մենք աշխատում ենք աւելի խորը թափանցել երիտասարդ մտաւորականների աշխարհայեացքի մէջ և աւելի որոշ ծրագիր վինտրել. «ամեն ինչ նրանց աչքում մթին էր երևում: Հասարակական կեանք չկայ: Մարդիկ մտածում են միայն իրենց նիւթականի մասին: Ժողովուրդը խարխափում է տգիտութեան մէջ: Հին սերունդը բռնակալ է, նորը թոյլ, հալածուած, ճնշուած: Վաճառական դասը ապականուած է, հարստահարող, փողամոլ: Երիտասարդութիւնը բարոյապէս փչացած է: Հայրենիքի խնդիր չկայ, իդէալ չկայ: Ուսուիարանները պատրաստում են տիրացուներ: Գրականութիւն չկայ: Լրագրութեան մէջ տիրում է շարականի հոգին: Ամեն ինչ կարօտ է արմատական վերանորոգութեան...»

Եւ սակայն գործունէութեան պարզ ու որոշ ծրագիրը չունին այդ երիտասարդները: Շիրվանզադէն ասում է՝ թէ Դիմաքսեան դուրս եկաւ իր ծրագրով, «որի ընդհանուր կէտերը ալարգեց»: Ը գիտենք ընկերական ժողովի առաջ ինչպիսի ձևակերպութիւն և ինչ հիմնաւորում տուեց Դիմաքսեան իր հասարակական աշխարհայեացքին: Մեզ համար նրա «ընդհանուր կէտերի պարզաբանութիւնը» անյայտ է մնացել: Շիրվանզադէն անհրաժեշտ չէ համարել, որ այդ պալդարանութիւնը ընթերցողները ևս իմանան:

Մենք իմանում ենք, որ Դիմաքսեան կամենում է հիմնայատակ անել «հինը, անօգուտը, վնասակարը». մենք իմանում ենք, որ նա կամենում է խորտակել «չինական պատը» և տարածել «եւրոպական քաղաքակրթութիւն»—բայց թէ ինչումն է կայանում հինը, անօգուտը, վնասակարը, ինչ բան է այդ չինական պատը և ինչ պարունակութիւն

ունի եւրոպական քաղաքակրթութիւնը, մենք չենք կարողանում իմանալ:

Վէպի մէջ յաճախ խօսւում է «հասարակական ախտերի» մասին, «հայրերի և որդիների կռիւ» մասին, «հնապաշտների անմիտ կուռքերի» մասին—բայց միշտ էլ այդ բոլորը արտասանւում են առանց լուսարանութեան և առանց հիմնաւորման:

Գիտենք, որ Դիմաքսեան մի գիրք պիտի հրատարակէ «անհատ և հասարակութիւն» խորագրով, գիտենք, որ այդ գրքի մէջ նա պիտի հաստատէ, ապացուցանէ՝ թէ «ընդհանուր քաղաքակրթութեան հիմքը անհատն է»: Եւ այսքանը միայն... Բայց թէ այդ բոլորը ինչպէս և ինչ հիմքերով—մենք այդ մասին ոչինչ չենք իմանում:

Դիմաքսեանի հասարակական գաղափարներից մէկը մեզ յայտնի է դառնում բոլորովին պատահաբար: Մսերեանի հետ, յուսահատ ու լքուած դրութեան մէջ, մտնում է մի կաթնատուն: Այդտեղ նրանցից ոչ հեռու երեք մարդ վիճում են հանրային խնդիրների շուրջը:

—Ներողութիւն, մեր գոյութիւնը միայն ևկեղեցուց է կախուած. մենք կրօնական ազգ ենք:

—Ուրեմն դուք հերքո՞ւմ էք ազգային գոյութեան առաջին հիմքը—հողը և լեզուն:

Դուրս է գալիս, որ վերջին խօսողը Դիմաքսեանի գաղափարներից է ներշնչուած: Եւ այսպէս, անուղղակի կերպով մենք իմանում ենք, որ Դիմաքսեան, յետ մղելով եկեղեցու դերը, մեր ազգի գոյութեան առաջին հիմքն է համարում հողը և լեզուն:

Եւ դարձեալ այսքանը միայն: Այս մտքերի և ըմբռնումների ամենաթռուցիկ, ամենահակիրճ պարզաբանութիւնն ու զարգացումն անգամ չէ երևում

վէպի մէջ։ Ընդհանուր խօսքերով համամտում ենք, որ նա անհատի ազատութեան, կնոջ հասարակական իրաւունքների և առհասարակ նոր գաղափարների կողմնակից է ևներանց մոլեռանդ ու ոգևորուած քարոզիչ։

Դիմաքսեանի մանկավարժական-դաստիարակչական մաքերի մասին քիչ աւելի տեղեկութիւն ունենք։ Ներսիսեան դպրոցի բարոյական անմխիթար պատկերը տեսնելով՝ նա հարց բարձրացրեց դաստատութեան, ուսուցիչների և աշակերտների յարաբերութեան մասին և պնդեց, որ մանկավարժական ժողովը դրանցով առանձնապէս զբաղուի։ Մեծամասնութեան համաձայնութեամբ մի յանձնաժողով ընտրուեց, որին յանձնուեց մանրամասն ուսումնասիրել խնդիրը, ծրագիր կազմել և ներկայացնել ուսուցիչների խորհրդին։ Դիմաքսեանը այդ յանձնաժողովի անդամներից մէկն էր։ Զեկուցումը պատրաստեց և մի երկոյ կարդաց մանկավարժական ժողովում։ Նա հիմն ի վեր պախարակում էր դաստատութեան եղանակը, ուսուցիչների յարաբերութեան ձևը աշակերտների հետ։ Նա ատելորդ էր համարում շատ առարկաներ և փոխարէնը առաջարկում էր նորերը... Նա քարոզում էր աշակերտական մաքուր զգացումների ազատութիւն։ Ուսուցիչը կամ վերակացուն չպիտի լինի աշակերտի կամքի լիազօր տէրը, այլ նրա առաջնորդը և խորհրդատուն։ Ոչ ոք իրաւունք չունէ կաշկանդել անհատի միտքը, բռնի ուժով հանել նրա գլխից մէկը, դնել միւսը, որքան էլ փոքր լինի անհատը։ Պէտք է ազատութիւն տալ աշակերտի մտաւոր և բարոյական յատկանիշների զարգացմանը։ Եթէ նա ընկերոջը ծեծում է և հայհոյում, մեղաւորը ուսուցիչներն են։ Դուք էք, պարոններ դուք,

որ մանուկ հասակից նրան սովորեցնում էք անպայման հնազանդութեան ձեր կամքի, ձեր խելքի, ձեր հասկացողութեան, ձեր դատողութեան օբէնքներին... Թոյլ տուէք աշակերտի անհատական ոյժերը անկախ զարգանան, միայն հետևեցէք, որ նրանք չվնասեն վատ ուղղութեամբ...»

Այստեղ էլ շատ բան անորոշ և մութ է մնում։ Յայտնի չէ՝ դաստատութեան եղանակի մէջ ինչն էր պախարակում և ինքը ինչպիսի եղանակ էր առաջարկում։ Զգիտենք ինչպիսի առարկաներ էր ատելորդ համարում և նրանց փոխարէն ինքը ինչ էր գերադասում։

Բարոյական դաստիարակութեան հարցը, սակայն, որոշ է դրուած։ Պէտք է հիմնովին փոփոխութեան ենթարկել ուսուցիչների և աշակերտների փոխադարձ յարաբերութիւնները։ Ուսուցիչը աշակերտի տէրը չէ, նրա կամքի լիազօր փշխանը չէ, այլ միայն նրա ուղեցոյցը և ղեկավարը։ Ազատ թողնելով աշակերտին՝ ուսուցիչը պիտի հսկի միայն նրա վրայ, հետևէ նրա քայլերին և հարկաւոր դէպքում դնէ նրան լաւ ուղղութեան մէջ։

Դիմաքսեան յետագայում տեսնէ դառնալով՝ կարողացաւ իր գաղափարներից մի քանիսը իրագործել։ Աշակերտների միջից վերացաւ երկիւղն ու կոյր հնազանդութիւնը և փոխարէնը պատուաստուեց անկեղծ սէր և գիտակցական յարգանք։ Իր դպրոցական գործունէութեան մէջ Դիմաքսեան հետևում է միայն—գոնէ այդքանն է մեզ յայտնի—բարոյական դաստիարակութեան։ Դպրոցի հասարակական կողմին է երևում։ Նրա զուտ մանկավարժական, գիտական կողմը, ուրիշ խօսքով նրա ներքինը վէպի նիւթ չէ դարձել, ոչ ուղղակի և ոչ անուղղակի։ Դիմաքսեան դպրոցի մէջ աւելի հասա-

բակական գործիչ է, քան մանկավարժ, այս բառի գիտական իմաստով...

Եթե Շիրվանզադեն գիտակցարար և որոշ մտադրութեամբ է այսպիսի դրութիւն ստեղծել՝ համեմատելով ցոյց տալ թէ մեր դպրոցները բնաւ պէտք չունին «գերմանական մանկավարժ»-ների, այլ պահանջ ունին միմիայն «հասարակական գործիչների»—ապա դժուար է ամբողջովին համաձայնուել հեղինակի հետ: Վէպի մէջ ծաղրուած «գերմանական մանկավարժը» դպրոցի համար բարիք չէ անկասկած: Բայց գերմանական մանկավարժութիւնը կամ մանկավարժութիւնը առհասարակ իբրև գիտութիւն անհրաժեշտ է ամեն մէկ դպրոցի:

Արսէն Դիմաքսեանի հասարակական գաղափարների և սոցիալական աշխարհահայեացքի հետ սերտ շփում չունենալով՝ մենք տեսնում ենք նրա մի քանի գործերը, սակայն, որոնք այսպէս թէ այնպէս կարող են պարզաբանել նրա իդէալները և հասարակական գաւառանքի ընդհանուր գծերը: Հայրը, Մարգար աղա Դիմաքսեան, անգրէն կալուածքների տէր է: Գիւղացիները բաւական հարկ են տալիս նրան: Մեծ եկամուտներ է ստանում նաև ջրաղացից այգիներից տներից: Այս բոլոր կայքերի վրայ կառավարիչ է նշանակուած մէկը, Սարիբէգ անունով, որ աւելի դառնացնում է գիւղացիների կեանքը: «Գիւղացիները աղի արցունք էին թափում այդ մարդու անունը յիշելիս»: Արսէն Դիմաքսեան, գիւղում եղած միջոցին իմանում է այս բոլորի մասին, բայց ոչինչ չի կարողանում անել: Հայրը նրան չէր լսում և առհասարակ նրա վրայ ոչ մի ազդեցութիւն չունէր:

Յամառ և խստասիրտ ծնողի մահից յետոյ՝ Դիմաքսեան դառնում է նրա բոլոր կալուածների

միակ ժառանգը. նրա նիւթական դրութիւնը միանգամից ապահովւում է: Դրամի, անտեսականի մասին այլ ևս ոչ մի հոգս չունի: Դիմաքսեան երկու քոյր ունի, որոնք նրա հօր կենդանութեան օրով ոչինչ չեն ստացել ժառանգութիւնից: Արսէն իր հայրական կայքերից բաժին է հանում նաև նրանց: Ապա, Հաբիգեան ազգանունով մի գիւղատնտես—իր վաղեմի ընկերոջը — կառավարիչ է նշանակում կալուածների վրայ և նրան որոշ տոկոս վճարում: Իմանում ենք նաև, բաւական ընդհանուր խօսքերով, որ Դիմաքսեանի գիւղացիները այժմ այլ ևս չէին ճնշւում և որ նրանք գոհ էին: Թէ *ինչպէս է արտայայտւում այս փոփոխութիւնը և գիւղացիների գոհունակութիւնը ինչ իրական հիմքեր ունի*—այս մասին վէպի մէջ ոչինչ չէ ասւում: Դիմաքսեանի հասարակական իդէալները պարզաբանելու տեսակէտից այդ խնդիրները կարևոր են, անշուշտ, բայց մենք աւելին չենք կարող ներկայացնել: Թէ *ինչ* է անում նա գիւղացիների սոսկալի վիճակը թեթևացնելու համար, թէ ո՞րչափ է սրբագրում իր հարստահարիչ հօր սխալները, թէ գիւղացիների ծանր հարկերի մէջ *ինչ* աստիճան արմատական փոփոխութիւն է մտցնում—այդ բոլորի մասին մենք ոչինչ չգիտենք:

Դիմաքսեանը, գաւառում եղած ժամանակ, Հաբիգեանի հետ միասին և նրա խորհրդով «այցելեց մի քանի գիւղեր, որ գտնւում էին նրա վարելահողերը:» Հասարակական և անտեսական գիտութիւններ սովորած մարդը առաջին անգամ իր աչքով տեսաւ գիւղական ժողովրդի տնտեսական ծանր վիճակը: «Նրանք անցան մի գիւղով, որի բնակիչները հացի պակասութիւնից ազատուելու համար, պատրաստ էին իրենց «հարազատ զաւակ-

ներին գրաւ դնել», ինչպէս ասում էր Հարիգեանը։ Անցան անբերրի, քարքարոտ հողերով, ուր գիւղացին գերբնական աշխատանք էր գործ դնում իր օրական պարէնը վաստակելու համար։»

Արսէն Դիմաքսեանը տեսնում է այս բոլորը. տեսնում է սրանց նման բազմաթիւ դժբախտութիւններ և սակայն չի իմանում թէ ինքը ինչ կարող է անել ժողովրդի համար։ Իր կառավարիչը, գիւղատնտես Հարիգեանը նրան հասարակական ճանապարհներ է մատնանշում և գործունէութեան շաւիղ է ընդգծում։

«Ես քեզ ցոյց տուի հողեր, որոնք ջրի պակասութիւնից չեն մշակւում կամ մշակւում են շատ անյաջող։ Եթէ մեր ծախսով այդ հողերով մի առու անցկացնենք, նախ մենք ինքներս կունենանք մեծ շահ, երկրորդ գիւղացիները մեզ կըհամարեն հաղուագիւտ բարերարներ, մեզ երկրպագութիւն կտան։ Այս է գործնական մարդու բերած օգուտը... Բայց ինչներ կարող է անել մի ուրիշը, դիցուք քեզ նման մի գաղափարական մարդ։ Դու ունես բաւական մեծ հարստութիւն և նա օրից օր պէտք է աւելանայ։ Եթէ չես ուզում խոշոր ըրամատէր կամ, ինչպէս ասում ես, մեծ կալուածատէր լինել, շատ դեղեցիկ, մի լինիր։ Բայց մի թողնիր, որ քո հարստութիւնը իզուր տեղը անօգուտ մնայ։ Եկ այստեղ, բաց արա քո հաշուով ուսումնարաններ աղքատ գիւղերում, թող հարիւրաւոր գիւղական խեղճ մանուկներ ձրի կըրթութիւն ստանան։ Հիմնիր մի գիւղատնտեսական դպրոց կամ մի օրինակելի ագարակ և թող այնտեղ գիւղացիները դասեր առնեն գիւղատնտեսութեան գնդաղան ճիւղերի վերաբերմամբ։ Որ առջև գործելու մի այնպիսի ասպարէզ կայ, որ ճշմարիտ գործա-

նում եմ թէ ինչու դու արհամարհում ես այդ ասպարէզը և յաւտահատ կոիւ մղում մի ամբողջ հասարակութեան դէմ... Ի՞նչ օգուտ, անմիջական օգուտ պէտք է ունենայ քո գործունէութիւնը այն թշուառ ժողովրդի համար, որին քո աչքով տեսար։ Մինչդեռ հէնց այդ ժողովուրդն է կարօտ վերանորոգութեան և նրա անմիջական շահերի համար ու նոյն իսկ նրա շրջանում պէտք է գործել։»

Ինչպէս տեսնում էք Հարիգեանի հասարակական—գիւղացիական իդէալները ևս բաւական սահմանափակ են։ Թշուառ, հարստահարուած գիւղացիութեան ցաւը իր սրմնատում, իր իսկական հիմքերով չեն երևում նրա խօսքերի մէջ։ Նա չէ ցուցահանում այն իսկական վէրքը, որ կրծում է գիւղացիութեան սիրտը և չէ զարգացնում փրկութեան այն միջոցը, որ անհրաժեշտ է կազմալուծուող գիւղացիութեան։ Համեստ, աշխատասէր, գործունեայ Հարիգեանը, իրրև բարի և խելօք անձնաւորութիւն՝ կամենում է որև է կերպ օգտակար լինել իր շրջապատին։ Այսքանը միայն։

Եւ սակայն Դիմաքսեան Հարիգեանից է ստանում այն, ինչ վճռում է անել գիւղական հասարակութեան համար։ Նա չի կարող, ի հարկէ, գաւառում մնալ։ Այնտեղ նա իր գաղափարների և իր մտքերի համար «ընդարձակ ասպարէզ» չէ տեսնում։ Դիմաքսեան իր մէջ «վերևից» ազդելու ոյժ է զգում և պիտի գնայ կենդրոն. պիտի երթայ «անշարժ հասարակութեան նախապաշարմունքների դէմ կռուելու։»

Բայց այս բոլորի հետ միասին նա կամենում է այսպէս թէ այնպէս մի բան անել գիւղացիների համար։ Եւ ահա ինչպէս է արտայայտում ինքը Դիմաքսեան իր գիւղական իդէալները Մսերեանին. «Ես մի ծրագիր ունիմ, որ դու և Հարիգեանը միա-

սին պէտք է իրագործէք։ Բոլոր իմ աչքով տեսածները ինձ համոզեցին, որ մեզ համար յանցանք է մեր կարողութեան չափ չօգնել գիւղական ժողովրդին։ Եւ ահա երկար ժամանակ Հաբիգեանի հետ խորհրդակցելով՝ եկայ այն եզրակացութեան, որ իմ կողմից միակ օգնութիւնը կարող է լինել այն, որ ես իմ հաշուով մի ուսումնարան բաց անեմ։

Հաբիգեանը ցոյց տուեց ինձ մի ամենայարմար կենդրոնական գիւղ։ Այնտեղ կարող են հաւաքուել մի քանի շրջակայ գիւղերի երեխաները։ Այս մասին ես հարկաւոր կարգադրութիւններ արել եմ. ուսումնարանը բանալու բոլոր արգելքները հեռացած են։ Բանը այժմ կախուած է քեզանից։ Ես յատկապէս եկայ քեզ առաջարկելու, որ դու յանձնէն առնես ուսումնարանը կառավարել...

Իսկ ես... Երբ ես իմ հայրենիքումն էի՝ իմ գլխում մի միտք ծագեց—թողնել քաղաքային կեանքը և գնալ այն ճանապարհով, որ այժմ առաջարկում եմ քեզ։ Այս միտքը ինձ բաւական ժամանակ զբաղեցրեց, բայց չեղաւ մի վայրկեան, որ նա ինձ գրաւէր։ Երկար մտածողութիւնից յետոյ՝ եկայ այն հաստատ եզրակացութեան, որ ես ստեղծուած չեմ խաղաղ գործունէութեան համար... Իմ մէջ մնաց մի ձգտում—շարունակել այն, ինչ որ սկսել եմ հօթ տարի առաջ, կռուել միշտ, անդադար կռուել հասարակական ընդհանուր վատասակար երևոյթների դէմ...»

Եւ այսպէս. ընկերաբանական գիտութիւնների մանուածէտ և հարուստ կալուածատէր Արսէն Դիմաքսեանը դաւանի հայութեան մի զրոյց նուիրելով, իր կողմից տալով «միակ օգնութիւնը»—ինքը որոշում է "վերջնականապէս՝ կռուել հասարակական ընդհանուր վնասակար երևոյթների դէմ։

Շիրվանզադէն իր հերոսի հասարակական գաղափարները և իդէալները այսպէս է ներկայացրել։ Ինչպէս տեսաք այդ մտքերը, այդ աշխարհահայեացքը, այդ գաղափարները բաւական անորոշ են, մութ, անյայտ. իսկ այդ իդէալները՝ բաւական համեստ, չափաւոր ու տարրական։ Իր ընդարձակ վէպի մէջ հեղինակը մի քանի թերութիւններ վերագրելով հերոսին և յաջորդաբար այդ թերութիւններից ազատագրելով նրան՝ ընդհանրապէս նկատելի համակրանք է տածում դէպի նրա անձը և գաղափարական-հասարակական գործունէութիւնը։ Նրա համար Դիմաքսեանը ոգևորութեան և ներշնչման առարկայ է։ Բայց այդ ոգևորութիւնը չէ արտայայտուել խորը, ինքնաբուխ ու անբռնազբօս. այդ ներշնչումը չէ թուում անկեղծ, յուզիչ ու տաք։ Ընթերցողը չէ համակուում հեղինակի արտադրութիւններով ու չէ ապրում նրա երազներն ու նրա հոգին։ Դիմաքսեանը իր մտքերով չէ կարողանում հաղորդուել, միանալ մեզ հետ։ Նա անծանօթ է մնում մեզ իր հասարակական սկզբունքներով և օտար՝ իր հասարակական իդէալներով... Շիրվանզադէի հերոսը անորոշ յղացման և վրիպած իրագործման արտադրութիւն է։

Արսէն Դիմաքսեանից բացի այս մեծ վէպի մէջ կան նաև ուրիշ հետաքրքրական և տիպիք անձնաւորութիւններ, որոնք սակայն հեղինակի խնամոտ ուշադրութեան չեն արժանացել։

Մսերեան և բժիշկ Սալամբէկեան նոյնպէս նշանակալից հոգեբանութիւն ունին։ Այդ հոգեբանութիւնը առաջինի մէջ աւելի թոյլ ու անորոշ է դուրս եկել։ Երկրորդը համեմատաբար աւելի որոշ է ու համոզիչ։ Մսերեան, այդ «անուղղելի իդէալիստը», որ կեանքի ամենաբերրտ հոսանք-

ների մէջ անդամ չէ կորցրել սրտի ազնութիւնը և հոգու մաքրութիւնը՝ գործնականապէս կարող մարդ չէ: Մի փոքրիկ պաշտօն ունի, որի առաջով հազիւ կարողանում է հոգալ իր համեստ ապրուստը. տպա առանձնացած՝ մեծ գրքեր է կարդում, շարունակ մտածում է աշխարհի և մարդկանց մասին ու քննադատում մեր կեանքի երևոյթներն ու անձերը: Շիրվանզադէն Մսերեանին չէ հանում հասարակութեան մէջ. նա գրեթէ միշտ տանն է: Նա չէ գործում, այլ խօսում է:

Դիմաքսեանի հոգևկան տագնապների և ճակատագրական վրիպումների ժամանակ՝ Մսերեան նրա անկաշառ և անկեղծ բարեկամն է հանդիսանում: Վէպի մէջ նրա դէմքառը դերը սահմանափակուած է «հիւանդ» Դիմաքսեանի բժշկութեամբ ու նրա դատախարակութեամբ:

Այս խաղաղ և հաւասարակշռուած մտաւորականի կեանքը, սակայն, քառասուն տարիքի մօտ փոթորկւում է:

Մսերեանը, որ մինչև այդ կնոջ պատճառած յուզմունքին ծանօթ չէր՝ ընկնում է օրիորդ Կարինեանի հմայիչ ազդեցութեան տակ: Վարժուհին յարգելով և համակրելով հանդերձ Մսերեանին՝ իրրև շիտակ մարդու և ազնիւ անհատի՝ չէ սիրում նրան և չէ համաձայնում նրա հետ ամուսնանալ: Նրա ծանօթութիւնից տակաւին շատ առաջ օրիորդի սիրտը պատկանել է բժիշկ Սալամբէկեանին:

Մսերեանի թմրած զգայմունքները արթնանում են, հոգին անասելի ակում է ցաւել, վիշտը պատում է նրա քառասնամեայ անյոյզ գոյութիւնը—և նա անխուսափելի պահանջ է զգում փոխել իր կեանքի ընթացքը, իր օրերի ախուր, ձանձրալի միակերպութիւնը: «Այո, ժամանակ է, որ

ինքս ինձ հաշիւ տամ, ժամանակ է, որ ինքս ինձ հարցնեմ—ինչ նպատակի է ծառայում իմ կեանքը: Մխիթէ ապրում եմ նրա համար, որ գիշեր-ցերեկ կարդամ և կարդում եմ նրա համար, որ օրից օր աւելի ու աւելի ծուլանամ... կեանք, որից ոչոք ոչինչ օգուտ և ոչինչ վնաս չունի...»

Մսերեանի այս հետաքրքրական հոգեբանութիւնը բաւականաչափ պարզ չէ արտայայտուած: Տեսնում ենք միայն, որ այդ յուսահատ մարդը օրիորդ Կարինեանի մերժումից յետոյ չանպէտքացաւ, այլ ընդհակառակը վերանորոգուեց: Թերևս այդպիսի մի մեծ հարուած անհրաժեշտ էր, որ նա սթափուի և շարժուի միանգամ ընդ միշտ: Դիմաքսեանի առաջարկը նրան ոգևորեց և նա եռանդով ու աշխոյժով լծուեն պատրաստուեց ճանապարհուելու դէպի գաւառ... Այստեղ էլ անհատական երջանկութեան անկումը պատճառ դարձաւ հասարակական բարիքի հետամտութեան: Այդ գծի վրայ Դիմաքսեան և Մսերեան նման անձնաւորութիւններ են...

Օրիորդ Կարինեանի ազդեցութեան տակ՝ բժիշկ Սալամբէկեանի կեանքի մէջ էլ փոփոխութիւն առաջացաւ: Այդ երիտասարդը սկզբում բնաւ չէ հասկանում աշխարհիս «կարգեր»-ը և մեր գոյութեան իմաստը: Մաքուր է, ազնիւ, հետամուտ չէ բարձր պաշտօնների և մեծ դիրքերի: Ջնչին ռճիկով ծառայում է մի հիւանդանոցում: Իսկ ազատ ժամերին, անկողնի վրայ պարկած, ոտքերը դէպի վեր ցցած՝ անմիտ երազանքով միշտ բացականչում է. «աշխարհը դատարկ բան է...» Այս դատարկութիւնը, սակայն, կարճ ժամանակից լցւում է օրիորդ Կարինեանի սիրով: Եւ մենք տեսնում ենք թէ ինչպէս նախկին ծոյլ, անկարող, անդոր-

ծունեայ երիտասարդը հետզհետէ դառնում է աւելի աչալուրջ, աշխատասէր և ձեռնարկու։ Սիրոյ այս ազդեցութիւնը դուրս է բերուած բնական և հետևողական ընթացքով։ Սալամբէկեանի կերպարանափոխութիւնը մութ և անորոշ չէ, այլ բաւական պարզ ու համոզիչ։

Շիրվանզադէն այս մարդու դէմքը նկարելիս՝ վերջին մասերում ինչ-որ ակնարկ է մտցրել։ Թւում է թէ ընտանեկան երջանկութեան մէջ՝ Սալամբէկեան պիտի փոխուի և որոշ դիմուածների կողմնակից դառնայ։ Դիմաքսեանի գործունէութեան մասին խորհելիս՝ վերջերը այն տրամադրութիւնն է արտայայտւում, թէ պէտք չէ այնքան խիստ ու անհաշտ լինել։ Միւս կողմից՝ Մսերեանի և Դիմաքսեանի խօսակցութեան մէջ ինչ-որ տարակուսական արձագանքներ կան՝ այդ մարդու նկատմամբ։ Յամենայն դէպս այս բոլորը միայն արձագանքներ են և մենք չենք տեսնում թէ իրաւ Սալամբէկեան անհատական բախտաւորութեան մէջ մոռացած լինի իր նախկին ընկերներին և լքած իր գաղափարները։

Վէպի մէջ բաւական կարևոր տեղ են գրաւում նաև երեք կին — *տիկին Բախտամեան, Դայիանէ և օրիորդ Կարինեան*, որ յետագայում դարձաւ տիկին Սալամբէկեան։

Տիկին Բախտամեանը մեր բուրժուական կարգերի բնորոշ և բացատական արտադրութիւնն է։ Երիտասարդ, գեղեցիկ, առողջ, նիւթական անապահովութեան պատճառով ամուսնացել է հարուստ և ծեր Բախտամեանի հետ։

Այս ամուսնութիւնը—ուրիշ շատ ամուսնութիւնների նման—հիմնուած չէ սիրոյ, փոխադարձ յարգանքի վրայ։ Մէկին գրաւել է դրամը և հա-

րակական բարձր դիրքը, միւսին թարմ և բուրաւէտ մարմինը։ Տիկին Բախտամեան բախտաւոր չէ իր ընտանեկան կեանքում։ Նա զգում է իր սխալը, ծնողների յանցանքը, անիծում է հասարակական կարգերն ու եկեղեցական օրէնքները—բայց բարոյական և հոգեկան արիութիւն չունի դրանց դէմ կռուելու։ Ապրելու և վայելելու իր ֆիզիքական անսպառ եռանդը նա գործադրում է ընտանիքից դուրս, Բարաթեանի հետ։ Տիկինը այն մարդը չէ, որ թողնի հարուստ ամուսնու տունը։ Նա այն տիպերից չէ նաև, որ հաշտուէ իր դժբախտութեան հետ և լռելեայն ողբայ իր ցաւը։ Նա ոչ առաջինների ներդործական և ոչ երկրորդների կրաւորական առաքինութիւնը ունի։ Նա կապրի իր ծերացած ամուսնու հետ իբրև նրա օրինական կինը և կլինի միաժամանակ հաւանած երիտասարդի ցանկալի տարփածուն։ Հասարակական որոշ կարգերի մէջ այս ճանապարհը շատերի համար ամենից նախընտրելին է։ Տիկին Բախտամեան հայ կնոջ բացասական—կրաւորական տիպարն է։ Նա շահագործում է իր տարիքաւոր ամուսնուն և անհամբեր սպասում նրա վախճանին, շահագործում է նաև մեր անխտրական հասարակութիւնը և իր համար հանրային գործչուհու անուն վաստակում։ Եւ սակայն՝ այդ բոլորով հանդերձ՝ տիկին Բախտամեան բացառիկ դատապարտութեան արժանի չէ։ Նրա սեփական երջանկութիւնը ևս աւերուած է։ Իր յանցանքներով, նա հանդիսանում է ժամանակակից հասարակութեան յանցանքների տարաբախտ զոհը։ Թուլակամ, թեթևամիտ, վատասիրտ, նա ընտրեց նուազագոյն դիմադրութեան ուղղութիւնը։ Նա ոչ *Մելանիա* է և ոչ *Հերսելիա*։

Այդպէս լինելու համար հարկաւոր էին ան-

հատական տրամադրութիւն և դրա հետ միասին արտաքին, առարկայական պարագաներ...

Գայիանէն վէպի կենտրոնական կին դործն է: Հարուստ ժառանգութեան դէմ, ծնողների մահից յետոյ, քրոջ հետ միասին ապրել և մեծացել է Բախտամեանի—իր հօրեղբօր տանը: Վերջինս հարազատ հօր պէս պահել, խնամել է նրան: Գայիանէն ոչ մի բանի պակասութիւն չի զգացել: Բնաւորութեամբ աղնիւ ու մաքուր՝ նա մարդկանց մէջ որոնում է աղնուութիւն և առաքինութիւն: Պահանելով Բարաթեանին, համակրելով նրան և կարծելով թէ իր տարտամ և անորոշ երազների մարդն է նա՝ խորին հոգեմտալութեամբ ու կոյր ոգևորութեամբ ամուսնանում է նրա հետ: Յետոյ, դեռ տարին չլրացած՝ ճանաչում է Բարաթեանի իսկական հոգին, տեսնում է նրա սուր անհաւատարմութիւնը—ու Գայիանէի կեանքը դառնում է դժոխք: Այս բոլոր հիասթափութիւնները, այս բոլոր դառնութիւնները թերևս տանէր տարաբախտ հայուհին, եթէ Բարաթեան իր կրքերի և իր վատ արարքի ասպարէզը նրա հօրեղբօր ընտանիքը չդարձնէր:

«Եթէ ձեր արածը—գրում է Գայիանէն Բարաթեանին—ուրիշների արածի նման լինէր, կարելի է համբերէի: Բայց դուք գիտէք, թէ ինչը ստիպեց ինձ հեռանալ ձեր տնից: Ինձ գիշեր-ցերեկ կըտանջէր այն խեղճ մարդու ուրուականը: Նա ինձ համար երկրորդ հայր էր. դուք պէտք է այս բանը հասկանայիք: Բայց ինչ արեցիք, դուք սպանեցիք նրան, և այժմ ուզում էք մի մարդասպանի, մի հայրասպանի հետ ապրե՞մ:»

Այս տողերից բաւականաչափ պարզ երևում է Գայիանէի բաժանման իսկական դրդապատճառը: Հայ կանայք այս թուականներին դեռ այնքան

հասունացած չէին անհատապէս և հասարակականապէս, որ ամուսինների առաջին անհաւատարմութեան պարագային թողնէին նրանց, որ առանց մեծամեծ տանջանքների կարէին իրենց կապը և հեռանային նրանց տներից:

«Արամբին»-ի մէջ Վարվառէն ծայրայեղ յուսահատութեան ժամին միայն բաժանուեց իր առնական ամուսնուց: Այստեղ Գայիանէն, իր թշուառ, վշտահար հօրեղբօր դագաղի հանդէպ միայն թողեց Բարաթեանին, երբ իմացաւ, որ իր անխիղճ ամուսնու հարուածից է առաջացել սիրելի հօրեղբօր մահը:

Գայիանէի որոշումը արդիւնք չէ այնքան բուռն և զիտակից անհատականութեան, նա բղխում է աւելի նրա բարոյական ինքնայատուկ հասկացողութիւնից և պարտականութեան հասարակական ըմբռնումներից:

Անհատականութեան անբաւարար զարգացումը և հասարակական բարոյականութեան տեսակէտը մեծ դեր են խաղում նրա յետագայ կեանքի մէջ էլ: Դիմաքսեան առաջուայ պէս սիրում է Գայիանէին: Վերջինս արդէն վաղուց համոզուել է, որ նա շիտակ մարդ է, աղնիւ, առաքինի: Բանի անգամ ինքնաբերաբար մօտենում է նրան: Նրա հետ խօսելիս հոգեկան բաւականութիւն է զգում: Անպայման հաւատում է նրան և մեծ յարգանք ունի նրա նկատմամբ: Դիմաքսեան այդ բոլորից խրախուսուած՝ խոստովանում է իր սէրը: Բայց Գայիանէն չէ համաձայնում: Ապա միայնութեան ժամին, անկեղծ ու տխուր, մտածում է ժամանակ եղելութեան մասին: «Մի՞թէ նա (Դիմաքսեան) բոլորովին համոզուած էր, որ իւր սէրը ուրիշ ոչ մի զգացմունք չէ գտնում իմ սրտում,

բացի բարեկամական զգացմունքից: Վերջապես ես ինքս կարող եմ հաստատ ասել թէ այդ մարդուն միայն յարգում եմ: Եթէ այդպէս լինէր, մի՞թէ չէի աշխատիլ ժամանակին նրան ինձանից հեռացնել: Իսկ ես ինչ արի, ինչ արի. ոչ մի անգամ նրան չզգուշացրի, ոչ մի անգամ... Տէր Աստուած, գլուխս պատում է, չգիտեմ ինչ մտածել: Ի հարկէ, նա այժմ համոզուած է, թէ ես նրանատում եմ: Բայց այդպէս չէ. ոչ, այդպէս չէ: Ուրեմն ինչ է... Մի՞թէ վախեցայ հասարակական կարծիքից: Սխալ է, այդ չէ... Ես կամենում եմ իմ խղճի առաջ արդար լինել: Այո, ճիշտ դա է: Եթէ ես այդ մարդուն առաջ սիրէի և չատոյ բաժանուէի իմ ամուսնուց, այն ժամանակ շատ կարելի է այդպէս չըվարուէի նրա հետ: Բայց այդ մարդը իմ ուշադրութիւնը գրաւեց չատոյ, երբ ես ատում էի Բարաթեանին... Ի՞նչ կըլինէր, եթէ նա կուրացած սիրէր Դիմաքսեանին, եթէ արհամարհելով ամեն ինչ՝ գնար նրա հետից: Մի՞թէ դա կլինէր սէր և ոչ վրժխնդրութիւն: Եւ ոմից պէտք է վրէժ հանէր: Բարաթեանից: Այդ մարդը վիրաւորուելու փոխարէն կըծիծաղէր, կըզուարճանար: Նա ինքը իւր վրէժը լուծուած կըհամարէր՝ տեսնելով իւր կնոջը իր թշնամու հետ միացած: Նա այդ վատը իր ձեռքում զէնք կըդարձնէր նրա դէմ, կըպարծենար հասարակութեան առջև և ամենքին ցոյց տալով՝ կասէր. «Տեսէք, կինս բաժանուեց ինձանից, ոչ թէ այն պատճառով, որ ես անբարոյական էի, այլ որովհետև ինքը չուզեց բարոյական ամուսին մնալ...»

Գայիանէի գործունէութեան շարժառիթները և հիմքերը լաւ պարզաբանելու համար՝ մենք կարևոր ենք համարում մի փոքրիկ հատուած ևս մէջ

բերել: Դարձեալ միայնութեան մէջ, դարձեալ տխուր ու յուզուած խորհրդածում է նա: «... Ինչո՞ւ չմտածեց, որ ընտանեկան երջանկութիւնը չպիտի որոնել ամուսնու ոչ արտաքին գեղեցկութեան, ոչ աշխարհային շուքի և փայլի, այլ նրա հոգեկան և բարոյական արժանաւորութիւնների մէջ: Եւ այժմ, երբ նա կրում է իւր դառ սխալի պատիժը, երբ նրա աչքերը բացուել են, մի՞թէ արհամարհի ամեն ինչ և ընկնի մի նոր երջանկութեան հետից: Ո՞ւր, ինչպէս, մի՞թէ աչքերը փակելով հասարակական օրէնքների, արմատացած աւանդութիւնների և նախապաշարմունքների առջև, մի՞թէ ապօրինի կենակցութեան մէջ որոնելով այդ երջանկութիւնը: Ոչ, ոչ, դարձեալ ոչ. այդ անկարելի է, անհնարին, վերջապես այդ բարձր է նրա բարոյական ոյժերից: Ուրեմն հեռու մոլորութիւն, հեռու խարուսիկ յոյսեր, նա չէ ուզում իր սեփական բախտի համար զաւակների վիճակը ենթարկել վտանգի...

Այս ընդարձակ հատուածները մենք դիտմամբ առաջ բերինք, որովհետև նրանք արտայայտում են Գայիանէի բարոյական լմընութիւնն ու բովանդակ աշխարհահայեացքը շատ պարզ և շատ որոշ: «Ես կամենում եմ իմ խղճի առաջ արդար լինել:» Գայիանէի այս խօսքը անհատականութեան, բարձրի, վսեմ անհատականութեան արտայայտութիւն չէ: Դա հասարակական, «բարոյական» պարտականութեան ձայնն է: Նա իր խղճի առաջ արդար կլինի, ոչ թէ իր ներքին ձայնին, իր հոգու բուռն վարագին հետևելով, այլ «հասարակական օրէնքներին» և «արմատական աւանդութիւններին հնազանդելով: «Ապօրինի կենակցութեան» մէջ նա չէ կարող երջանկութիւն որոնել. «նախապաշարմունքների» առջև նա չէ կարող աչքերը փակել. և վերջապես սեփական բախտի համար նա չէ կարող զաւակների վիճակը վտանգի ենթարկել:

Այս վերջին պարագան – ինքնին աւելի ծանրակիշռ և աւելի ողբերգական—չնչին տեղ է գրաւում վէպի մէջ: Հեղինակը ամենից շատ ծանրացել է Գայիանէի այն բարոյական ըմբռնումների վրայ, որոնք կապում են նրան հասարակական կարգի և հասարակական մօրալի հետ: Եւ մենք տեսնում ենք նախ և առաջ՝ թէ ինչպէս եօթանասնականութիւնական թուականների հայ կինը զոհ է բերում իր երջանկութիւնը, իր երիտասարդութիւնը, իր կեանքը բովանդակ՝ «արմատացած աւանդութիւններին և նախապաշարմունքներին:»

Գայիանէն հայ կնոջ ազատագրութեան առաջին քայլն է: Այսօր նա թողնում է իր անբարոյական ամուսնուն, ապրում առանձին, նուիրւում հասարակական գործունէութեան, զոհում իր անհատական երջանկութիւնը: Վաղը նա կթողնէ իր *հիւրած ամուսնուն*, մինչև իսկ եթէ վերջինս բարոյական և աւաքինի լինի ընդհանրապէս: Երբորդ օրը նա կերթայ իր անհատական *խղճի ճանապարհով*, կընհատէ իր ներքին ձայնին, կընկերանայ սիրած տղամարդուն և չի սասսափի «ապօրինի կենակցութիւնից»: Այսօր նա վարանում է, տեղի է տալիս զաւակների համար. գործում է բարոյական ինքնասպանութիւն: Վաղը նա այլևս չի համաձայնուի բարոյապէս և հոգեպէս մեռնել՝ մինչև իսկ զաւակների համար: Վաղը նրա աշխարհահայեացքը, բարոյական տեսակէտները կըփոխուեն և նա կըհասկանայ, որ իր *մարդկային* արատինութիւնների եւ *հոգու ոչնչացումը*, *ալլանդակումը* աւելի վտանգաւոր է երեխաների դաստիարակութեան և իսկական կրթութեան համար:

Իր ժամանակով, իր անհատական հոգեբանութեամբ, իր ընտանեկան շրջանով ու դպրոցական կեանքով, իր ամբողջ միջավայրով՝ Գայիանէն պատրաստուած չէր աւելի հերոսական, աւելի վճռական, աւելի շեշտուած անձնաւորութիւն դառնալու: Վարվառէի պէս՝ նա մի սրատաշարժ բողոք է հասարակական կարգերի, տղամարդկանց անառակութեան և առհասարակ աւանդական օրէնքների դէմ: Այսքանը միայն: Եւ իրրև այդպիսին՝ դուրս է եկել բաւական պարզ, լուսաւոր ու համոզիչ...

Օրիորդ Կարինեանի դէմքը վէպի մէջ մանրամասն ու որոշ չէ նկարուած: Եւ այդ՝ գուցէ մասամբ այն պատճառով, որ կեանքի մէջ էլ այդ երևոյթը բաւականաչափ զուսած ու հասասուսած չէր այն ժամանակ: Նոր զարթնող և նոր կազմակերպուող հայուհին է նա: Արտասահմանում սովորել է գործնական մանկավարժութիւն և ապա Թիֆլիզում բաց է արել մանկական պարտէզ: Սիրում է իր գործը, նուիրուած է երեխաների դաստիարակութեան: Նրա ընտանեկան շրջանը ազատ է ամեն ձևականութիւններից և պայմանական քաղաքավարութիւններից: Մարդիկ այնտեղ պարզ, բնական, անբռնազբօս վիճակով են հանդէս գալիս: Թէ Դիմաքսեանը, թէ Մսերեանը և թէ Սալամբէկեանը նրա հետ վարուում են ընկերաբար: Օրիորդի յարաբերութիւնը ամենի հետ անկեղծ է, շիտակ, բարեկամական: Մսերեանը, որ կանանցից հեռու էր փախչում՝ նրա մօտ խաղաղութիւն և ներքին հաճոյք է զգում: Սալամբէկեանը, որ ձանձրացած և յոգնած էր ամեն բանից՝ նրա առաջ զուարթանում և ոգևորուում էր: Դիմաքսեանը ևս երբեմն մտածում էր նրա մասին և թերևս շատ յաճախ մտածէր, եթէ Գայիանէի պատկերը վաղուց նրա հոգու մէջ տպաւորուած չլինէր: Այսքանը պարզ ու կենդանի երևում է մեզ: Սակայն աւելի

հեռուն մենք չենք տեսնում այլ ևս: Օրիորդ Կարինեանը սիրեց Սալամբէկեանին, իր իդէալների և իր երազների իրականութիւնը նրա մէջ գտաւ: Թէ ինչպէս տեղի ունեցան այս բոլորը, թէ ինչպէս այդ նոր հայուհին, այդ գաղափարական աղջիկը ոգևորուեց և թէ ինչ հաւանեց Սալամբէկեանի մէջ—վէպը այդ խնդիրների մասին չէ խօսում առհասարակ:

Շիրվանզադէն նոր կազմակերպուող հայ կնոջ *երևոյթին* է դիտել միայն: Նրա կեանքը, նրա կըրքերը, նրա սէրը, նրա զրաման թողել է ապագային, երբ այդ բոլորը լաւ հանդէս գան և ճիշտ սահմանուորուին:

Վէպի մէջ բաւական նշանակալից դեր ունին նաև Դիմաքսեանի նախկին ընկերները՝ Բարաթեան և Վէքիլեան, որ դաւաճանել են ընկերական ուխտին և դարձել նրա գաղտնի ու բացարձակ թշնամիները: Առաջինը աչքի ընկնող տեղ է գրաւում և արտայայտուած է իր ամբողջ հասակով: Երկրորդը, ճիշտ է, բեմի վրայ շուտ չէ երևում, բայց ամեն անգամ, երբ յայտնուում է—յայտնուում է տիպիքական և ընորոշ պարագաներով:

Շիրվանզադէն նրանց դուրս է բերել իբր պահպանողական մտածողութեան ներկայացուցիչներ: Իրողութիւնն այն է, որ նրանք գաղափարական պայքար չեն մղում վէպի մէջ ու հանդէս են գալիս միայն իրենց մասնաւոր կեանքով: Մի տեղ միայն, հոգաբարձական նիստի ժամանակ—որ նըկարագրուած է շատ կենդանի և կծու հեգնանքով—Բարաթեան և Դիմաքսեան կողմերը լսելի են դարձնում հասարակական մարտի արձագանքներ: Այդքանը միայն: Այդ պայքարը այդտեղ էլ մեռնում է և այնուհետև այլևս չէ երևում բեմի վրայ: Մենք

լսում ենք, որ Դիմաքսեան և Բարաթեան—նախկին գաղափարակից ուսանողները—այսօր հակառակորդներ են, որ նրանք անհաշտ թշնամիներ են—բայց այդ թշնամութիւնը ընտանեկան-սիրային պարագաների մէջ է միայն արտայայտուում:

Բարաթեան և Վէքիլեան վէպի մէջ նշանաւոր են ոչ թէ իրենց հասարակական պայքարով, այլ իրենց գաղափարական կերպարանափոխութեամբ: Այդ տեսակէտից նրանք մեկուսացեալ անհատներ չեն, այլ որոշ խմբակցութեան ներկայացուցիչներ, որոշ երևոյթի յայտարարներ:

Մեր մտաւորականութիւնը, որ առաջ ժողովրդական - հասարակական գործունէութեամբ էր յատկանշուում և որ յայտնի էր իբր մեր կեանքի գաղափարական խաւը—ժամանակի ընթացքում, բուրժուական կարգերի աղճեցութեան տակ փոխեց իր նախկին բնոյթը և անջատուեց երկու մասի: Մէկը պահեց իր վաղեմի աւանդութիւնները և մերթ չափաւոր, մերթ արմատական գունաւորումներով կամեցաւ հասարակական գործ կատարել: Այս մասը, երբեմն դասակարգային բաւական որոշ գիտակցութեամբ, երբեմն առանց դասակարգային խորութեան՝ աշխատում էր հայ ժողովրդի վերածնունդը իրագործել: Միւսը ամբողջովին կորցրեց իր գաղափարականութիւնը, բուրժուական դասակարգի հնազանդ ու վատարի գործիքը հանդիսացաւ, ծախեց իր սրբութիւնները և սկսեց տենդային եռանդով հարստութեան, դիրքի, անուան հետամտել: Եւ որովհետև այդ նպատակներին հասնելու համար անհրաժեշտ էր—մեր առևտրական-արդիւնաբերական կարգերի մէջ—կեղծել, շողոքորթել, գողանալ՝ ուստի կարճ ժամանակ այս երկրորդ մասը արդէն վայելեց ոչ միայն իր գաղա-

վարական, այլ և իր բարոյական անանկութեամբ:

Բարաթեան և Վէքիլեան մեր բուրժուա մըտաւորականութեան բացառական, անբարոյական, վատասերուած տիպարներն են: Այդ երկու անձերի միջոցով Շիրվանզադէն ներկայացրել է մեր հասարակական կեանքի մէջ կատարուած այն խոշոր ու նշանակալից երևոյթը—գաղափարաւաճառ մտաւորականութեան վերջնական անկումը, վճռական հրաժարականը հիմնաւորուց իդէալներին...

«Զուր յոյսերի» մէջ մենք տեսանք այդ հոսանքի անդրանիկ ջինուորներից մէկին—բժիշկ Մէլիք-Բարսեղեանին: Այդտեղ երևոյթը իր ամբողջութեամբ չէր նկարուած, իր բոլոր կողմերով չէր լուսաւորուած: Նա ընորոշ էր, այո, բայց մանրամասն ու վերջնական չէր:

«Աբսէն Դիմաքսեան»-ի մէջ արդէն՝ մենք տեսնում ենք պարզ, բացուած, քօղամերկուած ամբողջ երևոյթը և արուեստով ու տաղանդով նկարագրուած:

Բարաթեան և Վէքիլեան շահագործում են ամեն ինչ մեր դժբախտ կեանքում: Հարազատների վատահութիւնը, բարեկամների հաւատը, կնոջ սէրը, հասարակութեան համակրանքը, գիտութեան անունը, դպրոցը, կրօնը, եկեղեցին,—ամենը, ամենը նրանց համար բիրա և վայրենի շահագործման առարկաներ են:

Շիրվանզադէն լաւ է նկատել այդ մարդկանց ներքինը, լաւ է հասկացել երևոյթը իր ընդհանուր շրջանակի մէջ և լաւ է իրագործել այդ դիտողութիւնները...

Եթէ չհաշուենք մի քանի չափազանցութիւններ և անբարոյականութեան մի քանի խիտ գոյներ Բարաթեան արտայայտուել է պարզ, կենդանի, համոզիչ ու արամաբանական:

Հեղինակի թագուն մտադրութիւնը—հասարակական պայքարը և պահպանողական գաղափարի ներկայացուցիչը—չկայ անշուշտ, մարդը կայ իր արտաքինով և ներքինով, իր սիրով և իր ատելութեամբ, ընտանիքում և հասարակութեան մէջ: Դուք տեսնում էք Բարաթեանի առևտրական սէրը, տեսնում էք նրա արհեստական ոգևորութիւնը և բռնաղբօսիկ հիացումը մատաղահաս, գեղեցիկ Գայիանէի առաջ: Տեսնում էք բուրժուական հոգեբանութեան միակ մտահոգութիւնը—հարուստ Գայիանէն և ոչ թէ անմեղ լռհերի, պատանեկան երազների, անորոշ ակնկալի և չքնաղ ձգտումների սիրուն աղջիկը...

Բարաթեանը զգացմունքի, սիրոյ մարդ չէ: Նա հաշիւների, առևտրի և կրքերի կոպիտ գոյութիւն է: Շնորհալի ձևերի և կիրթ շարժուձևերի տակ նա թագցրել է մի տգեղ հոգի և մի անմաքուր խիղճ: Ներքին կեանքի այդ բովանդակ գռեհկութիւնը ցուցահանուած է վէպի ամբողջ տարածութեան վրայ: Նա ապրող մարդ է: Նրան մենք տեսնում ենք ամեն օր, զգում ենք մեր նոր հասարակութեան ամեն անկիւնում:

Բարաթեանից և Վէքիլեանից բացի Շիրվանզադէն ասպարէզ է հանել նաև դրանց նախորդ դէմքերը—Գերասիմ Բարաթեան, նախկին չինովնիկ, Բարաթեանի հայրը և Պետրոս Բախտամեան, «պատկառելի բուրժուան», Վէքիլեանի ազգականը: Առաջինը քիչ է երևում վէպի մէջ: Երիտասարդական շրջմոլիկ ու շուայտ կեանքից ծնած մի անդամալոյծ մարմին ունի նա, որի պատճառով միշտ տանն է և յաւիտեան իր անկողնաձև

բազկաթոռի վրայ տապածուած։

Շիրվանզադէն այս ծեր ու ցինիկ մարդու կերպարանքը օրինակելի յաջողութեամբ է գծել։ Երբ նա խօսում է իր որդու հետ, երբ նա պատմում է իր շնական անցեալից, երբ նա միամիտ և գռեհիկ անկեղծութեամբ ներկայացնում է Գայիանէին Բարաթովների վէճացած արիւնը և խնդրում նրան, որ նահների Բարաթեանի անհատատարմութիւնը — այդ բոլոր վայրկեաններին դուք մոռանում էք վէպի ընթերցումը և ձեզ երևում է կենդանի, իսկական, հարազատ կեանքը։ Հինաւուրց չինովնիկը և անդամալոյծ ցինիկը շատ լաւ է արտայայտուել վէպի մէջ — ցայտուն, ուժեղ, բնական և արուեստով...

Պետրոս Բախտամեանը սկզբում աւելի է յաջողուած, քան վերջը։ Քաղաքային խորհրդարանի «առաջին կարգի իրաւասուն» և «պատկառելի բուրժուան», այդ միջավայրում և այդ գործերի մէջ, լաւ է դուրս եկել։ Իրրև տիկին Բախտամեանի խանդոտ ամուսին, իրրև տանջուող ծերունի, իրրև կնոջ անհատատարմութեան զոհ բաւականաչափ հարթ չէ և ամփոփ. .

Շիրվանզադէի «Արսէն Դիմաքսեան»-ը իր հիմնական մտադրութեան մէջ վրիպած է. նրա կենտրոնական մտահոգութիւնը յաջողութեամբ չէ իրագործուած։ Բայց նրա միւս մասերը իրական, անուրանալի առաւելութիւններ ունին։ Եթէ Դիմաքսեանի գաղափարական և անհատական դէմքը պարզ չէ գծուած, Բարաթեանի և միւսների պատկերը լաւ է արտայայտուած։ Եթէ իդէալիստ երիտասարդութեան խոհերն ու երազները տարտամ են և անգոյն, բուրժուա և գաղափարավաճառ մտաւորականութեան գործերն ու ձգտումները որոշ են ու կենդանի։ Եթէ ներքին, հոգեկան նուրբ վերլուծումները բացակայ են, դրանց փոխարէն կայ լայն, մեծ, ընդարձակ կեանքի նկարագիրը... «Արսէն Դիմաքսեան»-ը այս տեսակէտից մանաւանդ ուշագրաւ գործ է...

«Ցաւագարը»

Մի շարք վէպերից և պատկերներից յետոյ՝ Շիրվանզադէն կրկին զբաղուեց գաւառի կեանքով։ «Ցաւագարը» նրա երկրորդ երկն է, որ այնքան յաջող և այնքան գեղեցիկ պատկերացնում է գաւառական քաղաքի խորունկ, արտաշարժ դրաման։ Այս գործը «Նամուս»-ի լայնարձակ ու ծաւալուն սահմանները չունի, բայց նրա պէս յուզիչ է, նրա պէս զգացուած, նրա-պէս տպաւորող։

Շիրվանզադէն այստեղ արտայայտել է գաւառական կեանքի և բարքերի ճշգրիտ ծանօթութիւնը։ Նրա գրիչը տատանումներ չէ անում այդտեղ, վրիպումներ քիչ է գործում և ընթանում է առնասարակ համարձակ ու վստահ։ Պատկերները ներկայանում են անբռնազբօս, բնական, կենդանի։ Դէմքերը երևան են գալիս որոշ ու պարզ։ Զգում էք ստեղծագործութեան թեթևութիւն, դիւրութիւն. ճիպի և լարումի բացակայութիւն։ Պատմուածքը հոսում է ազատ և անկաշկանդ։

«Ցաւագարը» Շիրվանզադէի լաւագոյն գործերից մէկն է։ Այդտեղ և՛ կեանքի շունչը կայ և՛ յղացման պարզութիւն ու յստակութիւն և՛ իրագործման ամփոփում ու հարթութիւն։ Եւ այդ բոլորի հետ միասին մի անկեղծ, ցաւագին տրամադրութիւն...

Հայթուխ Շուշանը, իր հոգու անսահման ողջ-

բերդութեամբ մէկէն կանգնում է ձեր առաջ։ Գաւառական այդ աննշան կինը, որին շատերը տեսնում են և որի վրայ ոչ ոք ուշադրութիւն չէ դարձնում, իր խոհերով և իր վշտերով հաղորդում է ձեր հոգուն, դառնում է ձեր մտերիմը։ Հեղինակը կարողացել է այդ թշուառ կնոջ սիրտը բաց անել և ցուցահանել նրա ամբողջ վէրքը։ Դուք տեսնում էք այդ արիւնոտ, մորթուած սիրտը, նրա թոյլ, աղիողորմ հեծկլտանքը—և այդ բոլորը ձեզ խորը ցաւ է պատճառում, ձեզ յուզում է մինչև արտասուք։

Հայկուհին դեռ կարող է տանել իր դառն աղքատութիւնը. նա կարող է հանդուրժել նաև ծոյլ, հարբեցող և անգութ ամուսնուն, դիմանալ նրա հարուածներին, բիրտ հայհոյանքներին։ Բայց նրա համար անտանելի ծանր է միակ աղջկայ հիւանդութիւնը։ Սիրուն Սոնան, այդ փոքրիկ աղջիկը ցաւագար է, ընկնաւոր։ Մի անգամ, տակաւին եօթ տարեկան հասակում, փողոցում խաղալիս, յանկարծ գնդակահար թաւալում է գետին, հողի մէջ տրորւում, բերանից փրփուր թափում, գեղեցիկ մազերը ցեխոտում։ Ախտընկերները սարսափած փախչում են։ Գիժ-Դանիելը, մի վշտահար ծերունի, գրկում է նրան և տուն տանում։ Այս դէպքը խորը ցնցում է հայկուհի Շուշանին։ Սոնան ուշաթափուել է մանուանդ դուրսը, ամէնքի առաջ։ Դժբախտ մայրը որոշում է այնուհետև տանը պահել նրան։

Եւ այսպէս ցաւագար աղջիկը մեծանում է աշխարհից հեռու, մարդկանցից բաժան։ Շիրվանզադէն շատ լաւ է դուրս բերել փոքրիկ, անմեղ, սիրուն Սօնայի այս ջերմանոցային կեանքը։ Այդ մանուկ հոգու թախիծը, այն անգիտակից դոյութեան վիշտը, այդ քնքուշ, նուրբ երեխայի մտրտուքները արտայայտուած են գեղեցիկ, սահուն արուեստով։ Դուք ցնցւում էք ի տես այդ գաւառական անբախտ ընտանիքի, ուր մայրը—առաքինի, համեստ, չարքաշ հայուհին — ուրիշների թոնիրներից օրը քանի-քանի անգամ կախւում է դէպի բոցավառ կրակը, որպէսզի կարողանայ «ճակատի քրտինքով» պահել գաւակին։ Ուր հայրը կոպիտ ու անզգայ, անձնատուր հարբեցողութեան ու անգործութեան, անխղճօրէն հարստահարում է հայկուհուն և նրա իսկ ցաւագար աղջկայ աշխատանքը։ Ուր հիւանդ Սօնան, վիրաւոր ու զարնուած թռչունի պէս, իրրև մի չարաշուք վանդակում՝ ողբում է իր դառն ճակատագիրը։ Կեանքի մի խորունկ դրամա է ծաւալւում ձեր առաջ...

Հայկուհի Շուշանը աշխատում է, ոլ Սօնայի հիւանդութեան լուրը չտարածուի քաղաքում։ Ապահէ ոչ՝ ոմն կը համամաձայնի նրան կին առնել։ Ապագայի մասին նա չէր մտածում։ «Նա յոյս ունէր Աստծու գթութեան վրայ և չէր ուզում հաւատալ, որ իր գաւակը վարակուած է անբուժելի ախտով։»

Տարիներ յետոյ քաղաքի երիտասարդ, առողջ, ունևոր վեհապետներից մէկը—վաճառական Մուրադը—տեսնում է նրան, հաւանում և ամուսնանում։

Սօնան այժմ գեղեցիկ է, չքնաղ, աննմանը։ Ամուսինը պաշտում է նրան և իրան զգում է խոթապէս երջանիկ. ընտանիքի մէջ Սօնայի երջանկութեան նախանձում են բոլոր միւսները—չար սկեսուրը, անպտղիս տագրը և մանաւանդ սրա օձային կինը։ Հարսը աննշան հայկուհի աղջիկ է, ծոյլ, հարբեցող պայտագործի գաւակ։ Կարելի՞ բան

է, որ ընկնի մի փարթամ, առատ տուն և արժանանայ Մուրադի բուռն, անվերապահ սիրուն: Նրանց բոլոր չարախօսութիւններն ու զրպարտութիւնները անօգուտ էին անցել, «երբ ճակատագիրը դաւաճանեց Սօնային»: Յայտնի է դառնում նրա չարաբաստիկ հիւանդութիւնը: Հալածանքը սաստկանում է, կրքերը լարւում են ուժգին: Մուրադը դարձեալ ճնում է անյողդողը: Յուզիչ է և սրտաշարժ նրա սէրը և կարեկցութիւնը դէպի դժբախտը, գեղեցիկ Սօնան: Մի անյաջող նախադասութեան մէջ հեղինակը ստուեր է նետել այդ մարդկային, ազնիւ զգացմունքների վրայ: Նա ասում է, որ Մուրադի պաշտպանութեան մէջ «աւելի մեծ դեր էր խաղում ինքնասիրութիւնը.—ինքն է ընտրել այդ աղջկան, պէտք է պաշտպանի նրան:» Բայց այս թոյլ խօսքը մի անզգոյշ և ձախորդ արտայայտութիւն է միայն: Մուրադը իր գործերով, իր շօշափելի արարքներով ցոյց է տալիս, որ նա սիրում է Սօնային և եղբայրօրէն կարեկցում նրան: Ընտանիքի բոլոր անդամների դէմ, նա ճնում է անդրդուելի ու անսասան: Բոլորը սարսափում են Սօնայից, անհաւատութեամբ ու նախապաշարմունքներով լեցուն՝ խուսափում են հարսից—իբր դիւահարից, իբր չարի աղբիւրից, իբր դժբախտութեան պատճառից՝ Մուրադը արհամարհում է այդ բոլորը և անձնուիրաբար կանգնում Սօնայի կողքին: Նա ցաւում է ի հարկէ կնոջ հիւանդութեան համար. նա չէր ամուսնանայ Սօնայի հետ, թէ առաջուց իմանար բոլորը: Կարելի է մի-թէ պահանջել, որ մի անծանօթ մարդ, լոկ կարեկցութիւնից դրդուած, ամուսնանայ մի ցաւագար աղջկայ հետ: Իսկ գաւառում նշանածները մինչև ամուսնութիւն կատարելապէս անծանօթ են և անյայտ միմեանց: Նրանց մէջ ոչ մի հոգեկան, բարոյական, ներքին կապ չկայ: Մուրադը ամուսնութիւնից յետոյ ճանաչեց նրան, տեսաւ նրա հոգու գեղեցկութիւնը, սրտի ազնուութիւնը, բնաւորութեան անսահման մեղմութիւնը, սիրեց նրան և այժմ չէ կամենում, չէ կարող բաժանուել նրանից: Երբ դժբախտ Սօնան խնդրում է ամուսնուն, որ նա կամ սպանի կամ ծնողների տուն ուղարկի նրան՝ Մուրադը խորունկ վշտով և ակնյայտ սիրով պատասխանում է. «բաս ինձ ով կսպանի, եթէ ես քեզ սպանեմ. բաս ո՞ւմ ցաւերը որտեղ ուղարկեմ, եթէ քեզ ծնողներիդ մօտ ուղարկեմ...» Եւ երբ Մուրադը պատահաբար նկատում է Սօնայի կոկորդի վրայ արիւնոտ կարմիր-կապտագոյն գծեր՝ ազնիւ զայրոյթով գոչում է. «Ո՞վ է քեզ սովորեցրել թուրքի պէս կուրծք պատռել... Եթէ մէկ էլ անես, երեսս չես տեսնիլ այս տանը:»

Մուրադի հոգու այս մարդասէր և քնքոյշ տրամադրութիւնը աւելի ևս ամրապնդւում է Գիժ-Դանէլի սրտաշարժ խօսքերի ազդեցութեան տակ:

Շիրվանզադէն շատ լաւ է դուրս բերել այս մարդուն: Ընտանեկան երջանկութեան քաղցր ժամին՝ նա կորցնում է իր զաւակը, ապա իր կինը և վերջը, երբ ամեն բանից զրկուած՝ ապրում էր իր փոքրիկ, թանգագին Մանուշակի յուսով ու աւրևով՝ ճակատագիրը այս միակ մխիթարութիւնն էլ շատ է համարում նրան: Երկրաշարժի ժամանակ, քարերի ու աւերումների տակ է ճնում նրա հօթնամեայ աղջիկը, թշուառ մարդու վերջին ապաւէնը—և նա այդ ծանր, սոսկալի վշտից կորցնում է հոգեկան հաւասարակշռութիւնը: Այնուհետև ոտաբոբիկ ու գլխաբաց թափառում էր նա Շամախիի փողոցներում: Եւ երբ առաջին անգամ

տեսնում է Սօնային ուշակորոյս գետին զարնուած, և երբ նայում է նրա մանկական, անմեղ աչքերին —յիշում է իր Մանուշակին և անհուն սիրով լըցւում դէպի նա:

Մուրադի համար այս անձնաւորութիւնը փըրկութեան միջոց է: Եթէ նա կարողացաւ այնքան վիշտ կրել, եթէ կարողացաւ այդ բոլորից յետոյ աշխարհի երեսին մի մարդկային էակ սիրել —ինչու ինքը չպիտի կարողանայ տանել իր վիշտը և սիրել Սօնային:

Եւ երբ, արտասուաթոր ու վշտալի, ծեր Դանէլը խնդրում է Մուրադին՝ սիրել Սօնային, պաշտպանել նրան—Մուրադը յուզուած ձայնով պատասխանում է. «երդւում եմ, որ Սօնային սիրում եմ ու կըսիրեմ մինչև մահ:» Մաքուր սիրոյ, մարդկային խորունկ զգացմունքի և նուրբ կարեկցութեան առջև տեղի են տալիս ցաւագարութեան դժբախտ իրողութիւնը և վատոգի նախապաշարումները:

Շիրվանզադէն այս բոլորը շատ լաւ է արտայայտել. յուզիչ, բնական, արտաշարժ ու գեղեցիկ:

Սակայն Սօնայի համար փորձութիւնները դեռ չեն վերջացել: Եթէ Մուրադը սիրում է իր կնոջը և վճռել է յաւիտեան նրա հետ ապրել—ընտանիքի միւս անդամները, սկեսուրը, տագրը և սրա կինը կամենում են անպատճառ Մուրադին ազատել «դիւահարից»: Պարսիկ կախարդուհի են կանչում և նրա օգնութեամբ խեղդում են դժբախտ, սիրուն Սօնային... Այս գրաւիչ վէպիկի միակ թոյլ, միակ ձգձգուած կողմն են կազմում, պարսկուհու կախարդական խաղերն ու մեքենայութիւնները: Առանց այդ վատթար տեսարանների և առանց այդ զազիր սպանութեան՝ գրուածքը ամբողջացած է

արդէն: Դրանք «Ցաւագար»-ի հոգեբանական էութիւնն ու նշանակութիւնը փոխում են և ուղղում դէպի վարքագրականը: Նախապաշարուած ու սնահաւատ մարդկանց գործերը, բարքերը, չարութիւնները քիչ արժէք ունեն այնտեղ, երբ պըօբլէմը հիմնապէս հոգեբանական է և երբ մենք գործ ունենք Մուրադի հոգու դրամայի հետ...

Շիրվանզադէի այս վէպիկը իր յղացումով, իր անձերով, իրագործումով ու տրամադրութեամբ պարզ, բնական, ամփոփ, կանոնաւոր, յուզիչ և ընդհանրապէս շատ գնահատելի գործ է: Եւ կարեւի է միայն ցաւել, որ այնուհետև Շիրվանզադէն այլևս երբէք չվերադարձաւ գաւառի կեանքին ու դրամաներին...

«Կ ր ա կ»

Ուսանողական կեանքից վերցրած այս պատմուածքը «Ցաւագարի» հոգեբանական և հասարակական արժէքը չունի: Միջավայրը, ուր պատահում է եղելութիւնը, հեղինակի նկարագրութեան մէջ համոզիչ և որոշ չէ արտայայտուած: Խօսւում է անհատի և հասարակութեան ընդհարման մասին. խօսւում է հասարակական անարդար և անմարդասէր հալածանքների մասին—բայց այդ բոլորը խտացած ու թանձրացած չեն: Այստեղ, ինչպէս նաև «Շրջանից արտաքսուածը» պատկերի մէջ, ուսանողական բարքերը դուրս չեն եկել պարզօրէն ու անվիճելիօրէն ճշմարտանման և հարթ: Անպայման ուսանող երիտասարդութեան մէջ ևս կան վատթար տիպի նախապաշարումներ, գռեհիկ սովորութիւններ, անաղնիւ ու բիրտ բնազդներ —բայց այդ

բոլորի ձեւակերպման ու համախմբման այն վերջնական արտայայտութիւնը, որ գերադասել է Շիրվանզադէն, մեզ չէ թէում բաւականաչափ գեղարուեստական ու հոգեբանական։ Կարելի էր հերոսին պահել նոյն պայմանների մէջ, կարելի էր նրան ուսանողական (նաև հասարակական) հալածանքի զոհ ներկայացնել այնպէս, ինչպէս կամեցել է հեղինակը, բայց պիտի փոխուէին յարաբերութիւնները և կանոնաւորուէին յամախմբումները։ Սանթուրեանը, «կրակ»-ի կենտրոնական անձը —քանևէորս տարեկան, նիհար, համակրելի երիտասարդ— իր հոգու խորին գրամայով ներդաշնակօրէն ու սերտօրէն չէ հաղորդւում ընթերցողին։ Ճիշտ է, վերջին էջերի վրայ նա մեզ ներկայանում է աւելի մօտ ու աւելի յուզիչ։ Այդ մերձեցումը, սակայն, շատ հաստատուն չէ ճուում և այդ յուզմունքը մինչև խռովութիւն, մինչև հոգեկան ալեկոծութիւն չէ բարձրանում։

Սանթուրեանին հալածում են ուսանողները այն պատճառով, որ նա «անհաշտ» մարդ է. այն պատճառով, որ նրա հայրը դատապարտուած է պաշտօնական դատարանի կողմից իբր քրէական յանցաւոր—իր ապահովագրած տունը իբր գիտութեամբ հրդեհող։

Սանթուրեանի ընտանիքը ևս ազատ չէ հասարակական, անգամ աղգականների հալածանքից։ Հայրը, որ նշանուած էր մի երիտասարդի հետ և որին կուրօրէն սիրում է՝ մերժուած է իր վեհացուից։ Փոքր եղբայրը դպրոցից հեռացել է ընկերների նախատանքների պատճառով։ Այս բոլոր հանգամանքները ազդում են Սանթուրեանի հոգեկան կազմի վրայ և մասամբ փոփոխութեան ենթարկում նրա մտային դրութիւնը, նրա աշխարհահայեացքը։ Սանթուրեան

սիրում է իր հօրը. նա հաւատացած է, համոզուած է, որ դատաւորները սխալուել են և որ իր հայրը միանգամայն ազնիւ մարդ է։ Այստեղ էլ, սակայն, ինչպէս նաև նախընթաց երկի մէջ, Շիրվանզադէն անյաջող նախադատութիւն է դրել հերոսի շրթունքին։ «Եթէ մի մեղք գործել է, գիտեմ, միայն և միայն իր ընտանիքի բարօրութեան համար է գործել»։ Սանթուրեանի միւս բոլոր խօսքերը, նրա ամբողջ կեանքը ապացուցանում են, որ նա չէր կարող արդարացնել այդպիսի մէկին։ Նա չէր կարող ներողամիտ վերաբերուել դէպի մարդ, որ իր ընտանիքի բարօրութեան համար, օրինակ, ուրիշների ընտանիքն է հարստահարում։ Նա վշտանում է մանաւանդ այն պատճառով, որ նրա հօրը դատում են գլխաւորապէս ամենաանազնիւ և ամենաանմաքուր մարդիկ։ Այստեղից է առաջանում նրա մէջ հասարակական մեղադրանքներին հակառակ գնալու անկեղծ որոմտրութիւնը։ Սրանով կարելի է բացատրել նրա այն տարամերժ ու տարօրինակ խօսքերը թէ. «եթէ դատապարտուածը լինէր բոլորովին օտար և անծանօթ մի մարդ, էլի ես նրան չէի մեղադրիլ հէնց միայն այն պատճառով, որ բոլորը նրան մեղադրում են»։ Այս դառն խօսքերը կարող են շատ բնական, շատ հիմնաւոր լինել ամէն մէկ բարոյական և խելացի մարդու մէջ, միայն թէ այդ բոլորը պէտք է լաւ ձեւակերպուէին, յարմարաւոր պայմաններում արտասանուէին և համոզիչ պատճառաբանութեամբ երևան գային։

Սանթուրեան իր գաղափարներով և իր աշխարհահայեացքով հետաքրքրական տիպ է, բայց բաւարարաչափ պարզ չէ լուսաբանուած։ Նա մեզ համար, իբրև մտածող, վերլուծման և քննութեան առարկայ չէ կարող դառնալ։ Նրա միտքը և տրա-

մարանութիւնը լրենց հիմքերով անյայտ են մեզ։

Գործերը և կեանքը, սակայն այդպէս չեն։ Այդ միջավայրում մի քանի փաստեր և իրողութիւններ կան, որոնք ներկայացնում են նրան իբր բարի, աղնիւ, առաքինի և անձնանուէր մարդ։ Թշուառ և քաղցած ընկերների համար ոչինչ չէ խնայում։ Գերբաւ է դնում իր վերարկուն և դրանով մի քանի օրուայ ապրուստ մատակարարում այն հիւանդ ուսանողին, որին շատերը հալածում էին իբրև ապօրէն զաւակի։ Սանթուրեանի անհատական, ներքին կեանքը ամենից լաւ հրապարակ է գալիս իր սիրոյ մէջ։ Գերմանուհի տանտիկնոջ աղջիկը, քանի տարեկան աշխոյժ, ուրախ, համակրելի Ադելաիդան և Շիրվանզադէի հերոսը փոխադարձաբար սիրում են միմեանց։ Զարիֆեան անունով մի հայ ուսանող, Սանթուրեանի ընկերը, որ պատմուածքի մէջ երեան է գալիս իբր անաղնիւ ու անբարոյական անձնաւորութիւն՝ կարողանում է մատաղահաս աղջկայ սէրը թունաւորել։ Պատմում է նրան Սանթուրեանի ընտանեկան գործերի մասին, հաղորդում է նրա հօր յանցանքը, կարդում է մօտը բոլոր այն լրագիրները, ուր նրա հայրը դատապարտուած և անարգանքի է ենթարկուած։ Հաղորդում է նաև Սանթուրեանի անձնական կեանքի մասին սուտ ու անպատիւ իրողութիւններ։ Անփորձ օրիորդը, հաւատալով այս բոլորին, կամաց-կամաց սառչում է դէպի իր սիրածը։ Այսուհետ Սանթուրեան փոխանակ ինքը խօսելու Ադելաիդայի հետ՝ ուղարկում է նոյն Զարիֆեանին, որ երկար ժամանակ բանակցութիւններ է վարում օրիորդի և նրա մէջ։ Պատմուածքի այս մասը—որի վրայ հիմնուած է ամբողջ դրաման—բաւական արհեստական է։ Սանթուրեան, չնայած իր մօտիկ ընկեր Մերաբեան

նի նախազգուշացումներին՝ այնուամենայնիւ սուր Զարիֆեանին է յանձնում այդպիսի մի նուրբ ու միանգամայն ներքին խնդրի կարգադրութիւնը։ Զարիֆեան այդ բանակցութեան մէջ ամբողջ ժամանակ սուտ է և ապաւաղում երկու կողմերի առածներն էլ։ Հետևանքը լինում է Ադելաիդայի և Սանթուրեանի չարաբաստիկ բաժանումը։ Ապա Զարիֆեան ինքն է մօտենում աղջկան, խաբում, անպատւում նրան և վերջը երեսի վրայ ձգում ու համապատասխան վկայականով հեռանում Կովկաս։

Ադելաիդան դժբախտանում է։ Սանթուրեան, սակայն, չէ մոռանում նրան, այլ աղքատ, անապահով, ամօթահար օտարուհուն։ Սիրում է նրան այդ վիճակի մէջ անգամ և սիրելով՝ ամուսնանում է նրա հետ։ Ապա, ամիսներ յետոյ, ինքը ակարուժաոպատ—Ադելաիդային նեղութիւն չտալու համար—մի ամբողջ գիշեր գրկին սեղմած խնամում է Զարիֆեանի և նրա երեխային, կուրծքը բաց և ոտաբոբիկ։ Այդ դէպքի պատճառով թոքերի բորբոքում է ստանում, և հանգչում իր սրտի կրակի հետ միասին այդ կրակի բոցերի մէջ...

Այս տխուր, վոխթորկուած կեանքը և այս ևղերական վախճանը յուզիչ է և սրտաշարժ։ Դուք տեսնում էք աղնիւ, մաքուր մարդու անհանգիստ, նեարդոտ ապրումները և նրա հերոսական մահը...

Շիրվանզադէն քայլել է, սակայն, պատմութեան մակերևոյթի վրայ ընդհանրապէս և չէ խորացել մինչև դրամայի հեռու յատակը։

Սանթուրեանի ցաւոտ և դժբախտ կեանքի հետ միասին՝ «կրակը» պատկերացնում է նաև, բաւական յաջող կերպով, Զարիֆեանների վատթար արարքները և Ադելաիդաների դառը ճակատագիրն ու անյոյս ապագան...

Մեր «իդէալիստ» մտաւորականների և մեր «հայրենասէր» ուսանողների բարոյական նկարագիրը յանձին Զարիֆեանի—իրական ճշտութեամբ լուսաւորուած է այս պատմուածքի մէջ։

«Բաօս»

Շիրվանզադէի այս մեծ վէպը չափազանց ուշագրաւ է թէ իր բարդութեամբ, թէ տիպերի զանազանակերպութեամբ, թէ նիւթի առատութեամբ և թէ խնդիրների ու դրութիւնների բազմութեամբ ու ճոխութեամբ։

Մեր գրական հետազօտութեան ընթացքում մենք կանգ առանք մի քանի այլ վէպերի վրայ, որոնք առաւել կամ նուազ՝ նոյն յատկութիւններն ունէին։ «Նամուսը», «Զուր յոյսերը», «Արսէն Դիմաքսեանը» և կեանքի բարդ, լայնարձակ արտայայտութիւններ են։ Այնտեղ էլ հեղինակը աշխատել է ըստ կարելոյն շատ բան տեսնել, շատ անկիւններ քըքրել, շատ հարցեր շօշափել և շատ անձեր ներկայացնել։ «Բաօս»-ի մէջ այդ գիծը հասել է իր զարգացման գագաթնակէտին, որից յետոյ Շիրվանզադէն, այլևս չունի այդքան ծաւալուն, այդքան ադմկալի, այդքան բազմամարդ ստեղծագործութիւն։

«Նամուսը» փորձել էր մեր գաւառի բարոյական խարխները ցուցադրել. «Զուր յոյսերը» և «Արսէն Դիմաքսեանը» աշխատել էին Թիֆլիսի առևտրականութեան, բուրժուա մտաւորականութեան և գաղափարական երիտասարդութեան գործերը, խոհերը, իդէալները պատկերացնել։ «Բաօսը» ձգտում է Բագուի—արդիւնաբերական այդ

խոշոր կենտրոնի—բովանդակ մթնոլորտը, ամբողջ միջավայրը լուսաւորել։

Այս վէպի մէջ երևում են և խոշոր բուրժուա-արդիւնաբերողներ, և՛ վաճառականներ և՛ բանուորներ և՛ գործակատարներ և՛ կառավարիչներ և՛ լրագրողներ—սակայն վէպի բունը, հիմքը կանգնած է արդիւնաբերողների և վաճառականների վրայ։ Կղերականը պատահաբար յայտնուում է և շուտով հեռանում. լրագրողը, կառավարիչը, գործակատարը երկրորդական դեր են խաղում. բանուորները վէպի երրորդ մասի մէջ են շարժուում և այն էլ իբրև մութ, անորոշ, խուսար զանգուած։ «Բաօս»-ի մէջ պարզ, որոշ ու կենդանի ներկայանում են դրամական քաղաքի բարքերը, սովորութիւնները, հոգսերը, որոգայթները, խաբէութիւնները, խելագար վազքը, վատասերուած անհատները, այլանդակուած ընտանիքները—մի խօսքով ամբողջ շարժուն կեանքը։

Շիրվանզադէն իր գրական գործունէութեան նախկին տարիներում շօշափել պատկերացրել է կապիտալիստական և առևտրական կարգերի զանազան կողմերը, այդ կարգերից սկզբնաւորուած զանազան երևոյթներ, անձեր, խնդիրներ։ Այստեղ, այս ընդարձակ վէպի մէջ նա խտացրել, թանձրացրել է տնտեսական նոր կազմի հետևանքները, արդիւնքները, նրա բազմադիմի արձագանգները։ Ամենուրեք նկատելի են դրամատիրութեան հետքերը։ Ընտանիքների մէջ զարմանալի յեղաշրջում է առաջ բերել նոր տնտեսութիւնը։ Տան անդամների կապերը, նախկին անկաշառ յարաբերութիւնները այսօր թունաւորուել են դրամի շունչի մէջ։ Որդին մօրը չէ ճանաչում, չէ յարգում, աղջիկը հօրը շահագործում է, կինը ամուսնուն ուրանում

է և անպատում, մարդը թքում է կնոջ արցունքների վրայ, քոյրը խրախուսում է եղբօր անառակութիւնը, անգամ հպարտանում նրանով, մայրը դիւրութեամբ և առանց տանջանքի հաշտւում է աղջկայ «յանցաւոր» գործողութիւնների հետ. ազգականը կողոպտում է ազգականին. եղբայրը գողանում է եղբօրից, կառավարիչը թալանում է գործատէրին, գործատէրը հարստահարում է ամենին .. Իսկ հասարակութիւնը տեսնում է այս բոլորը, դիտում է աղաւաղուած քաղաքի ցաւագար, վատառողջ կեանքը—և ներողամիտ ժպտում է ամենքի երեսին, հանդարտ ու մեղմիւ ողջունում է ամենքին:

Մարկոս աղա Ալիմեանի ընտանիքը դրամատիրական կարգերի ծնունդ է: Նրա բարոյական, հոգեկան կապերը դրամից են սկզբնաւորւում, դրամի շուրջը դառնում և ի վերջոյ դրամի վրայ հանգչում: Հարուստ արդիւնաբերողը, մեծ վաճառականը մեռել է. սրա դիակի չորս կողմում ոչ թէ հարազատներ են լալիս, այլ դիշատիչ ագռաւներ որի սպասում: Մինչ այդ շռայլ, խաղամոլ, անբարոյական երիտասարդը յոյս ունի՝ թէ հօր մահով այլ ևս պիտի ազատուի հսկողութիւնից և պիտի կարողանայ անարգել և անկաշկանդ վատնել Ալիմեանների հարստութիւնը: Դագաղի առաջ, անհանգիստ և վրդովուած, կտակի մասին է միայն մտածում: Կրտսեր զաւակը՝ Արշակը, տասնվեցամեայ պատանին անգամ ուրիշ խոհեր չունի: Հօր մահը բնաւ նրան չէ յուզել: Աղջիկը, Թեթեւամիտ ու չարաճիրպ Մարթան, կեղծ արցունքներով է լալիս հարազատ ծնողի վրայ: Ժառանգութեան հոգսը նրան աւելի է հետաքրքրում, քան ծերունու անշնչացած դիակը: Փեսան, Իսահակ Մարութեանը, այդ հաշուագէտ և անվըդով գործարանատէրը մազի չափ անգամ չէ յուզւում տխուր դէպքից և հաշւում է միայն իր հաւանական բաժինը:

Եւ երբ կտակի բովանդակութիւնը յայտնի է դառնում, երբ իմացւում է, որ Մարկոս Ալիմեանը իր ամբողջ հարստութիւնը յանձնել է Սմբատի, անդրանիկ որդու հսկողութեան—իր բոլոր զաւակների համար ծանր պարտականութեան առնմաններ ընդգծելով—ամենքն էլ թշնամական ու աներեսութեամբ լի հայեացքներ են նետում դժբախտ դիակի վրայ: Բարոյական, հարազատական զգացմունքների կատարեալ բացակայութիւն և դրամասիրութեան հիւանդոտ, հրէշաւոր արտայայտութիւն: Շիրվանզադէն այսպէս է լարել այս հետաքրքրաշարժ վէպի հիմնական լարը, կենդրոնական քարը այսպէս է դրել և գլխաւոր մեխը այստեղ է զարկել: Այնուհետև ամբողջ երկը—քիչ բացառութեամբ—դառնում է այդ էական կէտի շուրջը և հնչում է այդ լարի վրայ: Բազմաթիւ անձնաւորութիւններ պտտում են դրամի չորս կողմը, հետևում են նրան ուղղակի կամ անուղղակի և դիմում են դէպի նրա ցանկալի ապրատեսութիւնը: Սմբատ, նախկին իդէալիստը կամաց-կամաց միանում է այդ խմբին, իսկ Մէքայէլը, նախկին անբարոյականը հետզհետէ դուրս է գալիս այդ թունաւոր օդակից: Այստեղ Շիրվանզադէն ձգտել է ղրամի բացարձակ իշխանութեան կողքին, նրա անբարոյացնող ազդեցութեան քով ցոլացնել, գծել և մի ուրիշ իշխանութիւն—բարոյական, վսեմ, բարձր, կազդուրիչ—որով միայն կարելի է սրբագրել առաջին իշխանութեան վրիպումները և մաքրել նրա արատները: Սիրոյ զօրութիւնն է այդ երկրորդ գործօնը, որ մտնում է ապականուած մթնոլորտի մէջ, կամացուկ ու հան-

դարթ տարածւում հոգինների վրայ և հանում նրանց բարոյական անկման խորխորատից, բարձրացնում վատասերուած մակերևոյթից։

«Բաօս»-ի մէջ դրամի իշխանութիւնը, նրա բոլոր որոգայթները, դրամատիրութեան արձագանքները կեանքի բոլոր երևոյթների վրայ՝ արտայայտուած են պայծառ ու ցայտուն։ Դուք տեսնում էք նախկին Միքայէլին, պարզ ու ակնյայտ գոյներով, տեսնում էք Իսահակ Մարութխանեանցին, տեսնում էք լինժենէր Սուլեանցին, տեսնում էք արծաթագործ Բարսեղին, տեսնում էք Պետրոս Ղալամեանին, տեսնում էք ամբողջ բազմութիւնները — կանայք թէ տղամարդիկ, պատանիներ թէ չափահասներ, կղերականներ թէ կառավարիչներ, թղթակիցներ թէ գործակատարները — ընկած այդ ոյժի յետևից, կատաղի ու խելակորոյս։ Որը աշխատում է դրամ ձեռք բերել իր սեռական կրքերին բաւականութիւն տալու համար, ինչպէս Միքայէլը իր շուայտ, զուարճասէր կեանքի համար. որը աշխատում է մուրհակներ կեղծել՝ իր զաւակների ապագայի համար, որը կողոպտում է ուրիշին՝ անկախ դիրք հաստատելու համար. որը գողանում է՝ էլ աւելի հարբեցտանալու համար։ Եւ այսպէս անվերջ....

Մարդկանց գործողութիւնների վրայ առաւել կամ նուազ թագաւորում է կապիտալիստական կարգերի ծանր, տաժանելի իշխանութիւնը։ Այս բոլորը վէպի մէջ լաւ են դուրս եկել։ Այս խլրտումները, այս շարժումները, այս գործողութիւնները, այս գալարումները պատկերացել են չափազանց յստակ ու մաքուր։

Երկի ամենահետաքրքիր անկիւններում մի դէպք է պատահում, մի պատկեր է գծագրւում, մի խըն-

դիր է ծայր տալիս — և դուք տեսնում էք, որ դրանք, այսպէս թէ այնպէս, իրենց ահագին մեծամասնութեամբ կապուած են դրամական ինքնօրինակ կազմի, ժամանակակից տնտեսութեան և հասարակական նոր աշխարհահայեացքի ու նոր «բարոյականութեան» հետ։

Դրամատիրութեան այլանդակութիւնների քով իրական ճշմարտութեամբ և բնորոշ պատկերներով ցուցահանուած են նաև սեռական այլանդակութիւնները — ֆիզիքական կրքի անսանձ, բիրտ, վայրենի ծաւալումը նիւթական առատութեան մէջ։ Մարդիկ հասկ կարօտութիւն չունին։ Տնտեսական դառն պրօբլէմը կախուած չէ նրանց ժէբախտ գոյութեան վրայ։ Հարստահարում են, շահագործում են, կողոպտում են — և տէր են բարեկեցիկ ու հանգիստ կեանքի։ Եւ այս լիութեան ու փարթամութեան մէջ նրանք չեն մտածում աւելի ազնիւ, աւելի բարոյական կապերի մասին։ Ամուսինը, յագեցած իր կնոջ մարմնից, ուրիշ մարմիններ է որոնում։ Կինը, առանց սիրոյ ամուսնացած ու նիւթական հոգսերից ազատ, անձնատուր է լինում երիտասարդ տարփածուների առնական ոյժին։ Ամուրիները ամուսնական պարտականութիւնների անհաճոյ հետևանքերից խուսափելու համար՝ տեղծում են ապատ կապեր և ապրում են, յագենում ազատ սիրոյ մէջ։ Օրիորդները սեռական արբունքի հասնելով և ընտանեկան, հասարակական խիստ հսկողութիւնից ազատ լինելով և մանաւանդ բարոյական դաստիարակութիւն չունենալով՝ նետւում են երիտասարդ ու ճարպիկ մոլորեցնողների գրկերը։ Եւ այսպէս աճում, զարգանում է մի ամբողջ հասարակութիւն, առաջանում է կրքերի մի սանձարձակ շղթայ, որ ձգւում է կեանքի բազմա-

թիւ անհատների և բազմազան հասակների վրայ...

Շիրվանզադէն այս բոլորը, ընտանիքների այս սրտառուչ քայքայումը, մարդկանց այս ծայրայեղ դժբախտութիւնը, ընազդների այս բացարձակ անսանձութիւնը, սեռականութեան այս տարամերժ պաշտամունքը լաւ է արտայայտել. հետևողական, ուշադիր և պարզ: Մի երկու տեղ նա շատ է կանգ առել կրքային այլանդակ տեսարանների նկարագրութեան վրայ՝ կամենալով թերևս աւելի իրական և աւելի կենդանի լինել: Մեզ թւում է, սակայն, որ այդ մասերը բաւականաչափ խանգարում են գրուածքի դեղարուեստական իրագործումին, հարթութեան և ամփոփման: Առանց այդ մանրամասն նկարագրութիւնների էլ, հեղինակի մտադրութիւնը յաջողութեամբ ի կատար է ածուած և կրքերի ցաւագար, ախտաւոր խաղերը դրամատիրական հասարակարգիմէջ որոշակի են պատկերացած...

Բացի վերոյիշեալ հոգեկան, բարոյական, ֆիզիքական ախտութիւնների ցուցադրութիւնից՝ Շիրվանզադէն իր վէպի մէջ նկարել է նաև մեր բուրժուական կազմի մի չափազանց հետաքրքրական կողմը—շռայլութիւնը: Մարկոս ադա Ալիմեանցը տաժանելի աշխատանքով, տարիների երկարատև ընթացքում, հազար ու մի փորձութիւններով, դրամական ու բարոյական սայթաքումներով կարողացել է վերջապէս հարստութեան տէր դառնալ: Ինքը գիտէ դրամի արժէքը. յարգում է նրա զօրութիւնը և խոնարհում է նրա առաջ: Որդիները սակայն, Միքայէլը և Աբշալոմը, ոչ մի գաղափար չունեն այն դժոխային պայմանների մասին, որոնց մէջ է կամաց-կամաց զարգանում հարստութիւնը և միանգամայն անտեղեակ են այն դաժանիքներին, որոնցով հետզհետէ կազմւում է միլիոնների կոյտը:

Նորածագ բուրժուական ընտանիքներում սովորաբար գոյութիւն չի ունենում բուրժուական ինքնավստահութիւն, ուժեղ հոգեբանութիւն: Չի լինում այն բարոյական հաստատունը մթնոլորտը, այն փիլիսոփայական խիստ աշխարհահայեացքը, որոնց մէջ և որով դաստիարակւում են բուրժուաների զաւակները: Այդ հոգեբանութիւնը ստեղծւում է մանկական ընթացքում, երկու, երեք սերնդից յետոյ: Նոր հարստացած տների բոլոր անդամների մէջ հաւասար նախանձախնդրութիւն չկայ հարստութիւնը պահելու, խնամելու նկատմամբ: Դրամատակողները, նրանք, որոնք անձամբ զարնուել են հազարաւոր խոչընդոտների իրենց քրտնաթոր դրժուարին ճանապարհի վրայ՝ հիւանդագինօրէն շահագրգռուած են այդ հարստութիւնը պաշտպանելու: Նրանք ժլատ են:—Իսկ այն անդամները, որոնք մազաչափ անգամ չեն մտածել դրամի հաւաքման մասին, որոնք անպիտակ են նրա բազմաթիւ չարաշուք խորհուրդներին—նախանձախնդիր չեն նրա յարատևութեան և ոչ էլ անձնատուր են նրա պահպանման: Նրանք ծախսում են, որքան կարող են և ինչպէս կարող են. նրանք շռայլ են:

Այս երկու տիպերը մեր կեանքում ապրում են քով քովի և յաճախ ընդհարման մէջ են, միևնոյն ընտանիքում, միևնոյն յարկի տակ:

Շիրվանզադէն նկատել է երկուսին էլ, դիտել, ուսումնասիրել երկուսին էլ և իր գրական ստեղծագործութիւնների մէջ արտայայտել: «Բաօս»-ի Մարկոս Ալիմեանը շարունակ պայքար է մղել իր շռայլ և զուարճասէր որդիների դէմ: Ընտանիքի կեանքը թունաւորուել է այս պատճառով: Հայրը կորցրել է իր բարոյական ազդեցութիւնը, որդիները կորցրել են հարազատական ամեն զգացմունք:

Այս դժբախտ յարաբերութիւնների մասին մենք աւելի շատ լսում ենք միայն։ Գրքի մէջ այս կողմը արտայայտուած չէ տեսանելի և շօշափելի կերպով։ Ծներ վաճառականը հիւանդ է և մեռնում է արդէն, երբ մենք սկսում ենք ընթերցանութիւնը։ Եւ սակայն, այն, ինչ ասուած է՝ շատ բնորոշ է և շատ կենդանի։ Մի քանի տողերի մէջ, մի-երկու էջերի վրայ բացւում է բուրժուական ընտանիքի ծանր խոցը։ Շերվանզադէն շատ սուր կերպով կարողացել է արտայայտել այդ հիմնական, դրամատիքական հակադրութիւնը։ Մէկը ամեն գնով ձգտում է փրկել իր թանգագին հարստութիւնը, իր «ճակատի դառն քրտինքը», միւսը անմտօրէն աշխատում է վատնել, ապատել այն միլիօնները, որոնց համար նա մատը մատին չի խփել։ Եւ հայրը, հին, մոլեռանդ, յամառ հայրը կամենում է հաշտուել իր անպրանիկ որդի Սմբատի հետ—որ ամուսնացել է հօր կամքին հակառակ, օտար եկեղեցում, որին չէ տեսել ութ տարուց իվեր և որի անունն անգամ չէ ուզում լսել—կամենում է հաշտուել վերջին պահուն, ոչ թէ ծնողական, անյաղթելի և տիրական զգացմունքից մղուած, այլ միմիայն յանուն իր միլիօնների, յանուն իր հարստութեան։ Նա գիտէր, որ Մինքայել ու Արշակը մի տարում կսպառէին քառասուն երկար տարիների թանգագին վաստակը, իր առևտրական և արդիւնաբերական գործունէութեան բովանդակ արդիւնքը։ Սմբատը միայն կարող էր փրկել այդ բոլորը։ Նա խելացի և, կրթուած, կամքի և բնաւորութեան տէր։ Հոգևարքի մէջ կանչում է նրան, հանդիսաւոր կերպով յանձնում կնքած ծրարը և խստօրէն արտասանում. «Անիծուես, եթէ վերջին կամքս չես կատարիլ»։

Եւ այդ կամքի համաձայն Սմբատը պէտք է թողնի իր օտարազգի կնոջը, օրինական ամուսնութեան իրաւունք պէտք է ստանայ, պիտի կապուի մի հայ աղջկայ հետ, որից ծնուած երեխաները միայն կարող են Ալիմեանի հարստութեան ժառանգ համարուել։

Մինքայէլը պէտք է թողնի իր զեղխ կեանքը, պէտք է օրինաւոր մարդ դառնայ, պէտք է ամուսնանայ հայ աղջկայ հետ, որպէսզի ժառանգութեան իրաւունք ունենայ։ Իսկ մինչև այդ ամսական յիսուն րուբլուց աւելի չպիտի ստանայ։

Հետաքրքրական կըլինէր այս մարդու, Մարկոս աղա Ալիմեանի ամբողջական դէմքը։ Շերվանզադէն նրա մի քանի ցայտուն գծերը մեծ յաջողութեամբ պատմելով և նրա հոգևարքն ու մահը պարզ և ամփոփ նկարագրելով՝ անցնում է նրա ընտանիքի միւս անդամների և առհասարակ արդիւնաբերական քաղաքի կեանքին։ Ժլատութեան, խնայողութեան տիպիքական ներկայացուցիչը դուրս չէ եկել, ուրեմն, իր ամբողջ հասակով։ Շերվանզադէն այդ հոգեբանութիւնը առաւել կամ նուազ ուժգնութեամբ դրել է այս կամ այն վաճառականի մէջ։ «Գործակատարի յիշատակարանից» պատմուածքի Գալումեաններն ու ինքը Խրխատափոր Աբուշանովը, «Զուր յոյսեր»-ի Սադաֆեանը, Աբաչն Դիմաքսեանի հայրը, Անդրէաս Էլիզբարեանը, Աթանէս Ֆրանգուլեանը—սրանք բոլորն էլ ժլատութեան հոգեբանութեան արտայայտիչներ են, մէկը աւելի պայծառ ու որոշ, միւսը թոյլ և անկատար։ Մի ուրիշ պէտք—«Վարդան Ահրումեան» որ դժբաղդաբար մինչև օրս չէ աւարտուած՝ շատ յաջող սկսել է այդ հոգեբանութիւնը և մինչև առաջին մասի վերջը անսայթաք տարել է նրա վերլուծումը։

«Բաօս»-ի մէջ ժլատութեան ցուցադրութիւնից աւելի՝ մենք գործ ունենք ագահութեան հետ— որ անշուշտ միևնոյն հոգեբանութիւնը չէ։ Մենք տեսնում ենք թէ Լինչպիսի մոլեգին խանդով մարդիկ հետամուտ են դրամ ձեռք բերելու, հարստութիւն դիզելու, բայց թէ Լինչպէս են նրանք ապահովում այդ դրամը, Լինչպէս են նրանք դողում այդ հարստութեան վրայ, խնամ՛ում նրան—այդ այնքան էլ չէ երևում։ Դրա փոխարէն մենք տեսնում ենք անծայր և խելագար վատնում, սպառում, շռայլութիւն։ Բուրժուական հասարակութեան այդ կողմի, այդ յատկութիւնների նկարագրութիւնը գեղարուեստական ամբողջութեամբ պատկերացել է «Բաօս»-ի մէջ։ Շերվանզադէի այդ մեծ վէպը միակն է մեր գրական ասպարիզում, որ կարողացել է նոր տեսակարգի այդ չափազանց յատկանշանական երևոյթը լաւ դիտել, լաւ խորհրդածել և ուժեղ արտայայտել։

Առևտրական խելակորոյս ձեռնարկութիւնների, հիւանդագին ու անազնիւ պայքարների, ընտանեկան խեղաթիւրուած յարաբերութիւնների, կեղծ մուրհակների, կեղծ կտակների, կեղծ բարեկամութեան, կրքերի և անասնական բնազդների, ցաւագար ու բիրտ սեռականութեան, անսահման անառակութեան, անբարոյական վատնումի, մոլի զեղխութեան այդ քաօսական միջավայրում Շերվանզադէն դրել է մէկ-երկու լուսաւոր գծեր, պայծառ դէմքեր, մաքուր արտայայտութիւններ և ասես կամեցել է դրանցով փարատել խաւարը, վանել չարիքը և զտել քաօսը։

Այս պատկերների շարքում ամենից արժանաւոր տեղը յատկացրել է Շուշանիկին։ Բանների-կու տարեկան համեստ, զեղեցիկ, կրթուած հայուհին վէպի մէջ աչքի չէ ընկնում իր ուժեղ կամքով, ինքնուրոյն գործունէութեամբ, անկախ ու ամփոփ ընաւորութեամբ։ Հասարակական տեսակէտից նա իր բարի հօրեղբօր՝ Դաւիթ Զարդարեանի ազգեցութեան արդիւնքն է։ Այս մարդը, նախկին ուսուցիչ, մաքուր և ազնիւ անձնաւորութիւն՝ ծառայում է Ալիմեանների հանքերում և իր համեստ ռոճիկով պահում է մի ամբողջ ընտանիք—իր այրի քրոջն ու նրա երկու զաւակներին, նաև իր անդամալոյծ եղբօրը, նրա կնոջը և նրա դուստր Շուշանիկին։ Շերվանզադէն շատ լաւ է պատկերացրել այդ նախկին վարժապետին։ Բաօսի մէջ նա միացել է մեկուսացած իր վաղեմի գաղափարներով, իր հինաւուրց համակրութիւններով և իր միամիտ ոգևորութեամբ։ Դողութեան և կղզիպուտի խառնիճաղանճ մթնոլորտում նա հաւատարիմ է ինքն իրեն և միշտ հեռուում է իր ներքին ձայնից։ Այս մարդու դէմքը ամենից ընտրոյշ օրինակն է անհատականութեան և անձնական ուժգին արտայայտութիւնների, որոնք գործում են հասարակական, տնտեսական կարգերի և ազդեցութիւնների դէմ և որոնք յաճախ աւելի վճռական են հանդիսանում...

Շուշանիկն ապրում է այդ համեստ, աւելի աղքատ քան բարեկեցիկ, ընտանիքում և յարատև խնամում է իր անդամալոյծ ու յամառ հօրը։ Այս պայմանների մէջ նա կարողանում է ցուցահանել իր հոգու մաքրութիւնը, արտայայտել իր թագուն առաքինութիւնները և վէպի կենդրոնական անձնաւորութիւններից մէկը դառնալ։ Սմբատը երկար ժամանակ նրա շուրջն է պտտում, նաւթային տագտակալի աշխարհում միայն նրան է տեսնում և անվերջ ափսոսում, որ Շուշանիկին իր ամուսնութիւնից առաջ չէ հանդիպել։ Միքայէլը անբարո-

յականութեան տիզմից նրա կախարդական ազդեցութեամբ է բարձրանում և Բաօսից նրա շնորհիւ է ազատւում: Անտոնինա Իվանովնան «ասիական» կոպիտ ու տհաս միջավայրում միայն Շուշանիկին է մօտենում և նրա օգնութեամբ ու խորհրդակցութեամբ գաղափարական գործ սկսում:

Բանուորները նրան սիրում են և խորապէս յարգում: Շուշանիկը նրանց ընկերն է, նրանց անկեղծ բարեկամը, նրանց հոգատար քոյրը: Հիւանդներին խնամում է, վիրաւորներին պահպանում, անգրագէտներին սովորեցնում և իւրաքանչիւրի համար կատարում է այն, ինչ նրանք խնդրում են և ինչ ինքը կարող է. ռուսների, պարսիկների, լեզգիների, հայերի մէջ նա խորութիւն չէ դնում: Աշխատում է և օգնում է ամենքին հաւասարապէս:

Շուշանիկը իրական անձնաւորութիւն լինելով հանդերձ՝ միաժամանակ խորհրդանշանական, սիմվոլիկ անձնաւորութիւն է: Հեղինակը այդ ազնիւ աղջկայ միջոցով ասես ներկայացրել է Բաօսից դուրս գալու, ազատուելու հնարը: Նա մի պայծառ ղէմք է: Լաւատեսութեան, հաւատքի մի հրաշալի ստեղծագործութիւն: Շիրվանզադէն տալով կեանքի մութ պատկերը, իրականութեան ոգեղ, վատառողջ, բարբարոս արատայայտութիւնները—հանել է նաև նոյն կեանքից և նոյն իրականութիւնից այս համեստ հայուհու գեղեցիկ հոգին՝ մեզ խրախուսելու, մեզ սրտապնդելու, մեզ քաջալերելու համար: Եթէ չլինէին այդ դրաւիչ, երազական ղէմքերը կեանքը կլկորցնէր իր բոլոր հրապոյրը, ոգևորութիւնը, բուռն, անկաշառ ոգևորութիւնը կանգ կառնէր, կլկոտրուէր ամեն թռիչք, կլխեղտուէր ամեն ձգտում, կլմարէր ամեն յոյս և աշխարհը կլդառնար մի անծայր, անվախճան, յարա-

տև Բաօս: «Ոչինչ չկայ աւելի տզեղ, քան կեանքը եւ ոչինչ չկայ աւելի գեղեցիկ, քան նոյն կեանքը»—հաւատարիմ այս գեղարուեստական-գրական սկզբունքին, «Բաօսի» տաղանդաւոր հեղինակը բաց է արել մեր աչքարէի խորունկ վէրքը և միաժամանակ մատնանշել է այդ վէրքի սպեղանին: Եթէ անբարոյականութեան և տգեղութեան հանդէպ մարդուս հոգին ցաւում է, տառապում է անհունօրէն—ազնուութեան և գեղեցկութեան հանդէպ նա լցւում է ջերմ հրճուանքով և փայլուն յոյսերով:

Շիրվանզադէն իր այս ընդարձակ և մեծածաւալ վէպի մէջ դուրս բերելով արդիւնաբերական քաղաքի հակայ կեանքը, մեր բարձր բուրժուազիայի բարքերը, եւրոպական կապիտալիզմի երեւումն ու զարգացումը մեր հողի վրայ, անտեսական փոփոխութիւնների արձագանգները, հասարակական կազմի յեղաշրջումը, ընտանեկան հինաւուրց բարոյականութեան անկումը—այս բոլորը իրական ճշտութեամբ, գեղարուեստական կենդանութեամբ վերլուծելով և լուսաբանելով, հնարաւորութիւն չի ունեցել նոյն յաջողութեամբ և նոյն պայծառութեամբ ներկայացնել նաև կենդրոնական անձերին: Երկրորդական ղէմքերից շատերը դուրս են եկել լաւ և միանգամայն որոշ: Միջավայրը պատկերացել է գրեթէ կատարեալ արուեստով: Եւ այս բազմակողմանի աշխատանքի մէջ՝ գլխաւոր գործողներից միքանիսը չեն կարողացել իրենց վրայ բևեռել հեղինակի ըմբռնումի ուշադրութիւնը:

Սմբատը, որի ուսանողական տարիները անցել են հայրենիքից հեռու, որ ամուսնացել է ռուս աղջկայ հետ հակառակ իր ծնողների կամքին, որ երբէք չէ կամեցել միլիոնների համար զոհել իր խիղճը և իր ազնուութիւնը, վերադարձել է Բագու

և գտնում է անգին հարստութեան գլխին։ Իր իշխանութեան տակ այժմ ունի հարիւրաւոր արհեստաւորներ, բանուորներ, գործակատարներ, որոնք ամենը նայում էին նրան և որոնց նա կարող է «բախտաւորացնել եթէ կամենայ»։ Շատ անգամ, իր ուսանողական օրերին և այնուհետև՝ նա արտայայտել է այն միտքը, թէ մեր ժամանակներում անկարելի է շիտակ միջոցներով հարստութիւն դիզել։ Այսօր ինքը ձեռք է առել անգին հարստութիւն, գլուխ է կանգնել առևտրական և արդիւնաբերական մի խոշոր գործի։ Սմբատի հոգին խռովուած է, միտքը վոխորկուած։ «Ի՞նչ անել. մի՞թէ հաւատարիմ մնալ անցեալին, արհամարհել բոլորը, տալ եղբօրը և մնալ աղքատ, ինչպէս էր մի ամիս առաջ։ Մի կողմից նա մտածում էր, եթէ կամքի ոյժ ունենայ՝ այդպէս կանի, միւս կողմից նրան պաշարում էին ուրիշ մտքեր։ Չէ՞ որ այդ հարստութիւնը անցնելով Միքայէլի ձեռքը՝ կարող է ապարդիւն ոչնչանալ մի քանի տարում։ Այն ինչ, որքան բարի և օգտակար գործեր կարելի է կատարել նրանով, որպիսի բարոյական գործադրութիւն կարելի է տալ նոյնիսկ անբարոյական միջոցներով դիզուած փողերին։»

Եւ այսպէս՝ իդէալիստ, անշահասէր, ազնիւ Սմբատը վճռում է մնալ Ալիմեանների հարստութեան գլխին՝ «բարոյական գործադրութիւն տալու համար դիզուած փողերին»։ Նա չէ կամենում շահագործել այդ հարստութիւնը։ Նա աշխատում է օգտակար լինել հասարակութեան և բարձրացնել, ոգի տալ իր տանջուած, անիրաւուած բանուորներին։ Ահաւասիկ, ուրեմն, մի մարդ, եւրոպական կրթութեամբ և հանրային իդէալներով, մի խոշոր արդիւնաբերող, որ կանգնել է մեր միջավայրում և պիտի

գործի մեր բարոյական-հասարակական քաոսում։

Ի՞նչ է անում, ինչպէս է ուղղութիւն տալիս իր իդէալներին։ Նախևառաջ ուսումնասիրում է իր ամբողջ առևտրական-արդիւնաբերական գործը։ Գտնում է, որ հին անտեսութեամբ և հին ձևերով չի կարող առաջ գնալ զարգանալ ժամանակակից արդիւնաբերութիւնը։ Եւրոպական մեթոդներ է մըտցնում, կանոնաւորում է ամեն բան ըստ նոր ուղղութեան և մեր կեանքում հանդիսանում է լուսաւորեալ կապիտալիզմի ինտելլիգենտ ներկայացուցիչը։

Այս մարդը առևտրական խմբակցութեան միջից չէ անցել դեպի իր նոր կոչումը։ Նա չէ բարձրացել նախորդ արդիւնաբերող-վաճառականից, բնական, յաջորդական աստիճանաւորութեամբ ու զարգացմամբ։ Նա եկել է դրսից։ Գաղափարական մտաւորականութեան մի անդամ է եղել—թէև չըգիտենք ինչպիսի անդամ—և այժմ արդէն մեծ բուրժուազիայի սիւներից է։ Նա չէ որոնել այդ ճանապարհը, նա չէ փնտրել այդ ասպարէզը, նա չէ ձգտել այդ դիրքին—ինչպէս շատերը իր գաղափարականներից։ Շիրվանզադէն յանձին Բարաթեանի և Վէքիլեանի արտայայտել է մասամբ՝ այն մարդկանց, որոնք գաղափարական մտաւորականութիւնից անցել են բուրժուազիային՝ իրենց անհատական ինքնաբուխ որոնումներով, իրենց նախապատմադրութիւններով (prédisposition), բոլորովին պիտակցաբար ու կամովին։ Նրանք իրենց անձնական հակումներով չեն յարմարուել հասարակական այն խմբակցութեան աւանդներին ու իդէալներին և խորտակելով բուրժուական տնտեսակարգից, համակերպուելով այդ նոր դասի բարոյական աշխարհահայեացքին—լքել են իրենց շրջանը և թողել են նախկին ընկերներին։

Սմբատի դրութիւնը այլ է։ Առանց անհատական նախաձեռնութեան և առանց որոնումների՝ նա պատահաբար դարձել է խոշոր արդիւնաբերող։ Գաղափարական այս երիտասարդի իդէալները տարբեր են և նա կամենում է այդ իդէալները պատուաստել, դործադրել կապիտալիստական միջավայրում։ Կարող է արդեօք առանձնանալ, յարատևել իր սկզբնական համակրութիւնների մէջ. կարող է արդեօք բուրժուական կարգերի վրայ դնել իր դրոշմը. կարող է արդեօք առ միշտ գաղափարական և անշահասէր մնալ և ազդել շրջապատի վրայ իր բարոյականութեամբ. թէ՞ ընդհակառակը, ինքը պիտի ազդուի միջավայրից, կորցնէ իր գաղափարական ընոյթը և ենթարկուէ իր դասակարգի բարոյականութեան ու հոգեբանութեան։

Սմբատը մեծանում է մի կերպ բարեկեցիկ բանուորների սարսափելի դրութիւնը։ Ամենից առաջ հոգ է տանում նրանց բնակարանների վրայ և ձեռնարկում է մի շարք կացարանների շինութեան։ Գործաւորները այնուհետև պիտի ունենան մաքուր, լուսաւոր բնակարան, պարտէզ, բաղանիք, ընթերցանութեան սրահ։ Ամբողջ վէպի մէջ մենք սրանից բացի ուրիշ բան չենք տեսնում։ Կացարանները պատրաստւում են. այդ առիթով հանդիսաւոր ծօնախմբութիւն է տեղի ունենում, որի ժամանակ բանուորներին տրւում է առատ ճաշ և գինի։ Ծամում են, ուրախանում և գովում իրենց բարի և աղնիւ գործարանատէրին։ Սմբատը բարոյական մխիթարութիւն է տանում այդ իրողութիւնից և դիանով վերջ դնում իր հասարակական իդէալներին։

Նրա համար ճանապարհը չափազանց անհարթ

է։ Ընտանեկան կեանքի դառնութիւնները նրան հնարաւորութիւն չեն տալիս՝ կենտրոնանալու իր բարոյական ըմբռնումների, իր գործունէութեան վրայ։ Եղբայրները ամեն օր վրդովում են սրա հանդիսատը, մեկը գողանում է, կողոպտում է, միւսը շռայլում է, վատնում է եղածը։ Երկուսն էլ անբարոյական ընթացքի մէջ են։ Հարբեցներ և հազարներ են դնում այս կամ այն արկածախնդիր գերատանուհու համար։ Աբշակը, թողնելով հայրական տունը՝ փախչում է այդպիսի մի աղջկայ հետ։ Մայրը տանջանքի մէջ է։ Սուգ, արտասուք, ողբ։ Ընտանեկան այս դժոխքը կրկնապատկւում է իր կնոջ ու մօր թշնամական յարաբերութեամբ։ Անտօնիա Իվանովնան չէ կարողանում հաշտուել հայ ընտանիքի սովորութիւններին. նա խորթ է այս շրջանում. նա սիրուած չէ ոչ ոքից. ինքը ոչ ոքի չէ սիրում փոխադարձաբար։ Երեխաներին նա ոչ մի կերպ չէ կամենում յանձնել տատի խնամքին, նրա փաղաքշանքներին։

Բնաւորութիւնների, աշխարհահայեացքների, սովորութիւնների, ազգային առանձնայատուկ հակումների մի կատարեալ քաոս է ներկայացնում այդ տունը։

Միւս կողմից, Սմբատը չէ սիրում իր կնոջը, չի սիրում տարիներից ի վեր։ Ոչ մի հոգեկան, բարոյական կապ չկայ նրանց մէջ։ «Երկուսն էլ ուսում առած ու զարգացած՝ ունէին տարբեր դրօշակներ»։ Անտօնինա Իվանովնան այլ հասկացողութիւնների, այլ իդէալների, այլ համակրութիւնների տէր է, Սմբատը այլ։ Նրանց մէջ կան «բիւրաւոր հակասութիւններ», Նրանց մէջ պարզուել է մի «անդունդ, որ անջատում է երկու միմեանցից հիմնաւորապէս տարբեր շրջանների մարդկանց»։

Քաոսը կրկնապատկւում, սաստկապատկւում է սիրոյ և ամուսնութեան այս վերջին սահմանի բարդ խնդրի մէջ։ Եւ այս բազմաթիւ մտահոգութիւնների ցանցում, այս զանազանակերպ պայքարների մէջ Սմբատի հոգեկան եռանդը չլսւում է, նրա հասարակական իդէալները յետին պլի վրայ են կանգնում և հետզհետէ միանգամայն մոռացւում։

Անտօնինա Իվանօվնային նա չէ սիրում, այլ, բայց իր զաւակների չափազանց սիրում է։ Կինը յօժարակամ նրանից կըբաժանուի, մինչև անգամ պատրաստ է նրան կրկնամուսնութեան ամեն արտօնութիւն տալ, եթէ միայն Սմբատ արձակէ նրան դէպի Ռուսաստան իր զաւակների հետ միասին։ Ամուսինն իր կողմից չափազանց ուրախ կլինի ազատարձակի համար. այդպիսով Մարկոս աղա Ալիմեանի կամքը ևս կատարուած կլինէր— բայց սիրող հայրը և առաքինի մարդը չէ կարողանում հաշտուել այդ լուծման հետ։

Այս պայմանների մէջ՝ Շիրվանզադէն Սմբատի ճանապարհի վրայ դրել է նաև մի ուրիշ ծանր խնդիր։ Նա համակրում է Շուշանիկին, տանջւում է նրա սիրով և ամբողջ հոգով կը վարվէր նրա հետ կապուել։ Ու մինչև անգամ այս սիրոյ համար Սմբատը չէ յօժարում բաժանուել Անտօնինա Իվանովնայից։ Բարոյական պարտականութիւնները և երեխաների սէրը գերակշռում են զեղեցիկ, շնորհալի հայուհու սիրուն։

Շիրվանզադէն շատ լաւ է դուրս բերել զգացմունքների, պարտականութիւնների նախապաշարումների այն բովանդակ քաոսը, որի մէջ ապրում, քայլում է Սմբատ։ Դուք տեսնում էք նրա անհատական, ընտանեկան կեանքը գրեթէ լրիւ, ամբողջացած

վիճակում։ Սակայն Սմբատի հասարակական իդէալների խորտակումը և բուրժուական դասակարգի ազդեցութիւնը նրա վրայ որոշ չէ և պարզ։ Դուք չէք տեսնում հասարակական այն ճանապարհը, որով անցնում է Սմբատ։ Դուք չէք կարողանում լաւ պատկերացնել այն Սմբատին, որ դողում է փողի վրայ և որ չի ուզում իր ամենատարրական պարտականութիւնը կատարելու համար գրկուել գրամից։

Շատ հետաքրքրական պիտի լինէր այդ փոփոխութեան ընթացքը, ամբողջ պրօցէսը, նկարագրութիւնը և համոզիչ բացատրութիւնը այն պայմանների, որոնց մէջ նախկին իդէալիստը դառնում է ժլատ և գրամի երկրպագու։ Վէպի մէջ այն, ինչ ասուած է՝ կարող էր ազդել Սմբատի վրայ առհասարակ. բայց հազիւ թէ յիշատակուած դառնութիւնները այնքան ճակատագրական հետևանքներ ունենային հասարակական տեսակէտով։

Ըստ երևոյթին Շիրվանզադէն կամեցել է ցոյց տալ, որ քաոսի մէջ ընկած մարդը զաղափարական, ազնիւ անձնաւորութիւնը չափազանց դիւրութեամբ կարող է կուլ գնալ և հնթարկուել միջավայրի անբարոյացնող ազդեցութեան, երբ նրա մտաւոր կեանքը փոթորկուած է։ Երբ անհատի հոգին դատարկ է, երբ ընտանեկան ոչ մի մխիթարութիւն չունի, երբ հոգեկան նեցուկից զուրկ է, երբ վատրուած է սէրը — հասարակական դիմադրականութիւնը նուազում է, դիմադրական ոյժերը պակասում են և մարդս շուտով տեղի է տալիս վատթար ազդեցութիւնների։

Սմբատ չէր սիրում Անտօնինային։

Այդ անհամակրութիւնը Շիրվանզադէն ասես միայն «տարրեր շրջանների» և «տարբեր դրօշակների» հետևանք է համարում։ Հայ երիտասարդը

չի կարող երջանիկ լինել ոուս աղջկայ հետ: «Ճի-պոտդ քոլիցդ պիտի կտրէիր»—լսում է շարունակ հեղինակի ծանր, չարաշուք, յուսահատական ձայնը: Սմբատի սիրոյ և հիասթափութեան խընդիրը վէպի անմիջական նիւթը չէ կազմում: Մենք այդ իմանում ենք տակաւին վէպի սկզբում և դիտենք, որ նա վաղուց կատարուած իրողութիւն էր: Զծանրանանք ուրեմն հեղինակի արծարծած տեսակէտի վրայ և քննութեան չենթարկենք «տարբեր շրջանների» տարամերժ թեօրիան: Դիտենք միայն, որ այդ հայեացքը ճիշտ կարող է լինել որոշ պայմաններում և միմիայն որոշ չափով: Անհատների հոգիները վճռականապէս նրա ազդեցութեան տակ չեն և չեն ենթարկւում նրա բացառիկ իշխանութեան: Ինքը Շերվանղադէն «Քաօսի» վերջում մատնանշում է մի նոր զաղափար, որի շուրջը համախմբւում են զանազան շրջանների և տարբեր ազգութիւնների պատկանող անձեր և հանդիսաւորապէս ցոյց է տալիս, որ համամարդկային մի իդէալի համար նրանք ամենքը կարող են միանալ: Այս վերջին գաղափարը այնքան ակնյայտնի է և այնքան շեշտուած, որ ասես զիտակցաբար հակադրւում է առաջինին և հիմք է տալիս ենթադրելու, որ Շերվանղադէն նախկին տեսակէտը—«տարբեր շրջանների» համբաւաւոր միտքը համաբում է հասարակական նախապաշարմունք: Եւ իրաւի, եթէ մի ընդհանուր իդէալի համար մարդիկ պայքարում են իրար հետ, մարդիկ մոռանում են իրենց եսը. մարդիկ նետւում են կրակի մէջ, զոհաբերում իրենց ամենաթանկագին ստացուածքը, կեանքը, ինչու՞ նոյն հանրամարդկային գաղափարով նրանք չեն կարող բարոյապէս միանալ, սիրել և երջանիկ լինել... Մեզ թւում է, ուրեմն, որ

Սմբատի և Անտօնինայի փոխադարձ անհամակրութիւնը «տարբեր շրջաններից» բացի ուրիշ՝ անհատական պատճառներ ևս պիտի ունենայինն:

Այսպէս թէ այնպէս Սմբատ չէ սիրում Անտօնինային: Նրա հոգեկան դատարկութիւնը կարող էր լցնել Շուշանիկը, բայց այդ էլ արդէն ուշ է:

Այս կրկնակի դժբախտութիւնները ինքնին բաւական զօրաւոր գործօններ են: Հեղինակը-ինչպէս նկատեցինք-ասես կամեցել է անհատական ձախորդութիւնների հետևանք համարել նրա հասարակական վրիպումները: Սմբատ վիշտը մոռանալու համար ուզում է դէթ ազատ և անկախ ապրել, ուզում է անձնատուր լինել շռայլութեան ծախսերի, անգամ արբեցութեան: Դրա համար փող է հարկաւոր: Եւ նա կամաց-կամաց սկսում է դրամը յարգել, հասկանալ նրա ոյժը և ապա սիրել նրան:

Այսպիսով, Սմբատն ընկնում է Քաօսի մէջ և ենթարկւում նրա տիրական ներգործութեան: Հասարակական իդէալները և նախկին ըմբռնումները մի կողմ են քաշւում:

Որքան էլ համոզիչ ու ճիշտ լինեն առհասարակ այս բոլոր իրողութիւնների ցուցադրութիւնը, այնուամենայնիւ նրանք ամբողջական չեն և ոչ էլ վճռական են: Կարևորը, բուրժուական բարոյականութեան և բուրժուական հոգեբանութեան աստիճանական պատուաստումը Սմբատի վրայ՝ որոշ չէ արտայայտուած:

Հասարակագիտական և պատմական ընդհանուր ճշմարտութիւն է, որ պաշտօնը, կոչումը, դասակարգը անհատների վրայ իր ուրոյն, մասնայատուկ դրոշմն է դնում և իր հոգեբանութիւնը տարածում:

Մարդիկ ամենը միակերպ չեն ենթարկւում,

անկասկած, այս ազդեցութեան: Նայելով ուրիշ պատգամների և ուրիշ տուեալների՝ այս ազդեցութիւնը կարող է մեծ լինել, կարող է փոքր լինել, կարող է մինչև իսկ շատ աննշան արտայայտութեամբ հանդէս գալ: Սմբատի վրայ — ուրիշ հանգամանքների աղակցութեամբ — այդ ազդեցութիւնը նշանակալից եղաւ: Նա փոխուեց մինչև բարոյական անհատատարմութեան աստիճան: Շիրվանզադէն անտես է արել այդ կողմի նկարագրութիւնը և այդ պատճառի ներգործութիւնը: Մինչդեռ նա այնքան հետաքրքրական էր և կազմում էր վէպի հիմնական խնդիրը:

Սմբատի հոգեբանութեան հակադիր շարժում է կատարուում Միքայէլի հոգու մէջ: Այս երիտասարդը սկզբում ներկայանում է ընթերցողին իբրև անբարոյական, անատակ անձնաւորութիւն: Նա Բագուի կապիտալիստական միջավայրի հիւանդոտ, բացասական արտադրութիւնն է: Թայլ առ քայլ նա թողնում է, սակայն, այդ վատթար կեանքը և սկսում է կամաց-կամաց մաքրուել, բարոյապէս բարձրանալ: Եւ այն ժամանակ, երբ Սմբատ ճակատագրական դժբախտութեամբ դէպի քաօսն է գլորուում՝ Միքայէլ մի սրտառուչ հաւատքով նոր կեանքի շէմքն է թեւակոխում: Նա թողնում է ընդմիշտ այն չարաբաստիկ, մռայլ ու ախտաւոր քաօսը, որի հաւատարիմ բաբեկամն է եղել երկար տարիներ...

Այս կերպարանափոխութիւնը վէպի հիմնական խնդիրներից մէկն է: Շիրվանզադէն այդ անձնաւորութեան մէջ դրել է իր դեղարուեստական ոգևորութիւնը, իր հաւատքը, իր հեղինակական լաւատեսութիւնը: Կեանքը նրա փիլիսոփայութեամբ վատթար ընազդների և անառակ հակումների անհամեմատ շղթայ չէ իրականութիւնը տգեղ ու վատասերուած անհատների յաւիտենական հանդէս չէ: Կան առաքինութիւններ, որոնք ծնուում են, զարգանում, հասունանում մինչև անգամ ամենանպաստ միջավայրերում: Միքայէլը կեանքի այն կտորն է, որ իր ծայրայեղ արատաւորութեան ներքոյ տակաւին պահած է անրծութեան, մաքրութեան սկզբնական, նախագոյ սաղմը:

Որքան էլ բանաստեղծօրէն մեզ հաճելի լինի և միանգամայն հնարաւոր Միքայէլի կերպարանափոխութիւնը, այնուամենայնիւ վիպասանը պարտք ունի այդ երևոյթը հոգեբանօրէն բացատրելու և պարզաբանելու: Նա պէտք է ցոյց տայ այն պայմանները և այն ազդեցութիւնները, որոնց մէջ և՛ որոնց շնորհիւ իրագործուեց այդ կերպարանափոխութիւնը: Հարկ է խոստովանել, որ Շիրվանզադէն լիովին գիտակցել է և հասկացել իր խնդիրը և ամեն կերպ աշխատել է մօտենալ նրա գոհացուցիչ լուծման: Թերևս այդ գիտակցութեամբ, նա Միքայէլի մէջ, անգամ նրա անառակութեան և անբարոյականութեան շրջանում, չէ դրել մի քանի հիմնական արատներ: Նա գիտութեամբ Միքայէլից հեռու է պահել աւելի հաստատուն և աւելի խորացած բացասական յատկութիւններ: Մինչև իսկ այն ժամանակ, երբ Միքայէլը իր վատութեան և իր անաղնուութեան գագաթնակէտին է հասնում, մինչև իսկ այն ժամանակ, երբ նա, իսահակ Մարութխանեանին չարամիտ խորհրդով, հօր մահից անմիջապէս յետոյ, որոշում է Սմբատի դէմ կեղծ կատակ հանել, բարկութեան և զժգոհութեան այդ զերազոյն րոպէներին անգամ՝ նա վարանում է, տատանում է կեղծիքի առաջ և համաձայնում է միայն ակամայ ու համարեա անդիտակցաբար:—

«Ուրեմն դու ինձ առաջարկում ես խարդախութիւն անել». հարցնում է նա շուարած ուրնդոստ: Մեզ թւում է, որ Շիրվանզադէն դիտմամբ այսպէս է ներկայացրել Միքայէլին, որպէսզի այնուհետև պատասխանատուութիւնը շատ էլ մեծ չլինի և կերպարանափոխութիւնը անկարելիութեան չը հանդիպի: Կրքերի, անասնական ընազդների և խելագար շռայլութեան մարդ է նա իրապէս և ամենից առաջ: Կապիտալիստական աշխարհի միւս բացասական յատկութիւնները—կեղծիք, խարդախութիւն, շեշտուած և լայն անբարոյականութիւն—Միքայէլի մէջ բուն չեն դրել և յամենայն դէպս հաստատուած, ամրացած չեն:

Այս զգաստ և ուշադիր գործառնութիւնը, այս աչալուրջ վերաբերմունքը ինքնին գովելի յատկութիւն է մի գրողի համար: Այնուհետև նա բնաւ չէ մոռանում իր դրութեան դժուարութիւնը և Միքայէլի հոգեբանական փափուկ խնդրին մօտենում է միշտ զգուշութեամբ:

Ի՞նչպէս է կատարւում այդ մաքրագործումը: Նախ և առաջ Սմբատի շարունակական խորհուրդները Միքայէլի վրայ այսպէս թէ այնպէս որոշ ազդեցութիւն թողնում են: Անկասկած, այս ձևի դաստիարակութիւնը կարևոր նշանակութիւն չէր ունենար և թերևս ոչ մի հետևանք չառաջացնէր, եթէ կեանքի փորձութիւնները անմիջապէս և ուղղակի կերպով օգնութեան չգային նրան:

Միքայէլը յանցաւոր յարաբերութիւն է հաստատում իր բարեկամի քրոջ հետ: Գաղտնիքը բացւում է. տարիների սրտակից ընկերը վիրաւորւում է խորապէս և Միքայէլին հրապարակով ապտակ է տալիս: Այս դէպքը պատճառ է դառնում ինքնամփոփման և վերանորոգման առաջին նշաններին: Ապա պատահում է Շուշանիկին, ոգևորւում նրա գեղեցկութեամբ և վատ դիտաւորութեամբ մօտենում նրան: Հայ աղջիկը, չնայելով իր աղքատութեան և անփորձութեան, չնայելով իր անտեսական կախեալ վիճակին՝ օրինակելի ազնութեամբ, հերոսութեամբ և հպարտութեամբ է պահում իրան: Նա բարոյապէս յաղթահարում է Միքայէլի յանդուգն և անամօթ վարմունքը: Նա անդրդուելի է իր կանացի համեստութիւնը պաշտպանելու նկատմամբ և ունի կամքի այնքան ոյժ, որ եթէ հարկ լինի կարող է պատերազմել Միքայէլի հետ և զոհաբերել կամ զոհաբերուել...

Միքայէլը, բուրժուական ընտանիքի այդ սանձարձակ ու արկածախնդիր երիտասարդը ցնցւում է այս եզական ու անօրինակ դէպքի առջև: Առաջին անգամ իր կեանքում նա զգում է այդ աստիճան զեղեցիկ զիմադրութիւն. առաջին անգամ իր կեանքում նա զգում է միլիոնների ոչնչութիւնը և հարստութեան կատարեալ անպէտքութիւնը: Աշխարհում մի նոր անկիւն է բացւում, տարածւում նրա հոգու առջև. մի նոր լոյս է երևում նրա հանդած գիտակցութեան մէջ և նա սկսում է խորապէս տխրել, անհանգստանալ... Անցեալը թըւում է նրան մի սարսափելի մղձաւանջ, մի վատ, ծանր երազ և նա փափագում է ամեն կերպ ազատուել այդ չարաշուք կօշմարից: Արթնանում է քնած խիղճը, ոտքի ելնում մէկէն, յայտնւում է հինաւուրց, մարդկային առաքինութիւնը և զղջումը, մաքուր, անկեղծ զղջումը պատում է նրա բովանդակ գոյութիւնը: Նա տանջւում է, հրաժարւում մեղսագործ ու արատաւոր անցեալից, ամբողջ հոգով ձգտում իսկական երջանկութեան և երազում իսկական սէր: Նա մի նոր դև է հանդիսանում,

միայն անհամեմատ աւելի անկեղծ, աւելի բարոյական, աւելի շիտակ. մի դէմ, որ գիտակցաբար ու յուզմունքով սպասնգ է քաշում իր անպատիւ անցեալի վրայ և խորին հաւատով դիմում դէպի ապառնածութիւն: Նա ցաւագին գալարումներով Շուշանիկից նեբում է խնդրում իր անպաղնիւ վարմունքի համար և ազերսում նրա սէրը: Նա փոում է բարի աղջկայ առջև իր կեանքի ամբողջ պատմութիւնը, իր նախկին անմաքուր շրջանը, իր ճակատագրական վրիպումները և խոստովանում իր անկեղծ հրաժարականը և իր վերջնական վերադարձը: Շուշանիկը երազել է աղնուութիւն, հոգեկան գեղեցկութիւն, բուռն հերոսութիւն: Նա նեբում է Միքայէլին, բայց նա չէ կարող սիրել նըբան: Նրա իդէալը Սմբատի մէջ է անձնաւորուած: Եւ Միքայէլը ցոյց տուեց, որ նա իր սիրոյ համար և յանուն իր նոր կեանքի մինչև գերօրինակ անձնազոհութեան բարձունքը կարող է հասնել: Ու մինչդեռ կատաղի հրդեհի ժամանակ թուլամորթ Սմբատը դրամով էր ուզում ապատել Շուշանիկի հարազատներին՝ վերածնուած Միքայէլը իր կեանքի գնով և անկեղծ ոգևորութեամբ փրկում է մահից թէ օրիորդին, թէ նրա անպամալոյծ հօրը և թէ նրա սիրելի հօրեղբօրը... Մի րոպէում Շուշանիկի աչքերը բացւում են. նա տեսնում է գաղափարազուրկ ու ողորմելի Սմբատին և հոգեբուխ երախտագիտութեամբ նետւում դէպի գեղեցիկ ու հերոսական Միքայէլի գիրկը...

Շիրվանզադէն հոգեկան այս բոլոր ապրումների մասին խօսում է բաւական որոշ գծերով: Նկարագրում է Միքայէլի տանջանքները, հիասթափութիւնը, վերադարձը, մարդկային առաքինութիւնների զարթօնքը: Սակայն, մեզ թւում է,

որ այդ բոլորը արժանի էին աւելի խստապահանջ ուշադրութեան, աւելի նուրբ քննութեան և աւելի խորունկ բացատրութեան... «Քաօսի» միւս խընդիրների առաստութիւնը, կեանքի բազմազան ու խայտաբղետ հոսանքի ցուցադրութիւնը, միւս անձերի տեղի թէ անտեղի, յարմար թէ անյարմար երևումները բաւականաչափ արդելք են հանդիսացել Միքայէլի դժուարին հոգեբանութեան ամփոփ արտայայտութեան ու ցանկալի լուսաբանութեան:

Անշուշտ, հեղինակը շատ բան է արել այդ բարդ հանգոյցը լուծելու համար, անկասկած նրա վերլուծումները շատ անթափանցիկ քօղեր են յետ քաշել առեղծուածային խնդրի վրայից... Այնուամենայնիւ, Միքայէլի կեանքը յուզիչ լինելով բանաստեղծօրէն, կատարեալ չէ հոգեբանօրէն...

Շիրվանզադէն «Քաօս»-ի մէջ արձանագրելով արդիւնաբերական քաղաքի անծայր ապականութիւնը և վեր հանելով սիրոյ չքնաղ ու գեղեցիկ ներգործութիւնը՝ շօշափել է նաև—հասարակական տեսակէտից—մի չափազանց հետաքրքրական խընդիր:

Գրքի վերջին մասում բեմ է դուրս բերել բանուոր դասակարգը և ներբողել է նրա մաքուր, ստեղծագործական աշխատանքը: Այդտեղ, աշխատանքի այդ միջազգային ընտանիքի մէջ բուրժուական կարգերի չարուցած Քաօսը տեղ չունի: Ոչ «շրջանների տարբերութիւն» կայ այդտեղ, ոչ «դրօշակների» այլազանութիւն, ոչ հակասութիւն, ոչ անդունդ: Ամենքն էլ երևում են այդտեղ մարդու անունով, ամենքն էլ ճգնում են անվախճան և ամենքն էլ շահագործւում են հաւասարապէս: Նրանց քրտինքը մէկտեղ է թափւում և նրանց իդէալները մէկ են: Զուպլրովը, Կարապետն ու Ռասուլը—

ռուսը, հայն ու լեզգին—եղբայր են այդտեղ և ո-գևորութեան ու հաւատքի միևնոյն աղբիւրներն ունին։

Անաօնինա Իվանովնան այս մարդկանց կեանքի հանդէպ՝ փոխում է իր ցեղային նախապաշարմունքները, անւում նոր գաղափարներով և նոր զգացմունքով։ Այդ ժողով օտարուհին դուրս է գալիս իր երկարատև ու ձանձրալի արգելարանից և սկսում գաղափարական գործ կատարել...

Շուշանիկը բարոյական դաստիարակութիւն է ստանում այդ միջավայրում և աշխատում է անխոխիր յանուն բոլոր ճնշուածների։ Սմբատը իր սկզբնական շրջանում և Միքայէլը իր վերածնուած միջոցին՝ տեսնում են այդ մարդկանց՝ ծանր տանջանքները և ձգտում օգտակար լինել նրանց...

Այսպէս. աշխատանքի հերոսները նոր ճանապարհներ են ցոյց տալիս առաքինի մարդկանց և համամարդկային նոր իդէալներ ներշնչում նրանց։ Բուրժուական կարգերի ստեղծած քաոսը պատում է այդ գաղափարների վսեմ ազդեցութեամբ և հոգիների վրայ ծանրացած բարոյական թմրութիւնը, ատելութիւնը, թշնամութիւնը հետզհետէ անհետանում են...

Շիրվանզադէն կամեցել է արտայայտել այն, թէ ինչպէս աշխատաւորի դառն քրտինքը արձագանք է տալիս բուրժուական միջավայրում և թէ ինչպէս այդ միջավայրի արատները երբեմն շակըւում են աշխատաւորական դասակարգի ներշնչած գաղափարներով։ Այս գաղափարների ծաւալումը և այս իդէալների ինքնայատուկ ներգործութիւնը բուն աշխատաւորական միջավայրում՝ «Քաօսի» նիւթ չէ դարձել և բնաւ չէ շօշափուել։ Զուպրովը, Կարապետը և Ռաուլը մեզ համար անյայտ մարդիկ են իրենց ներքին համակրութիւններով, իրենց բուռն յանկութիւններով և իրենց իդէալներով... Նրանք մութ, անորոշ զանգուածի պատահական ձայներն են միայն, առանց անհրաժեշտ պարունակութեան և առանց չօշափելի բովանդակութեան...

Իր յղացումով և իր գեղարուեստական իրագործումով Շիրվանզադէի «Քաօսը» աւելի լրիւ, աւելի ամբողջական, աւելի կատարեալ գործ է, քան «Արսէն Դիմաքսեանը»։ Բուրժուական քաղաքի այս *ահագին, խոշոր կեանքը* ներկայացել է մեզ հանդարտ, սահուն, դիւրութեամբ և անբռնազբօս։ Հերոինակը քայլում է նիւթի վրայ մեղմ, վստահ ու անխռով։ Այդ յախուռն ովկիանոսը նա վարում է վերևից. փոթորկուած, յուզուած ալիքները զբաղեցնում է առանց ճիգի և առանց ջղայնութեան։ Իր մի քանի թերութիւններով հանդերձ «Քաօսը»—իրրև արդիւնաբերական կենդրոնի լայնարձակ նկարագիր, իրր բարքերի և բնաւորութիւնների հարազատ արտայայտութիւն—միշտ պատուաւոր տեղ կունենայ հայ գրականութեան մէջ...

«Մ ե լ ա ճ ի ա»

Կնոջ ազատագրութեան խնդրի մէկ հետաքրքրքրական կողմն է շօշափուած այս վէպիկի մէջ։ Իրար հանդէպ կանգնած են ոչ թէ հոգեկան, բարոյական անհամաձայնութիւններ, այլ տարրերի, ֆիզիքական ոյժերի տարբերութիւններ.—բնախօսական անհամեմատութիւն եւ աննկարագրելի անհամաչափութիւն։

Նախատելու ոչ մի տեղ և ոչ մի իրաւունք

չունինք: Հեղինակները ազատ են կեանքի զանազան խնդիրները խորհրդածելու և ստեղծագործութեան նիւթ առնելու: Շերվանզադէն ուրիշ երեւոյթների քով դիտել է նաև այդ երեւոյթը, որ իրապէս նշանակալից է և ինքնատիպական ուշադրաւ:

Մեր հասարակական, մեր անտեսական կարգերի ազդեցութեան տեսակէտով՝ Մելանիան, իբրև կինը, իբրև ամուսին, իբրև անհատ արժանի է ուսումնասիրութեան:

Տասնեւօթ տարեկան դեռատի, գեղեցիկ, կրթուած աղջիկը—նիւթական անապահովութեան պատճառով—իր կեանքը կապում է քառասունհինգամեայ հարուստ ազամարդու հետ, որի նկատմամբ ոչ մի զգացում, ոչ մի հակում չունի: Աղքատ ծնողները «համոզում են»: Անմեղ, անփորձ Մելանիան համաձայնւում է: Հինգ տարի անցած՝ կինը հասունանում է, թարմանում, ֆիզիքական եռանդով լեցւում, իսկ ազամարդը ծերանում է, թառամում և ուժասպառւում: Կինը ապրել է ուզում, զգալ, յագենալ, ազամարդը արդէն վերադառնում է այդ բոլորից:

«Մարդ, դու ապրել ես ու համարեա վերջացրել կեանքդ, իսկ ես նոր եմ սկսում ապրել, հասկանո՞ւմ ես, նոր միայն: Չէ որ ես քսաներեք տարեկան եմ, ինչպէս ապրեմ քեզ հետ: Ի՞նչով ես ուզում ինձ բախտաւորացնել: Բազմաթիւ ծառաներո՞վ, այդ շքեղ տո՞ւն, թանգագին հագուստնե՞րով, ոսկիո՞վ ու քարերո՞վ:»

Եւ գեղեցիկ, մատաղահաս, առողջ Մելանիան կեանք չէ գտնում իր ծերացած, անզօրացած ամուսնու մօտ, երիտասարդական սէր չէ գտնում նրա սպառուած հոգու մէջ,—ու նրա օրերը խաւարում են իսպառ: Նա չէ դաւաճանում ամուսնուն, չէ խաբում նրան, չէ շահագործում նրա հարստութիւնը: Նա տանջւում է միայն իր առօրեայ սովորական տանջանքով, իր զուսպ խոհերով, որ թէև վեհ չեն ու հերոսական, բայց յամենայն դէպս օրինաւոր են ու յարգելի: Մեր կեանքում, մեր իրական աշխարհում քանիսնե՞րն են ազատ Մելանիայի խոհերից ու տանջանքներից. և այս մինչև իսկ այն մարդկանց շրջանում, որոնք գաղափարականի և հերոսի անուն ունեն և որոնք թւում թէ արհամարհում են արիւնի ճիչը...

Ծանդուտ և բարբարոս ամուսինը կամենալով յաւիտեան սեփականել երիտասարդ կնոջը՝ մտածում է նրա գեղեցկութիւնը աւերել: Եւ մի դժոխային գիշեր սուր մկրատն ու չարաշուք սրուակը ձեռքին՝ մօտենում է քնած Մելանիայի մահճակալին՝ շքեղ մազերը և սևաթոյր յօնքերը խլելու համար: Վայրենի ու բիրտ գործողութեան ժամին՝ արթնանում է դեռահաս կինը և սարսափահար միւս սենեակը փախչում՝ ազատելով յօնքերը միայն, իսկ հարուստ մազերը բարձերի ու յատակի վրայ թողնելով...

Եւ հետևեալ առաւօտեան հարուստ ու ցուրտ սպարանքների մէջ Մելանիայի ամուսինը այս նամակն է միայն կարդում: «Ես գնացի ծնողներիս մօտ, թողնելով ամէնը, ամէնը, մինչև անգամ ժօրժիկին: Ես ազատում եմ ոչ միայն գեղեցկութիւնս, այլ և կեանքս, Դուք կարող էիք ինձ սպանել: Իսկ ես ուզում եմ ապրել. զգալ ու ապրել... Մնացէք բարով...»

Շերվանզադէն այս վէպիկի մէջ հասարակների և փիլիքական ոյժերի տարբերութեան վրայ չէ ծնացել ընդմիշտ: Այն դրամատիկ դժբախտ, այն ընդհա-

բումը, որ նա ծաւալում է մեր առաջ և որ ծագում է երկու ամուսինների բնախօսական տարբեր կարողութիւններից, հետզհետէ տեղի է տալիս. և մենք տեսնում ենք երիտասարդ կնոջ հանդէպ ոչ թէ ծերացած տղամարդը, այլ սեռական կարողութիւնը կորցրած և միանգամայն անզօրացած ամուսինը: Այսպիսով դրուածքի կենտրոնական խնդիրը հանդիսանում է ոչ թէ տղամարդու ծերութիւնը, այլ պարզապէս անկարողութիւնը, որ բոլորովին տարբեր բան է և յամենայն դէպս չէ կարող շփոթուել առաջինի հետ: Վէպիկը պէտք է առաջ տարուէր կամ մէկ կամ միւս խնդրի շուրջը, որովհետև նրանցից իւրաքանչիւրը տարբեր դրութիւններ, տարբեր բնաւորութիւններ, տարբեր հոգեբանութիւն և տարբեր լուծումն հրահանգելու բնոյթն ունի:

Եթէ Շիրվանզադէն սեռական անկարութեան խնդիրը յարուցել է մեր հասարակական բարոյականութեան կշտամբանքներից խուսափելու և Մելանիայի պատասխանատուութիւնը իրը թէ նուազեցնելու համար—ապա պիտի նկատենք, որ այդ բոլորը կատարուել են իվնաս դրուածքի գեղարուեստական և հոգեբանական արժանիքներին: Այդպիսով Շիրվանզադէն խլել է Մելանիայից այն դրամատիքական և այն չափազանց հետաքրքրական հոգեբանութիւնը, որի մէջ նա եղել է և դրել է նրան մի անյայտ ու ծանծաղ միջավայրում:

Այս հիմնական վրիպումը մէկ կողմ թողնելով, նաև մէկ քանի փոքրիկ անհարթութիւններ մոռանալով՝ «Մելանիա»-ն ճնում է իրրև մի սիրուն վէպիկ: Իր մտածումով՝ ամփոփ և իր կատարումով՝ կանոնաւոր ու համաչափ...

VII

ԵՐՐՈՐԴ ՏԱՍՆԱՄԵԱԿ

Դրամաների շրջան և դրամատիքական գրականութեան ընդհանուր սկզբունքը.—«Արտիստը».—«Եւգինէ».—«Վարդան Ահրումեան».—«Ունէ՞ր իրաւունք».—«Պատուի համար».—«Հաւատարիմ ընկերներ».—Ջհուդի ականջը».—«Եղբայրասպան».—«Աւերակների վրայ».—«Կործանուածը».—«Արմենուհի»:

Այս տասնամեակում Շիրվանզադէն բաւական փոխում է իր գրական տեսակը: Եթէ մինչև այժմ նա երևան է եկել իրրև վիպասան, այսուհետև պիտի ներկայանայ իրրև թատերագիր, դրամատուրգ: Ճիշտ է, իր գործունէութեան երկրորդ տասնամեակում, 1891 թուականին ևս, բեմ է հանել «իշխանուհի» խորագրով մի դրամա, բայց այդ երկը մինչև օրս չէ տպագրուած և առայժմ գրականութեան համար գոյութիւն չունի:

Երրորդ տասնամեակում նա տուել է վեց դրամա և մէկ կատակերգութիւն: Վերջինս մէկ արարով և «Շառլատան» խորագրով մինչև օրս ոչ տպագրուած է և ոչ խաղացուած:

Դրամաներից բացի՝ Շիրվանզադէն այս տասնամեակում գրել է նաև ուրիշ երկեր, որոնց մէջ նշանաւոր է «Արտիստը»—մի գեղեցիկ և յուզիչ պատմուածք: Ապա այլ պատմուածքներ՝ «Հաւատարիմ ընկերներ», «Ջհուդի ականջը», «Եղբայրաս-

պան» և «Գաղափարի գերին»։ Վերջինս դժբախտաբար մենք չկարողացանք քննութեան նիւթ առնել։

Անշուշտ, այս պատմուածքները «Արտիստի» ոչ գեղարուեստական և ոչ հոգեբանական արժանիքները ունին։ Դրանք ամենևին չեն բնորոշում հեղինակին և բնաւ կարևոր դեր չեն կատարում նրա գրական դէմքը ընդգծելու համար։

Շիրվանզադէն այս շրջանում ունի նաև մի կիսատ վէպ, «Վարդան Աղբումեան» խորագրով, որ շատ հետաքրքրական գործ է և որ—եթէ այսպէս շարունակուէր—կարող էր պատուաւոր տեղ գրաւել նրա երկերի շարքում։

Մի կողմ թողնելով այս անկատար գործը և յուզիչ «Արտիստը»—կարելի է ասել, որ Շիրվանզադէի գրական յղացումները, խոհերը, երազները, հակազդեցութիւնները երբորդ տասնամեակում արտայայտուել են դրամաների մէջ։ Այս շրջանը դրամաների շրջան է...

Քսաներորդ դարի առաջին տասնամեակում Շիրվանզադէից բացի՝ դրամաներով են արտայայտում նաև մեր միւս գրողները։

Ա. Յարոնեան մի առժամանակ թողնում է իր պատկերներն ու վէպերը և դրամատիքական գրականութեան մօտենում։ Շանթ սկսում է դրամաների վրայ փորձել իր տաղանդը։ Վ. Փափազեան, Լեւոն Մանուէլեան, Սեդրակ Թաւոյեան և ուրիշներ այդ ճիւղի մէջ են յաճախ հանդէս գալիս։ Գրականութիւնը ասես հրաժեշտ է տալիս բանաստեղծութեան, վիպասանութեան և դիմում դէպի դրամատիքական տեսակը։

Մեր նիւթից դուրս է այս երևոյթի հասանական պատճառների և մերձաւոր բացատրութեան քննութիւնը։ Դա մի չափազանց բարդ խնդիր է և կարելի է ասել, տակաւին ոչ մի կերպ լուսաբանուած չէ։ Այսքանը միայն անհրաժեշտ ենք համարում նկատել, որ եւրոպական գրականութեան ազդեցութիւնից և ընդհանուր հոսանքներից զատ՝ կարևոր ներգործութիւն է ունեցել նաև մեր կեանքի հոգեբանական փոփոխութիւնը։

Ֆրանսիայի յայտնի փիլիսոփայ քննադատ, Ֆերդինանդ Բրիւնտիէը, այն տեսութիւնն է հաստատել և եռանդով պաշտպանել, որ դրամաների գոյութիւնը և զարգացումը սերտ կերպով կապուած է ժողովուրդների կամարտայայտութեան հետ։ Նրա ուսմունքի համաձայն՝ յունական դրաման ծագում է և բարգաւաճում այն ժամանակ, երբ յոյն ազգի կամքը հասնում է իր զարգացման գագաթնակէտին։ Սպանական, ֆրանսիական, անգլիական, գերմանական, նորվեգիական դրամաների մասին նա նոյն սկզբունքն է յայտարարում։ Հռչակաւոր քննադատը դրանով է բացատրում նաև այն հետաքրքրական հանգամանքը, որ արևելքում երբէք չզարգացաւ և չբարգաւաճեց դրաման։

Այս տեսակէտից, մի ուրիշ տաղանդաւոր քննադատ, Ժիւլ լը Մէտր, խօսելով ռուսական արուեստի մասին՝ ասում է թէ ռուսները վէպի ժողովուրդ են և ոչ դրամայի, և այդ այն պատճառով, որ ռուս մարդը կամքի զօրեղ արտայայտութիւն չունի։

Ձմանելով մանրամասն քննութեան և ընդդիմախօսութեան մէջ՝ մենք պիտի համաձայնուենք այս տեսութեան հետ գէթ ընդհանրապէս և պիտի ընդունենք, որ իրօք կամքի զօրեղ արտայայտու-

թիւնը բաւական դեր է կատարում դրամատիքական ստեղծագործութեան մէջ։

Մեսրոպին հիմնելով նոր դրամ՝ան, ընդգծելով նրա ուրոյն փիլիսոփայութիւնը և գեղեցկօրէն պաշտպանելով նրա տեսական հիմքերը՝ ըստ էութեան չբացատրեց կամքի արտայայտութիւնը և դրամատիքական գործողութիւնն ու շարժումը։ Նորագոյն դրամայի տաղանդաւոր ստեղծողը այս սկզբունքները դրսից տարաւ դէպի ներս, արտաքին անհրաժեշտութիւնից դարձրեց ներքին անհրաժեշտութիւն։

Այսպէս. կամքի գործունէութիւնը դրամատիքական արուեստի հիմք ընդունուեց։

Անհրաժեշտ չէ, անկասկած, որ դրամայի զարգացումը ճշտապէս զուգադիպուի ժողովրդական կամքի լարման հետ, նոյնանայ նրա մեծագոյն աստիճանին։ Կարող է պատահել որ այդ արտայայտութիւնը միաժամանակ զուտ, մաքրուի, ամբողջանայ և յետոյ միայն արձագանք գտնէ բանաստեղծի հոգում։

Արդ, վերջին շրջաններում մեր հասարակութիւնը իր ներքին կեանքով, իր ներզործօն բնաւորութեամբ զուրկ չէ եղած կամքի ուժգին արտայայտութիւնից։

Նոր քաղաքակրթութեան, նոր գաղափարների, անտեսական, հասարակական նոր կարգերի անհրաժեշտ արդիւնքն է դա։ Կեանքը զարգանում է թափով, մարդկային յարաբերութիւնների անիւը թաւալում է շտապ և յախուռն։ Պահանջները միջոց չեն տալիս մարդկանց դանդաղելու, ծուլանալու, փոխուում է նաև կազմն ու դասաւորութիւնը և անհատը հետզհետէ դառնում է աւելի հա-

մարձակ, աւելի ձեռնարկու, աւելի բողոքող, աւելի կամքոտ։

Ընտանիքում թէ հասարակութեան մէջ այս կամքը աւելի շեշտուած ձեով է հրապարակ գալիս, զարկում շրջակայ խոչընդոտներին և դրամատիքական դրութիւն ստեղծում։

Մարդը պայքար է սկսում բոլոր այն պատնէշների դէմ, որոնք կամենում են խանգարել նրա ընթացքը...

Շերլանդպադէի երկերի և առհասարակ մեր գրականութեան ձևի փոփոխութիւնը թերևս բաւականաչափ այս իրողութիւնից է սկզբնաւորում...

«Արիսը»

Անուրջների և հոգեկան վսեմ ձգտումների եթերային զաւակն է նա, որ սահուն կարօտով ոտքոնում է աստուածային երջանկութիւնը, բուռն ոգևորութեամբ ընկնում նրա յետևից և խեղդւում այդ դժուարին ճանապարհի վրայ, իր մեծ յոյզերի և իր մատաղ թախիծի մէջ...

Այդ տանտիրոջամայ պատանին, այդ նուրբը, համակրելի, մելամաղձոտ Լևոնը մի չափազանց բարդ հոգեբանութիւն ունի. վճիտ, յստակ, ջինջ և խորունկ միաժամանակ. հասկանալի, թափանցիկ, մատչելի և առեղծուածային միանգամայն։ Նա զգայուն է, որպէս դալար ոստը, բուռն՝ որպէս գեղեցիկ արշալոյսը, վսեմ ու խորհրդաւոր՝ որպէս ամպային վերջալոյսը կապուտակ լճերի վրայ և մութ ու հեռաւոր՝ որպէս վեհ պիշերը սաղարթախիտ պարտիզի մէջ...

Լևոնի կեանքը մեր երազող մարդկութեան

եղերական կեանքն է: Նրա դժբախտ ճակատագիրը մեր ցնորքների, մեր յոյսերի, մեր տենչանքների արիւնոտ վախճանն է:

Շոգենաւի տակ խորտակուած գոյութիւնը՝ միայն այդ գեղեցիկ պատանու տրտում գոյութիւնը չէ: Այդպէս են մեռնում բոլոր նրանք, որոնք ձգտում են անհունապէս աւելի, քան թէ աշխարհը կարող է հանդուրժել: Այդպէս են մեռնում բոլոր նրանք, որոնք չեն բաւականանում մեր առօրեայ, չոր, անհրապոյր իրականութեամբ և կամենում են արևին մօտենալ, աստղերին հասնել...

Շիրվանզադէի այս պատմուածքի մէջ մի քընքոյշ բանաստեղծութիւն կայ. մեղմ, տրամադրող, յուզիչ, բայց և միաժամանակ խորապէս տխուր ու հեծեծող:

Վսեմ և չափազանց յուսահատական է Լևոնի կեանքը: Գեղարուեստի խենթ սիրահարն է նա. զգում, ապրում, շնչում է միայն պօէզիա: Ո՛չ կանոնաւոր կրթութիւն ունի, ո՛չ նիւթական միջոց և ո՛չ իսկ առողջութիւն: Մի թշուառ այրիի որդի է, որին սիրում է անկեղծօրէն և որի կեանքը հոգում է իր աննշան աշխատանքով:

Միշտ թաւարոնում է, միշտ առաջինն է ծափահարում և միշտ էլ իր յետքից քաշ է տալիս անհամարձակ ամբոխը: Նրա ուղիղ զգացումը և նուրբ հոտառութիւնը բնաւ չէին սխալւում արուեստներին գնահատելիս: Լևոն այդ խնդրում աւելի բարձր էր և աւելի գիտակից, քան երաժշտապէս կրթուած հասարակութիւնը, որ միշտ վարանում էր նոր երգչի առջև:

Նա գեղարուեստի բնածին շունչն է և նրա պայծառ հոգին:

Այս նկարագրով, այս տարիքով, այս հասա-

րակական-տնտեսական դիրքով և այսպիսի փոթորկուած հոգով՝ սիրում է երգչուհի Լուիզային: Այս զգացմունքի մէջ տանջւում է, յուզւում, գալարւում, բայց և միշտ իրան արժանավայել պահում: Միշտ կանոնաւոր, անվրէպ շարժուձևերով, միշտ կոկ, կիրթ ու հարթ վերաբերմունքով:

Լուիզան սիրում է նրան իբրև լաւ ալատանու: Եւ երբ ճանապարհւում է դէպի Իտալիա երաժշտութեան մէջ կատարելագործուելու նպատակով՝ հրաժեշտի ժամանակ համբուրւում է Լևոնի հետ, եղբայրօրէն ու բարեկամաբար...

Այնուհետև Լևոնի կեանքը դառնում է մի անծայր թախծութիւն: Ապրում է նա մի անբըջական գաղափարով, փայփայում է նա մի դողդոջուն յոյս: Պէտք է աշխատէ, ամեն կերպ չարչարուէ, պէտք է դրամ վաստակէ, որպէսզի կարողանայ գնալ հեռու Իտալիա, տեսնել չքնաղ Լուիզային, նուիրուել պաշտելի գեղարուեստին: Եւ այս նպատակի համար աղքատ, անօգնական պատանին գերմարդկային ճիգեր է գործ դնում: Նկատեցէք, որ այդ խռովեալ վիճակում և այդ ցաւոտ յոյզերի մէջ՝ նա երբէք չէ մոռանում իր մօրը, իր թանգագին ծնողին: Լևոն Իտալիա պիտի երթայ մօր հետ միասին: Նա նրան միակ և անմխիթար երբէք չի թողնի: Նա նրան միշտ պիտի խնամէ ու հոգայ: Անհատական բուռն, խելագար, յաղթուն ցանկութիւնների ժամին անգամ նա թէկուզ մի վայրկեան չէ դժգոհում այդ ծանր պարտականութեան հանդէպ:

Լևոն առաքինի զգացմունքներ ունի, նա էապէս բարոյական մարդ է:

Դժոխային պայմանների մէջ աշխատում է ճանապարհածախսի և մի փոքրիկ ապրուստի հա-

մար։ Ամեն օր մանգօլինն առած գնում է նաւահանգստի բանուորների համար նոյագելու։

Գարեջրի, օղիի, կեղտի ու մրի, հայհոյաբանների և հարբեցողների այս փոքրիկ միջավայրում Լևոն չէ կորցնում հոգու մաքրութիւնը։ Այդ շրջանը, ճիշտ է, դժբախտ պատանում վրայ իր որոշ կնիքը դնում է. նրա արախտական ձևերը, կիսթ շարժումները մասամբ անհետանում են, բառարանի մէջ հայհոյական բառեր են մտնում, բայց միշտ մնում է ազնիւ, բարոյական ու վեր սլացող։ Եւ երբ հարիւր յիսուն րուբլին արդէն պատրաստած՝ մտածում է կարճ ժամանակից ճանապարհ ընկնել դէպի երազած ափերը — մի դժոխային դիշեր յարձակման է ենթարկւում և ամբողջապէս կողոպտւում։ Լևոնի վիշտը սարսափելի է։ Կեանքի բիրտ հարուածը այդ անմեղ պատանու վրայ՝ մեզ ցնցում է մինչև արտասուք, մինչև անսահման խռովութիւն։

Շերվանզադէն այնպիսի համակրութիւն է ստեղծել ընթերցողի մէջ դէպի իր մանուկ հերոսը, որ մենք հևիհև հետևում ենք նրա կեանքին, ուրախանում նրա յաջողութիւններով և ըմբոստանում նրա ձախորդութիւնների հանդէպ։ Լևոնը ամբողջութեամբ հաղորդւում է մեզ, մենք նրան հասկանում ենք, մենք նրան տեսնում ենք պայծառ ու յստակ, մենք հոգեպէս ձուլւում ենք նրա հետ և նրան սիրում անկեղծօրէն։

Կորուստից յետոյ՝ ազնիւ պատանին նորից աշխատանքի է ձեռնարկում։ Լուիզան և Իտալիան — նրան սիրտ են տալիս, խրախոյս, քաջալերութիւն...

Այս անձնանուէր ու երազկոտ մտահոգութեան մէջ՝ յանկարծ լուր է հասնում, որ Լուիզան ամուսնացել է։ Լևոնի վիշտը այժմ անյատակ է, խորունկ, սրտառուչ։ Պատանին իր գերագոյն սըրտմաքուր ժամին անգամ քաղաքավարութիւնն ու հպարտութիւնը չէ մոռանում, գնում է Լուիզայի մօրը շնորհաւորելու և այնտեղից դէպի Սև ծով — իր հսկայ ցաւը նրա պղտոր ալիքներին յանձնելու։

Շերվանզադէի այս պատմուածքը գրուած է անմիջական, անկեղծ տրամադրութեամբ, ինքնաբուխ ու տաք ոգևորութեամբ։ Նա կարողացել է քնքուշ, ազնիւ, երազող ու մրմնջացող հոգին կլորուկ և ամփոփ ներկայացնել։ Երկի կենտրոնական անձը իր գունատ ճակատով, իր փոթորկուած խոզճով, իր վսեմ իդէալներով մեկէն պատկերանում է ընթերցողին։

Այս պատմուածքը ուրիշ նպատակ չունի — ոչ հասարակական կեանք, ոչ միջավայրի նկարագրութիւն, ոչ բարքերի արձանագրութիւն։ Լևոնի յոյզերն ու ձգտումներն են նրա միակ նպատակը։ Եւ այս տեսակէտից, մեզ թւում է, որ հեղինակը չըպիտի ծանրանար շրջապատի նկարագրութեան վրայ։ Բանուորների կոպիտ ուրախութիւնները մանաւանդ, նրանց հայհոյանքները, նրանց հարբեցողութիւնը մեզ անհրաժեշտ չեն երևում։ Անկասկած, Լևոնը չէր կարող օդի մէջ ապրել. նա պիտի տեղաւորուէր տարածութեան մէջ և պիտի շարժուէր որոշ միջավայրում։ Բայց, մեր կարծիքով, այդ միջավայրի նկարագրութիւնը չպէտք է այնքան չափազանցուած լինի, որ գրուածքի կենտրոնական տոնը, հիմնական եղանակը իր վրայ ընդունէ։ Նաւահանգստի բառական ձգձգուած տեսարանը մեզ մոռացնել է տալիս Լևոնի հոգին և տանում է դէպի գործաւորների բարքերը, որ բնաւ հարկաւոր չէ։ Այնտեղ հոգերան Շերվանզադէն կանգ է առնում և վարքագիրը, ռէալիստ Շերվանզադէն է խօսում։ Մինչդեռ փոքրիկ պատմուածքի

և գերազանցապէս ամփոփ պատմութեան մէջ կարելի էր և անհրաժեշտ էր մէկդի թողնել իրական դպրոցի պահանջներից մէկը—շրջապատի մանրամասն ցուցադրութիւնը: Երկի գեղարուեստական և հոգեբանական կողմը անպատճառ շահ կուգենար այդ խուսափումի մէջ...

Շիրվանզադէի «Արտիստը» իր թերութիւններով հանդերձ՝ շատ շնորհալի և շատ յուզիչ գործ է: Ընթերցողը նրա իրական, անուրանալի արժանիքների համար սիրով մոռանում է սուուերապատ կողմերը: Այն անկեղծ տրամադրութիւնը, այն խոր ունկ թախիծը, այն մաքուր զգացումները լիովին բաւական են, որ ամենախստապահանջ մարդն անգամ գոհանայ Շիրվանզադէի այս պատմուածքից: «Արտիստը» գեղեցիկ յղացման, աշխի մտածման և յաջող իրագործման արդիւնք է: Նուրբ հոգեբանութիւնը, քնարաշունչ բանաստեղծութիւնը և թախծալի փիլիսոփայութիւնը մի բացառիկ տեղ են յատկացնում նրան Շիրվանզադէի երկերի մէջ:

«Ե ւ գ ի ն է»

Իր գործունէութեան երրորդ տասնամեակում և գլխաւորապէս դրամաների մէջ, Շիրվանզադէն մանաւանդ ուշադրութիւն է դարձնում հայ ընտանիքի կեանքին: Ամուսինների յարաբերութեան հարցը, ընտանեկան բարոյականութեան խնդիրը, զաւակների և ծնողների փոխադարձ կապերը նրան բաւական զբաղեցնում են:

Հասարակական և վարչագրական այն լայն պրօբլէմները, որոնցով ներշնչուել է նա իր ստեղծագործութեան առաջին և երկրորդ տասնամեակներում, այստեղ զուտում են, բաժանւում առանձնանում և իրրև անջատ խնդիրներ հրապարակ գալիս: Ձևի, գրական տեսակի փոփոխութիւնը անհրաժեշտաբար առաջ է բերում և բովանդակութեան փոփոխութիւն: Այժմ վէպը չէ նրա յղացումների վերջնական կաղապարը և արտայայտութեան շրջանակը: Հասարակական կեանքի ընդարձակ նկարագրութիւնները, բարքերի լայն ցուցադրութիւնը տեղ չեն կարող բռնել պատմուածքների և դրամաների մէջ: Այստեղ կամ իրականութեան մի կտորն է ցուցահանւում և կամ մէկ անկախ պրօբլէմն առաջադրւում. .

«Եւգինէն» կնոջ ազատագրութեան և հասարակական հաւասարութեան մի բնորոշ կողմն է շօշափում: Հասարակութիւնը ներում է, և խրախուսում անգամ, տղամարդկանց ամուրիութեան բոլոր յանցանքները, բոլոր կեղտերը: Ընտանեկան մաքրութեան տեսակէտից անհրաժեշտ չէ համարւում տղամարդու ժուժկալութիւնը, սեռական ողջախոհութիւնը մինչև ամուսնութիւն: Մինչդեռ նոյն հասարակութիւնը անարգանքի սիւնին է գամում այն թշուառ աղջկան, որ անփորձ տարիքում հետապնդող գայթագղութեան առջև անզօր, վայրկենաբար կորցնում է գիտակցութիւնը և ակամայ «բծաւորում» իր պատիւը: Շիրվանզադէն ըմբոստանում է այս բացարձակ անարդարութեան դէմ և հասարակութիւնից պահանջում աւելի մալդասէր, աւելի ներողամիտ վերաբերմունք դէպի կանանց «սխալները»...

Եւգինէի հեռաւոր անցեալում այդպիսի մի ակամայ, միանգամայն չգիտակցուած «յանցանք» կայ: Այժմ նա կին է արդէն, չափազանց սիրում է իր ամուսնուն – Ալվերդեանին, փոխադարձաբար

սիրուած է նրանից... բայց անցեալի այդ սխալը հանգիստ չէ տալիս նրան, միշտ խայթում է դեռահասի կնոջ վրդովուած խիղճը:

Եւգինէն բարոյական պարտք է զգում իր սխալի մասին պատմել ամուսնուն: Վերջինս լսում է այդ դառն, ցնցող եղելութիւնը, միաժամանակ խորտակւում անակընկալ ցաւի ազդեցութեան տակ, ապա ոյժերը հաւաքում և հերոսաբար հաշտւում ականջ սխալի հետ: «Դու պէտք է ինձ համար իմ տանը հէնց ինձ բժշկելու համար... Համոզմունքով ներեցի, սիրով կըմոռանամ», արտասանում է Եւգինէի ամուսինը և խանդաղատանքով ու կարեկցութեամբ գրկում նրա գլուխը...

Հոգեբանական տեսակէտից այդ զղջումն ու խոստովանութիւնը և այդ ներումն ու մեծահոգութիւնը բաւականաչափ հարթ և համոզիչ ձևով չեն երևան գալիս:

Եւգինէն սկզբում չէ սիրել Ալվերդեանին: Նրանց մէջ փոխադարձ խոստովանութիւն տեղի չէ ունեցել: Երիտասարդ աղջիկը, աղքատ պինուրականի որը զաւակը, համաձայնելով մօր խորհուրդներին, ընդունել է Ալվերդեանի առաջարկը: Հարկաւ, չենք կարող պահանջել որ Եւգինէն տակաւին չամուսնացած իր ամբողջ անցեալը պատմէր, ինքնաբերաբար, առանց որևէ բարոյական ստիպողական հանգամանքի:

Այդ ամուսնութեան նկատմամբ նա անտարբեր է եղել: Ամենևին չէ ապրել, չէ ներշնչուել գերագոյն զգացմունքներով: Ամեն ինչ կատարուել է, իբրև մի առօրեայ, սովորական պայմանագրութիւն: Եւ Եւգինէն ամուսնացել է «քնած դիտակցութեամբ» և «թմրած խղճով»...

Մինչև այստեղ գոնէ մենք չենք վստահանում

ասելին պահանջել: Այստեղ, սակայն, երբ Եւգինէն սիրում է իր ամուսնուն և երբ ինքը նրա պաշտամունքի առարկան է—թւում է թէ այլ ևս դաղտնիք չպիտի մնայ երկու էակների միջև: Զըզջումը, խոստովանութիւնը, եղելութեան ցուցադրութիւնը նրա բարոյական պարտականութիւնն է: Եւ այդ բանը պիտի կատարուի ինքնաբուխ կերպով, անմիջականօրէն, առանց որևէ արտաքին հարկադրութեան, առանց որևէ նիւթական շարժառիթի: Ամեն ինչ պիտի սկզբնաւորուի Եւգինէի հոգուց և ամեն ինչ պիտի ելնէ ուղղակի կերպով նրա բարոյական էութիւնից: Այլապէս արտաքին որևէ դրդիչ կատաղութեամբ Եւգինէի խիղճը և կը նախմացնէ նրա հոգու ամբողջութիւնը...

Շիրվանզադէն, սակայն, դրաման չի զարգացրել այս ճանապարհով և այս ուղղութեամբ առաջին գործողութեան մէջ նա դրել է ինչ որ տիկին Արաբաջեանի պատմութիւն, որի անցեալը բոլորովին նման է Եւգինէի անցեալին, որ ամուսնու կշտամբանքներից և խստութիւններից ազատուելու համար ինքնասպանութիւն է գործում և որի մասին խօսում են ամենուրեք, նաև մամուլի էջերում:

Բացի սրանից, բաւական շեշտուած կերպով ներկայացնում է տիկին Գալամքարեանի հետաքրքրութիւնը և անյարմար հարցերը Ալվերդեանին՝ թէ ինչպէս կը վարուէր վերջինս, եթէ Եւգինէն լինէր մի տիկին Արաբաջեան: Անշուշտ այս կատաղած հարցերի և այս բաւական անտեղի հետաքրքրութեան իմաստը չէ խուսափում Եւգինէից:

Ապա երևում է նաև հին գայթակղիչը, որին ինքը տարուց ի վեր պատահած չէ և որի հետ Եւգինէն ունենում է մի երկար խօսակցութիւն: Այս

տեսարանը և այս երևոյթը, մեր կարծիքով, դրամայի անյարմար տեղերից մեկն է։ Եւգինէն այդքան երկար չպիտի կարողանար տեսնուել մի մարդու հետ, որ նրա խորունկ տանջանքների և անարգանքի պատճառ է եղել և որին նա ատում է ամբողջ հոգով։ Զպիտի խօսէր մանաւանդ այնպիսի ներքին և փափուկ խնդիրների մասին. խնդիրներ, որ փոթորկում են նրա խիղճը և ալեկոծում նրա հոգին...

Այս բոլորը դրամայի հետ ուրիշ օրգանական կապ չունին, բայց եթէ այն, որ արագացնեն խոստովանութիւնը և վերջնականապէս որոշեն զրոյման անհրաժեշտութիւնը։ Իսկ այդ հանդամանքը—արտաքին դէպքերի այդքան նիւթական, այդքան շօշափելի միջամտութիւնը—բաւականաչափ ստուերաւորում է Եւգինէի հոգու անբծութիւնը, անմիջականութիւնը և ինքնաբխութիւնը։ Անհրաժեշտ էր, որ ներքին գործօններից և միանգամայն անհատական հիմքերից առաջանար Եւգինէի խոստովանութիւնը...

Միհրանի ներումը ևս, որքան մենք ենք կարծում, հարթ ու հոգեբանօրէն գեղեցիկ պայմաններ մէջ չէ դրուած։ Դժբախտ ամուսինը ծանր անակընկալի ազդեցութեան տակ մի րոպէ կորցնում է ինքն իրան, յարձակւում վայրկենաբար Եւգինէի վրայ և ապա իսկոյն հասկանում՝ թէ «գազանը պէտք է զսպել...» Այնուհետև, երրորդ գործողութեան մէջ, մենք նրան տեսնում ենք տանջուելիս և պայքարելիս։ Այս տանջանքը և այս պայքարը նա միայնակ չէ կարողանում տանել։ Հեղինակը ամբողջովին չէ կենդրոնացել Միհրան Ալվերդեանի հոգեկան, ներքին փոթորիկների և ոյժերի վրայ։ Այստեղ օգնութեան են հասնում Վարսամեանի—նրա բարեկամի և աղգականի—խորհուրդները։ Օգնութեան է գալիս նաև մի ինչ որ մեքենապետի պատմութիւն, որ իր կնոջը վերադարձնելէն ներել է, անգամ նրա բացարձակ անառակութեան առջև, «չկամենալով հեշտութեամբ զրկուել երջանկութիւնից։» Աշխատանքի մարդիկ և փիլիսոփաները մոռանում են իրենց վիշտը—եզրակացնում է Միհրան և հաշտւում Եւգինէի ցաւոտ անցեալի հետ։

Մեզ թւում է, որ այս արտաքին դրդիչները բաւականաչափ գեղեցիկ չեն և համոզիչ։ Ո՛չ Վարսամեանը և ո՛չ մեքենապետի դէպքը չունին այն գրաւչութիւնը և այն տիրական ազդեցութիւնը, ինչ որ, օրինակ,—գիժ-Դանէլի անձնաւորութիւնը «Ցաւագար»-ի մէջ։ Այնտեղ Մուրադ վերջնականապէս սրտապնդւում է ու ամրանում իր համակրանքի և իր սիրոյ մէջ դէպի ընկնաւոր Սօնան, գիժ-Դանէլի կախարդիչ, ցնցող, վսեմ ու յուզուճալից անձնաւորութեան ու պատմութեան առջև։ Այստեղ հեղինակը Միհրանին խրախուսելու և քաջալերելու համար, պէտք զգալով արտաքին միջամտութեան, չէ կարողացել սակայն այդ միջամտութեան, վեհութիւն, գեղեցկութիւն հաղորդել։—Այնպէս որ, արտաքին այդ գունատ դրդիչները կարող էին նաև չլինել ու Միհրան կարող էր «գաղափարների և իրականութեան խորխորատն անցնել» իր ներքին ոյժերով և իր ներքին անդիմադրելի պահանջով...

Դրամատիքական և բեմական արուեստի տեսակէտից ևս այդ մասերը—տիկին Աբաբաջեանի և մեքենապետի միջանկեալ պատմութիւնները—բախտաւոր հանդամանքներ չեն։ Նրանք բաւական դանդաղացնում են գործողութիւնը, թէ ներքին և թէ արտաքին շարժումը և երկին վիպական ընոյթ

են տալիս։ Հանդիսականը դործողութեան վոխադրչն բեմի վրայից լսում է երկար պատմութիւններ, խորհուրդներ, ճառեր, որոնք թերևս շատ հետաքրքրական լինէին վէպի մէջ, բայց և որոնք չեն համապատասխանում դրամայի պահանջներին։

Շիրվանզադէի «Եւգինէն» ընթանում է հեղինակից նախապատրաստուած ուղղութեամբ և գծով։ Անհս, դէպքերը, կարևոր իրողութիւնները կատարում են ոչ թէ իրենց հոգեբանական անհրաժեշտութեամբ, այլ նրա համար, որ առաջ բերեն հեղինակի կամեցած հետևանքը։ Առաջին գործողութեան մէջ մի քանի մասեր զուրկ են բնականութեան անվիճելի յատկութիւններից և կրում են պարզապէս բնազրօսիկ արտայայտութիւն։ Եթէ հաշուենք տիկին Աբարաչեանի ինքնասպանութեան պատմութեան հետ—որ բռնում է այդ գործողութեան մի չորրորդը—դժուարութեամբ են մոռացւում այն ըստ ամենայնի անտեղի և անտուղր հետաքրքրական հարցերը, որոնք ուղղւում են Միհրանին ամեն անկիւններից, մանաւանդ տիկին Գալամքարեանի կողմից։

Եւգինէին ներկելու համար հեղինակը Միհրանի գաղափարների և համոզմունքների վրայ շատ է շեշտել։ Թւում է թէ, մի ուրիշը, եթէ Ալվերդեանի աշխարհահայեացքը նախապէս չունենար, այդպիսի զօրեղ անակընկալի առաջ կբխորտակուէր և կբհեռանար իր կնոջից։ Մինչդեռ խնդիրը վերաբերում է ոչ այնքան աշխարհահայեացքին, որքան սիրուն։ Վերջինս, սերը, եթէ շատ ուժեղ է և խորին՝ իր կողմից աշխարհահայեացք է ստեղծում և «գաղափարների» պատճառ դառնում։ Մարդիկ գործում են ոչ այնքան իրենց բանականութեամբ, որքան իրենց զգացումներով։

Շիրվանզադէի այս դրաման—չնայելով իր մի քանի հիմնական բացերին—զուրկ չէ ակնյայտնի առաւելութիւններից։ Երկրորդ գործողութեան մեծ մասը և երրորդի վերջին մասը գրուած են ոգևորութեամբ և զգացմունքով։ Այդտեղ հեղինակը հանդէս է բերել դրամատիքական և բեմական շնորհք, որ յետագայում աւելի պիտի զարգանայ և աւելի յաջող, աւելի ամբողջական երկեր արտադրէ։

Իր հիմնական դաղափարով «Եւգինէն» չէ քարոզում անշուշտ այն տարօրինակ միտքը՝ թէ պատանի աղջիկները ևս կարող են և իրաւունք ունին մինչև ամուսնութիւն «սխալներ» և «յանցանքներ» գործել։

Շիրվանզադէի այդ դրաման բողոքում է հասարակական անարդարութեան և աղաղակող անհաւասարութեան դէմ և պահանջում է, որ նեղման արժանանան առաքինի կանանց ակամայ սխալները և անգիտակից յանցանքները, եթէ միայն գոյութիւն ունին...

«Վարդան Ահրումեան»

Այս հետաքրքրական գործի մասին մենք դժբախտաբար չպիտի կարողանանք քիչ աւելի երկար խօսել. ինչպէս ուրիշ առիթով ասել ենք՝ Շիրվանզադէն անկատար է թողել այդ ուշագրաւ վէպը... Առաջին մասում պատմւում է վաճառականի Բաղդասար Ահրումեանցի կեանքը, նրա սարսափելի ու դժնդակ մահը, նաև Վարդանի ծնունդը և մանկութիւնը՝ մինչև տասնուչորս տարեկան հասակը։ Տաղանդով ու գեղեցիկ արուեստով նկարագրած է ժլատ վաճառականը, անմատչելի, ժանտ,

մարդատեաց: Մէկը, որ խոյս է տալիս հարևաններից,ատում է ազգականներին, որ բարեկամներ չունի և չի էլ կամենում ունենալ: Մի անսիրտ, անհոգի մարդ, որ բռնակալ է տանը, որ ատում է կնոջը և որի մօտ զոքանչն ու քենիները սարսափով են մտնում, անգամ կնոջ ծննդաբերութեան օրերին: Լաւ է նկարագրուած նաև Վարդանի մանկական խեղաթիւրուած հոգին, Բաղդասարի ազգասիրութիւնը, ժառանգական փողասիրութիւնը, ընտանեկան վատթար դաստիարակութիւնը: Մի մանուկ, որ յուզւում էր զրամների ախորժալուր ձայնից, որ կրծքին ամուր սեղմում էր իր փողի տուփը, որ մեռաղի աչքև կորցնում էր դէմքի բովանդակ անմեղութիւնը և վաղուց ընչասիրութեան անախորժ հրով:

Մի երեխայ, որ դպրոցում թէ տանը հետաքրքրւում է միայն զրամական խնդիրներով, որի ուղեղը թուերով ու հաշիւներով է միայն զբաղուած և որ վաղ մանկութիւնից սկսած կամենում է շահագործել ամենքին, մանաւանդ իր դպրոցական ընկերներին:

Սարսափելի է և տարօրինակօրէն յուզիչ Բաղդասարի մահը. մի վախճան, որ առաջանում է զրամական կորստից և նրա պատճառած անհուն վշտից:

Սոսկալի է հայրական պատուէրը և դժնէ անէծքը, որով մեռնողը կտակում է որդուն, տասներեքամեայ Վարդանին՝ գայլ լինել, ոչ ոքի չհաւատալ, ուտել ամենքին, հարստանալ, սովամահ անել իր հարստահարիչ Աբրահամի զաւակներին, փողոց նետել, թքել երեսներին... «Երդուիր, որ կկատարես իմ վերջին խօսքը, իմ աւանդը, ապա թէ ոչ ոսկրներս գերեզմանից կանիծեն քեզ:» Այս մահաբոյր տեսարանը, որպու լուռ ու հանդիսաւոր

համաձայնութիւնը, մօր սարսափը շատ լաւ է արտայայտուել վէպի մէջ... Եւ այսպէս, այս դժոխային դաստիարակութեամբ ու ժառանգականութեամբ, ապագայի մեծ ծրագիրներով, մեծ յոյսերով, վրէժխնդրութեան կրակը սրտում՝ Վարդան Աղրամեանը թողնում է իր թշուառ մօրը և հեռանում Բագու:

Շիրվանզադէի այս ընդհատուած գործը ուժեղ տպաւորութիւն է թողնում: Վէպի մէջ պատմուած բոլոր իրողութիւնները իրականութեան ճըշդրիտ նկարագիրը չեն, անկասկած: Փիլիսոփայութիւն է, շիշատուած, թանձրացած երդիծաբանութիւն: Հեղինակի նկարագրած անբնական, անսովոր երեւոյթներն ու դէպքերը պէտք է ընդունել իբր խորհրդանշան, իբր սիմվոլ: Գոյների խիտ տուեալորումը, պատկերների չափազանցեալ ուժգնութիւնը, գրուածքի տարկանոնութիւնները (anomalie) վրիպումների արդիւնք չեն և ոչ էլ հոգեբանական սայթաքումների հետեւանք: Նրանք բնաւ հակադարուեստական չեն:

Շիրվանզադէի այս վէպը պարզ, վճիտ, ուժեղ կերպով ներկայացնում է հոգիների աւերմունքը՝ դրամից և նրանի պաշտամունքից...

«Ուրի՞ր իրաւունք»

Դրամատիկական և բեմական արուեստի տեսակէտից այս երկը աւելի յաջող է քան «Եւգինէն»: Շարժումը, գործողութիւնը, խօսակցութիւնների հակիրճութիւնը և ամփոփումը, պայքարի կենդրոնացումը, բնաւորութիւնների խտացումը, նիւթի հաւաքումը այստեղ համեմատաբար աւելի

լաւ է իրագործուած։ Այս դրամայի մէջ էլ, սակայն, առաջուց նախապատրաստուած է վերջնական լուծումը և դէպքի ընդհանուր ընթացքը։ Ինչպէս «Եգիպտէի» տակաւին առաջին գործողութեան մէջ պարզ էր երկի վախճանը, այնպէս էլ այստեղ, ընթերցողը նախապէս գիտէ արդէն, որ Հերսէլին չպիտի դիմանայ իր ամուսնու անհամապատասխան միջավայրում և պիտի հեռանայ նրանից։ «Ունէ՞ր իրաւունքը»-ը «Մելանիա» վէպիկի աւելի կատարեալ, աւելի լրիւ, աւելի իդէալական ձևափոխութիւնն է։

Դրութիւնները, վիճակները բաւական նման են միմեանց։ Մելանիան տասնեօթ տարեկան հասակում, ծնողների խնդրանքներին և «համոզիչ» բացատրութիւններին զիջանելով՝ համաձայնում է հարուստ և տարիքաւոր Սամսոնի կինը դառնալ։ Հերսէլին նոյնպէս, նոյն տարիքում և նոյն պայմանների մէջ ամուսնանում է յայտնի կալուածատէր և «զանազան առևտրական ընկերութիւնների անդամ» Անտոն Բէգմուրեանի հետ։

Սամսոնի և Անտոնի գծերը, նրանց բնաւորութեան ընդհանուր կողմերը համարեա թէ նոյնն են։ Երկուսն էլ չափազանց գոհ են, որ տէր են գեղեցիկ, առողջ, թարմ մարմինների։ Երկուսն էլ տարիքաւորի նեարդայնութեամբ և որոշ կասկածամտութեամբ սիրում՝ են իրենց երիտասարդ ամուսիններին։ Երկուսն էլ գռեհիկ, կոպիտ, բռնակալ են դառնում, երբ համոզւում են, որ սիրով և բարութեամբ չեն կարող գեղեցիկ կանանց յամառութիւնը կոտրել և սիրտը գրաւել։ Սամսոնը թուն աւոր հեղուկով—ցաւագար ու բիրտ խանդի մէջ—կամենում էր Մելանիային զրկել նրա սևաթոյր, հրաշալի յօնքերից։ Անտոնը նոյնպիսի հեղուկով,

նոյնպիսի վատառողջ ու վայրենի խանդոտութեամբ ձգտում էր Հերսելիի գեղեցիկ յօնքերը այրել։ Տարիքաւոր, հարուստ, զազանացած ամուսիններին միևնոյն հոգեբանութիւնն էր զեկավարում և միևնոյն արամաբանութիւնը առաջնորդում։

Վիրաւորուած, խայթուած ինքնասիրութեան մէջ՝ նրանք ձգտում էին ամեն կերպ պահել իրենց բացառիկ տիրապետութեան ներքոյ այն երկու երիտասարդ մարմինները։ Երկուսն էլ վրիպեցին, սակայն, երկուսն էլ զրկուեցին գեղեցիկ և առողջ կանանցից...

Շերվանզադէն Անտոնի մէջ չէ դրել Սամսոնի *անկարողութիւնը*, նրա սեռական անզօրութիւնը։ Նրա փոխարէն Հերսէլին չունի Մելանիայի զգայական, բնազդների հոգեբանութիւնը։

Ամուսինների անհամապատասխանութիւնը արտայայտւում է այստեղ ոչ թէ գլխաւորապէս տարիների անհաւասարութեամբ, այլ աւելի և մանաւանդ, *հայեացքների, ճաշակումների, բարոյական հակումների* տարբերութեամբ ու հակամարտութեամբ։ Այս դրաման *բնախօսական պայքարի* արդիւնք չէ, այլ հոգեկան, բարոյական ընդհարումների արդասիք։

Եթէ սեռական անզօրութեան պարագան յաւելեալ՝ Շերվանզադէն բաւական մեծացրել է կնոջ պատասխանատուութեան զգացումը, դրա փոխարէն, Հերսէլիի մէջ դնելով զուտ բարոյական, հոգեկան, վեհ մտահոգութիւններ, ազատել է նրան խիստ քննադատութիւններից և յախուռն յարձակումներից...

Երիտասարդ կինը ամուսնանալով վաճառականի Բէգմուրեանի հետ՝ չէ կորցնում, սակայն, իդէալականի գեղեցիկ հետամտութիւնը։ Նա ապ-

բում է երազների մէջ, նա սիրում է երաժշտութիւն, նա հոգու բոլոր թափով ձգտում է գեղարուեստին—իսկ գործնական կալուածատէրը կամենում է կապել նրան անհրապոյր, բիրտ հոգին: Հերսէլին ուզում է իր հոգու բուռն և օրինաւոր ցանկութիւններին ընթացք տալ, իր խղճի, իր գիտակցութեան ձայնին հետևել՝ Բէգմուրեան պընդում է, որ «կինը, մանաւանդ հայ կինը ծնուած է միայն ամուսին և մայր լինելու համար:» «Ուրիշ կոչում կնոջ համար ես չեմ ընդունում»—աւելացնում է խրոխտ և հրամայական շեշտով տարիքաւոր կալուածատէրը և պահանջում, որ Հերսէլին մոռանայ ամեն գեղեցկութիւն, ամեն ձգտում, ամեն իդէալ:

Շիրվանզադէի հերոսուհին վեց տարի անընդհատ ապրում է այսպիսի պայմանների մէջ. ապրում է միանգամայն «բուսական կեանքով»: Նա փոթորկւում է շարունակ և ամեն օր ձգտում է դուրս գալ այդ դրութիւնից, այդ անտանելի միջավայրից: Այսքան տարիների ընթացքում նրա վճռականութիւնը չէ բթանում, իդէալները չեն անհետանում:

Հեղինակը այս վճռականութեան աւելի մղում տալու և այս իդէալներին աւելի դոյն տալու համար բեմ է հանում Հերսէլիի նախկին ընկերուհի Աննային, որ այժմ ուսանողուհի է կանանց բարձրագոյն դասընթացքներում և ամուսնացած է ճարտարապետ Ալիմբարեանի հետ: Սրանց մէջ տիրում է ընկերական յարաբերութիւն, մաքուր, անկեղծ բարեկամութիւն: Կինը ազատ է և միանգամայն ինքնուրոյն, այդ անկախութիւնը հաստատ պահելու համար սովորում է բժշկութիւն: Ամուսինը նրա վրայ ոչ մի ընտանեկան պարտականու-

թիւն չէ դրել, որ ինքնայատուկ լինի միայն կանանց: Սիրոյ և փոխադարձ յարգանքի մի երջանիկ ամուսնութիւն է դա, որի մէջ երկու կողմն էլ քայլում են հաւասար և ներդաշնակ՝ իւրաքանչիւրը հետևելով իր հոգու ձայնին և իր անհատականութեան անկեղծ կոչումին: Հերսէլին գրաւում է, սքանչանում է այս իդէալական կապի առջև: Իր ընտանեկան կեանքի դրաման մէկէն կանգնում է խրոխտ ու համարձակ և մրրկում դժբախտ կնոջ բովանդակ հոգին:

Արդարև, արտաքին այս միջամտութիւնը—երջանիկ Ալիմբարեանների երևոյթը—ինքնըստինքեան կարող էր աւելի ևս գունաւորել Հերսէլիի տանջանքները ու ամբապնդել նրա կամքը: Շիրվանզադէն չէ բաւականացել հերոսուհու ներքին կեանքի ոյժերով և կամեցել է խթան տալ նրա գործունէութեան՝ դրսի կողմից: Այս պարագան չէ նսեմացնում, ի հարկէ, Հերսէլիի հոգեկան մաքրութիւնը և նրա բարոյական պահակը: Բայց մեզ թւում է, որ հեղինակը բաւական լուրջ ձևի մէջ չէ ներկայացրել արտաքին այս ազդեցութիւնը: Ալիմբարեան ամուսինները մեզ չեն երևում էապէս խորունկ և միանգամայն բնական հանգամանքներով: Նրանց յարաբերութիւնների մէջ ինչ որ արհեստականութիւն կայ և նրանց ազատամտութեան ու աշխարհահայեացքի մէջ ինչ որ թեթևութիւն:

Հերսէլին ինքը աւելի բարձր է, հոգեպէս ու բարոյապէս աւելի շիտակ և աւելի անկեղծ քան Աննան: Վերջինիս ոգևորութիւնները մեզ չեն համոզում. նրա սէրը դէպի բնութիւն, նրա հրճուանքը գեղեցիկ լեռների վրայ՝ մեր հոգուն ոչինչ չեն ասում: Նրա գաղափարական և բանաստեղծական ճառերը մեզ վրայ ոչ մի տպաւորութիւն չեն ա-

նում: Մենք աւելի շուտ ձանձրանում ենք և յոգնում այդ բոլորից: Դրանց մէջ կայ ինչ որ անլրջութիւն, ինչ որ թեթևամտութիւն, որ վայել չէ խորապէս անկեղծ բնաւորութեան և անբռնազբօս ոգևորութեան:

Երբ վերջաւլյսային զբօսանքից դարձած՝ Հերսէլին անմեղութեամբ արտասանում է թէ՝ «*Ես այնպիսի տրամադրութեան մէջ եմ, որ... գուցէ պատրաստ եմ զեղեցիկը սիրել նոյն իսկ յանցանքի մէջ*»—Աննան մի տաբօրինակ ոգևորութեամբ ընդհանրացնում է նրա խօսքերը և միանգամայն կերպարանափոխում նրա իմաստն ու նշանակութիւնը:—«Շատ անգամ զեղեցիկը յանցանքի մէջ բիւր անգամ հաճելի է, քան առաքինին տգեղութեան մէջ:» Փիլիսոփայում է նա բոլորովին անտեղի կերպով: Հերսէլիի անմեղ նախադասութիւնը մեզ հասկանալի է: Ոգևորութեան և ինքնամոռացութեան վիճակում յաճախ կարելի է «զեղեցիկը սիրել նոյն իսկ յանցանքի—մէջ»: Բայց սրա համար ինչու պէտք է «առաքինին տգեղութեան մէջ բիւր անգամ» անհաճելի լինի—այդ մենք դժուարանում ենք հասկանալ:

Շիրվանզադէի այն անձնաւորութիւնները, որոնք պէտք է բարոյականութեան և առաքինութեան ներշնչումներ հաղորդէին Հերսէլիին՝ արտայայտուած են բաւական պակասաւոր կերպարանքով: Հեղինակը չի կարողացել այդ մարդկանց հոգիների մէջ անկեղծութիւն, բնականութիւն, համակրելիութիւն դնել և ընթերցողին ոգևորել նրանցով...

Այսպէս թէ՝ այնպէս, Հերսէլին այժմ վերջնականապէս որոշել է ազատ գործադրութիւն տալ իր հոգեկան ոյժերին: Կեղծիքի, սուտեան, անբարոյականութեան մէջ նա այլ ևս չէ կարող ապրել: Պայքարը ստանում է խիստ բնաւորութիւն: Ամուսինը ոչ մի կերպ չէ կամենում հաշտուել կնոջ հոգեկան բուռն ձգտումների հետ: Սկսում է մի կոպիտ ու վայրենի քաղաքականութիւն՝ Հերսէլիին «դաստիարակելու» և ճամբա բերելու նպատակով: Անարգում է, անպատուում է, հայհոյում է, ծեծում է, աշխատում է այլանդակել նրան, աւրել նրա զեղեցկութիւնը, սպանել նրա ինքնութիւնը—և առհասարակ վարւում է իբրև մի յետին ոճրագործ ու աւազակ: Բնական է, որ այսպիսի դժոխային պայմաններում երիտասարդ կինը չէր կարող անվերջ ապրել: Նա հարկադրուած ձգում է ամուսնու տունը, սրտի ամենամեծ դառնութեամբ լքում է երեխաներին և հեռանում այնտեղից:«Եթէ մայր քո տանը կլինէի անբարոյական կին և վատ մայր: Թող ինձ համարեն անգութ ծնող, բայց կեղծել ու սուտ չէի կարող:» Այս տողերի մէջ ամփոփուած են հերոսուհու բովանդակ հոգեբանութիւնը և բոլոր տրամաբանութիւնը: Նա չէ ուզում կեղծել և ստել, նա չէ ուզում անբարոյական կին լինել: Երեխաների սէրը և մայրական դաստիարակութիւնը նա չէ ուզում թունաւորել:

Եւ արդարև, այն պայմաններում—որ նկարագրուած են դրամայի մէջ—Հերսէլին չէր կարող որև է կերպիչ դիր կատարել: Այդ միջավայրը զաւակների համար բարոյական սպանութիւն էր և իր համար անպայման նահատակութիւն: Մի անմիտ նահատակութիւն, որից ոչ ոք շահ չունէր, որից շահերը—և ամենից առաջ հարազատ զաւակները—միայն ունէին միայն:

Յանուն ինչ գաղափարի պէտք էր խաչ դնել մի առաքինի գոյութեան վրայ. յանուն ինչ իդէա-

լի պէտք էր զոհաբերել մի անմեղ կեանք, որ ոչինչ չէ ուզում, բայց եթէ իր հոգու մաքուր ձգտումը. որ ոչ ոքի համար չէ հեռանում, բայց եթէ իր զաւակների բնական, առողջ, անվրդով կենցաղի և նրանց բարոյական դաստիարակութեան համար ..

Շիրվանզադէն իր հերոսուհու ընտանեկան միջավայրը, նրաղ խեաթիւրուած հոգեկան կեանքը, նրա դրաման և վերջապէս նրա վճռական շարժումը բաւական համոզիչ ձևով է իրագործել: Թեթևամտութեան և անբարեխղճութեան արտայայտութիւն մենք չենք տեսնում Հերսէլիի գործերի մէջ և ամենևին չենք վստահանում նրա որոշումը դատապարտել: Մի բարոյական կին, մի առաքինի մարդ դրանից աւելի փորձութիւն տանելու պարտականութիւն չունի:

Երկու դիտողութիւն միայն կարևոր ենք համարում անել Հերսէլիի ընտանութեան նկատմամբ: Նախ, մեզ համար բաւականաչափ որոշ չեն նրա ձգտումները և բարոյական իդէալները: Մենք գիտենք, որ նա վսեմ ու միանգամայն առաքինի տենչանքներ ունի. գիտենք, որ նա բնաւ չէ հեռանում բնաղդական և զգայական կեանքի համար: Այս բոլորը քիչ են, սակայն: Հեղինակը պարտաւորութիւն ունէր աւելի որոշ, աւելի պարզ և աւելի բովանդակալից ձևակերպէր նրա իդէալները: Որովհետև այս իդէալների բնոյթը և ուժգնութիւնը մեծ չափով կըհեռացնէին Հերսէլիի պատասխանատուութիւնը և ընթերցողի մէջ համակրանք կառաջացնէին դէպի նրա վճիռը:

Ապա, Շիրվանզադէի հերոսուհին մի անտեղի նախապատուութիւն ունի, որ ըստ ամենայնի թիւրիմացութեան մէջ է դնում նրա բուռն մայրական զգացմունքը: Մենք գիտենք, դրամայի ամբողջութիւնից բղխում է պարզապէս, որ Հերսէլին սիրում է իր զաւակներին և նրանց բարոյական դաստիարակութեան համար իսկ թողնում է Բէգմուբեանի տունը:

«Երեխանե՛ր. մի՞թէ ես նրանց համար մայր եմ այժմ, կամ երբ և է եղել եմ: Այն օրից, երբ հասկացել եմ թէ նրանց հետ բախտաւոր չեմ, մայրական զգացմունքն ինձ համար դարձել է անտանելի տանջանք: Ես սիրել եմ նրանց, սիրել եմ ինչպէս ամեն մի ֆիզիքական մայր, և որ կենդանին չի սիրում իւր զաւակներին, բայց այդ սէրը միշտ խմորուած է եղել մի տեսակ խուլ ատելութեամբ... (Ընդգծումը մերն է)... Ոչ, ոչ, տանջանքով, անտանելի տանջանքով, երբ յիշել եմ, որ նրբանք չսիրուած մարդուց են, երբ մանաւանդ նայել եմ նրանց դէմքերին և այնտեղ նշմարել որևէ նմանութիւն նրանց և այդ մարդու մէջ: Թող ինչ ուզում են ասեն մայրերն իմ մասին, բայց ես սէր չեմ համարում այն մայրական սէրը, որ սրբագործուած չէ ամուսնական սիրով:»

Այս պարբերութեան մէջ գործածուած և մեր ընդգծած ձախրդ նախադասութիւնից անհրաժեշտ էր խուսափել: Ինքնին հասկանալի է, որ պաշտած ամուսնու հոգեկան վերապրումը կարող է կրկնապատկել մայրական զգացմունքը: Հասկանալի է նաև ընդհակառակը—Հերսէլիի դէպքը—որ առած ամուսնու յիշողութիւնը կարող է թունաւորել մայրական սիրտը... Բայց սրանից անշուշտ չի հետևում, չի անհետանում մայրական հոգին, որ տիրականօրէն նստած է ամեն մի ծնողի մէջ: Հերսէլին գիտէ այդ, ինքը սիրում է իր զաւակներին, խորին դառնութեամբ ու հեկեկանքով մտաբերում է նրանց—իր բառերը, սակայն, անզգայ են և ան-

յաջող։ Շիրվանզադէն այս նուրբ վայրկեանը և այս փոփոխ խնդիրը աւելի վարպետօրէն պիտի արտայայտէր և աւելի անսխալ ձեւակերպէր...

«Ունէ՞ր իրաւունքը» մեր ընտանիքի բարոյական խոցն է հրապարակի վրայ դնում, կնոջ տարկուբիւնը համոզիչ կերպով՝ նկարագրում և նրա ազատութեան հարցը պաշտպանում։ Անիրաւուած անհատների և շղթայուած անհատականութեան դիտակցական, ըմբոստ, համարձակ ճիչն է նա ..

«Պատուի համար»

Այս դրաման Շիրվանզադէի դրամաների մէջ ամենաժողովրդականն է։ Եւ այս ժողովրդականութիւնը պարտական է ոչ այնքան իւր հոգեբանական արժէքին, որքան հասարակական նշանակութեան։ Հոգեկան նուրբը, մանրակրկիտ վերլուծութիւնից աւելի՝ այս երկի մէջ ուշագրաւ է ցնցող իրականութիւնը. դրամատիքական ներքին պրօցեսից աւելի՝ այդտեղ նշանակալից է դրամատիքական արտաքին, նիւթական ուժգին բաղխումը և բուռն վախճանը...

Այս դրամայի մէջ շատ բան կայ Շիրվանզադէի նախկին դրուածքներից, առանձնապէս «Քաօս»-ից։ Անդրէաս էլիզբարեանը յիշեցնում է մեզ Մարկոս Ալիմեանին, որին, սակայն, մենք շատ կարճ ժամանակ հանդիպեցինք և որի հոգեբանական ամբողջացումն է տալիս ներկայ դրամայի հերոսը։ Սրա որդի Բագրատը Եւրոպական արդիւնաբերողի իր աշխարհահայեացքով և ընդհանուր տիպով թերևս նման լինի Սմբատի յետագայ կերպարանքին։ Շատ ու վատնող Սուրէնը բաւական մօտ է «Քաօսի» ակզբնական Միքայէլին։ Ինքնագոհ, չարամիտ և նախանձոտ Ռօզալիան մերձեցման մի քանի կարևոր կէտեր ունի Մարթայի հետ։ Էլիզբարեանի ամուսինը՝ երանուհին իրրև դժբախտ մայր և անմխիթար ծնող՝ այրի Ալիմեանի դրութեան մէջ է միանգամայն։

Եւ առհասարակ ամբողջ ընտանիքը, իր քայքայուած, ցրիւ վիճակով, յարաբերութիւնների իր թշնամական արտայայտութեամբ, անդամների անջատ և կազմալուծուած դիրքով Ալիմեանի ընտանիքի տարաբախտ կրկնութիւնն է։ Թէ այնտեղ և թէ այստեղ դրամի բացատական դերը վարպետութեամբ և նուրբ դիտողութեամբ է հրապարակ հանուած։ Բուրժուական ընտանիքի ներքին, բարոյական նեխումը, ծնողների և զաւակների փոխադարձ օտարութիւնը և հոգեկան անհարազատութիւնը, եղբայրների և քոյրերի անբարեացակամ, ապերախտ ընկերակցութիւնը արտայայտուած են ցնցող դրամատիզմով և ռեալական ճշտութեամբ։

Այս ապականուած և այլասերուած ընտանիքի մէջ, սակայն, մաքուր է մնացել Մարգարիտը, Անդրէաս էլիզբարեանի քսաներկու տարեկան աղջիկը։ Մասամբ մօրից ժառանգած, մասամբ դրքերի ազդեցութեամբ զարգացած, մասամբ իր սիրած երիտասարդից — Օթարեանից — դաստիարակուած և մասամբ բնածին նախատրամադրութեամբ աշխարհ եկած՝ այդ համեստ, առաքինի հայուհին կարողացել է կարճ ժամանակի ընթացքում մի բարոյական, աղնիւ, շիտակ աշխարհահայեացք իւրացնել։ Շիրվանզադէն բաւականաչափ պարզ և որոշ չէ դուրս բերել այն հիմնական պայմանները և այն պլհաւոր գործօնը, որոնց մէջ և որի հետևանքով

Մարգարիտ հասաւ այն աստիճան ուժեղ բարոյական խառնուածքին և այն աստիճան ամուր հոգեկան կարողութեան։ Երկի դրամատիքական վախճանը շատ աւելի համոզիչ կըլինէր ընթերցողի համար և շատ աւելի լուսաբանուած, եթէ Մարգարիտի նախնական հոգեբանութիւնը մեր առաջ քողամերկուէր նուրբ անալիզով։

Այս աղջիկը, որի համար աղնուութիւնը ամեն բանից բարձր է և ճշմարտութիւնը ամեն կապից, ամեն երջանկութիւնից՝ զերազաս, ապրում է միևնոյն միջավայրում և միևնոյն յարկի տակ, մի մարդու հետ, որ բարոյական սրբութիւն չունի, որ ոտնակոխում է ճշմարտութիւնը ամեն քայլափոխում, որ թքում է աղնուութեան վրայ ամենաբիրտ կերպով, որ դրամի սիրուն վաճառել է ամեն ինչ—խիղճ, հոգի, արդարութիւն, բարեկամութիւն և մարկային սիրտ։ Բնական է, որ այս մարդկանց մէջ վաղ թէ ուշ ընդհարումը անխուսափելի է։

Այս ճակատագրական բաղխումը սկսւում է Օթարեանի պատճառով։ Անդրէաս Էլիզբարեանը առևտրական ընկեր է եղել Օթարեանի հօր հետ. միասին գործ են սկսել, միասին հարստացել են։ Ընկերոջ մահից յետոյ Էլիզբարեանը կարողանում է կեղծել օրէնքը, թագցնել ճշմարտութիւնը և զրկել նրա այրուն և որբերին։ Այս զրկողութեան փոխարէն, սակայն, բարի անուն վաստակելու նպատակով՝ «որդեգրում է» Արտաշէս Օթարեանին, համալսարան ուղարկում նրան և «խնամում» հանգուցեալ ընկերոջ այրուն և աղջկան։ Տարիների ընթացքում թէ Էլիզբարեանն ինքը և թէ նրա մեծ որդին ու մեծ աղջիկը—մի քանի կոպէկի հետ միասին—սարսափելի անարգանքներ են հասցրել թշուառ այրուն։ Արտաշէսը համալսարանն աւարտում վերադառնում է վերջապէս և մօրից ստացած թղթերից իմանում, որ Անդրէաս Էլիզբարեանի հարստութեան կէսը իր հօրն է և որ իրենք ամենանաննաղնիւ կերպով հարստահարուած են։ Առաջին գործողութեան մէջ Մարգարիտը լսում է այս սարսափելի եղելութիւնը։ Երկրորդ գործողութեան մէջ, իր հարազատ հօր հրահանգի համաձայն—որին տակաւին հաւատում է և յարգում որպիսեալ—գրաւոր վաստակագրեր է պահանջում սիրած երիտասարդից։ Երրորդ գործողութեան մէջ այդ վաստակագրերը անցնում են ոճրագործ Անդրէասի ձեռքը։ Չորրորդում նրանք այրուում են, Մարգարիտի աղիողորմ ու լալագին պաղատանքների արցունքների առջև, որից յետոյ ճշմարտասէր և աղնիւ աղջիկը անմիջապէս վերջ է դնում իր կեանքին...

Դրամատիքական այս կառուցուածքի մէջ քանի անհարթութիւններ կան, որոնք այսպէս թէ այնպէս նուազեցնում են երկի գեղարուեստական արժանիքը։ Ի՞նչպէս է պատահել, որ տարիների թշուառութեան ու տառապանքի ժամանակ Օթարեանի այրին ասպարէզ չէ հանել կարևոր վաստակագրերը։ Ի՞նչու նրա ամուսինը մեռնելիս կնոջը պատուիրում է, որ թղթերը որդուն յանձնուեն միայն այն ժամանակ, երբ ուսումը աւարտի»։ Ի՞նչու պէտք է երկար միջոցներ ստորանալ, անարդուել, դժբախտանալ և սպասել Արտաշէսի համալսարանական կեանքի վախճանին, մինչև նրա քսանեօթ տարեկան հասակը։ Չէ որ նա դրանից առաջ էլ կարող էր մի բան հասկանալ, ըմբռնել թղթերի իմաստը և պաշտպանել իր սեփականութեան իրաւունքները։ Ապա. ի՞նչպէս է լինում, որ Ռօզալիան այդքան հև ի հև մատնում է Անդրէասին իր քրոջ սէրը և մատնում է ճիշտ այն ժա-

մանակ, երբ Մարգարիտի զգացումը այնքան հարկաւոր էր ոճրագործ ծնողին: Յետոյ. ինչու Մարգարիտը—տեսնելով ամեն ինչ Արտաշէսի ձեռքին—չի բաւականանում փաստաթղթերի ակնյայտ գոյութեամբ, այլ կամենում է անպատճառ մանրամասն ստուգել և «քննել»: Այս բոլորը նրա համար են, որ այդ թղթերը ամեն գնով անցնեն Անդրէասի ձեռքը և ոչնչանան: Անշուշտ այս նպատակը կարևոր է դրամայի հիմնական ընթացքի համար. անշուշտ նրա իրագործումը անհնարին բան չէր: Բայց մեզ թւում է, որ թղթերի փոխանցման ճանապարհը և միջոցները միանգամայն հարթ չեն և էապէս ինքնաբուխ: Ինչ որ բռնազբօսութիւն և կամեցուած տարրեր կան այդտեղ:

Վերոյիշեալ անհարթութիւններից անկախ՝ լաւ է արտայայտուած ճակատագրական ընդհարումը հօր և աղջկայ միջև: Կապիտալիզմի և բարոյականութեան պայքարն է դա: Անագնիս «առևտրականութեան» և մաքուր խղճի անխուսափելի, արիւնոտ բաղխումը: Փոքրիկ, անարատ, անբիծ Մարգարիտը—գերագոյն արդարութիւնն ու ճշմարտութիւնը զարնւում է հակայ, արատաւոր, ախտացեալ Անդրէասին՝ գերագոյն անարդարութեան ու կեղծիքին, ստութեան: Եւ այս յուզիչ ճակատամարտի մէջ անմեղ աղաւնին, առաքինութեան խորհրդանշանը, խորտակւում է եղերականօրէն:

Շերվանզադէն հաւասար յաջողութեամբ չէ կարողացել արտայայտել պատերազմող երկու կողմերն էլ: Անդրէասը դուրս է եկել օրինակելի ճշտութեամբ, կանոնաւորութեամբ, ամփոփ և պարզ: Նրա վաճառուած խիղճը, նրա բարոյական ներքին աշխարհը, նրա հոգեկան կեանքը, նրա բնաւորութիւնը բովանդակ՝ ներկայացուած են գեղարուես-

տական յստակութեամբ: Դուք տեսնում էք, թէ ինչպէս այդ հին վաճառականը, այդ «ոսկու տոպրակը» տանջւում է խորապէս Օթարեանի փաստաթղթերի հանդէպ. ինչպէս նա փոխում է իր յարաբերութիւնները Արտաշէսի հետ. ինչպէս նա ստորանում, քծնում է նրա առաջ: Դուք տեսնում էք, թէ ինչպէս է նա շահագործում իր անմեղ աղջկայ զգացումը, ինչպէս է կողոպտում նրա ազնուութիւնը, ինչպէս է թքում հարազատ զաւակի մաքուր ճակատին՝ իր նպատակին հասնելու համար, իր չարաբաստ առևտրական ճանապարհը գնալու համար... Բուրժուայի տիպիքական հոգեբանութիւնը, տրամաբանութիւնը, բնաւորութիւնը հանդէս են գալիս սեղմ ու կտրուկ: Ձեզ համար գրեթէ բաց տեղ չէ մնում: Բոլոր անկիւնները լուսաւորւում են:

Իդէալական Մարգարիտի հոգին, սակայն, նոյն յստակութեամբ արտայայտուած չէ: Մենք հիանում ենք այդ մաքուր սրտի առջև. մենք զգացում ենք այդ մարմնացեալ արդարութեան ու ազնուութեան հանդէպ: Դրա հետ միասին մենք չենք կարողանում թափանցել նրա հոգու խորքը, հաղորդուել նրա մտածումներին ու խոհերին: Նա սիրում էր Օթարեանին: Տեսաւ նրա արժանաւորութիւնը և բարոյական մաքրութիւնը: Նա սիրում էր իր հօրը: Տեսաւ սրա բարոյական կատարեալ անանկութիւնը և աղաղակող ոճրագործութիւնը: Եւ սակայն նա կարևորութիւն տուեց միայն երկրորդ դէպքին: կեանքը կորցրեց ամեն հրապոյր: Աշխարհը այլ ևս դատարկուեց նրա համար: Հաւատքը, ոգևորութիւնը, հոգին կորան անհետ: Նա չի կարող ապրել առանց հաւատքի և առանց ալատուի: Նրա ինքնասպանութիւնը թւում է անակնկալ,

բաւականաչափ չնախապատրաստուած ու չհիմնաւորուած։

Շիրվանզադէն կամեցել է վերջնական դրամատեղաւորել Մարգարիտի մէջ։ Այդ հանգոյցի ամբողջական լուծումը և մանրակրկիտ հոգեբանութիւնը մեզ թեւում է պակասաւոր։

Պատուի համար գործող հայրը մեզ ակընյայանի է ու շօշափելի։ Իսկ Պատուի համար զոհաբերուող աղջիկը մեզ բաւական անծանօթ է։

Մենք ճանաչեցինք այն պատուի հոգեբանութիւնը, որ կապուած է զրամին, հասարակական նախապաշարմունքներին, առևտրական աշխարհին։ Բայց մենք չկարողացանք հասկանալ իմաստն ու հոգին այն պատուի, որ կապուած է արդարութեան, ազնուութեան և ճշմարտութեան։ Զոհողը արտայայտել է իր ամբողջ հասակով։ Զոհը ծնացել է սուրերի մէջ և ամբողջապէս չէ լուսաւորուել։ «Պատուի համար»-ը հետաքրքրական է, ուշագրաւ, գեղեցիկ իրերև բուրժուական հոգեբանութեան ցընցող դրամա։ Նա արուեստով և ներքին յուզմունքով ցուցահանում է այն ախտաւոր կապիտալիզմը, որ շահագործում է զաւակների զգացումը, սիրտը, հոգին և որ քայլում է դիակների, անգամ հարազատ դիակների վրայից...

Այստեղ է կայանում դրամայի խորունկ նշանակութիւնը։

«Հաւատարիմ ընկերներ»

Այս պատմուածքը ևս մեր բուրժուական ապականուած բարքերի հարազատ նկարագիրն է։ Երկու «բարեկամներ», Նարիմեան և Մերսիմեան, փաս-

տաբան և ինժիներ, տարիներ շարունակ ճանաչում են իրար, գիտեն միմեանց հոգու բովանդակ ապիտութիւնը, հարկաւոր դէպքում կարող են իրար կործանել, փորձում են անգամ այդ անպատիւ գործը—և այնուամենայնիւ մնում են դարձեալ «հաւատարիմ ընկերները»։ Նարիմեան պիտի ամուսնանայ Մերսիմեանի քրոջ աղջկայ հետ, յայտնի կալուածատէր Մարկոսեանի փեսան պիտի դառնայ։ Իր կեանքը անց է կացրել անառակութեան մէջ։ Ալօրինի կենակցութիւն է ունեցել մի անփորձ օրիորդի հետ. նրանից զաւակ ունի։ Եւ սակայն թողնում է նրանց ամօթի ու քաղցի դատապարտուած և ինքը պատրաստում է ժառանգել միլիոնատէր Մարկոսեանի հարստութեան մէկ խոշոր բաժինը։ Մերսիմեան գիտէ այդ. գիտէ նաև որ Նարիմեանի «սիրուհին» յետագայում հանգիստ չպիտի թողնի իր զայթակղիչին և պատասխանատուութեան պիտի հրաւիրէ նրան։ Գիտէ, որ իր հարազատ քրոջ աղջկայ—անմեղ Հեղինէի—պատիւը վտանգի մէջ է։ Կանչում է Նարիմեանին և պնդում, որ նա անպատճառ հրաժարուէ Հեղինէից։ Սպառնում է ամեն բան պատմել իր քրոջը և նրա ամուսնուն։ Բայց երբ իմանում է, որ Նարիմեան բուրժուա Մարկոսեանի հաւատարմատարն է արդէն. երբ տեսնում է, որ իր առևտրական ձեռնարկութիւնը, գործարանը, իր յաջողութիւնը կախուած է նրա բարի կամքից—իսկոյն մոռանում է հարազատական և բարոյական ամեն պարտականութիւն, քծնում, ստոլանում է Նարիմեանի առաջ և մինչև անգամ ընդունում նրա հետևեալ զազրելի առաջարկը։—«Ասա ինդրեմ, ի՞նչպէս ես հաւանում իմ նախկին սիրուհուն... Համոզուած եմ, որ ոչ միայն չես վիրաւորուի, այլ և գուցէ...

կամեցիա խաղալ: Նահիլ կառք և խակոյն դնա նրա մօտ: Տուր նրան սիրտդ և բեր ինձ համար ազատութիւն:»

Եւ նրանք սկսում են գարձեալ «հաւատարիմ ընկերները»...

Հոգիների բարոյական անանկութիւնը, մտաւորականութեան ախտը անկումը բուրժուական միջավայրում՝ արտայայտուած է ուժեղ և ամփոփ: Այդտեղ, այդ սարսափելի մթնոլորտում ընկերներ, բարեկամների հոգերանութիւնը մինչև գերադոյն աստիճան թունաւորուած է շահի, դրամի աւերիչ շունչով: Շիրվանզադէի պատկերը այդ հոգեբանութեան արձագանքն է...

«Ջհուդի ակռայը»

Հրէաների հանրածանօթ տոկունութիւնը, աշխատասիրութիւնը, յամառ ու հետևողական գործունէութիւնը, առևտրական յաջողութիւններն ու քաղաքական դաոն ճակատագիրը շատ սուր և շատ բնորոշ կերպով արտայայտուած են այստեղ: Ընթերցողը տեսնում է նրանց հոգեբանութեան մի քանի հետաքրքրական և համակրելի կողմերը: Հասարակական նախապաշարմունքները վերանում են: Հրէայի մէջ էլ երևան են գալիս արիութեան, քաջասրտութեան, ըմբոստութեան մարտական գծեր: Դուք տեսնում էք, որ այդ ժողովուրդը ոչ թէ միայն աշխատել գիտէ, ոչ թէ միայն վաստակել ու հարստանալ գիտէ, այլ և ընդունակ է պայքարել մի ազնիւ, առաքինի գաղափարի համար, պատրաստ է զոհաբերել իր նիւթական ստացուածքը և կեանքը:

Եթէ Ահարոն Այզեմանը, այդ խեղճ դերձակը կարողանում է դառնալ հարուստ վաճառական, մրցել Սէրգէյ Մուրօմցեւի հետ—դրա պատճառը ոչ այնքան խաբէութիւնն է, որքան եռանդը, ընդունակութիւնը, սակաւապետութիւնը, յամառ աշխատանքը: Եւ եթէ Մուրօմցեւը անանկանում է, կորցնում է իր ամբողջ հարստութիւնը—այդտեղ գործում է ոչ թէ քրիստոնէական մարդասիրութիւնը, այլ անհոգութիւնը, ծուլութիւնը, շատակերութիւնը, զուարճասիրութիւնը և հարբեցողութիւնը:

Մէկը կամքի և ուժեղ բնաւորութեան մարդն է, միւսը շուայտ կեանքի և ախտաւոր կրքերի գերին: Մուրօմցեւները, սակայն, չեն կարողանում ըմբռնել անհատական առանձնայատկութիւնների ազդեցութիւնը և իրենց անանկութիւնը բացատրում են միայն Այզեմանների անբարեացակամութեամբ: Եւ անանկացած ու անտեսապէս քայքայուած Մուրօմցեւները—օգտուելով հասարակական, քաղաքական չարաշուք պայմաններից—յարձակում են գործում դժբախտ Այզեմանի խանութի վրայ, կողոպտում նրան և «յիշատակի» համար կտրում Ջհուդի ականջը...

Շիրվանզադէի այս պատմուածքը հետաքրքրական է մանաւանդ իրը ազգային խառնուածքների յաջող և ամփոփ նկարագիր:

«Եղբայրասպան»

Յուզուած և նեարդային ժամանակների արտադրութիւն է այս փոքրիկ պատկերը: Հասարակական պղտոր հոգեբանութեան մի թոյլ ու վրի-

պած արձագանգն է հնչում այդ սակաւաթիւ էջերի վրայ։

Նկարագրուած են երկու եղբայր, որոնցից մէկը, Արամ, կազմարար է, հետաքրքրւում է բանաւորական հարցով և լրագիրներում երբեմն յօդուածներ է զետեղում ի նպաստ աշխատաւոր դասակարգի։—Միւս եղբայրը, Միսակ, անգործ է, հարբեցող, գող, սրիկայ, դրանց հետ միասին՝ նաև լրտես։ Վերջին ծայրը աղքատ է, ոչինչ չունի իր ողորմելի կեանքը քաշ տալու համար։

Արամը, որ սկզբում միշտ խնամել է իր եղբօրը, այժմ, իմանալով նրա մատնիչութիւնը՝ հրաժարւում է իր նիւթական օգնութիւնից և կամենում է ուղղել նրան։ Հանդամանքները այնպէս են դասաւորւում, սակայն, որ Արամ զերադասում է եղբօրն սպանել։

Միսակ մեռնելու ժամանակ ասում է. «կանչիր այստեղ վկաներ. ես կասեմ, որ ինքս ինձ սպանեցի. երեխաներ ունես, խեղճ ես։»

Վեհանձնութեան այս յուզիչ արտայայտութիւնից յետոյ՝ աւելացնում է. «Ասա, բոլորին, որ ես մարդկանց ատում էի, որովհետև ինձանից զըզւում էին ամենքը։ Բայց ոչ մի կոպեկ չեմ վերցրել արածներիս համար։»

Շիրվանզադէի այս փոքրիկ պատկերը ուշադրաւ ոչինչ չունի։ Թւում է թէ, հեղինակը աշխատել է ցոյց տալ, որ ընկերական և հասարակական անարդար վերաբերմունքը մարդկանց կարող է մղել յաճախ դէպի բարոյական այնպիսի խոխտ արատ, ինչպիսին լրտեսութիւնն է։

Ոչ այս մատնրութիւնը և ոչ սպանութեան դործողութիւնը պարզ չեն և յուզիչ։

«Աւետարանչի վրայ»

Այս դրաման խաղացուած է Թիֆլիսում առաջին անգամ 1908 թուականի հոկտեմբեր ամսին։ Հեղինակը մինչև օրս հրատարակութեան չէ յանձնել այդ երկը և մենք հնարաւորութիւն չունինք կարդալու և աւելի մօտիկից ուսումնասիրելու։ Այդ պատճառով չպիտի կարողանանք աւելի մանրամասն խօսել նրա մասին և պիտի բաւականանանք միայն մի քանի թռուցիկ տպաւորութիւններով, որ մենք ստացել ենք առաջին ներկայացումից։

Շիրվանզադէն այդտեղ ներկայացնում է երկու ընտանիք, իրենց տիպիքական գծերով և կենդրոնական անձնաւորութիւններով։ Առաջինը՝ Աթանէս Փրանգուլեանի ընտանիքը, հարուստ, առատ ու շռայլ. մէկը բուրժուական այն քայքայուած ու ապականուած ընտանիքներից, որոնց մենք հանդիպեցինք «Բաօս» ընդարձակ վէպում և «Պատուի համար» դրամայում։ Դէմքերը և դրուագները բաւական ծանօթ են և իրար նման։

Մարկոս ապա Ալիմեանի ու Անդրէաս Էլիզբարեանի փոխարէն՝ այստեղ հանդէս է գալիս Աթանէսը, որ նոյնպէս ագքատ ու աննշան անցեալ ունի իր յետևը և որ հարստացել է «իւր խելքով ու աշխատանքով», երկար տարիների տարկական ծառայութեամբ, «շան կեանք քաշելով» և հազար ու մի «թուք ու մուրով»... Ընտանիքի մայրը, տարաբախտ և թշուառ Նարգիզը, մեծ որդին՝ շուայտ ու անառակ միջավայրում մաշուած Հեւոնը, քանդրեք տարեկան աղջիկը, իդէալականի ձգտող Ովաննան—արանք բոլորը յիշեցնում են մեզ արդէն յայտնի անձնաւորութիւններին, մասամբ երանու-

հուն ու այրի Ալիմեանին, մասամբ Սուբէնին ու Միքայէլին, մասամբ և Մարգարիտին: Ընտանիքը ընդհանուր գծերով նոյն պատկերն է ներկայացնում: Հարստութեան, անմիտ շռայլութեան և հիւանդոտ առատութեան դոհ:

Այս ընտանիքի քով դրամայում դուրս է բերուած նաև մի ուրիշ ընտանիք—աղքատ, հասարակ, աննշան, որի անդամները են երկու քոյր և մի եղբայր—Արամազդ, գործունեայ, եռանդոտ, հասատատական և ուժեղ մի անձնաւորութիւն:

Արամազդ տասնեհինգ տարի շարունակ դրծակատարի պաշտօն է վարում Ֆրանգուլեանի առևտրական տանը և կամաց-կամաց, իր ընդունակութեան, տոկունութեան ու կամքի շնորհիւ, բարձրանում դէպի հասարակական շէնքի կատարը: Այդ միջոցին Ֆրանգուլեան իջնում է դէպի վայր, դէպի անտկութիւն, դէպի աւերակները նախկին փառքի ու հարստութեան: Այս կրկնակի ու հակադիր շարժումը ինքնին հետաքրքրական ու նշանակալից՝ դրամայի մէջ կենդրոնական տեղ է գրաւում:

Արամազդ իր առևտրական բուռն յաջողութիւնների մէջ մի հատիկ դժբախտութիւն ունի միայն: Ովսաննան, նրա երազների աղջիկը փոխադարձ սէր չէ տածում դէպի խրոխտ ու համարձակ գործակատարը: Սակայն, երբ ամեն ինչ վերջանում է, երբ Ֆրանգուլեանի ընտանիքը հիմնովին քայքայւում է, երբ վաճառքի է հանւում նոյն իսկ Ովսաննայի դաշնամուրը, երբ, ծանր հարուածի ազդեցութեան տակ, հայրը խելագարւում է և մայրը յիմարանում, երբ անյոյս ու անօգնական մեռնում է Լևոն—Ովսաննային ոչինչ չի մնում այլ ևս, բայց եթէ համաձայնուել Արամազդի առաջարկին և «նոր կեանք» հիմնել անցեալի աւերակների վրայ:

Շիրվանզադէի այս դրաման միւսների առաւելութիւնները չունի: Հիմնական գաղափարը մութ է և ստուերապատ, անձերը անորոշ և մասամբ հակասական, երկի բարոյականը գունատ ու երեսուն: Ըստ երևոյթին հին և նոր տեսակէտների պայքար է ծաւալւում այդ դրամայի մէջ, հին և նոր աշխարհահայեացքների ընդհարում, հին և նոր կեանքերի կռիւ: Սակայն իրապէս մեռնող և բարգաւաճող ընտանիքները միմեանց նման են և իրար հարազատ՝ իրենց ներքին կեանքով, իրենց էութեամբ: Հին և նոր բարոյականի բաղխում չկայ:

Աթանէս և Արամազդ միևնոյն անձերն են և միևնոյն բարոյականի արտայայտիչները: Տարբերութիւնը անուններն մէջ է և շահագործման մի քանի նոր ձևերի սահմանում:

Նոր կեանքի հիմնարկումը թիւրիմացութիւն է միայն...

Շիրվանզադէի այս դրաման յիշատակելի է իբրև բուրժուական իրականութեան հարազատ արտայայտութիւն և իբրև քայքայուող ընտանիքի ախուր նկարագիր:

Կործանուածը

Դժբախտ ամուսնութեան, անհամապատասխան զոյգերի, բուրժուական քայքայուած ընտանիքի դրամա չէ «Կործանուածը»: Հասարակական և գաղափարական ընդհարում է, տեսակէտների և աշխարհահայեացքների տարօրէն, ճակատագրական բաղխում: Այստեղ էլ, այնուամենայնիւ, Շիրվան-

դաղէն ընտանիքի մէջ է պարփակել դրաման և նրա սահմաններում առաջ տարել իր ստեղծագործութիւնը:

Հայր և որդի, Սենեքերիմն ու Աբտաշէսը զարնւում են իրարու ոչ թէ ազնւութեամբ ու անաղնւութեամբ, այլ զաղափարների և մտածողութեան տարբերութեամբ: Այս տարբերութիւնը, որ դրամայի հիմնական խնդիրն է կազմում, լաւ չէ ընդգծած և յայտ չէ մատնանշած: Դրա փոխարէն մենք գործ ունինք աւելի շատ զգացումների ընդհարման հետ: Ոչ մի անգամ և ոչ մի տեղ ազգայնական հայրը և միջազգայնական որդին գաղափարների լուրջ բաղխում չեն հանդէս բերում: Նրանք միշտ խուսափում են հիմնական խնդրից և դառնում միայն նրա շուրջը...

Սակայն, նախ քան դրամայի իսկական քննութիւնը՝ անհրաժեշտ ենք համարում պարզել մի թիւրիմացութիւն, որ գրուածքի համար գրեթէ ճակատագրական նշանակութիւն ունի:

Սենեքերիմի անձնաւորութիւնը զուրկ է պատմական, իրական հիմքերից: Շիրվանզադէի նկարագրութեան համաձայն՝ նա չէ սարսափում արիւնից. նա չէ վախենում վտանգից, եթէ միայն Աբտաշէսն այդ արիւնը և այդ վտանգը յանձն առնէ հարազատ ժողովրդի համար: Սենեքերիմն ուրախ կըլինի, նա իրան միանգամայն երջանիկ կըզգայ, եթէ իր զաւակը գնայ դէպի «տառապեալ ժողովրդի գերեզը»:—Այնտեղ, սահմանի միւս կողմում մի ամբողջ ազգ է ողջակիզւում. Աբտաշէսը մեծ գեր ունի կատարելու այդ արիւնաքամ միջավայրում:

Սահառունին թիւրքահայերի յեղափոխական գործունէութեան բնաւ դէմ չէ: Նա ինքն այդ շարժման մտաւոր առաջնորդն է. նա Արազեանի գաղափարական ուսուցիչն է: Սենեքերիմի և յեղափոխական հերոսների հոգեկան նոյնութիւնը, բարոյական անխզելի կապն աւելի քան ակնյայտնի է: Թիւրքահայոց քաղաքական ազատագրութեան և յեղափոխական շարժման այս իրական ներկայացուցիչը, սակայն, սարսափում է ընկերվարութիւնից և առողջ, բնականոն միջազգայնականութիւնից: «...կըջախջախէի ոտներիս տակ այն հիդրային, որ կոչւում է սօցիալիզմ...»: Այս ուսմունքը նրա համար կատարեալ մղձաւանջ է, կատարեալ «թոյն ու ժանտախտ»: Քանի-քանի անգամ փըրփուրը բերանին յարձակւում է այն մարդկանց դէմ, որոնք «հիւսիսից» վնասակար մտքեր են բերում և թունաւորում մեր հասարակական օրգանիզմը: Սըրանից զատ՝ նա դողում է մի «մեծ պետութեան» անբարեացակամութեան և գաղափարական հակամարտութեան առջև: «Ազգամոռներ, դուք կործանուածներ էք, որ ուզում էք կործանել մեր ազգը, գրգռելով մեր դէմ մի հզօր պետութիւն: Հեռո՛ւ ձեզ նման ժանտախտից»:

Այսպէս է ներկայացրել Շիրվանզադէն Սենեքերիմ Սահառունու գաղափարական, հասարակական դէմքը: Արդ, այս տիպը Կովկասի համար իրական, պատմական հանգամանքներ չունի: Նա մտացածին անձնաւորութիւն է:

Քաղաքական-հասարակական այն երկու խոշոր հատուածները, որոնք ծնուեցին մեր կեանքում, Կովկասեան հողի վրայ, ութսունական թուականների երկրորդ կիսում և իննսունականների սկզբում, բնաւ չէին սարսափում ընկերվարութիւնից, «թոյն ու ժանտախտ» չէին համարում այդ

վարդապետությունը և ըստ ամենայնի «գրգռում էին» մեծ, հզոր պետությանն բարեկամությունը:

Ո՞ր հոսանքին, քաղաքական ո՛ր խմբակցությանն, հասարակական ո՛ր խավին է պատկանում Սահառունին: Նրա տեղը որոշ չէ Կովկասի սահմաններում: Նա թերևս հասկանալի լիներ Թիւրքիայում, թերևս կարողանար մի կերպ տեղաւորուել այդ երկրի սկզբնական մթնոլորտում—բայց նա անըմբռնելի է Կովկասի համար: Նա պատմական հիմքեր չունի այդտեղ և ոչ էլ իրական յենարան:

Եթէ Սենեքերիմ Սահառունին հանդէս գար իբրև մի սոսկ ազգասէր, եթէ նա արտայայտուէր իբրև մի առօրեայ հայրենասէր. առանց լինելու Արազեանների գաղափարական առաջնորդը, առանց լինելու նահատակուող հերոսների ուսուցիչը, առանց մարտական աշխարհահայեացքի և առանց յեղափոխական խառնուածքի — այդ ժամանակ նա հասկանալի կլիներ մեզ իբրև իրական անձնաւորութիւն: Մենք դիւրութեամբ կարող էինք երևակայել նրա հակակրութիւնները ընկերվարութեան համար և նրա երկիւղը հզօր պետութեան «գրգռման» առջև: Բայց հասարակական, քաղաքական այս կազմով և վերոյիշեալ մարտական ըմբռնումներով՝ նա մեզ թւում է հակասական տիպ, զուրկ պատմական ճշմարտութիւնից: Այս հիմնական վրիպումը բաւական թիւրիմացութիւնների պատճառ է դարձել:

Դրամայի հանգոյցը հարթ և անբռնազբօս պայմաններում չէ սկսւում: Սենեքերիմը մինչև վերջն անտեղեակ է իր որդու գաղափարներին, նրա հասարակական դաւանանքին: Արտաշէսը քսան

և վեց տարեկան է արդէն, համալսարանն աւարտած բժիշկ է—և դեռ նրա մտածողութիւններն ու իդէալներն անյայտ են հարազատ ծնողին: Նա, որ այնպիսի վատառողջ հետաքրքրութեամբ հետևում էր «հիւսիսի» ձնասակաւ մաքերին. նա, որ վըրդովմունքով ու բռնկումով էր խօսում Ռուսաստանի ընկերվարական ազդեցութեան մասին—տարօրինակ պատահականութեամբ անծանօթ և անհաղորդ մնաց իր որդու կեանքին ամբողջ հինգ տարուայ ընթացքում: Արտաշէսը «հիւսիսում» տարուում է «ձնասակաւ» գործունէութեամբ, մի քանի անգամ բանտարկուում է, հասարակական բուռն և վտանգաւոր կեանք է ապրում երկար տարիներ—և սակայն հայրը այս մասին ոչ մի լուր չունի: Շիրվանզադէն բաւական նկատելի կերպով աշխատել է, որ Սենեքերիմն ու Արտաշէսը իրար անյայտ մնան մինչև դրամատիքական լուծին: Այս հազուագիւտ իրողութիւնը բռնազբօսիկ է թւում: Ինչև է: Որդին վերադառնում է հայրենիք և այստեղ առաջին անգամ Սենեքերիմին պարզւում է դառն ճշմարտութիւնը: Հեղինակն այստեղ էլ պարզ, կանոնաւոր, բնական վիճակի մէջ չէ դրել դէպքերը և յարաբերութիւնները: Առաջին գործողութեան մէջ Սենեքերիմը լսելով մի քանի պատահական նախադասութիւններ Արտաշէսի կողմից հասարակական գործունէութեան մասին՝ իսկոյն, առանց որևէ պատճառի, ոգևորւում է և գլուխը կորցնում: Նրան թւում է թէ որդին հօր գաղափարների արձագանքն է հնչում. նրան թւում է թէ Արտաշէսը հօր հասարակական իդէալների մարմնացումը պէտք է լինի. նրան թւում է թէ որդին «ուխտ և երդում» է արել տառապեալ ժողովրդի, արիւնաքամ հասարակութեան գիրկը մտնելու: Բո-

լոր այս ոգևորութեան մէջ Սենեքերիմը լուրջ չէ, որև է պատկառանք չէ ազդում, որև է ահրամադրութիւն չէ ներշնչում։ Նա ծիծաղելի դրութեան մէջ է առհասարակ, ինչպէս և ծիծաղելի է և տաբօրինակ, երբ առաջին օրը, ճաշից անմիջապէս առաջ, ընկերների և հիւրերի ներկայութեամբ բըռնում է որդու օձիքից և հարցնում, «հմ՛յ ես դու, թէ չէ...»

Սա գաղափարների լուրջ պայքար չէ. սա աշխարհահայեացքի անկեղծ, բնական, մարդկային ընդհարում չէ։ Սա տաբօրինակ յարաբերութիւնների ցուցահանդէս է միայն. սա դժբախտ խաղ է։

Մեր կեանքում միջազգայնականը և ազգայնականը այնպիսի բուռն և կատաղի ներհակութեան մէջ չեն, ինչ որ պատկերացնում է Շիրվանզադէն։ Նրանք այդպիսի երդուեալ թշնամիներ չեն, մանաւանդ ընտանիքում, մանաւանդ հարազատական յարաբերութիւնների ժամանակ։ Գաղափարական, յեղափոխական, հայրենասէր եղբայրը բնաւ չի տառապում քրոջ միջազգայնական իդէալների հանդէպ։ Նոյն տիպի հայրը բնաւ չէ թշնամանում իր հարազատ որդու հետ, նրա ընկերվարական գաղափարների համար։ Նրանք այդպիսի ահեղ ու սարսափելի բաղխումի մէջ չեն։ Նրանք իրար դէմ կանգնած չեն, որպէս երկու ղինեալ բանակներ, որպէս երկու տարամերժ ախոյեաններ և իրար այդպիսի սպառնական ձեռնոցներ չեն նետել։ Շիրվանզադէի պնդումները պարզապէս թիւրիմացութեան արդիւնք են։

Միջազգայնականի և ազգայնականի տարբերութիւնները, նրանց գաղափարների մանրամասն վերլուծութիւնը, նրանց հոգեբանութեան ցուցադրութիւնը կարող են դառնալ վէպի նիւթ։ Դրամատիկական առեղծագործութեան համար, մանաւանդ այսպիսի բուռն, արիւնահեղ և փոթորկալից դրամայի համար նրանք բաւարար հող չեն ներկայացնում։

Եւ յիրաւի. Շիրվանզադէի հերոսները, Սենեքերիմ և Արտաշէս, գաղափարական հողի վրայ չեն ընդհարւում։ Նրանց պայքարը սկզբնաւորւում է աւելի շուտ զգացմունքային մակարդակից։

Որտե՞ղ է հիմքը այդ դրամայի։

Արտաշէսը երկու անգամ ազատուել է մահից մի մարդու ձեռքով, որ այժմ վտանգաւոր վիճակի մէջ է և որին անհրաժեշտ է օգնութեան հասնել։ Որպէս ազնիւ և բարոյական մարդ նա կամենում է իր տաբրական պարտքը կատարել դէպի իր ազատիչը։ Այդ պարտքի ճանապարհը ապահով չէ անկասկած։ Նա կապուած է այնպիսի վտանգների հետ, որոնց իր կարգին հնթարկուել է Արտաշէսի փրկիչը երկու անգամ։ Ի՞նչ պէտք է անել։ Անշուշտ, սիրող հօր համար անտանելի է այս կացութիւնը։ Հարազատ որդին վտանգի առջև է։ Բայց Շիրվանզադէի հերոսը, ազնիւ, այլասէր (ալտրուիստ), բարոյական Սենեքերիմը ցաւում է ոչ այնքան Արտաշէսի կեանքի համար, որքան այն պատճառով, որ զաւակը օտարի, ոչ-հայի փրկութեանն է նուիրւում։ Մի՞թէ իսկապէս ազնիւ մարդը, չափահաս ու խելացի անձը չպիտի կարողանար հասկանալ, որ Արտաշէսի վրայ բարոյական պարտք է ծանրանում ամենքից առաջ օգնել իր ազատիչին։ Սենեքերիմի համար դրամա կայ, բայց այդ դրամայի այնտեղ չէ, որ որդին օտարի համար զոհուելու է գնում, այլ այնտեղ, որ որդին առհասարակ վտանգի է դիմաւորում, Շիրվանզադէի Սահառունին ըստ երևոյթին պնդում է, որ ինքը—այս մաս-

նաւոր փաստի հանդէպ ցաւում է աւելի գաղափարական աշխարհահայեացքի և տեսակէտների տարբերութեան համար: Այդպիսով նա մարդկային պարտականութեան աղաւաղումն է ներկայացնում և հասարակական բոլոր իդէալները դարձնում է հասարակական դժբախտ նախապաշարումներ... Արտաշէսի բնաւորութիւնը, որ սկզբում բաւական հարթ է և համակրելի—մի քանի տարկանոն արտայայտութիւններից բացի—դրամայի վերջում զգալի կերպով սուուերաւորւում է: Դեռ երկրորդ գործողութեան մէջ նա շեշտել է, որ ինքը «պատրաստ է» գնալ: Զորրորդ գործողութեան մէջ արդէն պարզ երևում է, որ Արտաշէս ուրիշ բան չէ կարող անել և որ իր առջև մի հատիկ ճանապարհ կայ միայն: Սիրած օրիորդի և տարաբախտ ծնողների խնդիրը նա թերևս չմերժէր, եթէ արտաքին հարկադրութեան մէջ չլինէր: «Երէկ ես սատցայ առաջին, այսօր երկրորդ սպառնալիքը: Ես սիպուած եմ գնալ»: Եւ այսպէս, Արտաշէս կամենում է իրագործել իր բարոյական տարբական պարտականութիւնը ոչ այնքան կամովին, որքան ակամայ, ոչ այնքան ինքնաբերաբար, որքան բռնադատեալ:

Շիրվանզադէն մի անզգոյշ շարժումով, մի ձախորդ վայրկեանի մէջ աղաւաղել է նաև այս երիտասարդի հոգեկան անբծութիւնը և զգացումների աղնուութիւնը:

Սենեքերիմից և Արտաշէսից բացի՝ դրամայի մէջ կան նաև ուրիշ գործող անձեր, աւելի կամ պակաս հետաքրքրական ու կարևոր: Այդ անձնաւորութիւններից շատերը ենթարկուած են միևնոյն ճակատագրին և միևնոյն վերաբերմունքին: Հեղինակը անկողմնապահ լինելու մտադրութեամբ և առարկայօրէն վերլուծելու ճիգով՝ կամեցել է հանդէս բերել նաև նրանց թերի կողմերը: Իր այդ ձգտումի մէջ վրիպել է, սակայն, և անձնաւորութիւնները դուրս են եկել ընդհանրապէս անհամակրելի և արատաւոր: Թւում է թէ Շիրվանզադէն գիտակցաբար աշխատել է ցոյց տալ, որ նոր ժամանակների և նոր գաղափարների մարդիկ ամենն էլ բռոյտպէս, հոգեպէս և մտաւորապէս անհաւասարակշիռ են ու անկատար: Գաղափարական անձնաւորութիւնների այդ աստիճան ճակատագրական աղաւաղումը չափազանց տարօրինակ է և առեղծուածային մի հեղինակի գրուածքում, որ ըստ ամենայնի յառաջադէմ մարդ է և յարգանք ունի դէպի նոր հոսանքները և նոր իդէալները:

Շիրվանզադէն չի կարողացել թափանցել նոր շարժման խորքը, ըմբռնել այդ շարժումը իր առողջ և գեղեցիկ կողմերով, ապրել նոր մարդկանց բարձր ոգևորութիւնները, հաղորդուել նրանց հոգեկան, բարոյական կեանքին անմիջապէս, տեսնել բոլորը առանց նախապաշարումների և առանց աղճատման:

Անաչառ լինելու ակնյայտ մտահոգութեան մէջ՝ նա չափազանց առաջ է գնացել և չէ զգացել, որ իր ստեղծագործած անձնաւորութիւնները նոր շարժման տիպիքական դէմքերը չեն, նոր հոսանքի ղեկավարներ չեն և ոչ էլ առհասարակ հերոսներ են:

«Կործանուածը», մեր անկեղծ համոզումով, հոգեբանական շատ քիչ արժանիքներ ունի: Իր գլխաւոր մտադրութեան մէջ մոլորուած է նա և իր գեղարուեստական իրագործման մէջ բաւական անկատար:

«Արմենուհի»

Տաղանդաւոր հեղինակի վերջին դրաման գեղարուեստական և բեմական շատ առաւելութիւններ ունի։ Ամբողջ երկի վրայ տարածուած է բանաստեղծական մաքուր շունչ և մելամաղձիկ, քընքոյշ տրամադրութիւն։ Շիրվանզադէի դրամաներ մէջ «Արմենուհին» այդ տեսակէտից գեղեցիկ բացառութիւն է կազմում։ «Ունէ՞ր իրաւունքի» մէջ ևս մի քանի տեղ հեղինակը ձգտել էր պօէտիք շրջանակ ստեղծել Հերսէլիի համար — բայց այդտեղ նա անյաջողութեան էր դարնուել։ Այստեղ այդ մըտադրութիւնը բացայայտ է, այդ տրամադրութիւնը անկեղծ և իրագործումը անշուշտ լաւ կատարուած։ Արմենուհին ձեզ յուզում է իրրև բանաստեղծական անձնաւորութիւն, իրրև զգացմունքի և վեհ մտորումների մարդ։ Մի քանի տեղ նրա բանաստեղծականութեան մէջ ասես շինծու շարժում է մտնում, մի քանի վայրկեան ասես նա կորցնում է անխառն բնականութիւնը և երգում կեղծ հնչիւնների վրայ — բայց այդ րոպէները և այդ անկատար տեղերը չեն խանգարում, որ Արմենուհին ընդհանրապէս մաքուր լինի և բնական։ Մեզ թւում է, որ հերոսուհու անձնաւորութիւնը — և դրա հետ միասին դրաման — շատ բան կը վատակեն, եթէ այդ անհարթութիւնները շկուէին։ Թախտական երաժիշտների տեսարանը և Արմենուհու դիրքը, օրինակի համար, անբռնազբօս և ողորկ չէ։ Այդտեղ բանաստեղծականութիւնը ինքնաբուխ չէ, այլ կամեցուած է և որոշ ձգտումի հետևանք։ Սիրանուշի հետ ունեցած խօսակցութեան մէջ, դարձեալ, պօէտիք երևալու ներքին

ձիգ կայ։ Շքեղ ու կախարդական արշալոյսի, խորհրդաւոր ու հմայիչ վերջալոյսի, երազական ու թախծապատ Բէթհօվէնի, հանճարեղ ու խօլական Ռօղէնի յիշատակութիւնները մի նոր մարդու մօտ, որ առաջին իսկ պահուն հանդէս է դրել իր հոգու խեղճութիւնը — յամենայն դէպս անտեղի ու անյարմար են։ Արմենուհին ասես վաճառքի է հանում իր ներքին բուռն զգացումները և իր բանաստեղծական տրամադրութիւնները։

Այս դրամայի ամենայուղիչ վայրկեանը և բանաստեղծական — ոչ հոգեբանական — ամենագեղեցիկ դրութիւնը Վաւլամեանի և Արմենուհու հանդիպումն է ու սրտանց խօսակցութիւնը երկրորդ գործողութեան մէջ։ Թախծալի ուսմանքը և ճարտարապետի յանկարծական ոգևորութիւնն ու սիրային բացատրութիւնը — որքան էլ հոգեբանօրէն անակնկալ լինի ու առանց նախապատրաստութեան — գեղարուեստական-բանաստեղծական տեսակէտից գրաւիչ է, տրամադրող և տրտմօրէն սիրելի։ «Բայց ամենից դառը, ամենից ողբալին իմ ընկերոջ համար եղաւ այն, որ նրա կնոջ դաշնամուրը փշրի պատեց...» Վաւլամեանի այս սրտառուչ բառերը, այս խորապէս տխուր նախադասութիւնը, արտասանուած այսպիսի բուռն յուզմունքով և անկեղծ, ցաւագին վրդովմունքով՝ հաղորդւում են ընթերցողին, ազդում են նրա հոգու վրայ և նա պատրաստ է հաճոյքով մոռանալ այդ տեսարանի վուլկոտութիւնը և մտրել նրա թովչութեան մէջ...

Շիրվանզադէն այստեղ վայլել է իր արձակատական կարողութեամբ։ «Արմենուհու» մէջ բացական վերապրումներ կան «Մելանիա»-ից և մանաւանդ «Ունէր իրաւունք»-ից։ Այս դրամայի հերոսուհին Հերսէլիի զարգացումն է, աւելի որոշ,

աւելի ամփոփ և աւելի բեմական։ Թէ Մելանիան և թէ Հերսէլին ձգում են իրենց ամուսիններին և հեռանում նրանից, բոլորովին մենակ, առանց երբորդ անձնաւորութեան և առանց նոր սիրոյ։ Այստեղ Շիրվանզադէն խնդիրը բարդել է ճարտարապետ Վաղամեանցով, որ սիրում է Արմենուհուն և որ փոխադարձաբար սիրւում է նրանից։ Դրամատիքական հանգոյցը այսպիսով բաւական կնճռոտւում է և լուծումը զգալիօրէն դժուարանում, եթէ մանաւանդ ինկատ առնենք, որ ճարտարապետը ամուսնացած է և երկու զաւակների տէր է։ Այս պայմանների մէջ Արմենուհու բարոյական պատասխանատուութիւնը կրկնապատկւում է և նրա հոգու դրաման աւելի փոթորկալից ու աւելի խորունկ դառնում, քան Մելանիայի ու Հերսէլիի դրամաները։

Շիրվանզադէն անշուշտ հաշուի է առել այս բացառիկ հանգամանքները և աշխատել է՝ զանազան միջոցներով մեղմել Արմենուհու «յանցանքը»։ Այստեղից են սկզբնաւորւում այն մի քանի նշանակալից առանձնայատկութիւնները, որոնցով Շիրվանզադէի հերոսուհին տարբերւում է իր հոգևոր քոյրերից և որոնք ուրոյն կնիք են դնում «Արմենուհու» վրայ առհասարակ։

Մելանիան և Հերսէլին ամուսնացել են թըմբած գիտակցութեամբ, իրենց ծնողների բարոյական ազդեցութեան տակ, առանց փոխադարձ սիրոյ և առանց գիտակից յարգանքի։ Արմենուհու ամուսնութեան պայմանների նկատմամբ մենք այդպիսի տեղեկութիւններ չունինք։ Գիտենք միայն, որ նա պաշտօնաթող զինուորականի աղջիկ է։

Դրամայի ընթացքում մի քանի անգամ խօսք է լինում նաև նրա հօր նիւթական անբարեյաջող

դրութեան մասին։ Այսքանը միայն։ Արդեօք ծնողները հեռաւորապէս անգամ որև է խորհուրդ են տուել նրան, արդեօք Արմենուհին ինքը որև է ուշադրութեամբ է առել իր ամուսնու հարստութիւնը և առատ կենցաղը։ Այս հարցերի վերաբերմամբ ակնարկութիւններ իսկ չկան դրամայի մէջ։

Շիրվանզադէն Արմենուհու մէջ սկզբում անհամակրանք, հոգեկան անմտերմութիւն չէ դրել դէպի Սամսօն Ալադեանը։ Այստեղ նա չէ հետեւում ոչ Մելանիային և ոչ Հերսելիին։ Ընդհակառակը, նրա հերոսուհին ամեն կերպ աշխատում է դրաւել իր ամուսնու ուշադրութիւնը, սէրը, բուռն զգացմունքը։ Հինգ տարի է, ինչ նա ամուսնացել է։ Այդ երկար տարիների ընթացքում Սամսօն Ալադեանցը—անձնատուր իր գործին և հաշիւներին—միշտ էլ խուլ է եղել դէպի իր կնոջ հոգու ձայնը, դէպի նրա վսեմ ձգտումները, դէպի նրա սրտի ճիգը—այնուամենայնիւ Արմենուհին մի տարօրինակ խանդաղատանքով փաթաթւում է նրա պարանոցին և սէր խնդրում։ Հերոսուհու այն հոգեկան նշանակելի հատատարմութիւնը մեզ չէ թւում բաւականաչափ հիմնաւոր ու համոզիչ։ Պարզ նկատելի է, որ նրա բարոյական պատասխանատուութիւնը նուազեցնելու և նրա հասարակական յանցանքը մեղմացնելու համար է այսքան շեշտուած Արմենուհու սէրը և նրա յուզիչ անձնուիրութիւնը։

Բացի սրանից՝ Սամսոն Ալադեանցը դուրս է եկել շատ աւելի անհամապատասխան անձնաւորութիւն հոգեպէս և բարոյապէս՝ քան իր նախորդները, Հերսէլիի և Մելանիայի ամուսինները։ Ճիշտ է, նա տարիքով նրանցից աւելի երիտասարդ է և աւելի յարմար Արմենուհուն, բայց ներքին արժանաւորութիւններով նրանցից յետ է և չա-

վաղանց արատաւոր։ Ալադեանցը չէ գնահատում Արմենուհու պէս ազնիւ, զեղեցիկ, երիտասարդ, կրթուած կնոջը և «իսկական ազամանդը փոխում է վաճառքի դուրս բերած կեղծ քարի» հետ։ Այդ գեհենիկ հարուստը, յոյսը դրած իր միլիոնների և իր նիւթական բարեկեցութեան վրայ՝ վատահացած է, որ Արմենուհին նրա անձեռնմխելի սեփականութիւնն է ընդ միշտ և որ ինքը կարող է ազատօրէն «ամենագեղեցիկ կանանց սէրը գնել շուկայում» ու «ցեխ շպրտել նրա վրայ»։

Ալադեանցի անհատատարմութիւնը և ընտանեկան անմաքրութիւնը—որ ինքնին շատ իրական հանգամանքներ ունի և չափազանց բնորոշ է մեր սանձարձակ հարուստների համար—ազատում է Արմենուհուն բարոյական պատասխանատուութիւնից և նրա վարմունքը արժանի է դարձնում բարեխիղճ հասարակութեան ներողամիտ վերաբերմունքին։

Եւ այսպէս մի կին, որ ամեն կերպ բարոյական է և առաքինի, որ ձգտում է զեղեցկութեան, բարութեան և ճշմարտութեան, որ հոգու անհուն ծարաւով երազում է մաքուր, բարձր սէր, որ ներշնչուած է արուեստի, բանաստեղծութեան վսեմ ազդեցութեամբ—ուրիշ ոչինչ չէ տեսնում իր առջև, բայց եթէ «հաշիւների» մի տաղտկալի միջավայր, «բամբասանքի» և զրպարտութեան մի ապերախտ շրջան, սկեսուրի առելի բռնակալութիւն, տալի թունաւոր նախանձ և ի լրումն այդ ամենի՝ ամուսնու զգալի դաւաճանութիւն։

Այս ախտաւոր օդակից քիչ հեռու նկարագրուած է մի ուրիշ ընտանիք—ճարտարապետ Վարդանեանցի ամենօրեայ յուսահատական կեանքը։ Ամուսինը, տաղանդաւոր արուեստ, որոնել է գեղեցիկը և գաղափարականը, ոգևորուել է մարդկային վեհ ստեղծագործութիւններով, աքանչացել է անկաշառ, անարատ սիրոյ անուրջների մէջ և վերջը եկել միացել մի էակի հետ, որի համար կեանքը «անատանելի պրօզա» է միայն և որ օտար է ամուսնուն «իր մտքերով, ճաշակով, հոգու պահանջներով և սրտի զգացումներով։» Դա մի կին է, որի համար գրքեր չկան, այլ «հօրից ստացած տոկոսաբեր թղթեր», գաղափարներ գոյութիւն չունին, այլ «հաշուի տետրակներ». մի կին, որի «ճաշակը, թեթև թռիչքից յետոյ, գնաց թառ եղաւ թանգագին գլխարկների վրայ» և որ արհամարհում է ամեն բան, «ինչ որ կապ չունէ անոտի պչրանքի, կուշտ որովայնի և հանգիստ քնի հետ»...

Կեանքը այսքան անարդար է յաճախ։ Կանոնաւորութիւնը և ներդաշնակութիւնը այսպէս անխնայ հալածւում են շատ անգամ։ Ճակատագիրը այսքան բիրտ կերպով հեռացնում է միմեանցից հարազատ, ընկեր, բարեկամ հոգիները և բանտարկում նրանց իրականօրէն անհամապատասխան միջավայրում։ Եւ զարնւում է բնութեան շքեղ համեմաշխութիւնը, անյուսալի աղաւաղւում է բանաստեղծների և փիլիսոփաների երևակայած «հարմոնիան»։

Արմենուհին բնութեան արդար իրաւունքով պատկանում է Վաւալամեանցին, վերջինս իսկական բարոյականութեան համաձայն՝ պատկանում է Արմենուհուն։ Բայց հասարակական կարգերը, պետական օրէնքները, ժողովրդական բարքերը, պաշտօնական բարոյականութիւնը կանգնում են նրանց առջև և երկուսին էլ տալերեր ճանապարհներ մատնանշում։ Անհանները—այդ խստաբերա աւանդութեան տրամաբանութեամբ—չպէտք է հեռանեն դե-

ղեցիկին, բարոյականին, արդարին, ճշմարտին և անկեղծին, այլ միայն «օրինաւորին», եթէ մինչև անգամ այդ օրինաւորը լինի անարդար ու անբարոյ։

Վաւլամեանցը, սակայն, այդ փոթորկուած ու զարնուած գոյութիւնը—որ անձամբ ճաշակել է աննեղդաշնակութեան ամբողջ թոյնը—ըմբռնում է հին կարգերի դէմ և Արմենուհուն դէպի նոր կեանք է կոչում։»... Հոգիները մենակ չեն գալիս այս աշխարհ, այլապէս նրանց գոյութիւնը կլինէր յաւիտենական մենակեաց բանտարկութիւն։ Իւրաքանչիւր էակ ունի իր ընկերը, զուգակիցը։ Փոյթ չէ, թող նրանք բաժանուած լինէին իրարից տարածութեամբ, ժամանակով, օրէնքների դաժանութեամբ և աւանդութիւնների բռնութեամբ, նրանք անհանգիստ փնտրում են միմեանց։ Եւ երբ մի օր հանդիպում են իրար, այլ ևս ոչ ոք և ոչինչ չի կարող նրանց բաժանել... Նոյն իսկ սուրը համարուած պարտականութիւնները...

Այս բնածին համերաշխութեան և այս կատարեալ ներդաշնակութեան հանդէպ երեխաները կան, որ ժամանակակից հասարակարգի և իրաւակարգի մէջ արդարև չափազանց մտահոգիչ պարագաներով են երևան գալիս։ Ի՞նչպէս թողնել նրանց, հարազատ զաւակներին, ինչպէս զրկուել նրանց տեսնելու ամենօրեայ, բնական պահանջից։ Աւելի լաւ չէ՞ միթէ մի կերպ քաշ տալ ճակատագրի դառն լուծը, հաշտուել չարաշուք իրականութեան հետ յանուն այդ անմեղ արարածների, որոնք իրաւունք ունէին պահանջելու ամեն զոհողութիւն...

Ժամանակակից ընտանիքը, սակայն, մեր նահապետական ընտանիքի առաքինութիւնները չունէ։ Այնտեղ ամուսինների անհամաձայնութեան պարագայում, զաւակների դաստիարակութիւնը, երեխաների բարոյական կեանքը անյուսալի կերպով չեն տուժում ընդհանրապէս։ Հին մայրերը և հին հայրերը գիտեն մի սրբազան գաղափարի համար, յանուն նուիրական օջախի, մոռանալ իրենց փոխադարձ թշնամութիւնները, թագցնել իրենց ատելութիւնը, խորասուզել հոգու հեռաւոր յատակում անձնական անհամակրութիւնը։ Նախկին ընտանիքի մէջ բնաւ սովորական երևոյթ չէր ամուսնական անհաւատարմութիւնը նոյն իսկ այն ժամանակ, երբ փոխադարձ սէր չկար։ Նրանց անհամաձայնութիւնները կրաւորական կերպարանք էին ստանում և խորապէս չէին աղաւաղում ընտանեկան բնականոն մթնոլորտը։

Նոր ընտանիքի մէջ այդպէս չէ։ Այստեղ հայրերն ու մայրերը—ազդուելով ժամանակի տնտեսական, հասարակական, մտաւոր, բարոյական միջավայրից—տարբեր հոգեբանութիւն են հանդէս բերում։ Այստեղ փոխադարձ անհամաձայնութիւնների ժամանակ—մինչև անգամ առանց դրան—սովորական երևոյթ են ամուսնական դաւաճանութիւնները։ Այստեղ անհատների համակրութիւնները ու հակակրութիւնները աւելի շեշտուած են։ Այստեղ հայրերն ու մայրերը չեն կարողանում թագցնել իրենց փոխադարձ թշնամութիւնը։ Ժամանակակից ընտանիքի մէջ ատելութիւնը ներզործօն բնաւորութիւն է ստանում, բնաւ չէ չեզոքանում, շարժւում է շարունակ և միջավայրը դարձնում է մի կատարեալ դժոխք։ Ընտանեկան կեանքը աղճատւում է ցաւագինօրէն. շրջապատը թունաւորւում է ուժգին և մանուկների դաստիարակութիւնը դառնում է կատարեալ բանդագուշանք։

Մի կողմի անձնազոհութիւնը այսպիսի պայմաններում դառնում է անիմաստ նահատակութիւն, որից ոչ ոք օգուտ չէ ստանում, որից տուժում է անհատը, տուժում է ընտանիքը, տուժում են երեխաներն իրենք, տուժում է անգամ հասարակութիւնը:

Շիրվանզադէն «Ունէը իրաւունքի» մէջ այս խնդիրների վերաբերմամբ հետաքրքրական ակնարկութիւններ է արել: Այստեղ, «Արմենուհու» մէջ Վաւլամեանցի բերանով նա մատը դրել է խնդրական վէրքի վրայ: »... Ես գերազատում եմ իմ զաւակներին զրկել իրանց հօրից, քան թողնել նրանց առանց ծնողների... Այո, տիկին, իմ զաւակներն արդէն ծնողներ չունին: Այն օրից, երբ ես հանդիպել եմ ձեզ, նրանց մայրն ու ես նրանց թշնամիները ենք... Ինչ է այդ ողորմելիների տեսածն ու լսածը մեզնից: Փոխադարձ ատելութիւն, հալածանք, զզուանք: Արդէն նրանց մանուկ աչքերը յոգնել են մեր ամենօրեայ ընդհարումներից: Արդէն նրանց քնքոյշ լսելիքը աղաւաղուել է իրենց մօր անզուսպ անէծքներից և յիշողներից: Երեկ առաւօտ կրտսերը հարցնում է ինձ. «Հայրիկ, քո անունը լի՞րբ է»: Ահա ամենաթոյլ ածականը, որ տալիս է ինձ նրանց մայրը... Կարո՞ղ է լինել աւելի մեծ ոճիր, քան ամեն օր, ամեն ժամ կաթիլ-կաթիլ թոյն ածել մանկական սրտերի մէջ, որոնք սպունգի նման ծծում են:

Ասացէք, ո՞րն է աւելի մեծ յանցանք՝ զրկել նրանց հօրից թէ՞ պատրաստել նրանց համար մի դժբախտ ապագայ և հասարակութեան համար բռոյական անդամալոյծներ...»

Դրաման զարգանում է այսպէս: Հերոսուհին Վաւլամեանցի օգնութեամբ փորձում է լուծել իր դժբախտ կեանքի հանգոյցը: Նա կամ պէտք է մոռանայ իր մաքուր սէրը, իր երազած բարոյական և գեղեցիկ աշխարհը և կամ պէտք է ձեռ գոեհիկ ու անբարոյական ամուսնու մօտ՝ ենթարկուելով հասարակական կարգերին և սիրելով իր զաւակին: Շիրվանզադէն, սակայն, այդ բնական, անհրաժեշտ հողից հանել է լուծումը և կապել Սամսոն Ալադեանցի հետ: Վերջինս, չորրորդ գործողութեան մէջ, տեսնելով Արմենուհուն և Վաւլամեանցին գրկախառնուած՝ մի պահ կատաղում է, տրճանակը բարձրացնում և ապա, առանց արձակելու, խեղդուած ձայնով արտասանում. «Դնա նրա հետ, ազատ ես»:

Այս լուծումը մեզ թւում է միանգամայն անակընկալ. ոչ համոզիչ հոգեբանօրէն և ոչ արդիւնք գեղարուեստական անհրաժեշտութեան:

Ամբողջ չորս արարի ընթացքում մենք գործ ունենք Արմենուհու հոգու հետ, ամբողջ ժամանակ մենք հետևում ենք նրա դրամայի զարգացմանը—վերջը, սակայն, մի տխուր պատահարով նա քաշւում է մի կողմ և հրապարակ է գալիս նրա ամուսինը: Հեղինակը պիտի չլքէր դրամատիքական և հոգեբանական իսկական ճանապարհը և պիտի չեղափոխէր դրաման տարրեր վայր: Արմենուհին պիտի ինքը լուծէր իր վրայ ծանրացած պրօբլէմը, ինքը պիտի յետ անէր չարաշուք խընդիրը այսպէս կամ այնպէս. ինքը պիտի այս կամ այն ընթացքը տար սեփական գոյութեան մէջ կուտակուած տարերքին, իր հոգու խորքից և իր էութեան հիմքից, ինքնաբերաբար և ներքին ինքնաբուխ գործունէութեամբ:

Սամսոն Ալադեանցի միջամտութիւնը հանգոյցը չէ լուծում, այլ կտրում է յանկարծակի և

մէկէն։ Արմենուհու համար այլ ևս դրամա չկայ այնուհետև, խորունկ, ուժգին, սրտառուչ դրամա։ Նա կրաւորական դիրքի մէջ է և լռելեայն պիտի հետևի ճակատագրի արտաքին անօրինութեան։ Ամուսինը իր վճռական բառերով և մեր ընդգծած վերջնական նախադասութեամբ շնորք է անում արդեօք, բարեկամաբար թոյլատրո՞ւմ է արդեօք թէ՞ արտաքսում է իր տնից—այդ միանգամայն մի-ևնոյնն է։ Կարևորը այն է, որ Արմենուհին հեռանում է ոչ իր կամքով, այլ ուրիշի ցանկութեամբ. ոչ իր ազատ որոշումով, այլ որովհետև օտար մարդիկ նրան «ազատ» են յայտարարում։ Մեզ թւում է, որ այս կախեալ դրութիւնը, ներգործական վիճակի այս կատարեալ բացակայութիւնը բնաւ յարմար չի մի հերոսուհու հոգեբանութեան։ Հերոսուհին, որ ապրել է, տանջուել, տառապել և որ իրաւունք ունի ինքը տնօրինելու իր կեանքի մեծագոյն ակտը։

Շիրվանզադէն այնքան մեղմացնող դէպքեր համախմբելով, Արմենուհու սկզբնական անկեղծ սէրը շեշտելով, նրա սկեսուրի և տալի դժոխային մթնոլորտը համոզիչ ու սուր նկարագրելով, նրա հոգեկան բարձր ձգտումները, միանգամայն անհիմնական իդէալները ներքողելով, ամուսնու առնառակ կեանքը ընդգծելով—այնուամենայնիւ չէ վստահացել հերոսուհուն ինքնաբերաբար հեռացնել։

Մեզ թւում է, որ այստեղ հեղինակը մի մեծ դիմում է արել հասարակական կարծիքին և է կամեցել իր հերոսուհուն «ծանր» պատասխանատուութեան տակ թողնել։ Ուրիշ պատճառ չկայ։ Արմենուհին արտաքին որևէ կարեւոր ներգործութիւն չէը տեսնում իր վրայ, բացի հասարակական տեսակէտներից։ Հօր մասին կարելի է բնաւ չխօսել։ Կոստանդին Բարաթեանը, այդ հին դինուորականը, շատ մեծ, մինչև անգամ անհատատալի չափերով ազատութիւն է տուել իր աղջկան։ Արմենուհու բերանում հայր բառը, վերջին վճռական րոպէներին, առնուազն թիւրիմացութիւն է։ Ինչ վերաբերում է զաւակին—այդ խնդրում նա առանձնապէս չէ արտայայտուել և, ամենայն հաւանականութեամբ, համաձայնուել է Վաղարշեանցի հայեացքների հետ։

Եթէ այդպէս չէ, եթէ միայն հարազատ զաւակի համար նա կամենում է յանձն առնել մի դժոխային կեանք և մի անբարոյական միջավայր, ուր ամենից առաջ այդ զաւակը պիտի տուժէ և անյուսալի աղաւաղուէ՝ նշանակում է նրա մայրական սէրը հասնում է ծայրայեղ և չափազանցեալ արտայայտութեան, նշանակում է նա իրապէս պիտի տանջուէր այն ժամին, երբ նրան «ազատ» յայտարարեցին և այդպիսով բաժանեցին զաւակից, նշանակում է նրա դրաման չլուծուեց, այլ նոր միայն սկսուեց։

Բայց այսպէս չէ, անշուշտ։ Նա մեծ սիրով և սրտի անհուն բերկրութեամբ—չդաւաճանելով բնաւ մայրական զգացմունքին—կրկամենար միանալ Վաղարշեանցի հետ։ Եւ եթէ դրա համար սպասեց, որ ամուսինը հրահանգէ—այստեղ մենք մի խոշոր վրիպում ենք տեսնում և ճակատագրական թիւրիմացութիւն։ Մի թիւրիմացութիւն, որ աղաւաղում է երկի իմաստը, որ բռնանում է նրա բարոյականի վրայ, որ յանկարծակի կանգնեցնում է հոգեբանական նորմալ ընթացքը, որ աղարտում է գեղարուեստական կանոնաւորութիւնը։

Շիրվանզադէն այս աստիճան ծանր տուրք պարտաւոր չէր հասարակական դատաստանին։ Այսքան մեծ հարկ չկէտք է տար մի կարծիքի, որ

հիմնուած չէ անկաշառ բարոյականութեան վրայ և որ չէ գործում արդարութեան ու ճշմարտութեան համար։

Կեանքում Արմենուհիների դրաման սարսափելի է։ Մեր բուրժուական վատառողջ կարգերի ցանցում Սամսոն Ալադեանները անթիւ են, որոնք յենուած իրենց առատ ոսկիների վրայ շահագործում են ամեն ինչ. ազնուութիւն, բարոյականութիւն, ընտանեկան մաքրութիւն, անգամ անմեղ զաւակների սէրը և նրանց դաստիարակութեան նուիրական խնդիրը։ Նրանք չեն քաշւում ոչ մի սրբութիւնից. վաճառում են ամեն բան։ Դրամը նրանց ախտաւոր հոգեբանութեան մէջ նոյնանում է ամենակարող աստուածութեան, որին պիտի խոնարհուեն բոլոր առաքինութիւնները, բոլոր ազնիւ հոգիները, որի առաջ ծունկ պէտք է չոքէ ինքը անմեղութիւնը, սուրբ անբծութիւնն իսկ։ Արմենուհիները, նրանց վոխորկուած սիրտը, նրանց վիրաւոր հոգին, նրանց խռովեալ ճակատագիրը ոչինչ են այնտեղ, ուր դրամի հոգեբանութիւնն է իշխում, ուր Սամսոն Ալադեանների ցաւագար կրքերն են թագաւորում։ Եւ նրանք—Արմենուհիները—պարտական են գոհաբերել ամեն ինչ. պարտական են տանել թանգագին մետաղի թուքը, պարտական են թաւալել ամուսինների անառակ ոտքերի տակ... յանուն ընտանիքի բարոյականութեան և զաւակների դաստիարակութեան։ Բայց այդ ընտանիքը քայքայւում է աւելի ու աւելի՝ չնայած այդ չքնաղ, այդ անկարելի գոհաբերութեան և թերևս մասամբ այդ պատճառով։ Այդ բարոյականութիւնը, այդ դաստիարակութիւնը խեղաթիւրւում է, այլանդակւում, գերազանցապէս զարնւում՝ թերևս մասամբ այդ ծանր գոհաբերութեան պատճառով։ Որովհետև կեղծիքով և սուով ճշմարտութեան չէ կարելի հասնել։ Որովհետև անարդար հոգով արդարութեան չէ կարելի հետամըտել։ Որովհետև անբարոյական միջոցներով բարոյականութիւն չէ կարելի իրականացնել։ Որովհետև կայ մի սահման, ուր «գոհաբերութիւնը» կանգ պէտք է առնէ, եթէ չէ ուզում, կասկածելի օգտի համար, աւելի թանգագին, աւելի նուիրական բան գոհաբերել։

Հասարակական կարգերի, պետական օրէնքների, ժողովրդական բարքերի վոխոխութիւնը կատարւում է զօրեղ անհատների խիզախ վորձերով։ Ոչ մի օրէնք, ոչ մի կարգ չէ ստեղծւում թղթի վրայ և հասարակական հոգեբանութեան մէջ—եթէ հերոսական և հաստատակամ անհատները *մանաւորապէս* չեն սկսել նրանց կիրառութիւնը։

Մեր ընտանիքի մաքրութեան և վերանորոգման համար, մեր բարքերի ազնուութեան և մեր հասարակութեան կատարելագործութեան համար անհրաժեշտ է պայքարել Ալադեանների դէմ։ Անհրաժեշտ է պայքարել ներգործական միջոցներով և ոչ կրաւորական համբերատարութեամբ։ Կեանքի մէջ այդ դրաման կայ. նա գոյութիւն ունի ամենուրեք, ամեն անկիւնում, մեր ամենքիս քթի տակ։ Կեանքի մէջ կան նաև նրա հերոսները, նրա արմատական լուծողները, նրա ներգործական պայքարողները։ Դրամատուրգը տեսնում է այս բոլորը. ուսումնասիրում է դրաման. վերլուծում է անձերի հոգեբանութիւնը. ըմբռնում է պրօբլէմը։ Նա յանուն հասարակական բարոյականութեան, յանուն մեր քաղաքակրթութեան բնականոն զարգացման, յանուն արդարութեան և գերագոյն իրաւունքի՝ պարտականութիւն ունի սուր և կեղծիքի դէմ դուրս

դալ համարձակ կերպով և խիզախօրէն։ Ժամանակաւոր զրպարտութիւններից և պաշտօնական բարոյականութեան հարուածներից նա չպիտի վարանի։ Այլապէս նրա երկը—ուրիշ շատ բանների հետ միասին—կըկորցնէ ամենից առաջ իր բարոյական արժանիքը և իր խորունկ նշանակութիւնը։

Շիրվանզադէի «Ամենուհին» մի քանի անհրաժեշտ շտկումներով, «Պատուի համար»-ի հետ միասին, կարող է լաւագոյն տեղ գրաւել նրա դրամաների շարքում։ Դրամատիքական ամբողջութեան և նիւթի հաւաքման տեսակէտից՝ այս վերջին երկը աչքի ընկնող առաւելութիւններ ունի։ Գրուած տաք, անմիջական, հաղորդիչ տրամադրութեամբ։ Տիպերը բաւականաչափ ողորկ են և սեղմ։ Երկրորդական անձերի վրայ գրեթէ փոփոխութիւններ անելու հարկ չկայ։ Ամենուհու հայրը միայն, որքան էլ կենդանի ու յաջողուած, այնուամենայնիւ մեզ թւում է չափազանցեալ ու ծայրայեղ՝ մինչև իսկ իր գինուորական ազատամտութեան մէջ։ Եթէ մի քիչ մեղմանար այս կողմը՝ նա դրամայի ամենայաջող անձերից կլինէր։

Այս բոլոր թերութիւններով հանդերձ՝ «Ամենուհին» միւսի է իբրև մի բանաստեղծական-դրամատիքական արժանաւոր երկ։ Իր յղացումով ու մտածումով խիզախ ու գեղեցիկ, իր կատարումով կանոնաւոր ու սեղմ—«Ամենուհին» անհամարձակ և վարանոտ է, սակայն, իր լուծումով և իր վախճանով։

Ինչ էլ որ լինի՝ Շիրվանզադէի այս վերջին դրաման յուզիչ է և ազդու, իբրև մի բարոյական անհատի վոհմորկուած հոգու վսեմ ճիչ, իբրև բանաստեղծական անմեղ տրամադրութեան և նուրբ, աննիւթական տենչանքների բուռն արտայայտութիւն. իբրև մի բողոք, մի համոզիչ ու անկեղծ բողոք՝ հասարակական անբարոյականութեան դէմ, ամուսինների սանձարձակ ու ախտաւոր հոգեբանութեան դէմ, դրամապաշտ, տաղտկալի ու գօսացած միջավայրի դէմ...

Մաքուր, արդար, ճշմարիտ և գեղեցիկ անհատականութեան գեղարուեստական պաշտպանութիւնն է նա...։



VIII

ՁԻՐՎԱՆԶԱՊԻ ԵՐԿԵՐԻ ՄԻՋԻ ԸՐՏԱՑԱՑՈՒԱԾ ԳԼԽԱՒՈՐ ԽՆԻԵՐԸ

Մենք անհրաժեշտ համարեցինք կանգ առնել Շիրվանզադէի բոլոր երկերի վրայ և վերլուծութեան ու քննութեան ենթարկել նրա բոլոր սեղծագործութիւնները։ Կարելի էր անշուշտ հանգամանօրէն չյիշատակել մի քանի մանր պատմուածքներ, բայց որպէսզի հեղինակի դէմքը հանդէս գար ըստ կարելոյն լրիւ և ամբողջական՝ մենք խօսենք նաև այդպիսի պատմուածքների մասին։

Մեր նպատակը չէր Շիրվանզադէի գրուածքների առիթով մեր հասարակական, գրական և փիլիսոփայական տեսակէտները ցուցադրել ամբողջութեամբ։ Մենք չէինք կարող մի որոշ, նախապաշարեալ ու դիտաւորեալ գաղափար խըրտուիլակ դարձնել և այդ գաղափարի շուրջը քաշ տալ Շիրվանզադէի երկերը և յղացումները։ Դա կըլինէր մի տեսակ բարոյական շահագործում և եթէ կուզէք նաև գրողի, արուեստագէտի ապաւաղում։

Մեր սեփական համակրութիւններից ու հակակրութիւններից աւելի՝ մենք կամեցանք գրաղուել Շիրվանզադէի բարոյական, գրական, գե-

դարուեստական աշխարհահայեացքով ու յատկութիւններով։

Ի՞նչ է մտածել այդ մարդը երեսուն երկար տարիների ընթացքում, ինչ է յղացել, ինչպէս է դրել, կեանքի ո՞ր կողմն է ցուցադրել, ինչ վերաբերմունք ունի այս կամ այն անձի, այս կամ այն խնդրի, այս կամ այն առարկայի նկատմամբ, ո՞ր տեղերում է յաջողել, ո՞րտեղ է վրիպել— այս բոլորը և դարձեալ շատ ուրիշ կարևոր իրողութիւններ կարող են հրապարակ գալ միայն այն ժամանակ, երբ մենք ներկայացնենք նրա ամբողջական գործը, երբ մենք քննութեան առնենք նրա արտադրութիւնները մեկիկ-մեկիկ։

Կարելի էր խօսել միայն այն մասին՝ թէ ինչպէս է արտայայտուել այս կամ այն գաղափարը, այս կամ այն խնդիրը, այս կամ այն տիպը, այս կամ այն տեսակէտը նրա գրուածքներում։

Կարելի էր այդ ձևով քննութեան առնել հեղինակին։ Բայց այդպիսի ուսումնասիրութիւնների մէջ նա երևան կըգար ոչ իր բովանդակ հոգով ու բովանդակ մտածողութեամբ, այլ անկատար ու միակողմանի, իբր գեղարուեստագէտ, իբր մօրալիստ և իբր հոգեբան։

Եւ եթէ կամենայինք այդպիսի ուսումնասիրութիւնների միջոցով նրա ամբողջական էութիւնը հանել և նրան բազմակողմանի ներկայացնել— ամեն քայլափոխում պէտք է դիմէինք այս կամ այն վէպին, այս կամ այն պատմուածքին, այս կամ այն դրամային, պէտք է առաջ քաշէինք հեղինակի նկարած բոլոր դէմքերը, շօշափած բոլոր խնդիրները, արձանագրած կարևոր և նշանակալից դէպքերը։ Ուրիշ խօսքով՝ պէտք է ցուցադնէինք նրա արտադրութիւնների ժողովածուն և այդ՝ աւելի ցրիւ, աւելի տեղատուած, աւելի ան-

կանոն վիճակում։ Դեռ գժուարանում ենք կարծել, թէ այս կերպ անգամ, գէթ հնարաւոր կըլինէր նրա գլխաւոր գծերը—իբրև գրող, իբրև ազգուսուցչապետ—մօտաւոր ճշտութեամբ պատկերացնել։ Անտարակուսելի կերպով՝ կըմնային անկիւնները, կըմնային անձեր, կըմնային իրողութիւններ—առաւել կամ նուազ կարևոր—որոնք չէին շօշափուի ու չէին յիշատակուի։

Մենք, հեղինակի գործը ամբողջապէս ու լրիւ արտայայտելու մտադրութեամբ՝ նախընտրեցինք մեր ճանապարհը, որ արդէն անցել ենք և որ—մեր կարծիքի համաձայն—կարող էր լուսաւորել բոլոր կողմերը և ցուցադրել բովանդակ շէնքը։

Յետագայ գլուխների մէջ մենք կաշխատենք ընդհանրացնել այդ ստեղծագործութիւնը, կարևոր սկզբունքները վերհանել, բնորոշ առանձնայատկութիւնները մատնանշել, հիմնական խնդիրները լուսաբանել, ամփոփել այն ստուար արտադրութիւնը, որ գոյացել է երեսուն տարիների ընթացքում։

Ներկայացնելով հեղինակին այնպէս, ինչպէս նա կայ, ցուցադրելով ամենից առաջ Շիրվանզադէի դէմքը և նրա գրական-բարոյական-փիլիսոփայական աշխարհահայեացքը, չտնկելով մեր ճանապարհի վրայ որոշ անհատական նախապաշարում և որոշ կանխակալ տեսակէտ—մենք անշուշտ մօտեցել ենք նրան մեր հոգու խորքից, մեր մտածողութեան բովից, մեր սեփական կառուցուածքից ու մեր հարազատ նկարագրից։ Մեր հայեացքները, մեր ըմբռնումները, մեր անհատականութիւնը բնականաբար մենք չէինք կարող թագցնել։

Շիրվանզադէն իր գրուածքների նիւթը վերցրել է ընդհանրապէս հայկական միջավայրից։ Նրա գեղարուեստական հետաքրքրութեան ու հարցասիրութեան առարկայ են դարձել հայ իրականութիւնը և հայ անձերը։ Ճիշտ է, «Ծաթմա և Ասադ»-ի մէջ նա պարսիկների կեանքն է պատկերացնում. «Ջհուդի ականջը» հրէաների և մասամբ ռուսների կեանքից է. «Կրակ»-ի հերոս Սանթուրեանը և «Քաօս»-ի հերոս Սմբատը ամուսնացած են ռուս օրիորդների հետ, որոնք բաւական դեր են խաղում այդ գրուածքներում. «Արտիստի» մէջ հերոսն ու իր մայրը բաց առած՝ բոլոր միւսները օտարներ են՝ իտալացիներ, հրէայ, յոյն, ռուս։ Այս բոլորը իրողութիւն են. բայց սրանք նրա երկերի խոշոր մեծամասնութեան համար բնաւ նշանակալից չեն։

Շիրվանզադէն իր գրական երկարատև գործունէութեան ընթացքում—մեր յիշատակած բացառութիւնները մի կողմ թողած—հանդիսացել է իբր հայ մարդու և հայ իրականութեան վիպասան և դրամատուրգ։

Այս միջավայրի որ խաւը և որ կողմն է նրան առանձնապէս զբաղեցրել։ Արդեօք նա մեր հասարակութեան և մեր կեանքի բոլոր անկիւնները, բոլոր շերտերը, բոլոր դասերը հաւասարապէս քննութեան նիւթ է դարձրել, թէ կան մի քանիսները, որոնք նրան աւելի են գրաւել։

Մեր գիւղացիութիւնը իբրև դասակարգ, իբրև անտեսական որոշ խաւ, կարելի է ասել, բնաւ չէ արտայայտուել Շիրվանզադէի երկերում։ Աբովեանը, Պռոշեանը, Աղայեանը, մասամբ Րաֆֆին նուիրուեցին հայ գիւղացուն և հայ գիւղի նկարագրութեան։ Ութսունական թուականների վիպասաններից ոմանք—Վ. Փափազեան, Լէօ—իրենց

գրուածքներում բաւական տեղ յատկացրին նրան։ Իննսունական թուականների երիտասարդ գրողներից շատերը—Ադելեան, Ագապեան, Տէր-Ահարոնեան, Ճուղուրեան, Ն. Մամիկոնեան—ահագին կարեւորութիւն տուին գիւղական կեանքին։ Ահարոնեան իր շատ երկերի մէջ գիւղացու հոգին արտայայտեց։

Շիրվանզադէն այն բոլոր գրողների շարքում միակն է, որ չզբաղուեց մեր հասարակական կեանքի այդ կողմով և իր գրուածքների մէջ դուրս չբերեց գիւղի այս կամ այն էջը, այս կամ այն խնդիրը։ Այս հանգամանքը շատ բնորոշ է և շատ նշանակալից նրա գրական գործունէութեան համար։

Գիւղացիները Շիրվանզադէի երկերում հանդէս են գալիս իբրև քաղաքի բնակիչ, իրենց հասարակական կոչումը փոխած, կամ վաճառական և կամ արհեստաւոր։ «Նամուս»-ի և «Ցաւագար»-ի մէջ այսպիսի գիւղացիներ կան, որոնք արդէն Շամախուհի են ապրում։

Նրանք, գիւղի մարդիկ, հանդէս են գալիս քաղաքում կամ իբրև ծառայ և կամ շուկայում ամբոխի մէջ խառնուած, անորոշ, գոլշ, մութ զանգուած։

«Արքէն Դիմաքսեանի մէջ մի քանի անգամ գործողութիւնը տեղափոխւում է գիւղ։ Արքէնը այցելում է իր գիւղացիներին, պատում է շրջակայ մի քանի գիւղերում։ Բայց այստեղ մենք չենք նկատում միջավայրի նկարագրութիւն, տիպեր, գիւղական բարքեր ու հոգեբանութիւն։ Մանաւանդ որ Արքէնի շրջագայութիւնները տեւում են շատ կարճ ժամանակ և կրում են միանգամայն պատահական բնաւորութիւն։

Այս երեւոյթի պատճառը երկու են։ Նախ՝ Շիրվանզադէն—ինչպէս նկատեցինք նրա կենսագրութեան մէջ—գիւղում չէ ապրել և ծանօթ չէ գիւղական կեանքին։ Մինչև տասնվեց-տասնեօթ տարեկան հասակը նա անց է կացրել Շամախում, այնուհետև Բագու, Թիֆլիս, Ռուսաստան, Եւրոպա։ Իր անհատական կեանքի այսպիսի դասաւորութեան բերումով՝ նա հնարաւորութիւն չէ ունեցել մօտենալ գիւղի մարդկանց և ուսումնասիրել նրանց հոգեբանութիւնը։ Այս անհատական պատճառից բացի՝ անշուշտ որոշ դեր է խաղացել և կեանքի իրական փոփոխութիւնը.—գիւղերի համեմատական անկումն ու նրանց սուր հետաքրքրութեան անհետացումը և քաղաքների զարգացումը։

Հասարակական և տնտեսական այս կարգերի մէջ՝ իրենք գիւղացի գրողները չատ դուրս են գալիս իրենց շրջանից և ձգտում են քաղաքի կեանքը ներկայացնել։ Քաղաքի բնակչութիւնը իր ուրոյն հոգեբանութեամբ սկսել էր գրականութեան համար որոշ հետաքրքրութիւն հանդէս բերել։ Գրողները այլ ևս կարող էին խմբերի բաժանուել և իրենց նիւթի մէջ մասնագիտանալ։ Շիրվանզադէն իր յղացումների և գեղարուեստական ստեղծագործութիւնների համար ունէր ահագին դաշտ. կարող էր այնտեղ շարժման մէջ դնել իր հոգեկան ապրումները և տագնապը։ Անհրաժեշտ չէր, որ այդ նպատակով նա անծանօթ և անհարազատ շրջան ընտրէր և կամ առանձնապէս զբաղուէր գիւղական կեանքի ուսումնասիրութեամբ։ Մի ուսումնասիրութիւն, որ կարող էր երկար տևել և որի փոխարէն նա հնարաւորութիւն կունենար իր պատրաստի

ուսումնասիրութիւնները և իր ապրած միջավայրն ու ճանաչած անձերը արտայայտել։

Գիւղական դասի բացակայութեան հետ միասին՝ նկատելի է նաև հոգեւորականութեան բացակայութիւնը Շիրվանզադէի երկերում։ Վերոյիշեալ բոլոր գրողները—առաւել կամ նուազ—գիւղացիութեան կողքին տեղ են տուել և հոգևորականներին, գլխաւորապէս քահանաներին։

Մի քանիսները մինչև իսկ գեղարուեստական կատարելութեան են հասցրել տէրտէրների որոշ տիպեր։ Մեր գիւղացիական գրականութեան մէջ անմոռանալի կը մնան Պօղոսեանի, Րաֆֆիի և միւսների ստեղծած քահանաներից շատերը։

Շիրվանզադէի գրականութիւնը հոգևորականներ չունի։ Մինչև անգամ «Նամուսն» ու «Ցաւագաթը»—որ գաւառի կեանքից են և ուր կարող էին քահանաներ երևալ—տեղ չեն տուել այդ մարդկանց։ Նրա մեծ վէպի, «Բաօս»-ի մէջ միայն, կան մի եպիսկոպոս և երկու քահանայ—տէր Սիմօն և տէր Աշօտ, պահպանողական և ազատամիտ։ Սրանք երևում են շատ կարճ ժամանակ, Մարկոս աղա Ալիմեանցի յուղարկաւորութեան և թաղման ճաշի առիթով և բնաւ նշանակալից դեր չեն կատարում։

Զգիտենք, այս պարագան, հոգևորականների բացակայութիւնը պայմանաւորուած է արդեօք որևէ անհատական տրամադրութեամբ։ Կենսագրութեան մէջ այդ մասին մենք ոչինչ չտեսանք։ Ասարկայական պատճառը, սակայն, ակներև է։ Հոգևորականների դերը և ազդեցութիւնը մեր նոր քաղաքակրթութեան մէջ և քաղաքային նոր յարաբերութիւնների ցանցում կարևոր չէ։ Այստեղ նրանք այն վճռական նշանակութիւնը չունեն, ինչ որ գիւղերում։ Հասարակական կեանքը քաղաքներում զրեթէ ազատ է հոգևորականների ներգործութիւնից և անմիջական հսկողութիւնից։ Վաճառական-առևտրական գործերը, արդիւնաբերական ձեռնարկութիւնները, մասնաւորական շարժումները կատարւում են առանց հոգևորականութեան։ Այս տեսակէտից՝ հոգևորականների բացակայութիւնը Շիրվանզադէի երկերում՝ հասկանալի է և բնական...

Մեր հասարակութեան մէկ ուրիշ դասակարգ, բանուորութիւնը—որ վերջին երկու տասնամեակներում մանաւանդ զգալի չափով սնուարացաւ և որի զարգացումը կապուած է արդիւնաբերութեան զարգացման հետ—Շիրվանզադէի երկերի մէջ շատ փոքր տեղ է գտել և առհասարակ նրա գեղարուեստական յղացումների նիւթ չէ դարձել։ Իր առաջին պատմուածքում, տակաւին 1883 թուականին, նկարագրելով նաւթագործարանի հրդեհը՝ Շիրվանզադէն արդիւնաբերողի հետ միասին դուրս է բերել նաև բանուորներին։ Տիպեր չկան այդտեղ, անհատական հոգեբանութիւն չկայ։ Մութ, երեսուն, խօլական մասսա է միայն, որ խեղակորոյս նետւում է ահեղ կրակի մէջ՝ նաւթագործարանը փրկելու միամիտ ու ողորմելի ակնկալութեամբ։ Դուք տեսնում էք, սակայն, ուշագրաւ երևոյթը, կապիտալիզմի ստեղծած սեփականազուրկ ու մահախլատատ բանակը, որ հետզհետէ, աւելի ու աւելի պէտք է աճէ և մեր կեանքում որոշ տեղ բռնէ։ Այնուհետև, երկար տարիներ, Շիրվանզադէն չէ յիշատակում բնաւ այդ դասակարգի անունը մինչև «Բաօս», ուր նորից հրապարակ է գալիս նա և կրկին շարժում իր դժբախտ գլուխը։

Այստեղ արդէն, արդիւնաբերական այս քաօսում, բանուորներն աւելի գիտակից են ներկայանում և աւելի պարզ, քան սկզբնական պատ-

մուածքի մէջ։ Այնուամենայնիւ, այստեղ էլ ցուցահանուած չեն որոշ բնաւորութիւններ և որոշ հոգեկան կազմեր։ Երևոյթը դիտուած է իբրև ժողովածու, իբրև հաւաքոյթ իբրև հօտ։ Զուպրովը, Կարապետը, Ռասուլը անհատներ չեն, այլ խորհրդանշանական, սիմվոլիկ ստեղծագործութիւններ, որոնց տակ կարող է ամենայն դիւրութեամբ տեղաւորուել ամեն մի պատահական բանուոր։

«Քաօս»-ից յետոյ, Շիրվանզադէն այլևս չէ խօսում այդ մարդկանց մասին դէթ հարևանցի, եթէ չհաշուենք «Արտիստի» մի մեկուսացեալ և միջանկեալ տեսարանը, ուր նկարագրուած են նաւահանգստի աշխատաւորութեան զուարճութիւնները։

Ժամանակակից միւս հայ գրողները ևս չեն զբաղուել մեր հասարակութեան այդ մասի կեանքով աւելի մանրամասն ու հանգամանօրէն։ Ամեն մէկը նրանցից, որը առաւել, որը նուազ՝ խօսել են գործաւորների մասին, բայց ոչ ոք յատուկ տեղ չէ վերապահել նրանց իր ստեղծագործութիւնների մէջ։

Այս իրողութիւնը մեծ չափով արդիւնք է անշուշտ այն բանի, որ բանուորութիւնը մեր հասարակութեան մէջ տակաւին բաւականաչափ զարգացած չէ իբրև հասարակական դասակարգ, իբրև քաղաքակրթական գործօն, իբրև հանրային դերակատար։ Միւս կողմից, այնքան, որքան նա զարգացած է՝ կարող էր աւելի ընդարձակ տեղ գրաւել մեր գրականութեան մէջ, եթէ գրողները անհատական հակումներ, յարմարութիւններ և գիտակցական տրամադրութիւններ ունենային։

Շիրվանզադէն միակն է, որ աւելի մօտ է բանուորներին թէ իր գրական տեսակով և թէ իր

ապրած կեանքով։

Երկար տարիներ բնակուելով արդիւնաբերական քաղաքի մէջ, նկարագրելով գրամատէր և գործարանատէր դասերին, որոնք շարունակ շփուում են աշխատաւորութեան հետ՝ Շիրվանզադէն անկասկած յարմարութիւններ ունէր ներկայացնելու բանուորների կեանքը աւելի հանգամանօրէն և աւելի ընդարձակ՝ քան արել է և քան մեկ ուրիշը կարող էր անել։

Հաւանօրէն անհատական որոշ տրամադրութիւններ դեր են խաղացել այստեղ, բացի ընդհանուր առարկայական հանգամանքներից, որ մենք յիշատակեցինք արդէն...

Այսպէս. մեր հասարակութեան երկու ծայրային դասակարգերը, հնամեայ գիւղացիութիւնը և նորակազմ բանուորութիւնը չեն արտայայտուել Շիրվանզադէի երկերում, ինչպէս նաև չէ արտայայտուել հոգևորականութիւնը։ Այս երկու դասակարգերի միջև ընկած խաւերը առաւել կամ նուազ նիւթ են մատակարարել նրա գեղարուեստական յղացումներին և ստեղծագործութիւններին։ Արհեստաւորներ, գործակատարներ, վաճառականներ, կապալառուներ, արդիւնաբերողներ, մտաւորականներ, պաշտօնեաներ, մասամբ և ազնուականներ կամ աւելի ճիշտ՝ նրանց անգոյն ճիւղորդներ։ Բայց այս բոլոր միջին խաւերը հաւասարապէս ուշադրութեան չեն արժանացած։ Դրանցից ոմանք համեմատաբար շատ քիչ տեղ են գրաւում և Շիրվանզադէի համար բնորոշ չեն, միւսները տարածուած են գրեթէ նրա բոլոր երկերում և հեղինակի համար տիպիքական ու չափազանց խարակտերիստիք են։

Շամախիի կեանքից վերցրած երկու դրուագների—«Նամուս»-ի և «Յաւագար»-ի մէջ—արհեստաւորները շատ տեղ են բռնում: Բայց դրանց հետ միասին՝ կարևոր մասնակցութիւն ունին նաև վաճառականները: Սուսանի և Սօնայի ամուսինները, ուրիշ խօսքով այդ երկերի հերոսները, Ռուստամ և Մուրադ, վաճառականներ են: Արհեստաւորներ կան նաև «Ֆաթմա և Ասադ»-ի, «Քաօս»-ի և «Եղբայրասպան» փոքրիկ պատկերի մէջ: Առաջինում արծաթագործ Ասադի դիմաց կայ յայտնի կալուածատէր և յայտնի հարուստ Ալեաքպար: Երկրորդում արծաթագործ Բարսեղը չնչին դեր ունի և պարապում է դրամի շահեցողութեամբ: Դրա փոխարէն ամբողջ երկը ներշնչուած է արդիւնաբերական-կապիտալիստական մթնոլորտով: Երրորդ, «Եղբայրասպան,» չափազանց աննշան պատմուածք է և Շիրվանզադէի երկերում ոչ մի տեղ չէ գրաւում: Այսքանը միայն:

Աղնուականները և պաշօնեաները յիշատակւում են Թիֆլիսի կեանքից վերցրած երկերի մէջ գլխաւորապէս: «Արամբին»-ի այրի Նատալիան աղնուականի դուստր է և պաշօնեայի ամուսին: «Ջուր Յոյսեր»-ի տիկին Սօֆիօն նոյնպէս ազնուականի աղջիկ է: Նրա եղբայրը՝ իշխան Սահառունին, որ գրուածքում բաւական տեղ ունի, ազնուականի ճնշողը է: «Արսէն Դիմաքսեան»-ի մէջ Բարաթեանի հայրը նահանգական վարչութեան պաշօնեայ է: «Նէգինէի» և «Արմենուհու» մէջ կան գինուորականներ, առաջինում պաշօնաթող սպայ, երկրորդում պաշօնաթող գնդապետ: Մինչև խաւերի այս ծայրերը—արհեստաւորներ՝ մէկ կողմից և ազնուականներ ու պաշօնեաներ՝ միւս կողմից—ընդհանրապէս, ուրեմն, կարևոր տեղ չու-

նին Շիրվանզադէի երկերում: Այս հանգամանքը բացատրւում է առաջ շուտ առարկայական հիմքերով: Գաւառական քաղաքներից բացի՝ արհեստաւորները արդիւնաբերական մեծ կենտրոններում հասարակական կարևոր գործառնութիւն (ֆունկցիա) չեն կատարում: Իսկ պաշօնեաները նախ շատ քիչ քանակ են կազմում, ապա եղածներն էլ հետզհետէ նուազում են և փոքրանում, թերևս մասամբ պետական քաղաքականութեան հետևանքով: Ինչ վերաբերում է ազնուականներին՝ դրանց ճնշողները այնքան աննշան են և այնքան ողորմելի, որ կարելի է բնաւ չհաշուել նրանց մասին:

Այսպիսով՝ միջին խաւերի կենտրոնական մասերը միայն—գործակատարներ, վաճառականներ, կապալառուներ, արդիւնաբերողներ և մտաւորականներ—առաջ շատ արտայայտուեցին Շիրվանզադէի երկերում:

Մտաւորականութիւնը իր էութեամբ միատարը, համասեռ խմբակցութիւն չէ: Նրա մի խոշոր հատուածը, բժիշկները, իրաւաբանները, ինժեներները, ենթարկուելով տնտեսական-բուրժուական կարգերին, հետամտելով ապահով դիրքերի, իրենց վրայ խորապէս ընդունել են այդ դասակարգի հոգեբանութիւնը և դարձել մտաւորական բուրժուազիա: Այդ մարդիկ մեր փոխանցական կեանքի մէջ, հրաժարուելով իրենց դասի գաղափարական աւանդութիւններից՝ գլխաւորապէս բացասական յատկութիւններով են աչքի ընկնում: Այս է պատճառը, որ Շիրվանզադէի երկերում, նրանք ըստ մեծի մասին անհամակրելի տիպեր են: Սակայն, ինչպէս իրականութեան, նոյնպէս և Շիրվանզադէի գրուածքների մէջ կան նաև այդ դասի դրական ներկայացուցիչները:

Մտաւորականութեան միւս հատուածը, որ իր հոգեբանութեամբ և մտածողութեամբ, իր զգացումներով և իդէալներով որոշապէս տարբերւում է առաջինից՝ բնականաբար չէր կարող նոյնանալ նրա հետ։ Աւելի յարմար կոչում և աւելի ճիշտ տերմին չգտնելով՝ մենք նրան անուանում ենք *զաղափարական մտաւորականութիւն*։ Այս հատուածի մարդիկ ապրելով անտեսական նոր պայմանների մէջ, շարժուելով բուրժուական կարգերի ցանցում, աշխատում են, սակայն, չենթարկուել այդ միջավայրի հոգեբանութեան և ձգտում են իրենց կողմից ազդել այդ կարգերի վրայ։ Նրանք ունեն հասարակական իդէալներ և հանրային գործունէութեան տենչեր. ու հաւատարիմ այդ իդէալներին՝ նրանք կամենում են մեր կեանքի մէջ պատուաստել աւելի արդար, աւելի ռամկավար կարգեր։ Ժամանակի ընթացքում այս հատուածը հետզհետէ զարգանալով՝ իր միջից հանում է մի տարր, որ երազում է անտեսական հաւասարութեան հեռաւոր ապագան և որ փորձում է իրագործել աշխատաւոր դասի շահերը։

Շիրվանզադէի երկերում մտաւորականութեան այս երկրորդ հատուածը և մանաւանդ սրա ծայրայեղ, արմատական, ձախակողմեան մասը շատ քիչ տեղ է բռնում։ «Կրակ»-ի Սանթուրեանը տակաւին ուսանող է և իր հասարակական դէմքով մեզ անծանօթ։ Արսէն Դիմաքսեանի հանրային իդէալները պարզ և որոշակի արտայայտուած չեն։ Վերջում նա մեզ երևում է իբր հարուստ կալուածատէր, որ ազնիւ մարդ է միաժամանակ և որ կամենում է մի դպրոց բանալ իր դրամով։ «Շրջանից արտաքսուած»-ի Յորէնը, ռուս-պարսկական սահմանագլխի այդ գաղափարական ուսուցիչը, մեզ անձամբ չէ յայտնւում։ Նրան մենք տեսնում ենք իբր Պետրոս Մարդանեան, բայց իբր գործիչ, նրա մասին լսում ենք միայն։ «Զուր Յոյսերի» Բագրատեանը մի թռուցիկ երազ է, որ երևում է շատ կարճ ժամանակ, ասես Մարիամի ընկճուած հոգուն թեթևչք տալու համար և որ իսկոյն հեռանում է։ «Կործանուած»-ի Արտաշէսն ու Սենեքերիմը իբրև գաղափարական անձնաւորութիւններ և հասարակական գործիչներ ազօտ են և անկենդան։

Միւս կողմից, մեր մտաւորականութեան առաջին հատուածը—որին մենք անուանեցինք *ինտելիգենտ բուրժուազիա*—աւելի յաճախ, աւելի ուրոշ և աւելի պարզ է արտայայտուած Շիրվանզադէի երկերում։ Մինչև իսկ վերոյիշեալ գրուածքների մէջ—«Կրակ», «Արսէն Դիմաքսեան», «Զուր Յոյսեր», «Շրջանից Արտաքսուած»—նոյնիսկ այդ երկերում, առաջին հատուածի մարդիկ կարևոր տեղ ունին։ Զարիփեանը, Բարաթեանն ու Վեքիլեանը, Մէլիք-Բարսեղեանը, Գալումեանն ու Բարգամեանը հաւասար քայլում են իրենց հակառակորդների հետ և շատ անգամ նրանցից աւելի գունաւոր են երևում։ Բացի այդ՝ նրանց հոգևոր եղբայրները ապրում են նաև «Քաօս»-ի, «Պատուի համար»-ի, «Հաւատարիմ ընկերներ»-ի. «Ինամատարի», «Հրդեհ»-ի, «Մելանիայի» էջերում։

Այսպէս. Շիրվանզադէի երկերի մէջ բաւական դեր ունին և լայն մանակցութիւն են հանդէս բերում բուրժուա մտաւորականները։ Սակայն դրանցից էլ աւելի բնորոշ կերպով արտայայտուած են վաճառականները, կապալառուները, գործակատարները, արդիւնաբերողները։ Բուրժուազիան ընդհանրապէս և բուրժուա մտաւորականութիւնը կազմում են Շիրվանզադէի ստեղծագործութիւննե-

րի հիմքը, բունը, մակարդակը։ Նրանք սփռուած են այդ ստեղծագործութիւնների այս ու այն անկիւնում, այս ու այն էջի վրայ, երբեմն աւելի, երբեմն նուազ, երբեմն ուժգին, երբեմն թոյլ—միշտ բնորոշ ու տիպիքական։ Նրանք կան «Հրդեհ»-ի, «Գործակատարի Յիշատակարանից» պատմուածքի, «Նամուս» գաւառական վէպի, «Ինամատուր»-ի, «Օրիորդ Լիզայի», «Արամբիճ»-ի, «Զուր Յոյսերի», «Շրջանից Արտաքսուած»-ի, «Ցաւագարի», «Արտէն Դիմաքսեանի», «Բաօս»-ի, «Մելանիայի», «Կրակ»-ի, «Եգինէի», «Վարդան Ահրումեան»-ի, «Ունէր իրաւունք»-ի, «Պատուի համար»-ի, «Հաւատարիմ ընկերներ»-ի, «Աւերակների վրայ»-ի, «Կործանուած»-ի և «Արմենուհու» մէջ... Նրանք կան նաև «Ֆաթմա և Աստղ» ու «Ջհուդի ականջը» օտար կեանքից վերցրած գրուածքների մէջ...

Մի տեղ նրանք սառաքարշ են, մի ուրիշ տեղ՝ հալարտ, մի տեղ բարի, մի այլ տեղ չար։ Այստեղ նրանք թալանում են և զրկում ամենին, այնտեղ նրանք հասարակական բարեգործներ են։ Մի երկի մէջ նրանք բացասական յատկութիւններով են երեւում, մեւս գրուածքում՝ դրական կողմով հանդէս գալիս։ Այստեղ նրանք ճնշում են իրանց գաւակներին, մի ուրիշ տեղ բռնանում իրենց երիտասարդ կանանց ազատութեան և սիրոյ վրայ։ Մէկը շահագործում է գիտութիւնը և հասարակական դիւրահաւանութիւնը, մեւսը աղաւաղում է բարեկամութիւնը և հարազատական զգացմունքը։ Առաջինը սիրում է, երկրորդը ատում է... Եւ այսպէս անվերջ։

Բուրժուազիայի և բուրժուա մտաւորականութեան բարքերը, սովորութիւնները, գործերը, հոգեբանութիւնը, մտածումները, իդէալները, նրա ընտա-

նիքը, կինը և զաւակները—այս բոլորը Շիրվանզադէի ստեղծագործութեան և յղացման հիմնական հընչիւնն են կազմում։ Նրա երկերի մէջ ամենից բնորոշ կերպով այս խաւերի կեանքն է արտայայտուած...

IX

ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ ԶԻՐՎԱՆԶԱԴԵԱՆ ԵՐԿԵՐԻ ՄԷՋ

Իր գրական երեսնամեայ գործունէութեան ընթացքում Շիրվանզադէն կարողացել է, կենդանի և շարժուն, ներկայացնել հասարակական օրգանիզմը։ Հասարակութիւնը իբրև մի ուրոյն մարմին, իր խոհերով ու պահանջներով, իր տրամաբանութեամբ ու ներքին կեանքով, իր բարոյականութեամբ ու համակրութիւններով, պարզ ու որոշ, երևացել է երկերի մէջ։ Կարելի է տեսնել այդ մարմնի շարժուձևերը, կարելի է լսել նրա ձայնը, հասկանալ նրա հրահանգները, զգալ նրա հակայական շունչը։ Շիրվանզադէն հոգի է տուել այդ մարմնին, ձևաւորել է նրա իրանը և իբրև ապրող գոյութիւն ստիպարէզ հանել իր ստեղծագործութիւնների դաշտում։

Հասարակութիւնը յաճախ հանդէս է գալիս իբրև մի ինքնատիպ անձ, իբրև մի անկախ գործող, իբրև մի իրական ղէմք և շատ անգամ աւելի պայծառ է արտայայտւում, աւելի գունաւոր երևում և մինչև իսկ աւելի ամփոփ ներկայանում, քան այս կամ այն տիպը, այս կամ այն մարդը։ Այդ հսկայ գոյութիւնը, ընդհանրապէս ցրուած ու տեղատուած, Շիրվանզադէի երկերում ժողովւում է, հաւաքւում և ամբողջանում։

Պատմուածքների և դրամաների մէջ նրա դէմ-

քը որոշ չէ։ Նա այնտեղ չէ երևում իր ամբողջ հասակով և իր սեփական կերպարանքով։ Այդ տիպի գրուածքները — արտայայտելով կեանքի մի սահմանափակ կողմը և ներկայացնելով մի առանձնակի խնդիր — հնարաւորութիւն չունին տեղ տալու այն լայն թաւալումներին և այն ընդարձակ շարժումներին, որ յատկանիշն են մի հասարակութեան։ Վէպերը և մանաւանդ մեծ վէպերը ամենայարմար վայրն են, ուր կարող է ծաւալուել հասարակութիւնը։ Շիրվանզադէն ամենից լաւ «Նամուս»-ի, «Արամբին»-ի, «Զուր յոյսերի», «Աբսէն Դիմաքսեան»-ի և «Բաոսի»-ի մէջ է արտայայտել հասարակական բարքերն ու հոգեբանութիւնը։ Այդ երկերում դուք տեսնում էք մեր հասարակութեան պատկերը զանազան ժամանակներում և զանազան միջավայրերում։ Յաճախ անհատը մի կողմ է քաշւում այդտեղ, յաճախ նա մնում է մի անկիւնում և դուք տեսնում էք նրա վրայ տարածուած հասարակութեան լայն ալիքը... «Նամուս»-ի մէջ հասարակութիւնը չափազանց խստասիրտ է։ Նա մերժում է այն զգացմունքները, որոնք չեն սրբագործուած զարաւոր աւանդութիւններով և նահապետական բարոյականութեամբ։ Անձերը, անհատները — կին թէ տղամարդ, հարուստ թէ աղքատ, ծեր թէ երիտասարդ — պիտի յարգեն այդ աւանդութիւնները և պիտի շարժուեն նրա դօրութեամբ ու նրա հրահանգով։ Հասարակութիւնը, հին կտակարանի աստուածութեան նման, բարի է և ողորմած այն մարդկանց նկատմամբ, որոնք ունկնդիր են նրա պատուիրաններին, որոնք անհատական ինքնամոռացութեան մէջ՝ փառաբանում են նրա անունը։ Եւ ընդհակառակը, նախանձոտ է և յիշաչար բոլոր նրանց համար, որոնք մոռանում են հասարակական հնաւանդ կարգերը և

ըմբռնատանում վազեմի սրբութիւնների դէմ։

Այդ հասարակութեան պահանջի համաձայն մարդիկ պէտք է թագցնեն իրենց ներս և ապրեն ընդհանուրի մեծ ներ-ով։ Անհատները դրսեւորուելու, արտայայտուելու իրաւունք չունեն։ Նրանք պատկանում են ամբողջութեան՝ իրենց ճաշակով և իրենց գերագասութիւններով...

Այստեղ դրամը չունի այն ամենազօր նշանակութիւնը։ Անշուշտ, նա խաղում է որոշ դեր. նա մեղմացնում է իր տիրոջ յանցանքները, նա ամոքում է պատժի ծանրութիւնը, բայց նա հասարակական անպատասխանատուութեան մէջից չէ. նա չէ ապահովում մարդկանց անունը և բարոյական անպատժելիութեան գրաւականներ չունի։ «Նամուսի» հասարակութիւնը իր խըստասրտութեան մէջ աւելի արդար է և աւելի հաւասար։ Բռնութեան մէջ ռամկավարական սկզբունքների պաշտպանն է նա։ Արտօնեալ դասեր և առանձնաշնորհեալ վիճակներ չկան այդտեղ։ Հասարակական արիստոկրատիա գոյութիւն չունի։ Այս բոլորը, անկասկած, չպէտք է բացարձակ մըտքով ըմբռնել։ Միշտ և ամեն երկրում դօրաւորները աւելի կամ պակաս անպատիժ են։ Բայց «Նամուս»-ի հասարակութիւնը չէ աղաւաղուած դրամի տարաժիժ սիրապետութեան ներքոյ։ Նա իր համոզումներն ունի, իր հաւատքը և իր խիղճը, որ չէ կարող դիւրութեամբ վաճառել դրամին։

Այդ հասարակութեան համար պատիւը աւելի է քան ոսկին։ Նա միջնադարեան, աւատական հասարակութեան մի կտորն է, որ ապրում է մեր միջավայրում և շարժւում է մեր պատմական գործօնների ազդեցութեամբ։ Բարխուդարի պէս ուժեղ բնաւորութիւնը, որ ամեն յարմարութիւններ ունի բարեկեցիկ նիւթական վիճակ ստեղծելու, որ

կարող է առանց ճիգի ապահով դրութեան հասնել՝ արհամարհում է ամեն ինչ և գիշեր-ցերեկ մտածում է իր պատուի մասին։ «Նամուսի» հասարակութեան անդամները մի ներքին հանգստութեամբ են ենթարկւում նրա հրահանգներին, որքան էլ այս հրահանգները խիստ և ծանր լինեն։ Ըստ երևոյթին մի լուռելեայն դաշինք կայ, մի անխօս համաձայնութիւն՝ անհատների և հասարակութեան միջև, որ մեղմացնում է պարտականութեան բեռը և զոհաբերութեան դառնութիւնը։

Այդ անբարբառ պայմանագրութիւնը հետզհետէ վերանում է, սակայն, և նոր ժամանակների համար այլ ևս յատկանշանական չէ։ Անհատները կամաց-կամաց սկսում են զգալ իրենց չափազանցեալ կախումը և ասես կամենում են մերժել հասարակութեան դարաւոր իրաւունքները։ Հետզհետէ ստեղծւում է նոր հասարակութիւն, իր նոր հոգեբանութեամբ...

«Արամբին»-ի մէջ այս նոր հասարակութիւնը տակաւին կազմակերպուած չէ, բայց սկսում է երևալ արդէն։ Մեծ քաղաքի մթնոլորտը բաւական փոփոխութեան է ենթարկում նրան։ Այստեղ աւանդական, հինաւուրց՝ խստասրտութեան միանում է և չարախնդութիւնը։ Բուրժուական կարգերը կամաց ներգործում են հասարակական ներքին էութեան վրայ։ Եթէ հին հասարակութիւնը իր բռնակալութեան մէջ առաւել կամ նուազ արդար էր, այստեղ այդ դիծը սկսում է հետզհետէ փոքրանալ, նսեմանալ։ Դրամը և դրամական հոգեբանութիւնը հասատատուելով շրջապատի մէջ, իրենց արձագանքները են ունենում հասարակութեան սրտում։ Անհատները այլ ևս նախկին սառնասրտութեամբ և ճակատագրական պաղարիւնութեամբ չեն

տանում նրա ծանրութիւնը: Պարտականութիւնը դառնում է չափազանց ժժուարին: Լուռ պայմանադրութիւնը ասես հետզհետէ վերանում է:

Իր այս յատկութեամբ և դրութեամբ հասարակութիւնը բաւական նմանում է միապետութեան: Ընկերաբանական դիտութիւնները ցոյց են տալիս, որ միապետութիւնները իրենց իշխանութիւնը տարածում են սկզբում հանրային անիսօ համաձայնութեամբ: Ժողովուրդը ասես մի ներքին ձայնաւութեամբ ընդունում է այս կամ այն միապետի բացարձակ իշխանութիւնը: Եւ նրա հնազանդութիւնը միապետական կարգերին կամ որևէ անձի տիրապետութեան՝ սովորաբար լինում է ինքնաբուխ ու կամովին: Յետագայում, զանազան պատճառների ազդեցութեամբ, այս անձայն դաշինքը թուլանում է, կորցնում իր նշանակութիւնը—և միապետութիւնը դառնում է արդէն անտանելի ու ժժուարին: Վերջինս իր իշխանութիւնն ու տիրապետութիւնը, սակայն, չէ ուզում լքել: Հին կարգերի համաձայն՝ նա կամենում է ամեն ինչ պահել իր ձեռքերում: Եւ քանի որ չկայ ներքին համաձայնութիւնը՝ սկսւում է պայքար ժողովրդի և միապետութեան միջև:

Հասարակութեան դրութիւնը մօտաւորապէս նոյնն է: Սկզբնական բարոյական զուգադիպութիւնը վերանում է կամաց-կամաց և հասարակութիւնը կամենում է նուաճել իր աւանդական իրաւունքներով, իր դարաւոր իշխանութեամբ, որի համար այլ ևս իրական հիմքեր չկան: Անհատի համար ծանր է այս իշխանութիւնը, քանի որ նրանց բարոյական լուռ համերաշխութիւնը խախտուել է արդէն: Այս պայմաններում անհատի և հասարակութեան ընդհարումը անխուսափելի է դառնում և կռիւը անհրաժեշտ ..

«Արամբին»-ի հասարակութիւնը աւելի գիտակցօրէն և աւելի չարութեամբ է թշնամանում անհատին: Այդ հակառակորդութիւնը մեծ մասամբ վրէժխնդրութեան կերպարանք է առնում և դատավճիռը ներքին հաճոյքով ու բաւականութեամբ է արւում: Անհատի վրիպումը ուրախութիւն է պատճառում հասարակութեան, որ չէ աշխատում դաստիարակել, սրբագրել, այլ սպասում է յանցանքի արտայայտութեան, որպէսզի անմիջապէս պատժէ: Հասարակութիւնը կորցնում է իր ինքնայատուկ կրթական ձևերն անգամ, իր մանկավարժական հնաբարոյ կանոններն անգամ և դառնում է միայն հակառակորդ, ախոյեան: Այս պատերազմական յարաբերութիւնների մէջ, երկու կողմերի այս վոխադարձ թշնամութեան գործում մի տարօրինակ ճակատագրականութեամբ գատաւորի դեր է ստանձնում ինքը հասարակութիւնը: Պայքարողի յատկութիւնը և դատելու արտօնութիւնը միաժամանակ կենդրոնանում է նրա բարոյական անձնաւորութեան մէջ... Այստեղ էլ միապետութեան հետ նմանութիւնը ակնյայտ է: «Արամբին»-ի հասարակութիւնը սիրով օգտւում է իր արտօնեալ վիճակից: ոտնձգում անհատների դէմ և նրանց անկումը արագացնում: Այդ հասարակութիւնը էապէս չարախինդ է:

«Ջուր յոյսեր»-ի և «Արսէն Դիմաքսեան»-ի մէջ նրա պարտնակութիւնը հետզհետէ զարգանում է նոր տարրերով: Գիտակից և կրթուած մարդիկ են ներս մտնում և դարաւոր աւանդութիւնները գործադրում իրենց օգտին: Այդտեղ հասարակութիւնը տգէտների, նահապետական անձերի,

անուս վաճառականների և թեթեամիտ կանանց ժողովածու չէ միայն, այլ և բժիշկների, փաստաբանների և ուրիշ համալսարանականների հաւաքոյթ։ Այդ հասարակութիւնը այլ ևս չէ հաւատում իր հինաւուրց սկզբունքներին, իր աւանդութիւններին և իր սրբութիւններին։ Նա հասկանում և զգում է այդ այժերի անհիմնութիւնը. գիտէ, որ նրանք ոչ բանական են, ոչ արդար և ոչ ճշմարիտ։ Բայց այդ գիտակցութեամբ հանդերձ՝ նա չէ լքում յիշեալ սկզբունքները և անխնայօրէն շահագործում է նրանց։ «Զուր յոյսեր»-ի և «Արսէն Դիմաքսեան»-ի հասարակութիւնը մեր մտաւորական հասարակութեան բնորոշ, ճշգրիտ արտայայտութիւնն է։ Այդտեղ նա գիտակից է իր վատթար դերին, հասկանում է իր գործած չարութիւնը և հիմնովին զուրկ է անկեղծութիւնից։

Շիրվանզադէն կարողացել է այդ լուսաւորեալ հասարակութեան հոգեբանութիւնը արտայայտել յաջող արուեստով և իրական ճշտութեամբ։ Դուք տեսնում էք նրա դէմքը ամբողջովին, առանց մթութեան և առանց տարակուսանքի։ Նրա ձայնը պարզ լսելի է, նրա խորհրդածութիւնները որոշ են, նրա ներքին էութիւնը քօղամերկուած է վարպետօրէն...

«Քաօս»-ի մէջ հասարակութիւնը գերազանցապէս գունաւորուած է դրամական հասկացողութիւններով ու նիւթական փիլիսոփայութեամբ։ Նա էապէս անարդար է և անհաւասար։ Նրա համար այլ ևս աւանդութիւնները, նախկին սրբութիւնները գին ունեն այնքան, որքան նրանք կապուած են դրամի հետ։ Անհատների անպատասխանատուութիւնը նախապէս ապահովուած է այդ հասարակութեան դատարանի առջև, եթէ միայն նրանք

հասարակական-տնտեսական պիրամիդի վերին շերտերի բնակիչ են։ Նրանք այդ հասարակութեան հոգեբանութեան մէջ անպատժելի են և անձեռնմխելի։

«Քաօս»-ի հասարակութիւնը նեղմիտ չէ և ոչ էլ խստասիրտ։ Նա բնաւ նախանձախնդիր չէ նահապետական սովորութիւնների յարատեւութեան։ Աշխարհի յարափոփոխ ճակատագրի մէջ վաղեմի բարքերը կարող են անհետանալ, եթէ այդ պահանջում է նոր ժամանակների իշխանը—դրամական այժը։

Ապօրինի սերը այդ հասարակութեան աչքում չէ առանձնանում ենթակայից։ Գործողութիւնը միշտ կապւում է կատարողի հետ։ Եւ նայելով թէ ով է ենթական, ըստ այնմ էլ դատւում է առարկայի որպիսութիւնը։ Ամուսնական անհաւատարմութիւնը իբրև անկախ գաղափար անընդունելի է այդ հասարակութեան համար։ Միշտ անհրաժեշտ է գիտնալ, ճանաչել, ի նկատ առնել անձի նիւթական կարողութիւնն ու հասարակական դիրքը և ապա դատավճիռ արձակել։ Այդ հասարակութեան մէջ բռնութիւնը, անհաշտութիւնը պայման չեն. բայց պայման չէ նաև բարոյականութիւնը, անգամ իւրատեսակ, մանաւանդ բարոյականութիւնը։

«Քաօս»-ի հասարակութիւնը գերազանցապէս անսկզբունք հասարակութիւն է։ Զուրկ հաստատուն խղճից և որևէ հաւատից։

Շիրվանզադէն կարող է իբրև հասարակական բարքերի տաղանդաւոր վերլուծող, իբր հասարակական հոգեբանութեան և մտածողութեան շնորհալի արտայայտիչ...

X

ԸՆՏԱՆԻՔԸ ԶԻՐՎԱՆԶԱՏԻՒ ԵՐԿԵՐՈՒՄ

Մեր գրական քննութեան ընթացքում, խօսելով այս կամ այն երկի մասին, մենք մատնանշեցինք այն յատուկ ուշադրութիւնը, որ Շիրվանզադէն արտայայտում է հայ ընտանիքի նկատմամբ։

Մեր կեանքի զարգացման և ընդհանրապէս մեր քաղաքակրթութեան համար անգին կարևորութիւն ունի ընտանիքի բարոյական կատարելագործումը։ Եթէ ընտանիքների ներքին կեանքը քայքայուած է և բնականոն ընթացքը աւերուած՝ իզուր է յուսալ առողջ հասարակութիւն։ Եթէ ընտանիքի կեանքը հիմնուած է կեղծիքի և սուի վրայ — անկարելի է երևակայել հասարակական միջավայրի աղնուութիւն և հանրային շրջապատի առաքինութիւն։

Շիրվանզադէն իր գրականութեամբ աշխատել է ցոյց տալ այն վիճակը, որի մէջ գտնւում է հայ ընտանիքը և այն իդէալական դրութիւնը, որ — իր կարծիքով — անհրաժեշտ է նրա կատարելութեան համար։

Գաւառական ընտանիքը, արհեստաւոր ընտանիքը, վաճառականի, արդիւնաբերողի ընտանիքները, մտաւորականի ընտանիքը — փոխ առ փոխ տեղ են գտել նրա երկերի մէջ։ Շիրվանզադէն զանազան

ժամանակների և զանազան միջավայրերի ընտանիքները հաւասար յաջողութեամբ կարողացել է ուսումնասիրել, քննել, վերլուծել և իր եղրակացութիւնները գեղարուեստական ձևով հաղորդել։

Գաւառական ընտանիքը նրան չէ երևում այն փայլով և այն հովուերգական երջանկութեամբ, որպէս երևացել է մեր նախկին վիպասաններին։ Դուք այնտեղ չէք գտնի այն բացարձակ մաքրութիւնը, այն բարոյական վսեմութիւնը, այն չքնաղ, անվրդով հրապոյրը, որ առհասարակ հանդէս են գալիս ոսմանեիք վէպերում։ Շիրվանզադէն, իբրև իրապաշտ գրող, կարողացել է խուսափել այդ չափազանցութիւններից։ Բայց դրբոնով հանդերձ՝ նա միանգամայն և կտրականապէս չէ հեռացել այդ կախարդական միջավայրից։ «Նամուս»-ի մէջ, Բարխուդարի և Հայրապետի ընտանիքները — մինչև բարեկամութեան ընդհատումը — ոսմանեան գոյնով են նկարուել։ Անկասկած այն, ինչ տեսել է հեղինակը՝ իրական են. անշուշտ, այդ ընտանիքների անխառն երջանկութիւնը — սկզբնական շրջանում — երևակայութեան արդիւնք չէ, բայց այդ բոլորը աքօղուած են երազական ու վարդագոյն տրամադրութեամբ։ Շիրվանզադէն դուրս է բերել հայ գաւառական ընտանիքի բարոյական բարձրութիւնը։ Համերաշխութիւնը նրա հիմքն է, փոխադարձ բարեկամութիւնը նրա պատուանդանն է։ Այնտեղ տիրում է մի սրտառուչ ու նահապետական ներդաշնակութիւն։ Կինը այնտեղ ամուսնուն հաւասար դիրք չունի, իհարկէ, տղամարդը ընտանիքի և կնոջ տէրն է. բայց այս անհաւասարութիւնը, այս ինքնաբուխ ու կամովին հնազանդութիւնը մեծամեծ չարիք չէ ծնում։ Զաւակների և ծնողների կապերը բարոյական մանոյա-

տուկ հիմքեր ունին: Առանց դասակարակչական խորունկ սկզբունքների, առանց կրթական տեսութիւնների՝ նրանց յարաբերութիւնները, նրանց փոխադարձ վերաբերմունքը այնուամենայնիւ չափազանցօրէն զարնուած չեն: Զաւակները սեփական կամք չունեն, մանաւանդ աղջիկները անկախ չեն, անշուշտ—բայց այս բոլորը ընտանիքի մէջ չեն մտցնում այն ներքին քայքայումը, այն բարոյական ապականութիւնը, որ պիտի երևայ յետագայում, բուրժուական հասարակակարգի ներքոյ...

Այստեղ ընտանիքների անբախտութեան իսկական պատճառը անհատի ազատութեան անկատարութիւնը չէ այնքան, որքան հասարակութեան իշխանութիւնը և մարդկանց իրայատուկ հոգեբանութիւնը: Եթէ Սուսանը կամենար իրագործել իր բուռն սէրը, եթէ նա վախչէր անգամ Սէյրանի հետ—այնուամենայնիւ ոչ մի երջանկութիւն չէր ստեղծուի: Ընտանիքները դրանով չէին ազատուի անբախտ վիճակից: Բարխուդարը ինքնապանութիւն կըգործէր, կինը թշուառութեան կըդատապարտուէր, Հայրապետը անշուշտ չէր ների իր զաւակին—և այսպէս երկու ընտանիքներն էլ կըկործանուէին: Որովհետև անհատների ազատութեան խնդրից դուրս՝ հասարակութիւնը կայ և մարդկանց որոշ, մանակի հոգեբանութիւնը: Նոր ժամանակներում կամ մեծ քաղաքներում աղջկայ անհնազանդութիւնը, կնոջ փախուստը այդպիսի հետևանքներ չեն ծնում: Հասարակութիւնը այստեղ տարբեր վերաբերմունք ունի դէպի նման դէպքերը և մարդիկ տարբեր աչքով են նայում իրերի վրայ...

Գաւառական ընտանիքի երջանկութեան կարճատև նկարագրութիւնից յետոյ՝ Շիրվանզադէն ցուցահանել է նաև նրա ստուերապատ կողմերը:

Ռուստամի ընտանիքը, ուր փոխադարձ անկեղծ սէր չկայ, ուր ամուսինների վստահութիւն գոյութիւն չունի, ուր անմեղութիւնը սպանւում է դաժանօրէն: Հացթուխ Շուշանի ընտանիքը, ուր ամուսինը շահագործում է կնոջ և աղջկայ դառն քրտինքը: Մուրադի ընտանիքը, ուր բարոյական աղնիւ կինը հալածանքի է ենթարկւում սկեսուրի և տալի կողմից և ուր Սօնան, իբրև դիւահար՝ անխիղճ կերպով սպանւում է:

Մի տեղ վայրենի խանդն ու անզուսպ կիրքը, միւս տեղ ծուլութիւնն ու հարբեցողութիւնը, երրորդ դէպքում՝ նախանձն ու նախապաշարմունքը խաչ են քաշում ընտանիքների երջանկութեան վրայ:

Բնազդը, աղքատութիւնը և խաւարը աւերմունքներ են գործում գաւառական ընտանիքներում և անկարելի են դարձնում նրա բարոյական և նիւթական բարգաւաճումը...

Միւս կողմից՝ կեանքի ընդհանուր յառաջդիմութիւնը, կրթութիւնն ու ապահովութիւնը չեն կարողանում չեզոքացնել հին ընտանիքների սովորական չարիքը և ընդունակ չեն աւելի երջանիկ կացութիւն ստեղծելու:

Բուրժուական կարգերի ազդեցութեան տակ հայ ընտանիքները կորցնում են իրենց նահապետական հանդիսաւոր և անվրդով վիճակը, այնքան որքան կարելի է հանգստութիւն երևակայել անպիտակցութեան և խաւարի մէջ:

Ամուսնացողներին այլ ևս շատ չէ հետաքրքրում իրենց ապագայ ընկերի բարոյական արժանաւորութիւնները, հոգեկան յատկութիւնները, մին-

չև անգամ ֆիզիքական բարեմասնութիւնները, տա-
լիքը... առաջին տեղը բռնում է նիւթական կա-
յունութիւնը և դրամական վիճակը: Ընտանիքները
հիմնւում են գլխաւորապէս այդ առաջնակարգ
սկզբունքի վրայ: Ոսկին դառնում է հիմք, նա հան-
դիսանում է ընտանիքների բարոյական պատուան-
դանը: Նա դառնում է այն կախարդական շրջա-
նակը, որի մէջ մարդիկ ձգտում են, երազում են
երջանկութիւն իրագործել:

Բայց այդ երջանկութիւնը խաբուսիկ է. այդ
երազները դատարկ են և անբովանդակ: Կինը ըս-
կսում է կամաց-կամաց դուրս գալ առաջին ամիս-
ների անգիտակցական հաճոյքից: Տղամարդը ըս-
կսում է հետզհետէ աւելի ուժեղ, աւելի տևական
դրգիռներ որոնել: Ծայր է տալիս ընտանեկան
կեանքի հոգեկան անջատումը, ապա և մարմնա-
կան բաժանումը, ամուսնական դաւաճանութիւն,
անհաւատարմութիւն: Եւ այսպէս, խորտակւում է
ընտանիքների բարոյական շէնքը: «Արամբին»,
«Զուր յոյսեր», «Արսէն Դիմաքսեան», «Ֆաօս»
արտայայտում են բուրժուական ընտանիքների այս
վիրաւոր կողմը, այս չարաբաստիկ խոցը: Կատօն,
իշխանի թոռը և պաշտօնեայ մարդու աղջիկը ա-
մուսնացել է հասարակ լաստարի հետ այն միակ
պատճառով, որ նա դրամ ունի: Այս ամուսնու-
թեան հետևանքը—կնոջ ապօրինի որոնումները—
շուտով վրայ են հասնում:

Տիկին Սօֆիան, Սահառունիների ազնուական
շառաւիղը, համաձայնուել է վաճառական Սադա-
ֆեանի կինը դառնալ, որպէսզի կողոպտէ նրա տու-
նը, իր աղջկայ հետ միասին թալանէ նրա բովան-
դակ հարստութիւնը և միշտ արհամարհէ նրան:
Բարեբախտաբար, այդ գեղեցիկ ու ազնիւ երիտասար-

դը, հրապուրուել է Գայիանէով—աւելի ճիշտ նրա
հարստութեամբ—որպէսզի վաղը ազատօրէն շա-
րունակէ իր ամուրիական զուարճութիւնները:

Տիկին Բախտամեանը, այդ թարմ, շքեղ մար-
մինը բարեհաճել է ծեր վաճառականին ընկերա-
նալ, որպէսզի քիչ յետոյ թքէ նրա թառամած ճա-
կատին և նրա հարստութեամբ իր համար աւելի
համապատասխան ոյգեր գտնէ: Տիկին Անուշը,
հարուստ վաճառականի դուստրը, ամուսնանում է
իր դայեթաղիչի՝ Ղալուստեան գործակատարի հետ,
որպէսզի յետոյ իր իսկական շրջանի մարդկանց
դիրքին ընկնէ...

Այս է ընդհանուր առմամբ այն մթնոլորտը,
այն երազած «երջանկութիւնը», այն ցանկալի
«ազատութիւնը», որ հրապարակ բերեց և իրա-
գործեց բուրժուազական կարգը ընտանիքների մէջ:

Մի կողմից՝ բարոյական և առաքինի ան-
ձնաւորութիւնները չկամենալով այդպէս լուծել
ամուսնական դրամանները՝ տանջւում են իրենց հո-
գու խորքում, չեն կարողանում իրենց օրինաւոր
ամուսիննների հետ ապրել մի յարկի տակ և խա-
բել նրանց, ձգտում են ամեն ինչ և հեռանում ըն-
տանեկան դժոխքից...

Մելանիան, այդ երիտասարդ, գեղեցիկ կինը,
որ պատանի հասակում ամուսնացել է իր հօրից
մեծ մի հարուստ վաճառականի հետ՝ չէ կարողա-
նում սիրել նրան և լքում է նրա տունը:

Հերսելին, այդ իդէալական աղջիկը, որ ծնող-
ների խորհրդով ընդունել է տարիքաւոր բուրժուա
Բէգմուրեանի առաջարկը—փորձում է կրել իր ճա-
կատագիրը, աշխատում է հաշտուել իրականու-
թեան հետ—բայց հնարաւոր չէ դառնում ընտա-
նեկան խաղաղ մթնոլորտը և նա հալկադրուած

հեռանում է ամուսնուց: Նոյնպիսի դժոխք է ներկայացնում նաև Ամենուհու և Ալագեանցի տունը, որոնք տարբեր բնաւորութեան, տարբեր խառնուածքի, տարբեր բարոյականութեան տէր լինելով՝ չեն կարողանում իրագործել ամուսնական երջանկութիւնը:

Շիրվանզադէն երկարօրէն կանգ է առել հայ ընտանիքների այս ցաւագար դրութեան վրայ. մանրամասն նկարագրել է նրանց ներքին խայտառակ միջավայրը, նրանց արիւնոտ ու մահարոյր իրականութիւնը: Այդ նկարագրութեան մէջ նա հանդէս է բերել դիտողութեան ընդունակութիւն, ուսումնասիրութեան կարողութիւն, վերլուծման շնորք և առհասարակ արտայայտութեան համոզիչ ձև: Ճիշտ է, շատ անգամ նրա ցուցադրութիւնները թուում են բռնազբօսիկ ու արհեստական, յաճախ—իր նախադրեալ զաղափարի և կանխորոշած լուծման համար—նա, մեր կարծիքով, զոհում է իրերի ընական ընթացքը—այնուամենայնիւ դրանք այն ընոյթի չեն, որ կարողանան խանգարել երկի ամբողջութիւնը և կասկածելի դարձնել նրա իրական արժէքը և կեանքի ընդհանրապէս ուղիղ վերարտադրութիւնը...

Բուրժուական ընտանիքի միւս կողմը—ծնողների և զաւակների յարաբերութիւնը—նոյնպէս արժանացել է առանձին ուշադրութեան: Այդտեղ բարոյական ոչ մի հիմք չկայ, ոչ ընդհանուր, և ոչ իւրաքանչիւր: Այդ յարաբերութիւնները ոչ մի հարազատական արտայայտութիւն չունեին: Նահապետական ընտանիքների մանկայատուկ բարոյականութիւնն անգամ—որ այսպէս թէ այնպէս կապում էր ծնողներին զաւակների հետ—այստեղ չկայ: Այս ընտանիքի մէջ ուրիշ աւելի հզօր կը-

կզբունք չէ գործում բացի դրամի կործանարար սկզբունքից:

Շիրվանզադէն այս խնդրում էապէս բացառական դիտող է: Նրա աշխարհահայեցողութիւնը զաւակների և ծնողների յարաբերութեան նկատմամբ՝ առհասարակ վայրում է շեշտուած յոռետեսութեամբ: Մարգարիտի բացառիկ և երազական դէմքը չի խանգարում այդ աշխարհահայեացքի ընդհանուր կերպարանքը: Բուրժուական ընտանիքում ծնողները և զաւակները բարեկամներ չեն, այլ թշնամիներ: Ահա թէ ինչ է այդ դիտողութեան եզրակացութիւնը ընդհանրապէս:

«Զուր յոյսեր»-ի օրիորդ Նատալիան չէ յարդում իր հօրը և ոչ էլ որևէ բարոյական կապ ունի նրա հետ: Հայրը նրա աչքում արժէք ունի միայն այնքան, որքան նա հարկաւոր է իր հագուստի, զլխարկի և հանդէսների համար:

«Քաօս»-ի Միքայէլը, Արշակը, Մարթան մաղայփ անգամ չեն ցաւում իրենց հօր զաղաղի առջև: Նրանց հարազատական զգացմունքը բնաւ յուզուած չէ: Նրանք մտածում են միայն չարաշուք կտակի բովանդակութեան մասին և երբ տեղեկանում են, որ իրենց սանձարձակ կրքերի համար բաւականաչափ դրամ չկայ—խորին տառապութիւն են տածում դէպի անշնչացած մարմինը անգամ:

Նոյն պարագաների մէջ են հանդէս գալիս նաև Անդրէաս Էլիզբարեանի և Աթանէս Ֆրանգուլեանի ընտանիքները: Այդտեղ էլ որդիները շահագործում, թալանում են ծնողներին, կողոպտում են «ոսկու տոպրակը» և թքում են նրանց պատուի ու հանգստութեան վրայ...

Մեր իրականութեան մէջ Շիրվանզադէն նը-

կատել է գլխաւորապէս այլասեռուած ընտանիքները և այդ տեսակների կեանքն է ընդհանուր առմամբ նիւթ դարձրել իր ստեղծագործութիւնների և գեղարուեստական յղացումների: Երջանիկ ընտանիքները, խաղաղ և համապատասխան ամուսնութիւնները նրա երկերի մէջ բացառութիւն են կազմում: Մեր նահապետական, վաղեմի կարգերը չեն կարողացել ընտանեկան կատարեալ և իսկական երջանկութիւնն իրագործել: Մեր բուրժուական ղրամական հասարակութիւնը մինչև այսօր ընդունակ չէ եղել բախտաւորութիւնը, խաղաղութիւնը, սէրը մարմնացնելու ընտանեկան յարկի տակ: Ոչ այնտեղ, գաւառում և ոչ այստեղ, մեծ քաղաքներում՝ մեր ընտանիքները յառաջադիմութեան նպաստաւոր գործօններ չեն: Ոչ այնտեղ, արհեստաւորի, մանր վաճառականի ընտանիքը և ոչ այստեղ, մեծ վաճառականի, արդիւնաբերողի, մտաւորականի ընտանիքը քաղաքակրթութեան օրրաններ չեն:

Հասարակական հինաւուրց կարգերը, աւանդութիւնները, վաղեմի բարոյական հայեացքները, անհատի անազատութիւնը և տնտեսական չարաշուք պայմանները արգելք են հանդիսացել ընտանիքների երջանկութեան...

Շիրվանզադէի հասարակական և բարոյական աշխարհահայեացքը վերլուծելու՝ մենք կանգ կառնենք այն մէջոցների վրայ, որոնք նրա կարծիքով կարող են բուժել ցաւը: Առայժմ միայն մենք կամեցանք ցուցադրել մեր ընտանիքների այն վիճակը, որ պատկերանում է Շիրվանզադէի երկերի մէջ ընդհանրապէս...

Իբրև ընտանիքի վիպասան և դրամատուրգ

Շիրվանզադէն անկասկածելի բարեմասնութիւններ ունի: Նա պայծառ է, ամփոփ, որոշ ու ճշգրիտ, բայց ոչ այնքան խորունկ ու կատարեալ: Իբրև հասարակական բարքերի վերլուծող՝ նա աւելի դրաւիչ է և աւելի բարձր, քան իբրև ընտանիքի բանաստեղծ և քննադատ...



XI

ԱՆՀԱՏԸ ԶԻՐՎԱԾՋԱՏԻԼԻ ԵՐԿԵՐՈՒՄ

Բազմաթիւ են նրանք, այդ անհատները, տարբեր սեռի և հասակի, տարբեր բնաւորութեան և խառնուածքի, բացառական և դրական, որը կամքոտ և վճռական, որը թոյլ և անկարող։

Շիրվանզադէն իր երեսուն երկերի մէջ փռել է տարբեր տիպի մարդկանց, տարբեր գոյծերով, խոհերով, իդէալներով։ Մի ցուցահանդէս է դա, խայտաբղէտ, գոյնզգոյն և բազմազան, մի աղմկալից ու առատ ցուցահանդէս։ Անհատների այդ ժըխորի մէջ դժուար է գտնել այն ընդհանուրը, որի շուրջը դառնում է հեղինակի ստեղծագործութիւնը, և որոշել այն հիմնական հնչիւնը, այն տոնը, որի վրայ երգում է բանաստեղծը։

Այդ խառնակութեան մէջ, սակայն, կարելի է ընդհնշմարել երեք տեսակ հոգեբանութիւն։ Նրանք, որոնք կեանքը համարում են լէշերի մի ընդարձակ դաշտ և ձգտում են ամէն կերպ ուտել, ծծել, գիշատել։ Նրանք, որոնք ուտելու կարողութիւնից զուրկ են, կամ աւելի ճիշտ, որոնք չծծելու բացառական առաքինութիւնն ունեն և որոնք միաժամանակ անընդունակ են դիմադրելու սեփական անձերի դէմ ուղղուած հարուածներին։ Նրանք, որոնք համոզմունքով ու գիտակցութեամբ չեն կամենում ծծել, գիշատել և որոնք միաժամանակ կա-

րողանում են դիմադրել վամպիրներին և ապրել անկախ, ինքնուրոյն ու ազատ...

Առաջիններըը կեանքի վայրագ գիշատիչներն են, երկրորդները՝ դժբախտ զոհեր են, երրորդները՝ վսեմ հերոսներ։

Գիշակերները բարոյական սկզբունքներ չունեն։ Նրանց սկզբունքն անբարոյականութիւնն է։ Նրանք կանգ չեն առնում ոչ մի արգելքի առջև, իրենց եսական բիրտ շահերը ամենուրեք տարածելու համար։ Նրանք իրենցից դուրս, իրենց ընտանիքից դուրս, իրենց փառքից ու կրքից դուրս գոյութիւն չեն ճանաչում։ Նրանց համար թոյլերը, անկարողները խղճալու և ողորմածութեան առարկաներ չեն, այլ շահագործման և կողոպուտի նիւթեր։ Նրանք երևան են գալիս մերթ «Հրդեհ»-ի մէջ իբրև գործարանատէր, որ իր նիւթական ապահովութեան համար դէպի բոցավառ անդունդն է ուղարկում թշուառ բանուորներին։ Մերթ իբրև գործակատար, որ իր ապագայի համար զոհում է ամեն ինչ—բարեկամութիւն, սէր, ընկերներ—և առևտրական ասպարիզի մէջ այդ ամենի գընով նախանձելի դիրք ձեռք բերում։ Նրանք երեւում են մերթ «խնամատարի» կերպարանքով, որ իր կրքին և բիրտ ցանկութեան զոհարերում է անարատ, անմեղ աղջկան, առանց որև է խղճահարութեան և առանց ամօթի։ Նրանք երևում են—«Ջուր Ցոյսեր»-ի մէջ—համալսարանական բժշկի և ուսեալ մարդու զգեստի տակ, որ իր յաջողութեան և նիւթական դիրքի համար վաճառքի է հանում իր իդէալները, իր գիտութիւնը, իր զգացմունքը։ Նրանք երևում են, նոյն երկի էջերի վրայ, իբրև մի զաժան հօրեղբայր, որ զրկում, թալանում է իր հարազատներին, որ կողոպտում է

նրանց սեփականութիւնը՝ իր տանեակ հազարնե-
րը բազմացնելու համար: Նրանք ապրում են նաև
մի հասարակական գործչի, մի հոգաբարձուի պատ-
կառելի դիրքի մէջ, որ ամուսնանում է գեղեցիկ
ու հարուստ Գայիանէի հետ և ցեխ շպրտում նրա
ամբիծ դէմքին:

Այդ մարդիկ ցրուած են ամենուրեք. այդ
տիպերը գործում են ամեն տպարիզում և ամեն
միջավայրում: Ուժեղների մօտ սարսուռ են և քծ-
նող, թոյլերի նկատմամբ գազան և դիշատիչ: Նը-
րանք պատիւ չունեին, նրանք ներքին մարդ չու-
նին, նրանք խղճի խայթ չունեին: Նրանց պատիւն
էլ, ներքին մարդն էլ, խիղճն էլ հրապարակն է:
Ընդհանրապէս նրանք դրամատէր են: Կեանքի մէջ
իրենց դիրքն ապահովելու և իրենց ծրագիրները
իրագործելու համար՝ դրամին նրանք մեծ կարևո-
րութիւն են տալիս, մինչև իսկ եզական նշանա-
կութիւն: Ոսկին նրանց համար միաժամանակ և՛
միջոց է և՛ նպատակ: Անյագ սէրը և ընտանե-
կան դժբախտութիւնը նրանց երբեմն յուզում են,
նրանց սովորական հանգստութիւնը վրդովում:
Նրանք անիծում են հարստութիւնը, նիւթական
առատութիւնը, որոնք իրենց բոլոր փայլի մէջ
անգամ յաճախ չեն կարողանում սրտերը խաբել և
ամուսնական երջանկութիւնը հաստատել: Բայց
նրանց յուզմունքն ու անէծքը երկար չէ տևում:
Նրանք սովորաբար չեն յուսահատւում: Այդ մար-
դիկ դիշատիչներ են և քայլում են բոլոր գեղեց-
կուհիների աւերակների վրայից և հարազատների
դագաղները կոխ տալով՝ նրանք դիմում են դէպի
նոսկան կեանքի վերջին հանգրուանը...

Շիրվանզադէն այդ մարդկանց տիպն առհա-
սարակ լաւ է դուրս բերել: Նրանց հոգեբանու-

թեան մէջ մութ տեղեր կան անշուշտ, նրանց գո-
յութիւնը իր ամբողջ հիմքով և ծաւալով չէ ներ-
կայանում մեզ—բայց այնքան, որքան ներկայա-
նում է՝ բաւարար է ընդհանրապէս:

Երկրորդ տեսակի անձերը—գոհերը—սովորա-
բար կապուած են առաջիններուի հետ: Պատահում է
երբեմն, որ նրանք սեփական սխալի, «ճակատա-
գրականութեան» և «տարերային» հանգամանքնե-
րի տակ են մնում. պատահում է, որ նրանք հա-
սարակական աւանդութիւնների անորոշ հարուած-
ների առջև են ընկնում—սակայն շատ յաճախ,
գրեթէ միշտ, այդ սխալն էլ, այդ տարերային
հանգամանքներն էլ, հասարակական այդ աւան-
դութիւններն էլ գործում են որև է մարդու միջո-
ցով: Մի մարդ, որ նրանցից յանուն ճակատագրի
կամ յանուն հասարակութեան և կամ ի փոխարի-
նութիւն նրանց սխալի՝ պահանջում է որոշ զոհա-
բերութիւն կամ հարկադրում է որոշ պատիժ...

Նրանք, այդ դժբախտ զոհերը, երբեմն երե-
ւան են գալիս հաւաքական բնոյթով, իբրև ան-
գիտակից բանուորներ, որոնց շահագործում է ճար-
պիկ գործարանատէրը և որոնց, հարկաւոր պարա-
գայում, դէպի «Հրդեհն» է ուղարկում անգամ: Ա-
ւելի յաճախ նրանք հանդէս են գալիս իբրև ան-
հատներ, թոյլ կամքով, անվճռական ոգով, անարի
հոգեբանութեամբ, թշուառ անտեսականով, չափա-
զանց զգայուն խղճով, որոնց դիւրին է նուաճել և
որոնք երբէք չեն կարողանում խուսափել ճակա-
տագրի հարուածներից: Կամ մի Սուսան է նա—այդ
անզօր, բարի, միամիտ թոլսկամ զոհը—որ ան-
կարող է ընդդիմանալ հասարակական բարքերին
և հայրական պատուին, որ սիրով զոհաբերում է իր

զգացմունքը և որ այնուամենայնիւ մեռնում է խանդոտ ամուսնու դաշոյնի առջև։

Կամ մի կատերինա կարլօվնա է նա, որ աբիուէթիւն չունի իր ակնյայտ թշնամուն—իր խնամատարին—յաղթահարելու և որ կամք չունի կուսուէթեան կորուստից յետոյ՝ իր մարդկային արժանապատուէթեան վրայ մեռելու։ Մերթ մի Վառվառէ է նա, որ անառակ ամուսնուն թողնելու խրոխտ շեշտից յետոյ՝ այլ ևս չի կարողանում դրական առաքինութիւն ասպարէզ հանել, որ հասարակական դատաստանին և հօր անունին պիղծում է իր գերագոյն զգացմունքը և որ մեռնում է արգելուած սիրոյ խռովքի մէջ։ Յաճախ մի հացթուխ Շուշան, մի Սօնա, մի Գայիանէ, մի Մարգարիտ, մի Լեւոն են նրանք—կեանքի այդ զարնուածները, որոնց կամ հարբեցող ամուսինն է շահագործում, կամ չար ու ոճրագործ սկեսուրը, կամ անամօթ ամուսինը, կամ դրամապաշտ, անխիղճ հայրը, կամ մասամբ սիրած էակը։

Բոլոր այդ մարդիկ, իրենց դժբախտ կացութեան մէջ անգամ, պահպանել են բարոյական յատկութիւնները և տանջուել, զոհաբերուել են իրրև առաքինի անձեր։ Կեանքի դառն ոտնձգութիւնների դէմ՝ նրանք այնուամենայնիւ չեն կորցրել գեղեցկի և բարւոյ սէրը։ Անշուշտ, իրականութեան մէջ շատերը դրանցից չեն կարողանում ընդ միշտ տիրել իրենց բնազդներին և չարաշուք պայմանների ազդեցութեան ներքոյ յաճախ ղրկւում են առաքինութիւններից։ Դրանք, այդ մոլորուած, խեղճացուրուած զոհերը, Շիրվանզադէի երկերում ընդհանրապէս բացակայում են, եթէ չհաշուենք, օրինակի համար, տիկին Բախտամեանցի պէս անհատներին, որոնք յուսահատուած անհամապատասխան

միջնորդում և անսէր ընտանիքի մէջ՝ անձնատուր են լինում իրենց կրքերին...

Մի նշանակելի կէտ, սակս, բնորոշ հանգամանք լինի այդ զոհերի համար։ Շիրվանզադէն նրանց ըստ մեծի մասին վերցրել է կանանց սեռից։ Սուսան, Վառվառէ, Կատարինէ, Գայիանէ, Սօնա, Շուշան, Մարգարիտ... Դրանք աւելի յաճախ և աւելի շատ են ենթարկուած հասարակական աւանդութիւններին և եսական մարդկանց հարուածներին։ Այս երևոյթը մեծ չափով առարկայական հիմքեր ունի, անշուշտ։ Մեր կեանքը և առհասարակ ամեն մի կեանք կանանց համար աւելի ծանր և աւելի դժուարին է։ Բայց մեզ թւում է, որ այդտեղ գործում է նաև հեղինակի ենթակայական տրամադրութիւնը։ Նրա խառնուածքը և նրա գեղարուեստական անհատական յղացումը դէպի կին զոհերն են ուղղուել... Առարկայական անհրաժեշտութիւնից զատ, այստեղ կայ նաև անձնական գերադասութիւն։

Շիրվանզադէն այս երկրորդ տեսակի անհատներին դուրս է բերել անհաւասար յաջողութեամբ։ Նրանցից ոմանք արտայայտուել են կենդանի, համոզիչ ու տրամաբանական, ոմանք անգոյն ու տաւերապատ։

Գիշատիչներից և զոհերից բացի՝ հեղինակը իր երեսուն տարուայ գրական գործունէութեան ընթացքում առանձնապէս զբաղուել է հերոսների կեանքով։ Այն մարդիկ, որոնք հոգեկան գեղեցկութեան մէջ, վճռական կամքով, արիաբար և առանց ստրկական համակերպութեան կարողացել են պայքարել հասարակական բիրտ նախապաշարումների, միջավայրի տխուր հասկացողութեան, բռնակալների անսանձ լծի դէմ—այդ մարդիկ մի

արտակարգ հրապոյր են ներշնչել Շիրվանզադէին։

Նրա գրականութիւնը առանց այդ վսեմ հերոսների կըկորցնէր իր կենդանութիւնը, իր տաքութիւնը, իր շունչը, իր հոգին։ Հեղինակը նրանց մէջ է ամփոփել իր հաւատքը, իր բարոյական աշխարհահայեացքը, իր մարդկային համակրութիւնները և իր իդէալները։ Նրանք Շիրվանզադէի երկերի հիմքն են կազմում, նրա յղացումների կենդրոնական առարկան և նրա գեղարուեստական ստեղծագործութիւնների սիրտը։

Նրանք տակաւին տարտամ և վարանոտ են հեղինակի գրական գործունէութեան առաջին տասնամեակում։ Այդտեղ ընդհանրապէս տակաւ է նըրանց հոգին, բաւականաչափ անկազմակերպ նըրանց կամքը։ Նրանք տարուբերուում են զոհերի և հերոսների արանքում և ի վերջոյ, սովորաբար, հանդչում իրենց հոգեկան լարման և բարոյական ուժգին ձգտումի մէջ։ Մեր միջավայրի պայմանները և մեր շրջապատի մտնայատուկ պարագաները այնպէս չեն դասաւորուած, որ կարողանան պահպանել նրանց հաւատարակշռութիւնը և իդէալական ընթացք տալ նրանց հոգեկան ոյժերին։ Առաջին տասնամեակում նրանք վրիպում են առհասարակ։ Այդտեղ մի Վառվառէ, մի Մարիամ չեն կարողանում մինչև հերոսութեան բարձունքը հընել։

Երկրորդ և երրորդ տասնամեակներում նրանք կամաց-կամաց կազմակերպւում են և նրանց թիւը հետզհետէ շատանում է։ Այդտեղ մի Մարգոնեան կարողանում է արհամարհել ընկերների և հասարակութեան հալածանքը և նուիրուել ժողովրդական գործին։ Մի Արսէն Դիմաքսեան կարողանում է յաջողութեամբ պայքարել հարազատ ծնողի բռնակալութեան, ընկերների դատաճանութեան, հասարակութեան ապերախտ ու խիստ հարուածների և իր սեփական անկատարութիւնների դէմ։ Կարողանում է իր վրդը մարմնով դիմագրաւել միջավայրի բուռն հոսանքին, տարերային գնացքին և յաղթանակով ապրել ու գործել։ Այդտեղ մի Սանթուրեան դուրս է գալիս բովանդակ ուսանողութեան դէմ. մի Մուրադ, գաւառացի մի դժբախտ ամուսին, հոգեկան ոյժ է ունենում արհամարհելու տիրապետող նախապաշարումները, անոտիապաշտութիւնները և ծնողների ամենօրեայ կշտամբանքները. մի Մինքայել կարողանում է ներքին յարատև ու անդադրում գործունէութեամբ ազատուել քաօսի խեղդող մթոլորտից և ապրել իբրև առաքինի ու հերոսական մարդ. մի Միհրան կարողանում է յաղթահարել «գազանը», կարողանում է բարձրանալ իր հասարակութեան բարոյական մակարդակից և «յանցաւոր» կնոջ ազնիւ կողմերը գնահատել ու առաքինութիւնը հասկանալ. մի Մելանիա, մի Հիբսէլի, մի Արմենուհի կարողանում են զոհել իրենց նիւթական ապահովութիւնը, ոտնատակ տալ հասարակական հինաւուրց կարգերը, պայքարել «ստի և կեղծիքի» դէմ և մաքուր խղճով ու բարոյականութեամբ—թողնել իրենց անհամապատասխան և անիրաւ ամուսիններին...

Շիրվանզադէն այս մարդկանց մէջ դրել է ուժգին անհատականութիւն, վճռական կամք, ինքնուրոյն, անկախ հոգի, ազատ ու անկաշկանդ գիտակցութիւն և այսպէս զինելով՝ ըմբոստացրել է նրանց ընտանեկան և հասարակական նախապաշարումների դէմ...

Նրա բոլոր երկերի մէջից իբրև հիմնական հնչիւն՝ լսւում է կնոջ ազատագրութեան և անհա-

ձեալ անհատականութեան նոյն վտանգից հնար չունի ազատուելու: Նրանց աշխատանքը, օրինակի համար, ոչ բուսաբանի և ոչ քիմիագէտի առարկայականութեան չէ կարող հասնել: Ցեղական, ազգային հարցեր, քաղաքական տեսակէտներ, դասակարգային մտահոգութիւնները, յաճախ կրօնական նկատումներ սուեբաւորում են նրանց գործի բացարձակ արժէքը:

Գեղարուեստագէտը իր ընոյթով, իր էութեամբ և իր մեթոդով աւելի ենթակայական անձնաւորութիւն է, քան ընկերաբանն ու պատմագէտը: Նրա գործը ևս կատարելապէս առարկայական լինելու հնարաւորութիւնից դուրս է: Նա դիտում է կեանքը ոչ իբրև մի անշունչ առարկայ, ոչ այնպիսի պաղարիւն անտարբերութեամբ, ինչպէս կենդանաբանը որև է միջատ կըզննէ կամ աստղագէտը երկնային մարմինների շարժումները կուսումնասիրէ:

Կեանքի խնդիրները քննելիս և անձերը վերլուծելիս՝ նա երբեմն ոգևորւում է, երբեմն արտասուում, մերթ սքանչանում է վսեմ հոգու հանդէպ, մերթ զայրանում, վիրաւորւում ոճիրների դիմաց: Նրա մէջ յոյզեր կան, նրա մէջ սիրտ կայ, որ չէ մարում և չի կարող մարել: Հոմերոսից սկսած մինչև Տօլստոյ՝ ոչ մի գեղարուեստագէտ չի կարողացել ապրինքնանալ, դուրս գալ, անջատուել իր ինքնութիւնից...

Շիրվանզադէն իր երեսնամեայ գրական գործունէութեան ընթացքում պաշտպանել է որոշ դաւդափարներ և սիրել որոշ իդէալներ: Նա գրանով իսկ՝ պայքարել է որոշ սկզբունքների դէմ և մերժել որոշ մտքեր: Իր երկերի մէջ՝ նա մեկէն ու

պարզ ներկայացրել է իր հասարակական և բարոյական աշխարհահայեացքը:

Մեր կեանքի ընդհանուր վիճակը Շիրվանզադէին թւում է չափազանց ախտաւոր: Հասարակութիւնը բիրտ ու թշնամի արդարութեան, ընտանիքը այլասերուած ու ապերջանիկ ընդհանրապէս, անհատը առանց մարդկային արժանապատուութեան: Իբրև իրականութեան բացասական քննադատ՝ նա մեր գրականութեան մէջ կարևոր տեղ ունի: Նա չէ հիանում հայ կեանքի նահապետական պարզութեան և միամտութեան առջև. նրան մեր աշխարհը վարդագոյն չէ երևում. նա հայ մարդու հինաւուրց բարոյականութեան անվերապահ հաւատացողը և փառաբանողը չէ: Մեր միջավայրը «աշխարհների լաւագոյնը» չէ և ոչ էլ ամեն բան լաւ է գնում այնտեղ:

Այս ժխտական վերաբերմունքն ինքնին պարզաբանում է հեղինակի տեսողութեան մէկ կողմը— այն, որ նրա կարծիքով փոփոխութեան, յառաջադիմութեան անյետաձգելի պահանջ կայ: Նա պահպանողական չէ. նա մեր կեանքի հնութիւնների սիրահարը չէ. նա «հայկական սկզբունքներ»-ի մոլեռանդ փաստաբանը չէ: Նա բնաշրջումի (էվոլիւցիայի) ջերմեռանդ ներկայացուցիչն է:

Ի՞նչ է հարկաւոր մեր աշխարհին, ի՞նչ ուղղութիւն և ի՞նչ իդէալ է անհրաժեշտ մեր կեանքի վերանորոգութեան համար: Այստեղ Շիրվանզադէն հրապարակ է գալիս ոչ միայն իբրև ժխտող, այլ և իբրև կրող ու իբրև պաշտպան որոշ դաւդափարների: Իր բացասական աշխարհահայեացքից անմիջապէս յետոյ՝ նա երևում է իբրև դրական աշխարհահայեացքի մարդ: Նրա բարոյագիտութիւնը

կործանման և քանդումի անհրաժեշտ գործով չէ բաւականանում, այլ և ներքին բուռն պահանջ է զգում կառուցանելու և շինելու...

Ընտանիքը գերի է հասարակութեան ծոցում: Ընտանիքը զոհաբերում է հասարակական մեռեալ աւանդութիւններին: Միւս կողմից՝ զաւակները և կինը սորուկ են ծնողներին և ամուսիններին: Նրանք զոհւում են ընտանեկան բիրտ ու վրիպած բարոյականութեան:

Անհատը շղթայուած է երկու տեղն էլ, թէ ընտանիքում և թէ հասարակութեան մէջ: Նա իր կամքի, իր խղճի, իր գիտակցութեան, իր ներքին ձայնի տէրը չէ: Զարիքը, կեանքի թշուառութիւնն այդտեղից է առաջանում: Երջանկութեան անկատարութիւնը, բացակայութիւնը իր հիմքն այդտեղ է թագցնում: Պէտք է ջախջախել հասարակութեան աւանդութիւնների և կործանարար օրէնքների բերը: Պէտք է կոտրել ընտանիքի, ախտաւոր, նեխուած ընտանիքի դռները: Պէտք է ազատութիւն տալ անհատին: Առանց այս ազատութեան՝ իսկական երջանկութիւն չկայ: Առանց այս ազատութեան՝ կեանքը յաւիտեան կընկերակայցնէ դրամաների մի անհատնում շարք, չարիքը, աւելութիւնը յաւերժ կըթագաւորեն և մարդկութիւնը չի կարող իրագործել արդարութեան նուիրական դարագլուխը:

Շիրվանզադէն անհատականութեան բացառիկ վիպասանն է, անհատի ազատութեան, անկախութեան, ինքնուրոյնութեան կոչուած բանաստեղծը:

Զաւակները—լինին դրանք աղջիկ թէ տղայ—պէտք է զարգանան ազատ, առանց ծնողական բռնակալութեան և առանց հայրերի դաժան ոէժիմի:

Աշակերտները պէտք է ազատ լինեն իրենց հոգեկան, մտաւոր, բարոյական զաստիարակութեան մէջ: Ուսուցիչները և մանկավարժները չը-պէտք է կաղապարեն նրանց ուղեղը, ստրկացնեն նրանց միտքը, ճնշեն նրանց անձնականութիւնը, խեղդեն նրանց ներքին, ինքնաբուխ զարգացումը: Նրանք պէտք է ղեկավար լինեն միայն, հակեն, որ աշակերտը վնասակար վրիպումներ չանէ:

Կինը ընտանիքի մէջ ամուսնու հաւասար ընկերն է: Տղամարդը նրա հոգու և զգացումների վրայ ոչ մի իրաւունք չունի: Ամուսնութիւնը չէ խլում կնոջ խիղճը և անհատական ազատութիւնը դրանով չպէտք է բռնաբարուի:

Առանց սիրոյ և առանց վոխադարձ յարգանքի ընտանիք չկայ: Կեղծիքի և սուտքեան վրայ անցանկալի և անկարելի է ընտանիք հիմնել և ամուսնական երջանկութիւն յուսալ: Դրանից կըտուժեն ամուսինները, կըտուժեն անմեղ երեխաները, կըտուժէ հասարակութիւնը և անյուսալի կըզարնուին արդարութիւնն ու ճշմարտութիւնը:

Շիրվանզադէի աշխարհահայեացքով այդ բոլորը կեանքի յարատև սուացուածքը կըմնան և մեր ախտաւոր ժառանգութիւնը կըզառնան՝ քանի որ անհատը ազատ չէ, քանի որ նրա հոգին, զգացումները, խիղճը բանտարկուած են անցեալի մեռելական շունչի մէջ...

Հասարակական ախտերի մաքրագործումը և ընտանեկան վէրքերի բուժումը պէտք է սպասել անհատի ազատագրութիւնից՝ առանց սեռի խտրութեան... Այստեղ է կայանում Շիրվանզադէի բարոյական-հասարակական աշխարհահայեացքի հիմքը, նրա հեղինակական դաւանանքը:

Այս նպատակին չի կարելի հասնել ճակատա-

դրականութեամբ, իրերի տարերային բերումով։ Անհրաժեշտ է ուժեղ, կորովի անհատների մասնակցութիւնը։

Մարդկութիւնը չի կարող ազատագրուել կրաւորական դիմադրութեամբ, բարոյական անձերի լուռ նահատակութեամբ, առաքինի մարդկանց անխօս և անբարբառ զոհաբերութեամբ։ Դիշատիչների պատճառած չարիքը բուժելու, կորսուած արդարութիւնը վերականգնելու համար դժբախտ զոհերը բաւական չեն։

Հարկաւոր են հերոսներ, ներգործական անհատներ, գիտակցական և կամքոտ հոգիներ։ Առանց այս մարդկանց միջամտութեան՝ կարելի չէ մօտենալ կեանքի դրամայի լուծման և իրերի դիզեցիկ ներդաշնակութեան։ Շիրվանզադէն իր իդէալները, իր հասարակական-բարոյական գաղափարները դրել է այդ վճռական անհատների մէջ։ Նրանք բացի այն, որ գեղարուեստական յղացումներ են և կեանքի տիպեր են առհասարակ—նրանք միաժամանակ խորհրդանշաններ են, որոշ սկզբունքների և գաղափարների սիմվոլներ։ Շիրվանզադէի համոզմունքով՝ նրանց դերը մեծ է կեանքի մէջ, նրանց նշանակութիւնը ուղղակի առաջնակարգ է։ Նրանք կարող են արագացնել իրերի բնական ընթացքը, նրանք կարող են գունաւորել, շեշտել այդ ընթացքը, նրանք կարող են կեանքի վրայ իրենց կնիքը դնել...

Այդ անձերի միջոցով Շիրվանզադէն քարոզում է ազատ հասարակութեան դէմ, կուիր ընտանեկան նախապաշարումների դէմ, ճակատագրական յարձակում բոլոր այն աւանդութիւնների, եկեղեցական կարգերի, «նուիրական» արգելքների

դէմ, որոնք տարկացնում են մարդուն և որոնք թշնամի են անհատի ազատութեան ու երջանկութեան...

Այս պայքարը, սակայն, միակողմանի է։

Շիրվանզադէն իր գրական գործունէութեան ընթացքում կանգ չէ առել քաղաքական և տնտեսական խնդիրների վրայ։ Նա չէ՞ շօշափել այն կապը, որ գոյութիւն ունի մարդկային ազատութեան և քաղաքական պայմանների միջև։

Անհատի ինքնուրոյնութեան այն կողմը, որ կախուած է պետական և կառավարական որոշ կարգերից և որոշ ձևից՝ նրա հասարակական աշխարհահայեացքի մէջ տեղ չէ գտել։ Նա չէ կանգ առել այն ցաւոտ կնճռի և այն ողբերգական հանգոյցի վրայ, որ մխացնում է անհատի երջանկութիւնը անտեսական որոշ յարաբերութիւնների հետ։

Ազատութեան և բախտաւորութեան հիմքը նա տեսել է հասարակական նախապաշարումների, կրօնական խաւութիւնների, եկեղեցական հինցած օրէնքների ժխտումի մէջ։

Շիրվանզադէն հասարակական լիբերալիզմի վիպասանն է։ Ո՛չ քաղաքական ազատութեան և ո՛չ մանաւանդ անտեսական հաւասարութեան խընդիրները կապուած չեն այդ լիբերալիզմի հետ։ Նրա քարոզած և ներբողած պայքարը հասարակութեան և ընտանիքի լծի դէմ է տարամերժօրէն։ Այդ պայքարը քաղաքական և անտեսական հիմքեր չունի։ Իբրև հասարակագէտ և իբրև բարոյագէտ Շիրվանզադէն ճշմարիտ մաքեր է արծարծել, բայց նա չէ տեսել ամբողջ ճշմարտութիւնը։ Նրա աշխարհայեացքը թերի է և անկատար։

Շիրվանզադէի հասարակական և բարոյական

իդէալները երբեմն կարող են մասնակի երջանկութիւն առաջ բերել, բայց նրանք չեն կարող լուծել ընդհանրապէս կեանքի բարդ դրաման և մեր դժբախտ իրականութեան առեղծուածը ..



XIII

ՉԻՐՎԱՆԶԱԴԷՆ ԻՐԵՒ ՍՐՈՒԵՍՏԱԳԻՏ

Բանասաեղծ.—Հոդեբան.—Վիպասան.—Դրամատուրգ.—Ոճարան

Իր բազմազան դիտողութիւնների հետևանքը, կեանքի ըմբռնումները, իր բարոյական և հասարակական աշխարհահայեացքը Շիրվանզադէն դրել է գեղարուեստական ձևի մէջ: Նրա գրականութիւնը որոշ մաքերի և հասկացողութիւնների անմիջական և ուղղակի քարոզչութիւնը չէ: Վիպասանութիւնը չէ դարձել ստրուկ որևէ գաղափարի, չի շղթայուել որևէ տենդենցիայի տարամերժ ազդեցութեան ներքոյ: Դրաման զոհ չէ դարձել որևէ քաղաքական, հասարակական կամ փիլիսոփայական սկզբունքի ձեռքին: Շիրվանզադէն հանդէս է գալիս իր գրուածքներում ոչ իբրև հրապարակադիր, այլ իբրև գեղարուեստագէտ: Գաղափարը, բարոյական, հասարակական խղճմտանքը արտացոլում են կենդանի կերպով այս կամ այն անձի, այս կամ այն դէպքի մէջ, որ ամենից առաջ իրականութեան նկարագիրն է, և կեանքի հարազատ վերարտադրութիւնը: Իր մաքերը արծարծելու համար նա չէ վերցնում երևակայական անձեր և մտա-

ցածին դէպքեր: Նա աշխատում է նախ և առաջ կեանքը հասկանալ, զոյութիւն ունեցող մարդկանց ըմբռնել, մեր իրական միջավայրը ուսումնասիրել և միայն դրանց միջոցով հաղորդել իր բարոյագիտութիւնը և հասարակահայեցողութիւնը:

Շիրվանզադէն իրապաշտական դպրոցի հետևող է: Նա համակրանք է տածում նաև դէպի ֆրանսիական գրականութեան բնապաշտական ուղղութիւնը, որ տարբեր է բոլոր երկիրների ռեալիզմից և որ ունի իր դեղարուեստական ինքնօրինակ ըմբռնումները: Այդ ուղղութեան տաղանդաւոր ներկայացուցչի փիլիսոփայական ուսմունքի համաձայն՝ ամբողջ հոգեբանութիւնը գտնւում է բնախօսութեան մէջ և ներքինը հետաքրքրական է ու իրական այնքան, որքան նա երևում է արտաքինի մէջ: Դեղարուեստական-փիլիսոփայական այս սկզբունքից է առաջանում արտաքին կեանքի մանրազննին ու մանրակրկիտ նկարագրութիւնը, գիտական մանրամասն յուցադրութիւնը երևոյթների դէպքերի, իրերի և «փոքրիկ փաստերի», որոնք իբր պայմանաւորում են անհատը և դրսևորում նրա ներքինը:

Շիրվանզադէն որպէս դեղարուեստական շատ բան է պարտական այդ սկզբունքին: Արտաքին կեանքի նկարագրութեան մէջ նա մեծ յաջողութիւն է ունեցել: Նա սիրով և վարպետօրէն փռում է մեր առաջ որև է իրական տեսարան—մի պարահանդէս, իր բոլոր մանրամասներով, մի ճաշ, իր բոլոր պարագաներով, մի շուկայ, իր բոլոր կողմերով, մի փողոց, մի նաւահանգիստ, մի դահլիճ, մի զուարճարան, մի հրդեհ, մի գործարան, մի մարդ, մի կին, իրենց բոլոր տեսքով և ամբողջ կերպարանքով: Նրա պատկերները պարզ են, ո-

րոշ, հանգամանալից ու գունաւոր: Դուք տպրում էք նրանց հետ և կարդալիս ձանձրոյթ չէք զգում: Շիրվանզադէի նկարչական ընդունակութիւնը այնպէս է դասաւորում և համախմբում կեանքի տեսարանները, որ դուք առանց դժուարութեան կարողանում էք տեղափոխուել նրա նկարագրած միջավայրը, զգալ ներկայացրած շրջապատը և ապրել նրանց մէջ:

Իբրև իրական պատկերների և տեսարանների արուեստագէտ՝ Շիրվանզադէն անուրանալի բարեմասնութիւններ ունի և աչքի ընկնող առաւելութիւններ... Բնութիւնը, լեռները, ձորերը, անտառները, աստղազարդ երկինքը, վերջալոյսը, արշալոյսը տեղ չեն բռնում նրա նկարագրութիւնների մէջ: Ռեալիստական դպրոցի այս բնորոշ, յատկանշական գիծը անցել է նաև Շիրվանզադէի երկերին: Մինչդեռ ռոմանտիքները—դրանց թւում և մեր Րաֆֆին-յուզիչ, դասական էջեր ունին նուիրած բնութեան աքանչելիքներին և արհաւիրներին, իրապաշտները—դրանց թւում և Շիրվանզադէն—լքած են այդ մասը և կանգ են առած առօրեայ, ընթացիկ կեանքի և իրողութիւնների վրայ:

Մոռնալով շրջապատի ուշադիր ու «գիտական» նկարագրութեան մէջ՝ նրանք կորցրել են մասամբ բանաստեղծական թռիչքը և քնարական տրամադրութիւնը: Երազները, բուռն ոգևորութիւնը, մեղմութիւնը, քաղցրութիւնը, վիշտը, թախիծը, հոգու հեկեկանքը, սրտի խորունկ ապրումները, անուրջները և վանի հաճոյքները—մի խօսքով ուրախ և տրտում լիրիզմը պակասում է բնապաշտական գրականութեան մէջ ընդհանրապէս, Շիրվանզադէի երկերում մասնաւորապէս:

Մեր քննութեան ընթացքում մենք ցոյց

տուինք մի քանի էջեր—գրուած մաքուր բանաստեղծականութեամբ և քնարաշունչ տրամադրութեամբ—որոնք, սակայն, յատկանշանական չեն Շիրվանզադէի ամբողջական ստեղծագործութեան համար և չեն բնորոշում նրա գեղարուեստական դէմքը:

Արտաքին կեանքի մանրակրկիտ ու երկայնաշունչ նկարագրութեան մէջ, իրողութիւնների և «փոքրիկ փաստերի» ժխորի մէջ—երազական լիրիզմի հետ միասին—նսեմանում, խեղդւում է նաև մարդուս հոգին: Քիչ բնապաշտներ կան, որ կարող են բոլոր այդ արտաքին «անհրաժեշտ» կոյտերի միջից հասնել մեր հոգուն, լուսաւորել նրան, հասկանալ նրա ներքին օրէնքները, տեսնել նրա հեռաւոր շարժուձևերը և այդ բոլորը դնել իրողութիւնների սիրած ցանցում: Ինչպէս պատմաբաններից քչերը միայն կարողանում են ամբողջ ժամանակ նկարագրել որև է թագաւորի, որև է քաղաքական գործչի հանապազօրեայ կեանքի մանրամասնութիւնները—ճաշը, հագուստը, զուարճութիւնները, խաղերը, կերակուրները—և այդ բոլորի մէջ այնուամենայնիւ արտայայտել մարդուս բազմակողմանի ներքինը՝ պարզ, որոշ, մէկին ու համոզիչ—այնպէս էլ հազուագիւտ գեղարուեստագէտներին միայն յաջողւում է յարգել բնապաշտական դպրոցի «գիտական» պահանջները, արտաքին բոլոր իրողութիւնների և մանր փաստերի անհրաժեշտութիւնը և այդ ծանր ու ապերախտ աշխատանքի հետ միանգամայն հոգեբանական կատարելութիւններ ստեղծել...

Շիրվանզադէն նուրբ և բարդ հոգեբանութիւնների մէջ ընդհանրապէս վրիպել է: Իր ներկայացրած անձերի խորունկ և հեռաւոր հոգին խուսափել է նրա տեսողութիւնից և վերլուծութիւնից:

Նրա երկերի մէջ կան սկսուած հոգեբանութիւններ, կան արտայայտիչ ու նշանակելի վայրկեաններ: Նա մի քանի անձերի նկատմամբ բացառապէս յաջողութիւն է ունեցել: Գիշատիչները, եսական անձերը լաւ են դուրս եկել, զոհերը մասամբ ճիշտ են պատկերացել: Հերոսները, սակայն, իրենց հոգու հիմքերով և իրենց ամբողջ կազմով չեն արտայայտուել: Այստեղ է, որքան մենք ենք կարծում, Շիրվանզադէի հոգեբանական սայթաքումի ամենանշանաւոր կէտը և ամենացաւոտ կողմը:

Շիրվանզադէի երկերի և նրա գեղարուեստական ստեղծագործութեան ամենամեծ առաւելութիւնը հոգիների ցուցադրութիւնը չէ, այլ ընդարձակ, կեանքի և լայն իրականութեան նկարագիրը, որ բացւում ծաւալւում է այնտեղ: Եթէ հոգիների թագուն անկիւնները և խորունկ յատակը ճնում են առհասարակ չլուսաւորուած, դրա փոխարէն իրականութեան սահմանները հեռու են տարածւում:

Իր այդ յատկութեամբ՝ նա աւելի բարձր է և աւելի գերազանց իրրև վիպասան, քան թէ իրրև դրամատուրգ:

Վէպի համար յաջող նկարագրութիւնները, իրական կեանքի գեղարուեստական ցուցադրութիւնը, միջավայրի պատկերացումները անգնահատելի առաւելութիւններ են: Շրջապատի ընթացիկ, սովորական, շարժուն արտայայտութիւնը—եթէ կատարուած է ամփոփ ու գեղեցիկ—կարող է պայմանաւորել վէպի յաջողութիւնը բաւական մեծ չափով: Շիրվանզադէի երկերը այդ տեսակէտից ամենն ուշադրութեան և գնահատութեան արժանի են: Մենք մեր աշխատութեան զանազան մասերում, նրա ստեղծագործութիւնները զատ-զատ քննելիս՝ մի քանի առիթով կանգ ենք առել այդ կողմի վրայ

և ըստ մեր հասկացողութեան՝ հիմնաւորել նրան։ Շիրվանզադէն մեր իրականութեան լաւագոյն և տաղանդաւոր ներկայացնողներից է...

Իբրև դրամատուրգ՝ իր անկասկածելի տաւելութիւններով հանդերձ՝ նա չէ գերազանցում վիպասանին։ Այն բոլորը, ինչ կազմում են նրա վէպերի համբաւը և իրական արժանիքը՝ չեն կարող դրամա առեղծել բառիս նուրբ և կատարեալ նշանակութեամբ։ Այդտեղ, յաճախ, հոգիների և բնաւորութիւնների խորունկ վերլուծութեան փոխարէն, տեսնում ենք կեանքի պատկերներ, հետաքրքրական տեսարաններ, որոնք կարող են գրաւիչ լինել վէպի մէջ, բայց և որոնք էապէս դրամատիքական չեն։

Այս թերութիւններից և առաւելութիւններից անկախ՝ Շիրվանզադէն երկու տեղն էլ, թէ վէպերի և թէ դրամաների մէջ, հանդէս է բերել կառուցանելու և դասաւորելու ընդունակութիւն։ Նա կարողանում է լաւ տեսնել իր անցնելիք ամբողջ ճանապարհը, կարողանում է չափել երկի սահմանները և ըստ այմ համապատասխանեցնել իր նիւթը։ Ընդհանրապէս սկսում է բնական ու պարզ, առանց սայթաքումների և առանց տատանումների։ Կարճ ժամանակից յետոյ երկի—դրամայի կամ վէպի—հիմքերը դրւում են, նիւթերը կուտակւում, եզրերը որոշւում և դուք տեսնում էք այն ուղին, որով պիտի ընթանայ նրա կառուցումը։ Շիրվանզադէն այդ մասերի մէջ—մեր կարծիքով—շատ հարթ է և շատ կանոնաւոր։ Ճանապարհին մի այն, մի քանի տեղ, նա ընդարձակւում է չափից աւելի։ Երբեմն դուրս է գալիս սահմաններից և մերթ թեւակոխում է ուրիշ շրջաններ. բայց այդ չէ տեւում երկար և մանաւանդ չի կատարւում այն

չափերով, ինչ որ առաւտրակ միւս վիպասանների մէջ։ Աբովեան, Պռոշեան, Րաֆֆի շատ անգամ են մոռանում իրենց նիւթը, շատ անգամ են լքում վէպի բուն խնդիրը և միջանկեալ կէտերի վրայ երկարօրէն կանգ առնում։

Շիրվանզադէն ընդհանրապէս կարողանում է պիտակցել գեղարուեստական կենտրոնական հարցը, կարողանում է այդ ուղղութեամբ միմեանց մերձեցնել երկրորդական մասերը, հաւաքել և խնամքով առաջ տանել երկի փեշերը...

Նրա արած վրիպումները այստեղ վճռական չեն։

Իբրև գեղարուեստագէտ՝ Շիրվանզադէն մեր դրականութեան առարկայական խառնուածքներից է, եթէ ոչ ամենաառարկայականը։ Նրա երկերի մէջ առհասարակ հանդիստ և հաւասարակշիռ տոն կայ։ Ոճիրների և անիրաւութիւնների հանդէպ՝ իրան պահում է պազարչեն և անվրդով։ Բացասական տիպերի նկատմամբ նա թոյլ է տալիս որոշ չափազանցում—ռոմանտիք դպրոցի ոխուր ժառանգութիւն—բայց նա երբէք չի յարձակւում այդ մարդկանց վրայ ինչպէս մի Աբովեան, մի Պռոշեան, մի Րաֆֆի։ Նրա վերաբերմունքը ոչ թշնամական է և ոչ նախատական։

Դրական տիպերի նկատմամբ նա անհաւասար դիրք ունի։ Երբեմն նրանք ևս նկատելի կերպով չափազանցուած են, երբեմն աւելի նուազ արժանիքների տէր, քան մի դրական տիպիքական անձնաւորութիւն սովորաբար պիտի հանդէս բերէր։ Այս թեթեակի տարուբերումը, սակայն, մերթ դէպի աջ, մերթ դէպի ձախ, չեն խանգարում հաւասարակշիռ տոնը։ Նրա վերաբերմունքը անշուշտ համակրական է դրական տիպերի նկատմամբ. մի պարագայ, որ չէ կարող

ազատագել նրա երկերի առարկայականութիւնը...

Այս գիծը Շիրվանզադէի համար բնորոշ է և յատկանշանական։

Գեղարուեստական ստեղծագործութեան մէջ լեզուն, ոճը առաջին նշանակութիւն ունին։ Եթէ գիտական աշխատութիւնները և մասամբ հրապարակագրութիւնը այնքան սերտ կերպով կապուած չեն լեզուի հետ, վէպերը, դրամաները, բանաստեղծութիւնները նրան շատ բան են պարտական և նրանով շատ են պայմանաւորուած։ Գեղեցիկ, մշակուած, կանոնաւոր լեզուն նրանց արժէքը մեծ չափով կրկրարձրացնէ։ Եւ ընդհակառակը, վատ ու անկատար լեզուի մէջ նրանք շատ յաճախ կըկորցնեն իրենց փայլը, հրապոյրը, յաջողութիւնը։ Գեղարուեստագէտի համար լեզուի խնդիրը առաջնակարգ խնդիր է...

Ճիշտ գնահատութեան տեսակէտից՝ նպատակայարմար է առնասարակ լեզուն չըշփոթել ոճի հետ։ Առաջինը աւելի կամ նուազ ընդհանուր է. նա ամբողջ ազգի ստեղծագործութիւնն է, նրա բարոյական-հոգեկան յայտարարն ու չափանիշը։ Մինչդեռ երկրորդը մարդու կերտուածքն է և անհատի ներքին աշխարհի ու մտաւորութեան արտայայտիչը։

Շիրվանզադէի ոճը ամփոփ է և հաւաքուած։ Նրա մէջ չկան աւելորդաբանութիւններ, ճոխ զարդարանքներ, չափազանցեալ և անիմաստ ածականներ։ Նա ազատ է ճապազութիւնից և ճոռոմաբանութիւնից։ Հեղինակը աշխատում է իր միտքը յայտնել քիչ բառերով և մանաւանդ ամեն մի խօսքին կարևոր նշանակութիւն է տալիս։ Այս յատկութիւնն ինքն ըստինքեան բաւական գնահատելի

գիծ է և—ինչպէս երևում է—այնքան էլ դիւրին բան չէ։ Մեր ամենալաւ գրողներն անգամ յաճախ անդիտացել են այդ պարագան։ Շիրվանզադէն իր ասելիքը չէ թագցնում բառերի կոյտի մէջ, չէ ծանրաբեռնում իր նախադասութիւնները, չէ ստեղծում խօսքերի դժուարին հանգոյց։ Նրա ոճը պարզ է, որոշ, բաւական սեղմ և յաճախ կարուկ։ Այս երեւոյթը մի նշանակալից դուգադիպութեամբ ներդաշնակւում է նրա երկերի կառուցման արուեստին։ Այնտեղ էլ—ինչպէս տեսանք—նա ընդհանրապէս խուսափում է ցրումից ու տարածումից և աշխատում է լաւ համախմբել, ամփոփ դասաւորել իր նիւթը։ Հեղինակի հոգու համար սա մի բնորոշ օրէնք է թերևս, որ գործում է տարբեր միջավայրերում և տարբեր մթնոլորտում։ Նրա գրուածքների իրական շքտութիւնը անցել է ոճին և դարձել նաև այդ վերջինի գլխաւոր յատկութիւնը։ Շիրվանզադէի նկարագրութիւնները կարդալիս դուք կարողանում էք ճշտութեամբ պատկերացնել այն միջավայրը, այն դրութիւնը կամ այն դէպքը, ինչ որ նրա կենտրոնական մտադրութիւնն է։ Յամենայն դէպս, եթէ անհասկանալի, մութ, անորոշ և խաւար կէտեր ծնում են՝ դրա պատճառները ոճից և արտայայտութեան ձևից դուրս են։ Ոճի այս առանձնայատուկ բարեմասնութիւնների հետ միասին՝ Շիրվանզադէի լեզուն ունի մի քանի էական թերութիւններ, որ արդար լինելու համար՝ պարտաւոր ենք յիշատակել։ Այդ լեզուն բուսականաչափ հայերէն չէ, իր ոգով, մտածողութեամբ և համաձայնութեամբ։ «Բարձրանալ սարի վրայ»։ «Գլխարկը հագնել», «Ամուսնանալ նրա վրայ», «Օգտուել նրանով», «Վախենալ նրա ուղեղի մասին»—և այլ այսպիսի անհարազատ ոճեր ու օտար տուութիւններ պատա-

հական երևոյթ չեն Շիրվանզադէի գրուածքներում։

Իր վերջին աշխատութիւնների մէջ նա, արդարև, զգալի կերպով սրբագրել է այդ հիմնական թերութիւնը, բայց տակաւին վերջնականապէս չէ ազատուել նրանից։ Այս երևոյթը, որ մասամբ բացատրւում է օտար դպրոցի ազդեցութեամբ — ուր սովորել է Շիրվանզադէն — մասամբ ժամանակի հրապարակագրութեամբ՝ նրա գեղարուեստական ստեղծագործութիւնների ամենաթոյլ, ամենավիրաւորը կողմն է... Յանուն իր երկերի և յանուն մեր գրականութեան — որի տաղանդաւոր ներկայացուցիչներից է նա — Շիրվանզադէն պարտք ունէր թէկուզ երկարատև աշխատանքի գնով մաքրել իր լեզուն և էապէս հայացնել իր բարբառը...

Այս հիմնական անկատարութեան կողքին կարևոր է յիշատակել նաև մի ուրիշ յատկութիւն. այն, որ Շիրվանզադէի լեզուի մէջ ընդհանրապէս պակասում է բանաստեղծական տրամադրութիւնը, աւիւնը, քնքշութիւնը։ Մինչև անգամ այնպիսի գրուածքներում և այնպիսի էջերի վրայ, ուր նիւթի գրաւիչ բանաստեղծականութիւն կայ՝ Շիրվանզադէի լեզուն չէ կարողանում բովանդակութեան համապատասխան նուրբ, քնարական ձև ստեղծել։

Համբ, գոյնր, ճոխութիւնը, հարստութիւնը նրա լեզուի գլխաւոր յատկանիշները չեն... նա գերում է կարճ, պարզ ու հասկանալի, բայց ոչ նուրբ և գունեղ։

Իբրև ոճաբան Շիրվանզադէն առաջնակարգ կարևորութիւն չէ ներկայացնում և չունի այն իրական արժանիքն ու վայելը, ինչ որ ունի իբրև կեանքի, իրականութեան, հասարակութեան, ընտանիքի արուեստագէտ և մասամբ իբրև որոշ տիպերի վերլուծող ու հոգեբան...

XIV

ՃԻՒՎԱՆՃԱՊԻՒ ԴԵՐԸ

(Ամփոփում)

Մենք վերջացրինք Շիրվանզադէի գրականութեան վերլուծութիւնն ու քննութիւնը։ Կարելի էր աւելի մանրամասն կանգ առնել այն մեծ վաստակի վրայ, որ արտադրել է նա երեսուն երկար տարիների ընթացքում, կարելի էր աւելի բազմակողմանի խնդիրներ շօշափել այդ գործի շուրջը և նրա աւիթով, բայց մենք այսքանը բաւ համարեցինք։ Մեզ թւում է, որ Շիրվանզադէն իր էական մասերով, իր գեղարուեստական ըմբռնումներով ու կարողութիւններով, իր աշխարհահայեացքով և իր իդէալներով ներկայացուած է արդէն։ Մենք աշխատեցինք մեր սեփական գաղափարների քարոզչութեան համար գործիք չդարձնել Շիրվանզադէին և գլխաւորապէս կենդրօնանալով նրա լուսաբանութեան, նրա երկերի վերլուծման ու ցուցադրութեան, նրա հոգեկան ու բարոյական կեանքի վրայ, մենք մեր տեսակէտները և մեր աշխարհահայեացքը արտայայտեցինք այնտեղ, ուր խիստ անհրաժեշտութիւն զգացինք։

Ուշադրութեան թուականներին երևալով՝ Շիրվանզադէն կարողացաւ մեր գրականութիւնից և մեր կեանքից վերցնել այն, ինչ որ նոր ժամա-

նակների համար յատկանշանական էր և բնորոշ։

Բաֆֆիին, Աբովեանին, Պռոշեանին, Սունդուկեանին նա հետևեց ոչ այն տիպի հետաքրքրութեամբ, որով սովորաբար կարդացուում և գնահատուում էին այդ հեղինակները, այլ իր մանկայատուկ տրամադրութիւններով, իր ըմբռնումներով և հակումներով։ Այդ գրողների մէջ նա տեսնում էր այն, ինչ որ յետագայում պիտի կազմէր իր գրական դպրոցի էութիւնը և այն, ինչ որ կամաց-կամաց պիտի զարգանար և տարածուէր մեր իրականութեան մէջ։

Կեանքի դիտողութեան և ուսումնասիրութեան միջոցին՝ նա կանգ առաւ այն դասերի, այն երեւոյթների և այն խնդիրների վրայ, որոնք յաջորդաբար պիտի կազմակերպուէին և դառնային մեր հասարակական պատմութեան կարևոր մասը։

Շիրվանզադէն զգաց այդ բանը, հասկացաւ իր գեղարուեստական-գրական տեսակը ամենուրեք.—մեր հրապարակագրութեան մէջ, ռուսական մտաւոր աշխարհում, թէ արուպական հսկայ գրականութեան ոլորտում։ Հասարակական և իդէալական այդ տարբեր ազդեցութիւնների մէջ նա կարողացաւ ղեկավարել ինքն իրեն և մօտենալ իր համապատասխան գրական ճանապարհին։ Նա չազատեց իր ինքնուրոյնութիւնը, չըռնացաւ իր տրամադրութիւնների վրայ, չծռեց իր հոգու ընթացքը, չվատնեց իր բարոյական ոյժերն անմիտ և անըռվանդակ թափառումների մէջ և ընդգրկեց այն նիւթն ու այն խնդիրը, ինչ որ պատշաճում էր իրեն անհատապէս և հասարակականապէս։ Նա դարձաւ քաղաքային դասի, քաղաքի մարդկանց վիպասանը և բանաստեղծը։

Աբովեանից, Պռոշեանից և Բաֆֆիից յետոյ

այս ճիւղը հարկաւոր էր մեր գրականութեան, այդ դասերը անհրաժեշտաբար պիտի տեղ գրաւէին մեր գեղարուեստական արտադրութիւնների մէջ։ Շիրվանզադէն ըմբռնեց այդ գրական ճշմարտութիւնը և որոշ տարրեր ժառանգելով Բաֆֆիի և Սունդուկեանի երկերից՝ նա առաջ տարաւ, զարգացրեց, կատարելագործեց այդ մասը և հանդիսացաւ նրա լաւագոյն արտայայտիչը...

Երեսուն երկար տարիների ընթացքում նա մեր միջին դասերի կեանքը, բարքերը, իդէալները վերլուծեց, ուսումնասիրեց և տաղանդով ու գեղարուեստական ձևով հրապարակի վրայ դրեց։ Այդ աշխատանքը արժանի է յարգանքի և շնորհակալութեան։

Շիրվանզադէն փորձեց նաև նոր անկիւնները բաց անել մեր վիպագրութեան ասպարիզում։ Աբովեանը, Պռոշեանը, Բաֆֆին իրենց խոշոր և կարևոր վաստակի մէջ հնարաւորութիւն չէին ունեցել կենդրոնանալ հերոսների հոգեկան աշխարհի վրայ, ըմբռնել նրանց ներքին էութեան հիմունքները և օրէնքները։ Մեկը արտայայտուել էր գլխաւորապէս իբրև բուռն, հայրենասիրական դիւցազնավէպի, իբրև ժողովրդական քնարաշունչ պօէմի տաղանդաւոր ու վսեմ հիմնադիր։ Միւսը ներկայացել էր իբրև ազգագրական, վարքագրական վէպի շնորհալի ու անձնական հեղինակ։ Երրորդը հանդիսացել էր իբրև հասարակական վիճորկալից տրամադրութեան, իբրև քաղաքական տենդերի, իբրև հանրային յուզիչ իդէալների մեծանուն երգիչ։

Հերոսների անհատական հոգեբանութիւնը նրանց երկերում ընդհանրապէս ուշադրութեան չէ առնուած։

Շիրվանզադէն կամեցաւ այդ կարևոր պա-

կասը լրացնել: Այս ձգտումի մէջ, ութիւնական թուականներին, նա մենակ չէր: Ժամանակի միւս վիպասանները, առաւել կամ նուազ, հետամուտ էին նոյն նպատակին և աշխատում էին նոյն ուղղութեամբ:

Իր գրական գործունէութեան սկզբնական շրջանում իսկ, «Նամուսի» սիրուն էջերի վրայ, Շիրվանզադէն այդ մտադրութեան մէջ որոշ հետևանքների հասաւ: Հերոսների հոգին կամաց-կամաց դուրս էր գալիս խաւարի և անյայտութեան սահմաններից և տարածւում էր գեղարուեստական ստեղծագործութիւնների մէջ: Այդ վորձերը, սակայն, և այդ սկզբնաւորութիւնները ժամանակի ընթացքում շատ չզարգացան և չդարձան Շիրվանզադէի գրականութեան գնահատելի, առաջնակարգ կողմը: «Նամուս»-ից յետոյ նրա իրագործած յառաջադիմութիւնը, հոգեբանական վերլուծման տեսակէտով, նշանակելի չէ և ոչ էլ այնքան կարևոր է: Իբրև հասարակական բարքերի քննադատ, իբրև ընտանիքի վիպասան և դրամատուրգ, իբրև լայնարձակ իրականութեան արտայայտիչ՝ Շիրվանզադէն աւելի տաղանդաւոր է և աւելի պերճախօս:

Նրա նկարագրած անձերը և նրա նեկայացրած տիպերը որքան էլ հետաքրքրական ու յաջողուած լինեն իրենց հոգեբանութեամբ, այնուամենայնիւ պարզ չեն, համոզիչ, կենդանի ու գեղեցիկ այնպէս, ինչպէս այս շարժուող, ապրող հասարակութիւնը, այս քայքայուող ընտանիքը և այս թաւալուն, հոսանուտ իրականութիւնը:

Իր գրական գործունէութեան ընթացքում՝ Շիրվանզադէն գլխաւորապէս միջին դասերի բանաստեղծը հանդիսացաւ և նրանց հասարակական

իդէալների տեսարանը: Բուրժուազիան և բուրժուա մտաւորականութիւնը նրա վիպագրութեան և թատերագրութեան սիւներն են և նրա գեղարուեստական յղացումների և իրագործումների ընդհանուր տարրերը:

Այդ գործունէութեան երկարատև ճանապարհի վրայ՝ նա ձգտեց թեւակոխել նաև տարբեր տեսակներ, կամեցաւ դուրս բերել գաղափարական, արմատական, ձախակողմեան մտաւորականութիւնը, բայց վրիպեց իր մտադրութեան մէջ, չկարողացաւ ըմբռնել այդ խմբակցութեան հոգեբանութիւնն ու իդէալները:

Հասարակական լիբերալիզմի արուեստագէտը եղաւ նա, բառիս լայն, համակրելի և գեղեցիկ իմաստով: Անհատականութեան համոզուած պաշտպանը՝ ընդդէմ հասարակութեան, ընդդէմ ընտանիքի, ընդդէմ կրօնական-եկեղեցական կաշկանդումների:

Քաղաքական ազատագրութեան և տնտեսական հաւասարութեան իդէալները չանցան նրա գրականութեան մէջ և չպայմանաւորեցին նրա քրոջած համբաւաւոր անհատականութիւնը:

Իբրև դրամատուրգ Շիրվանզադէն շատ աշխատեց մեր գրականութեան համար: Սունդուկեանից յետոյ թափուր մնացած այդ ճիւղը կենդանացաւ նրա ջանքերով, զարգացաւ ու կատարելագործուեց: Այսօր մեր դրամատիքական արուեստի լաւագոյն ներկայացուցիչն է նա և մեր ամենայաջող թատրոնական հեղինակը...

Շիրվանզադէն իր երկարատև գործողութեան միջոցին երիտասարդ գրողների վրայ նշանակելի ազդեցութիւն չունեցաւ: Նա չկարողացաւ խորացրել հիմնաւորել իր գրականութիւնը և տարածել մեր կեանքի բոլոր խաւերում: Նրա գրական վաս-

տակը ասես առանձնացաւ և չձուլուեց, չմիացաւ մեր մտաւոր հոսանքների և մեր հասարակական իդէալների հետ խիստ ներդաշնակօրէն։ Այս երեւոյթի պատճառները մասամբ ժամանակի տրամադրութիւններն էին և հանրային պարագաները, մասամբ Շիրվանզադէի գրականութիւնն ինքը անհատապէս։ Այդ հանգամանքները բնաւ չեն խանգարում սակայն, որ նրա տեղը մեր գրականութեան մէջ պատուաւոր լինի։ Նա մէկն է մեր այն երախտաւոր հեղինակներից, որոնց ներկայութիւնը և գործունէութիւնը այնքան անհրաժեշտ է մեր վերածնուող գրականութեան համար։ Շիրվանզադէն տարիների ընթացքում նշանակելի ծառայութիւն է մատուցել մեր գրական և մտաւոր կեանքին։

Որքան էլ նա, իբրև մի անհատ, կարողացած չլինի բոլոր դասերի կեանքը, բոլոր խնդիրների խորքը, բոլոր իդէալների հոգին թափանցել և լուսաւորել—այնուամենայնիւ, ինչ նա արել է, ինչ նա տուել է, ինչ նա երազել է և իրագործել տարիների անդուլ աշխատանքի մէջ՝ արժանի է ամենայն ուշադրութեան և անկեղծ գնահատութեան...

1911 ապրիլ
Վիեննա



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1. Ներածութիւն . . . 1
2. Կեանքը 8
3. Ազդեցութիւններ . . . 21
4. Երկերի դասակարգութեան մեթոդը 44
5. Առաջին տասնամեակ (մինչև 1890 թ.) 51
6. Երկրորդ տասնամեակ . . 118
7. Երրորդ տասնամեակ . . 207
8. Շիրվանզադէի երկերի մէջ արտայայտուած գլխաւոր խաւերը. . . 272
9. Հասարակութիւնը Շիրվանզադէի երկերի մէջ 288
10. Ընտանիքը Շիրվանզադէի երկերում 297
11. Անհատը Շիրվանզադէի երկերում 306
12. Շիրվանզադէի հասարակական-բարոյական աշխարհահայեացքը . 315
13. Շիրվանզադէն իբրև արուեստագէտ 323
14. Շիրվանզադէի դերը . . 333

60



ԳԻՆՆ Է 80 Կ.

ՀՀ Ազգային գրադարան
NL0375994

70·442